






ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մ. ԳԱՍԴԱՐՅԱՆ, Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Տ. ՎԱՆՅԱՆ

Ս. 99-82

Գ-31

399

ԱՅԹԱԳԱՅ Կ 1937 թ.

ԴԵՊԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՆՐԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

28-893

A III
2076



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



ԵՐԱՅԱՆ - 1929

Յպագրվում է
ՀՍԽՀ Պետգիսխարհի
բուքավարչամբ

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Գրառեալ. № 2686 (բ.) Հր. № 1015 Պատվ. № 840
Տիրաժ 25,000



I

ՔԱՂԱՔ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

1. Գարուն

Գարուն, գարուն Յերևանում,
 Յերևանում ահա նորից
 Շնչում ե խոր թնդում անհուն
 Մի խնդության վոսկեվորիկ...

Ահա կանգնած իրար կողքի
 Աբովյանի յերկայնքն ի վեր՝
 Լույս են խմում գարնան շողքից
 Ու կանաչում ծառերը մերկ:

Հիշում ես, սիրտ, գարուն մի այլ,
 Յերբ տնկեցին ծառերն այս նոր.
 Յերբ մեր բոբիկ մանկանց նման
 Նրանք դեռ մերկ, նրանք տկուր. —

Յերբ մեր լուսե ժանկանց նման
 Այնպես վտիտ, այնպես բարակ —
 Դեռ շուրջը սով, դեռ շուրջը մահ —
 Շարք կանգնեցին այստեղ նրանք...

Մեր մանկանց պես տկուր, վտիտ
 Ծառերն այս յերբ կեցան հերթի՝
 Շատերն արդյոք հավատացին
 Նրանց պայծառ առավոտին. —

Տես՝ ի՞նչպես են փթթել հիմա,
 Հասակ առել ու կանաչել —
 Տես ի՞նչպես են նրանք աճել
 Մեր լուսեղեն մանկանց նման...

1. Վեր ժամանակաշրջանին են վերաբերում 3-րդ և 4-րդ տները: Պատմեցեք ձեր հուշերն այդ շրջանից:
2. Վեր ժամանակաշրջանին են վերաբերում մյուս տները:
3. Ինչի՞ շնորհիվ առաջացան այդ փոփոխությունները:
4. Ուրիշ ի՞նչ փոփոխություններ մտցրեց խ. իշխանությունը Հայաստանում (պատմիր միայն քո տեսածն ու դիտածը):

անհուն—անսահման, չափ մեծ
 խնդություն—ուրախություն
 փոսկեվորիկ—վեպկեղեն, պայծառ
 մերկ—տկուր

վտիտ—նիհար, լցար
 հուշ—հիշողություն
 դիտել—քննելով, հասկանալով նա-
 յել

Այս ձեվով նամակ գրի՛ր քո ծանոթներից վրեժի մեկին յե՛կ
 ցկարագրի՛ր ձեռ դպրոցի կյանքը:

Թանկագին բնակիր,

Յիս այժմ գրագիր իմ: Միս իմ առա-
 գին նամակն ի: Յիս այժմ աշխատում
 իմ Աստուծանի անվան համբում. համ-
 քանորիք կարգի ին բերված: Յիս լավ
 վարժվիլ իմ համախորհրդյան միգ:
 Միջմ համախում իմ յիրիկցյան դպրոց:
 Առաք-չաք նամակ գրիր: Գրիր նաև
 մի բզիզի և գյուղատիրոջի աշխա-
 րանքների մասին:

Կոնյիրիքսարևներով
 քո Մարամ.

1928 թիվ. հայրի 9-ին,
 Մարտունավան


ՀԻՇԻՐ ՆԱԾԱԿ ԳՐԵԼՈՒ ՁԵՎԸ.

1. Նախ վերևում գրվում և այն մարդու անունը, վորին ուղարկվում և նամակը:

2. Նամակի վերջում, աջ կողմը գրվում և նամակ գրողի ստորագրությունը, իսկ ձախ կողմը՝ նախ մի տողում ամիսը, թիվը և տարեթիվը և ապա սրա տակը՝ տեղի (քաղաքի կամ գյուղի) անունը, վորտեղ գրվել և նամակը:

2. Բ ա գ ու ն

Բագվում որն արևոտ և ու փոշոտ: Հին Բագուն մալլ և ու գորշ: Նորը՝ պայծառ ու հաղթական: Ահա հնի բեկորները՝ խանի պալատը, կույսի աշտարակը, քարոցած հարցականի նման ծովափին ցցված:



Յեղնում և նոր Բագուն: Բանվորական սպիտակափալլ ափանները՝ հարթ ու կոկիկ՝ տուրածվել են քաղաքի շուրջը: Արմենիքենդը Շահումյանի անվան հսկայական քաղաքի չե վերածվում: Նորակառույց հսկայական տներ: Սպիտակ թաղամասեր: Ահա ինքը Շահումյանն և դեկավարում վիթխարի շինարարությունը:

Հատինատառ ցուցանակները քեզ պոկում են մզկիթի ու «ալլահի» Արևելքից ու շարտում Յեվրոպա: Ցուցանակների լատինատառ «գաղութարանքն» և ծավալվել վողջ քաղաքում:

Ելեկտրական լեռկաթուղին սլանում և մրկված դաշտերով: Նա

սերտ կապով կապել ե նազթաքաղաքները բուն քաղաքին, հնրա
ռելսերի չերկայնքով յերկանիվ սալներն իրենց վերջին որերն են
ճոնչում: Բարձրանիվ սալեր:

Վիշկաների ու ծխնելուղների գորշ աշխարհը տարածվել ե
Բազմի չորս կողմը:

Մոտիկում վիշկաների անտառը, հեռվում վիշկաների անտա-
ռը: Ապա ծխնելուղների վեհ սլացքը քաղաքի խայտարղետ ֆոնի
վրա: Վիթխարի նազթամբարները շուրջպար հն բռնել վիշկաների
այս աշխարհում, վիշկաների շուրջը, Սև քաղաքում:

Ահա նազթազաչ գործարանը: Յերկրի սրտից կորգած սև
զանգվածն այստեղ դավում, դառնում ե նազթ, բնդին, յուղ ե այլ
բազմատեսակ հեղուկներ ե դաղեր: Հետաքրքիրն այն ե, վոր այս
ահագին գործարանում, ուր որական 50.000 փութ նազթ ե զըտ-
վում, աշխատում են վոչ ավել քան չորս բանվոր: Մեքենայացում
իր զլուխ գործոցն ե տվել այստեղ: Ճշասնում ու անցնում են կա-
պիտալիստական յերկրներից:

Մովափին աղմկում ե տեքստիլ գործարանը 4000 բանվոր-
ներով:

Բամբակի ծով: Ճերմակ թելի ծվանք: Կարմիր վարդեր այդ
ծփանքում: Ծինանդալի վարդերի մեծությամբ,— կարմիր թաշկի-
նակներն են այդ պայծառ դեմքերը պսակող: Բանվորուհիներ թուրք,
ռուս, հայ: Կարմիր վարդերի նման բացվել են նրանք բամբակի,
թելի, սլացիկ փուկերի ու դարձող անիվների ֆոնի վրա:

Ահա ե տարորինակը, Ճոճանակային յերկար ականջողերով,
մատանիներով ու ապարանջաններով «բանվորուհիներ»: Բայց զար-
մանալի վոչինչ չկա: Նրանք դեռ նոր հն թողել զարեջրատների
անկյունները ե բուլվարների շրջմովիկ կյանքը: Նրանք կմոռանան
այդ ամենը, կնետեն ականջողերն ու մատանիները ե կձուլվեն դար-
ձող անիվների ու կարմիր վարդերի մեր դասակարգային հոսանքին:

Թողնում ենք թելի սպիտակ ջրվեժները, կարմիր վարդերի
կենդանի փայլը ե Կասպիականի կանաչ ու նազթեանգ ծփանքը:

Ահա ե հացի գործարանը: Վերին աստիճանի առանձնահատուկ
ու հետաքրքիր: Մաքրության տիպար: Լեցնում են չմաքրված ա-
լյուրը մի ծայրից, ե մյուս ծայրում շարվում են փթթած ու կարմիր
հացերը:

Նորից գործաշաններ, նորից ծխնելուղներ, վիշկաների հաղ-
թական բուրգերը, անտառները վիթխարի ու անխորտակ:

Իրի-Հեյրաթ, Սուրախանի, Բալախանի, Բանվոր դասակարգ-
ի պայքարի ու հաղթանակների փառավոր կոթողներ, հարուստ
հատորներ:

Այստեղ, նավթի ու մրի այս աշխարհում, բրոնզադեմ ու անխորտակ մեր դասակարգը հազարավոր բազուկներով ժամ առ ժամ կերտում է մի նոր կյանք, նոր աշխարհ: Մաքառում է բնության զեմ, քամում է ճակատի քրտինքը և պեղում հողը:

Հողից նա հանում է ալն ամենը, ինչ կարևոր է մեզ, մեր դասակարգին:

Հողից նա քամում է վոսկի ու կյանք:

1. Ի՞նչ նշանակություն ունի Բագուն Անդրկովկասի համար:
2. Ի՞նչպես ե կատարել հեղինակը հին և նոր Բագվի հակադրությունը:
3. Ի՞նչի՞ նշանակ է նոր Բագուն:

սյացք — թռիչք

Ֆոն — հիմնական գույն, վրիժ վրա
յիբևում է նկարը

նշանակ — սիմբոլ, խորհրդանշան

ավան — շեն, մեծ գյուղ

մրկված — այրված

գորշ — մուր

խայտադղետ — նախշուն

կոթող — հուշարձան

կերտել — ստեղծել

մաքառել — կռվել

պեղել — փորել

Արագրի՛ր այս հասցեները յեվ ապա սրանց ձեվով գրի՛ր ուրիշ գյուղում յեվ քաղաքում ապրող քո ծանոթների հասցեները:

ԳԾՈՒՂԻ ՀԱՄԱՐ

<u>Լուսինյան</u> Կոտայքի Մ..... Լուսինյան Դավիթյան Դ. Դավիթյան, Զիրան, Ռաֆֆի փ. 16	Կոտայք
--	---------------

Ներկայումս Հիշում	Ներկայումս Ն 87
Ն 1 Վանկյապարտիկի վարդապետ Վարդապետ (վարձ. լուս. գալ.) Խանար Արարկյանի	

ՀԻՇԻՐ. ՀԱՍՑԵ ԳՐԵԼՈՒ ՁԵՎԸ.

Ծրարի ամբողջ յերեսի վրա գրում են.

1. Քաղաքի կամ գյուղի անունը:
2. Փողոցի անունը և տան Ք-ը:
3. Անուն, ազգանուն:

Դրոշմանիշը (մարկան) փակցնում են նույն յե-
րեսի աջ կողմի անկյանը՝ վերեւից:

Իսկ ամենից տակը (նույն յերեսում) ուղարկողի
հասցեն են գրում:

3. Ձ ա գ ե ս

1


Գեղեցիկ, գեղեցիկ Վրաստանում մի ժամանակ տիրում ե-
լին կալվածատերերը ու ազնվականները:

Գեղեցիկ, գեղեցիկ Վրաստանում այժմ տիրում են բանվոր-
ներն ու գյուղացիները:

Մի անդունդ է բաժանում հին պատմութիւնը նորից: Հնում
բանաստեղծները յերգում էին բնութիւն անզուսպ ուժը, նրա
հաղթութիւնը մարդու վրա: Նոր բանաստեղծը յերգում է մարդու
հաղթանակը բնութիւն վրա:

Ձագեսը մասսաների հաղթանակն է բնութիւն կույր տարե-
քի դեմ, բնութիւնը մարդուն հնազանդեցնելու մասսայական աշ-
խատանքի գեղեցիկ ապացույց:

Ահա Բուռը, վոր դարերով հոսել է ծովը, անպետք: Հիմա տեխնիկան խանգարել է նրա խաղաղությունը, արգելք կներ ե դրել նրա հոսանքի առաջ: Յե՛վ նա կատարել ե: Նոր մասսան նրան հաղորդել ե իր անհանգստությունը, իր թափը, իր լեռուզեռը:



Ահա Բուի հովիտը: Լեռան լերկ կատարին կանգնած ե Մծիրին լապար ու գոռոգ: Արևի լույսը չի թափանցում այդ միջնադարի, այդ քարացած հոգու մեջ:

Ներքևում Լենինի արձանն ե, վորի ցուցամատը նշում ե բանվորների ու գյուղացիների հաղթության ուղիները:

Մծիրին կաշկանդում ե քո թոխչքը: Միբում ե, յերբ կուչ ես գալիս, չորում, լալիս, աղոթում:

Լենինի մատը քեզ հանձնում ե ալիքների հորձանքին: Մղում ե քեզ դեպի ստեղծագործական պայքարը, դեպի կոխի բնության դեմ:

2

Ծով բազմություն ե հավաքվել Վրաստանի դանազան կետերից, հարևան հանրապետություններից, միության դանազան վայրերից: Տեխնիկայի ուրախությունն ե քերել այս բազմությունը Բուի հովիտը: Շտապում են դեպի Զագեսի գլխավոր կամուրջի տուննելը, վորպեսզի գնան Լենինի արձանը տեսնեն, վոր դեռ փաթաթված ե սպիտակ սավանով:

Գլխավոր կամուրջի վրա կանգնած՝ դիտում ենք Բուի կատաղած շուրը: Ալիքները բախվում են իրար, թռչում վեր, ողում փըշըրվում, շրալին փոշի կազմում և ցած են անձրևում՝ նորից ու նորից իրար բախվելու համար: Կեսորվա բարկ արևը ջրի փոշու վրա ծիածաններ ե կազմում:

Բազմության հորձանքը քանի գնում մեծանում ե:

Հանկարծ կարմիր բանակայինների նվազախումբն սկսում ե «Խնտերնացիոնայը»: Մթնոլորտն ելեկտրականանում ե: Գալիս են

Վրաստանի, Անդրկովկասի և այլ հանրապետութիւնների կառավարութիւնների ներկայացուցիչները, Բարձրանում են Լենինի արձանի ընդարձակ պատվանդանի վրա:

Հանգեսը բաց ե անում մի բանվոր և ձայն ե տալիս Համկենտգործկոմի նախագահ ընկ. Կալինինին: Ընկ. Կալինինն առանձնապէս վոգեորոված ե Վրաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակով:

Բացվում ե Լենինի արձանը: Վորոտալից ծափահարութիւնների ձայնից ամբողջ հովիտը թնդում ե: Արձանի բացվելով տեսարանը հիմնովին փոխվում ե.— աջ ցուցամատի հրամայողականութիւնը և գլխի վճռականութիւնը նոր իմաստ են տալիս շրջապատին: Մասսաների աղաղակները դառնում են հասկանալի:

1. Ի՞նչ նշանակութիւն ունի Զաքեսը Վրաստանի և ամբողջ Անդրկովկասի համար:

2. Վերհանիր էլեկտրականութիւն նշանակութիւն խնդիրը մեր յերկրի համար:

3. Բացատրիր, թե ինչ նշանականութիւն ունի Լենինի լողունը «Ելեկտրիֆիկացիա պլլուս խ. իշխանութիւն» հաժասար ե կոմունիզմ»: Ի՞նչ իմաստով ե դորժածված այս:

Խ. Իշխանութիւնը կիրառում ե այդ:

Ել ի՞նչ խոշոր ելեկտրո-ձեռնարկումներ դիտես:

Արագրի՛ր, միասեռակ րառերն ընգզծի՛ր յեվ բացաքի՛ր՝ ինչո՛ւ միգանիսը փոքրատուով են գրվում, մյուսները՝ մեծատուով:

Նոյսմիբրութի Նոյսմիբմ աղյսմ-

Նի յի պատեում: յուսաբաւսիմ Նի-

յայույար գնաւ պարյայույար դի-

պիյու: Եփակարսիւսի Ժանամուսկ

վարդը, Զուշամը և Ժաւամիկը Բա-

դիպիմ վարդ, յուշամ և Խաւամիկ:

4. Զմեռային պալատ

Սիրելի՛ Հակո,

Բերդի դիմացն ե կանգնած մեծամեծ թագավորների պալատը։
Նրա գույնը մուգ-կարմիր ե, այն, մուգ-կարմիր...

Նա շքեղ ե, նա փարթամ ե, նա փառանդ տեսք ունի, նա անշափ գեղեցիկ ե, գեղարվեստական, գերազանցում ե քաղաքի բոլոր շենքերին, 1000 սենյակ ունի, այն, հիանալի չե... Բայց նա դիակների վրա չե կառուցված, նա արյունով ե շաղախված։

Ձե՛ վոր ահա ալստեղ, նրա առաջ, գեղեցիկ այս հրապարակում, վորտեղ «անմեղության և բարության» հեշտակն ե կանգնած մի մարմարե սյունի զլախն, հենց ալդտեղ հունվարի 9-ին Պետրոգրադի անդեն բանվորությունը զնդականարվեց։ Քանի՛ քանի հայրեր ու մայրեր, վորոնք միամիտ դեռ, յեկել եյին քյոշկի տիրոջ «վողորմածությունը» դիմելու, ընկան արյունաթաթախ եդ սալերի վրա, մեծ թագավորի քյոշկի առաջ, նրա հրամանով կանգնեցրած «անմեղության ու բարության» հրեշտակի վոսների տակ։

Ո՛ր, ի՛նչ անմեղություն և ի՛նչ բարություն...

«Բարության և անմեղության հրեշտակ թագավոր»...

Ինչո՞ւ պիտի արյունով ներկվեր և գեղեցկանար այդ քյոշկը, ինչո՞ւ պիտի արյունով լվացվեր նրա հրապարակը...

Մի՞թե նեվա դետի ջուրը չեր բավականացնում հրա շաղախը պատրաստելու...

Պատերը մետաքս են հաղել. հասկացմար, Հակո, մետաքս, մետաքս։ Յեվ վոչ միայն պատերը, այլ աթոռներն ել, սեղաններն ել, մահճակալները. մեկ խոսքով՝ ամբողջ քյոշկը մետաքս ե հագել։

Բոլորին մերկացրել են՝ իրենց պատերը հաղցնելու համար։

Ու անթիվ ե, անհամար նրանց «կարողությունն ու հարստությունը»։

Յեվ լեցուն ե Մեծ իրավունքը պատկանում ե վոսկուն, արծաթին, գմրուխտին, մարջանին, տո՛ ել մարմար ու ուրիշ-ուրիշ ինչքան թանգ բան վոր լսել ես։

Դրանք չեն զարդարում, ավելի ճիշտ լեցվել են, կուտակվել են։ Սենյակներ կան, վոր հատկապես դրանք են ապրում միայն։ Հաշիվս վոր մեկն։ ե, հաշիվ չկա, վոչ ել կարգ, հերթ։ Պատերը չեն յերևում, Նշանք կորսվել են «զարդարանքներին» և հայելիների ծովի մեջ։ Մեջը մոռնա՛ մեկ Հակոյի տեղ հազար Հակո կերևա։

«Ամանագեղեցիկ» զարդարանքները՝ դրանք հաստամուկ, հաստալիզ ու կարմրաքիթ իշխանների, իշխանուհիների, կնյազներ...

ըի, զեններալների, վսեմափալ թագավորների, նրանց պապու, քեռու, խնաւու, մոքոր, հոքիրների և վերջը ամբողջ թախումի նկարներն են: Չեն մոռացված դրանց կողքին և նրանց շների պատկերները:

Ահա վերջապես բացվում են այն սենյակները, վորտեղ անցկացրել ե իր մետաքսե կյանքը ինքը՝ Նիկոլայ թագավորը:

Իհարկե դու կգարմանաս, թե ինչպես եմ զսպում ինձ, ինչպես եմ կարողանում տիրել ինձ: Բայց ինչպես ուզում եմ՝ ուսուկեցրեալ եմ.— քո գլուղացին Նիկոլայի սենյակներում ե, նալում ե, տեսնում ե, զգում ե: Ո՛ր, ինչքան դժվար ե այս բուպելիս շալակել ձեր բոլորի զգացումները, հեղեղել իմ յերակները ձեր բոլորի տաք, վրիժառու արյունով:

Դժվար ե, բայց տանում եմ՝ պիտի տանեմ:

Լսում եմ լուռ՝ պոստում են... Այստեղ նրա առաջին քարտուղարն եր նստում, այստեղ՝ յերկրորդը, այստեղ՝ առաջին հավատարմատարը, այստեղ՝ մյուսը: Այս սենյակում նա ընդունում եր արտասահմանի հյուրերին, այս մյուսում՝ հյուպատոսներին, ահա այստեղ ել, վերջապես, իր մինիստրներին. ահա նրա ճեղիարդանոցը:

Նիկոլան շատ եր սիրում թիլիարդ լապալ. մահապանդ են ուրերին, յերբ դետերն արյունաներկվում ելին, յերբ անձրևի գույնը կարմրում եր: Նա «շատ եր ատում» նման յեղանակները և թիլիարդով մոռացնել եր ուզում տալ...

Լսում եմ և շտապում եմ հասնել:

— Ահա այս թռչուններն ել կովկասյան լեռներից են. վաբանցով-Դաշկովն ե նվիրել Նիկոլային դուր եր յեկել Կովկասն իր բնությունով և բնական հարստություններով: Միայն դուր չեր յեկել նրա բազմազգ կովկասյան ժողովուրդը, վորն իր ազգային դպրոցն ե ուզում ունենալ, իր մալրենի լեզուն չի ուզում մոռանալ: Եդ մեկը հեչ դուր չեր գալիս նրան, և հարկեվոր միջոցների նա դիմել եր և դիմում եր եդ ուղղությամբ...

Պատմությունը յերկար ե, յես լսում եմ, ու դեռ բացվում են դռներ, դեռ չի վերջանում...

Վերջ չկա ինչ ե...

Ինչո՞ւ համար... Ո՞ւմ համար, միթե այդքան շատ բնակվողներն են յեղել...

— Չե,—սլատասխանում են,—մարդկանց թվի հետ կապ չունի. եդպես եր, թագավորաց ճաշակ եր...

Ու ելի շարունակում ենք անցնել ու ելի ճաշակի ցուցահանդես» ու ելի պապոյում են, շղարշում են, շողշողում մետաքս հագած սենյակները և լի՞քը, լի՞քը. տեղ չկա. բողբոջում են:

Ստիպված ընդունում ես, վոր ել վոչ մի տան բան չի մնացել, բոլորից թալանել են, գրավել, բերել եստեղ դիզել:

Ահա թե ինչո՞ւ մարդկանց թվի հետ վոչ մի կապ չունի եստեղ «Բնակարանային» հարցը:

Հազիվ տեղավորվել ե թալանն ու ավարը:

1. Ո՞ւմ արշուն-քրտինքով և շինված ցարական պալատը:

5. Ի՞նչ տրամադրութիւնն և առաջացնում ձեր մեջ այս հոգւածը:

3. Իրբև ի՞նչ են ծառայում այժմ այդ պալատները:

Քյոշկ—պալատ
փարթամ—ճոխ, հարուստ, առատ

շղարշել—քողով ծածկել

Լավ կարգաւ սովորիր, այսինքն ուղիղ, վարժ, գիտակցաբար և զեղեցիկ (արտահայտիչ) կարգն, վորտեղ դրված ե բացականչական նշան ('), ձայնդ լեկկարացրու, վորտեղ շեշտ (') և դրված՝ բոլոր շեշտի՛ր (ուժեղ արտասանիր), իսկ վորտեղ հարցական նշան (°) ե դրված՝ հարցական ձեռով կարդա:

Արտագրի՛ր և աշխարհագրական անուններն ընդգծիր.

Անդրկովկասի նշանավոր քաղաքներն են՝ Թիֆլիսը, Բագուն և Յերևանը: Թիֆլիսը Վրաստանի և միևնույն ժամանակ ամբողջ Անդրկովկասի մայրաքաղաքն ե. նրա միջով ե անցնում Գուռ գետը: Յերևանը Հայաստանի մայրաքաղաքն ե, գտնվում ե Հրազդանի ափին: Բագուն՝ Ադրբեջանի մայրաքաղաքն ե, գտնվում ե Կասպից ծովի ափին, Ապշերոնյան թերակղզու վրա:

5. Պետրոպավլովսկի բերդը

Սիրելի՛ Հակո,

Պետրոգրադը շիմա բայլեկիկների քաղաք ե և կոչվում ե Լենինգրադ: Ես քաղաքի բանվորները շատ գործ են կատարել իմ, քո և շատ մարդկանց ազատագրութիւն համար: Լենինը շատ երսիրում այդ բանվորներին. պարծանք եր համարում նրանց մեջ ապրել ու աշխատել և նրանց համար ջան մաշել:

Բայց առաջ, յերբ ուռւ թագավորների կամքն եր իշխում եդ քաղաքում, նա կոչվում եր Պետրոգրադ՝ Պետրոս Մեծ թագավորի քաղաք:

Պետրոգրադի միջով անցնող Նեվա գետի մի ափին կանգնած ե ուռւ թագավորների քյոշկը:

Նեվա գետի մյուս ափին, ուղիղ քոշկի դիմաց, նստած է մը-
ռալլ ու ահարկու մի մեծ գերեզմանի նման Պետրոսավիլովսկի
բերդը:

Մոտ 300 տարի չէ նրա ուսերին նստած: 300 տարի նա ճրագ-
ներ է մարել, կյանքեր է փտացրել, և նրա բորբոսնած գրքում
քանի՞ սիրտ է մզել, ո՞, քանի՞...

Հազարավոր ճորտ գլուղացիներ են աշխատել այդ բերդի կա-
ռուցման համար:

Պետրոս Մեծ թագավորը հրամայել է՝ բոլոր աղատագրված-
ներին, խեղճերին ու ճնշվածներին մտրակի տակ բանեցնել:

Հազարավոր թշվառ մարդիկ հող ու քար են կրել շատ հեռու-
ներից՝ այդ հսկա գերեզմանի հիմքը դնելու համար:

Յեվ անթիվ թշվառներ ու ճորտեր իրենց արյան գնով կառու-
ցում են մահասարսուռ կամերաներ, մութ ու ցուրտ կաբցերներ,
վոր հետո իրենց լավագույն, հեղափոխական զավակների կյանքը
խամրի եղտեղ:

Թագավորների ձմեռային քոշկի դիմաց է կանգնած այդ
բերդը:

Տարիների սև հուշարձանը, անթիվ և անանուն հերոսների գե-
րեզմանը: Տասնյակ տարիներով են նստել այդ բերդում Կարակո-
ղովը, Նեչայեր, Ջերնիշևսկին, Միք. Նալբանդյանը և հեղափոխու-
թյան ուրիշ շատ ու շատ զինվորներ:

Պատմում են, թե յերբ այդ բերդում նստածներից սեկը հաը-
ցրել է՝ լճը կազատվեմ, — ինչ-վոր մեկը Հարախինդ պատասխա-
նել է.

— Այստեղ լեկոդները կամ խելագարվել են, կամ ինքնասպան
յեղել: Կամերաների դուռը շատ քիչ մարդկանց առաջ է բացվել:

Բանտարկվածները եղ բերդում անուն չունեյին. նրանց բերե-
լու ժամանակ արձանագրվում էր՝ «Եկե՛լ մի անհատ». խելագար-
վելուց կամ ինքնիրեն խփելուց հետո արձանագրվում էր՝ դուրս
գլվեց մի անհատ»:

— Նրանց կենդանի պիտի թաղել, նրանց մասին չպիտի գի-
տենա և վոչվոք, նրանք անուններ չունեն իմ թղթերում — այդ-
պես է հրամայել բերդի դիմաց կանգնած քոշկի տերը:

Յեվ այսպես, քանի՞ տա՛լ յակ. վոչ մի անուն չի արձանա-
գրված նրա թղթերում:

Ո՛ր, դաժա՛ն, դաժա՛ն, գաղտնախորհուրդ անկյունը բերդի:

Յեղել է, կերել է, տարել է, կորսվել է, չկա հիմա:

Համբ ու մռալլ, իրար հաջորդող և վոչ մի կամերա չասավ

եղ մասին վաշինչ: Լուռ, շատ լուռ ելին հաստ պատերը, միակ մեկ-
ված յերկաթե մահճակալը և փոքրիկ չլուսավորող պատուհանը:

Վոչ մի հուշ ընկածների, վոչ մի հիշատակ կենդանի և անա-
նուն թաղվածների:

Քյոշկի դիմաց, Պետրոպոլիտիկի ամրոցի կամերաներում—այն-
տեղ, ուր չերբեք չի հայել արեւը, այնտեղ, վորտեղից և վոչվոք չի
տեսել լերկինը:

Թագավորի քյոշկը ու սարայի դիմաց, ուրկից նա շատ հա-
ճախ, հայելաջինջ ապակիներից, դիտում եր իր բերդն աջն որերին
և ուրախանում, հրճվում՝ անհուն հրճվում, կենդանի թաղված հե-
րոսների մահով:

Այդպես եր կամքը մեծ թագավորի, այդպես եր ցանկանում նա:

1. Ի՞նչ պատմություն ունի Պետրոպոլիտիկի բերդը:

2. Ի՞նչ նպատակով եր շինված այդ բերդը:

3. Բերդարգելության այդ ձեւը համապատասխանում եր ցարական
խնքնակալության վողջ բնույթին:

կարցեր—մութ սենյակ բանտում |
(առանձնարան) |
Հուշ—հիշողություն |

հուշարձան—արձան
համր—անձայն, «լալ»

Կ Ա Ր Դ Ա՝

1. Ս. Լեշչինսկայա.—Ստեփան Խալտուրին, դինը 10 կոպեկ.

2. Կ. Վալենտինա.—Սոֆիա Պերովսկայա, դինը 35 կոպեկ:

Սովորիւ արբենական ցուցակ կազմել.

Այրբենի կարգով արտագրիւ հետևյալ ազգանունները.

Լենին, Ստալին, Կալինին, Ռիկով, Բուխարին, Մուստով, Տոմսկի:


6. Տպավորություններ Ձորագետից

Սարերի դադաթին ենք: Ձորագետի ամենաբարձր կետում փայ-
լում ե կարմիր դրոշը:

Մոտենում ենք հաղթական կամարին. Դեպի ձորը տանող նոր
ճանապարհ ե բացվել: Հանգարծ յերևում ե մարդկային բազմու-
թյունը ձորի հատակում:

կանաչների միջից անցնում է Ձորագետը, գալիս դեմ է առնում մի վիթխարի ցից ժայռի, գալարվում, քերում է ցից ժայռի կողերը և սուրում ներքև

Բազմությունը ցրված է սարալանջերին, նախշուն հագած գյու-



ղացի կանաչը կարծես գույնզգույն ծաղիկներ լինեն՝ սարալանջերի վրա ցիր-ցան ցանված:

Ներքևումն ենք, Ահագին ժողողուրդ կա: Մանում եմ գյուղացիների խմբերի մեջ: Նրանք լեկել են ընտանիքներով, յերեսաների և հորթերի հետ միասին: Միայն դատարկ խրճիթներն են գյուղում մնացել: Ամեն կին իր կողքին շարել է միջանի յերեսա—ամենաառատ բերքը Հայաստանում, — մատղաշն ելկախել է կրծքից: Տղամարդիկ փափախ են գրել կամ ամերիկյան կեպկա, ունեն այլոված թշեր և բովանդակությամբ լցված աչքեր:

Անցնում են զինվորական նվազախմբերը և տեղ են բռնում գորգերով, տերևներով ու ծաղիկներով զարդարված արիբունի կողքերին: Անցնում է կարմիր-բանակայինների ջոկատը հաղթական քայլերով:

Բազմությունը խառնվում է արիբունի մոտ: Տիրում է անհամբեր սպասողականություն: Մթնոլորտը լի է անակնկալով: Ներքևում Ձորագետը ֆշշում է, փշրում է իր ալիքները համառ սարերի հատակին:

Անդրկովկասի և Հայաստանի կառավարութեան անդամները բարձրանում են ամբիոնը:

Ժամը 12-ը քիչ անց՝ պայթում է առաջին դինամիտը: Բազմությունը ջնջվում է: Բաբախում են սրտերը: Դինամիտի պայթյունին անմիջապես հաջորդում է մասսաների աղաղակների պայթյունը: Սարերն արձագանգում են այդ պայթյունները:

Ժողկոմխորհի նախագահ ընկ. Սաքո Համբարձումյանը բաց է անում հանգեսը: Վորոտայից ծափահարությունները թնդացնում են ամբողջ հովիտը: «Լենինի պատգամների ղործադրությունը մեր պարտքն է» — ասում է նա: Ժողովուրդն արձագանգում է: «Խնանդանացիներն ալը» դղրում է ամենի սարերը: Ճառերի ընթացքում դինամիտի պայթյունները լցնում են ահավոր ձորերի դատարկությունը: Վազեդրությունը հասնում է իր դադաթնակետին: Որսխելաշվիլին բացականչում է. — «Ահա ապագա կենալար սոցիալիզմի ձայները, Հայ Ժողովրդին առաջնորդել են կաթողիկոսները և տերտերները ու բերել հասցրել նրան տնտեսական և քաղաքական դառն կացության: Այժմ թող ծաղկի և բարգավաճի հայ Ժողովուրդը»:

Դինամիտները վորոտում են: Համառ ժայռերը փուլ են գալիս և շաչտնով թափվում ձորը:

Այդ ստեղծագործող վորոտների տակ փոխվում է, վերածնվում է մեր աշխարհը:

1. Ի՞նչ նշանակություն ունի երեկտրոֆիկացիան մեր յերկրի անտեսություն համար:

2. Ի՞նչ խոշոր երեկտրոկայանում էս յերկ. պատմիր քո տպավորությունները:

Վեթիարի—հսկա, շատ մեծ սուրալ—արագ սլանալ տրիբուն—ճառախոսի բնի անակնկալ—անսպասելի բան

ամբիոն—բարձր, պատվանդանով վալը (ճառախոսի, դասախոսի համար)

ամենի—վեթիարի, հսկա



Դ՛նչպիս պիտի լի աշխարհիչ .

Վի՛ աշխարհի միջև բոլորովմե հոգ .
 Դիչր: Դադարների՞նով աշխարհի:

Աշխարհամեջիդ ժամանակ մի ուրի
 և մի միտ:

Ասի՛ն մի պարտաւանքան կրոյնաւ .
 Կի գործի համար աշխարհամեջիդ մի
 կարմիր:

Աշխարհամեջ. Կրտսեր մի բողբոս:
 Ջիւրիւն պիս աշխարհամեջի միջ յիշիդ
 դիմացկուն և ճշգրտապահ:

1. Կարգալու ժամանակ դադարներ անձում ես:
2. Դադարների տեղ թի՛նջ նշան և զբաժն:
3. Վերջակետերի տեղում ձայնդ բարձրացնում ես, թե՛ ցածրացնում:
4. Ի՞նչ տառով և սկսվում վերջակետից հետո յեկող բառը:

Թոռքի աչն մասերը, վորոնք իրարից բաժանվում են
 դադարներով և ձայնի իջեցումով, կոչվում են ասույթ:

5. Գանի՞ ասույթ կա այստեղ:
6. Ինչի՞վ են բաժանվում ասույթներն իրարից: Ի՞նչպիսի տառով և
 սկսվում յուրաքանչյուր ասույթը

7. Լեռտեքստիլի բանշենում

- Ահա և մեր նոր տունը, — ընկերուհու հետ սենյակի դռնից
 ներս մտնելով՝ ասաց տեքստիլ գործարանի բանվորուհի Հայկուշը:
- Ոհո՛, աստ կարգին պալատի պես շինքում ես ապրում, ելի:
- Հապա, Սիրվանդ, չես կարող լերևակայել, թե վորքան եմ

ուրախացել նոր սենյակ ստանալու համար: Այս շէնքի մեջ ամեն հարմարութիւն կա. ամեն անգամ վոր սենյակիս ելեկտրական լամպը վառոււմ եմ, սիրտս փառավորվում ե, սենյակիս պատերը կարծես ծիծաղում են դեմքիս: Մանավանդ չեբբ աշխատանքից հոգնած գալիս եմ, մանուկ բաղնիքը ու հանգիստ լողանում եմ ինձ համար:


— Բաղնիքն Եւ շէնքի մեջն ե, Հայկուշ, — հարցրեց ընկերուհին.

— Իհարկե՛, հենց սենյակիս մոտ. չեբբ ուզում ես՝ լողացիր, չեբբ ուզում ես՝ լվացք արա:

— Իսկապես վոր շատ լավ ե:

— Հապա մի պատուհաններին՝ Նալլը. ամեն առավոտ արեւը ծագում ե թե չէ, առաջին հերթին իմ դեմքն ե համբուրում, իմ մազերը շոյում... Ա՛խ, ինչքան լավ բան ե արեւը, ինչքան լավ ե արեւոտ ու չոր սենյակում ապրել...:

— Նո՛ր դիտես, Հայկուշ. արեւը կլանքի աղբյուր ե. առանց արեւի վոչ մի կլանք լինել չի կարող:



— Դրա համար ել հայրս մեռավ առանց արեւի. այն ժամանակ դառն եր կլանքը, Սիրվադը. մենք՝ հայրս, մայրս ու յես, ապրում եյինք գետնափոր մի տնակի մեջ: Մեր անկողինները խոնավութիւնից միշտ թաց եյին լինում, իսկ արեւ յերբեք իր բարի հայացքը չեր ուղղում մեր տնակին: Մեր տնակը մութ եր գերեզմանի պես ու խոնավ. հայրս հիվանդացավ այդ գետնափոր տան մեջ, հիվանդացավ ու մեռավ: Այն ժամանակ յես 10 տարեկան եյի: Տարիներն անցան, ամեն ինչ փոխվեց: Այժմ վոչ միայն յես, այլ այս շէնքի բոլոր սենյակներում ապրում են մեր գործաբանի բանվոր-

ներն ու նրանց ընտանիքները: Բոլոր սենյակներն ել լուսավոր են, մեծ մեծ պատուհաններով, չոր և բարձր ել ունեն իրենց հարմարությունները:

— Իսկ խոհանոց:

— Յուրաքանչյուր տնվոր, իհարկե, ունի իր խոհանոցը. յես ել ունեմ, բայց քիչ եմ դործածում. շենքի ներքեի մասում ճաշարան ունենք, վորտեղից հժան գնով և լավ վորակի ճաշ ենք ստանում, Դեռ շատ ուրիշ հարմարություններ ունի շենքը, վորոնցից ոգտվելու կարիք չունեմ յես առայժմ:

— Այդ ինչ հարմարություններ են, վորոնցից ոգտվելու կարիք չունես դու:

— Այ, որինակ, շենքի մի մասում տեղավորված եմանկական մսուրը, վորտեղ պահվում են բանվորուհիների լերեխաները, լերը նրանք աշխատանքի յեն գնում իսկ յես առայժմ չիմ ոգտվում, վորովհետեւ լերեխա չունեմ. — ժպտալով ասաց Հայկուշը:


— Լավ, դե ինչ վոր պիտի վերցնես, վերցրու գնանք. հիմա ժողովը կսկսվի, — տեղից վեր կենալով դիմեց ընկերուհին:

— Յես պատրաստ եմ, գնանք:

Նրանք դուրս չեկան սենյակից:

1. Ինչպիսի քաղաքաններում են ապրում բանվորները հիմա:

2. Բանվորների համար ձեզ մոտ հանրակացարաններ չկե՞նում են:



Լենտեքստիլ — Լենինականի տեքս-
տիլ գործարան
բանշեն — Բանվորական շեն, թաղ

վորակ — հատկութիւն, լավ կամ
վատ լինելը

Դիմում գրիր արհմիության շարժերն անցնելու համար:

Ուսադրություն դարձու, թե ինչ է գրվում ձախ կողմը, ինչ է գրվում դրանից հետո աջ կողմը, ինչպես է գրվում դիմումը, վոր-
տեղ է գրվում ստորագրությունը, ամսաթիվը յեվ տեղը:

Զողարարատ միություն

Զամանակի բանկրոտի

Բարրանի Անրար Գալարյանի

Դիմում

Արամ կից ներկայացնելով լուս-
պրամ պույակագրության ֆարրը,
խնդրում իմ ընտանիք ինչ Զողար.
պատ միության շարժիր:

միության կանոնադրությունն
ինչ կաշրմի թ:

Անրար Գալարյան.

29 Մայիսի 1929 թ.

ՀԻՇԵՐԻ ԴԻՄՈՒՄ ԴՐՆԼՈՒ ԶԵՎԸ

1. Նախ վերևում ձախ կողմը մեծատառով գրվում է այն
հիմնարկի կամ անձի անունը, վորին տրվում է դիմումը:

2. Նրա տակը աջ կողմում ցույց է տրվում, թե ով է տա-
լիս դիմումը:

3. Դրանից հետո առդի աջ կողմում գրվում է ԴԻՄՈՒՄ:

4. Ապա կարմիր առդից (խորքից) համառոտ, պարզ գրվում
է ինչ վոր պահանջվում է (ինչի, բողոք է այլն):

5. Դիմումի վերջում աջ կողմը գրվում է դիմում գրողի
ստորագրությունը, իսկ ձախ կողմը՝ նախ ամիսը, թիվը և տա-
րեթիվը և ապա սրա տակն այն տեղի (քաղաք կամ դուրդ) տ-
նունը, վորտեղ գրվել է դիմումը:

8. Մի քաղաքում

Միմյանց նման ցած, խոնավ, կեղտոտ և մուժ սենյակները մի ամբողջ շարք էր։

Դռնապանն ինձ պետք է առաջնորդեր սենյակից սենյակ, վորոնց մուտքը խափանված էր միմյանցից տախտակի պատերով։ Առաջին դուռը բացվելուց՝ ապականված ոգի մի գարշելի հոսանք դուրս խուժեց սենյակից։ մի վայրկյան տատանվեցի և ապա ներս մտա։

Մեկը պառկած էր մի խարխուլ, մերկ թախտի վրա։ մոտ քառասունհինգ տարեկան, կարմիր դեմքով, ուռած շրթունքներով մի մարդ էր։ Բերանը կիսաբաց՝ նա ընած էր։

Մյուս անկյունում, մերկ հատակի վրա պառկած էր մի կին, ուռած աչքերով, ձախ աչքի տակը կոպտած։

Յերբ յես ներս մտա, նա բարձրացրեց գլուխը, մի ինչ-վոր բան փնթփնթաց քթի տակ և նորից փակեց աչքերը։

Պատահոտած զգեստներ, վոսկրներ, կեղտոտ ամաններ, փայտե գդալներ—բոլորը խառնիխուռը թափթփված էյին։

Թախտի մոտ լճացած էր մի գարշելի հեղուկ, վորին նայելիս մարդու ներքո տակնուվրա չեր լինում, բերանը ջրակալվում։

Յես աշխատում եյի չնայել։

Խեղդելու չափ ծանր էր սգը։

— Ի՞նչպես ե ձեր ազգանունը։

Ինձ վրչվոր չպատասխանեց։

— Ովքե՞ր են սրանք,—հարցրի դռնապանին, վոր լուռ կանգնած էր մոտս։

— Չ...ով։

— Քանի՞ տղամարդ կա։

— Մեկ մարդ ե, մեկ կին։

Յես նշանակեցի և շտապեցի դուրս դալ։

— Լավ փականագործ ե, ամա ինչ՞ անես, վոր խմում ե, մի որումը մի շաբաթվա աշխատածը փչացնում։ Են ել կինն ե. նա յել մարդուց պակաս չի խմում։ Բոլորն ել միմյանց նման, ամեն տեղ նույն կեղտոտությունը, նույն խոնավ, բորբոսնած պատերը։

Յես շարունակում եյի մի սենյակից մյուսը մտնել. ամեն տեղ նույն ապականված ոգը, մարդիկ թափթփված միմյանց վրա։

1. Ի՞նչպիսի բնակարաններում եյին ապրում բանվորները հին ժամանակ։

2. Ի՞նչ ազդեցություն եյին ունենում առողջության վրա այդպիսի բնակարանները։

3. Ինչո՞ւ հնարավոր չե՞ր տանելի պայմանների գոյութիւնն հին կարգերում:

հանրակացարան—ընդհանուր,
միասին ապրելու տեղ
խափանված ելին—փակված խան-
դարված

զգեստ—հագուստ
գարշելի—զգվելի

9. Ալլահվերդու պղնձահանքերում

1

Յերեկ, յերբ դու ձի նստած անցնում ելիր լեռան վրայով, քալում ելիր Շամուղի չարդախավոր խրճիթների միջով, կարճո՞ղ ելիր յերևակալել, վորալդ չարդախավոր խրճիթների տակ կանաչազարդ լեռան ներսում բանվորական շոկատներ կան:

Յե՛վ հիմա, յերբ հանքերի գոնդն առաջին անգամ արդեն խըփել ե, վոր բանվորները քնից զարթնեն, յերկրորդ անգամ խփել ե, վոր բանվորները հագնեն իրենց մասնագիտական համազգեստը, պատրաստեն կարբիդի լամպերը և ձեռքներին բռնած՝ խմբերով իջնեն դեպի ձորը, դեպի առանելները,—կարճո՞ղ ես յերեկավայել, վոր լեռը պիտի կլանի նրանց:

Դո՞նգը խփում ե յերրորդ անգամ: Քիչ հետո առանելների մոտ հավաքված բանվորների գորշահագուստ շոկատներն անհետանում են:

Այդ նշանակում ե՝ սկսվեց աշխատանքը պղնձահանքերում:

Մերունի ինժեները քեզ արտոնադիր ե տալիս, ապա կարգադրում ե, վոր քեզ համար մասնագիտական հագուստ և կարբիդի լամպ բերեն:

Մեխանիկական արհեստանոցի հույն վարպետն սկզբում առարկում ե, թե առանց որդերի չի կարելի լամպ բաց թողնել: Բայց հետո յերբ հասկանում ե, վոր դու վոչ թե Լենինգրադից կամ Բազմից յեկած պրակտիկանս ես, ալ՝ միորա այցելու և լամպը յերկու ժամից հետո վերադարձնելու յես,—խսկույն պատրաստում ե կարբիդի լամպը և տալիս ձեռքդ:

— Դուք պատրաստ եք հանքահոր մտնելու համար:

Բայց մինչ այս, մինչ այն՝ արդեն գոնգը խփել ե առավոտյան դադարը: Դու պետք ե գտնես առաջին ռայոնի շոկապետ Պավլելին, վորպեսզի նա առաջնորդի քեզ հանքահորերը և բացատրի, թե ինչ կա այնտեղ:

— Ուզում եք վերից՝ մտնենք, թե՛ վարից,—հարցնում ե քեզ Պավլեն:

Քեզ համար միևնույն է՝

Առաջից իջնում ե Պավլեն։ Դու հետևում ես նրան։ Աստիճանները տեղ-տեղ փայտից են, տեղ-տեղ հողից։ Պետք է ձախ ձեռքով պահես լամպը, իսկ աջով ամուր բռնես շախտի ամբողջ չերկարութեամբ պատին ամրացրած փայտը, վոր պիտիվայր չգլորվես մինչև հասակը։

Կոշիկներդ ու շորերդ ամբողջովին ցեխոտվում են։

— Վոչինչ,— սիրտ ե տալիս Պավլեն,— ուրիշ կերպ չի կարող լինել։

2

Դեմից լույս ե յերևում։ Մի բանվոր կարբիդի լամպը ձեռքին գալիս ե։ Պավլեն հունարենով ինչ-վոր խոսում ե նրա հետ։ Անցնում ենք։ Շախտը հեռագետե դառնում ե հորիզոնական։ Պատերն ու առաստաղն ամրացված են խիտ դրված հաստաբուն կաղնի գերաններով։

Պավլեն գերաններն ստուգելով՝ առաջ ե գնում։ Մի տեղ չերկար կանգ ե առնում։

— Տեսնում եք,— դառնում ե քեզ,— յերկու ամիս չկա, ինչ ամրացրել ենք, և արդեն իջել ե։ Հարկավոր ե արդեն փոխել, հարկավոր ե շարունակ ամրացնել։ Ամենահաստ գերանները հագիվ լեքեք ամիս են դիմանում։ Ամրացման աշխատանքը հսկայական ժամանակ և ուժ ե խլում այսպես։

Այո, հարկավոր ե շարունակ ամրացնել,— մտածում ես դու։

Պատահում ե հաճախ, վոր թույլ ե ամրացվում, կամ վերամրացումը ժամանակին չի կատարվում։ Այն ժամանակ տունիլը փլվածքներ ե տալիս, և բանվորները ֆնսավածքներ ու շարվածքներ են ստանում, աշխատանքն այն մասում դադարում ե՝ մինչև փլվածքը մաքրվի և վերամրացվի։ Իսկ արտադրութունը տուժում ե դրանից։

— Պետք ե շարունակ ամրացնել, վերամրացնել և լավ ամրացնել,— կարծես ինքնիրեն խոսում ե Պավլեն։

Անցնում ենք առաջ։ Մի խումբ քանվորներ տնքոցներով և աղմուկներով ինչ-վոր ծանրութուն ներքևից վերև են քաշում։

— Ա՛յ, դոչաղներ,— խրախուսում ե Պավլեն։


Վերջապես բարձրանում ե հսկայական գերանը։ Այդպիսի դժվարութեամբ են տունել բարձրանում բոլոր հաստատուն սյուներն ու գերանները և նույն ճանապարհով ել փտածներն ու անպետքացածները դուրս են տարվում։

Շարունակում ենք առաջ անցնել։ Տեղ-տեղ հարկավոր ե փո-

քի վրա սողալ, վորովհետեւ պղնձահանքի մնացորդները դեռ դուրս
չեն տարված վազոնիկներով։

Շարունակ իջնում ենք և իջնում։ Հանքահորը տասը հարկ է։
Մենք գտնվում ենք վեցերորդ հարկում։ Դեմ ենք առնում մի հո-
ղե բլրակի, վորը կարբիդի լուսի տակ վոսկեզուլն շողշողում է։

— Այս պղինձն է,—բացատրում է Պավլեն և բռան մեջ առ-
նելով՝ դեմ է անում ջու աչքերին։



Պղնձահողի կույտի վրայից փորսող տալով անցնում ենք։ Բան-
վորները բլունկներով և բահերով քանդում են պղնձահողի շերտե-
րը։ Նրանք ժամանակ չունեն խոսելու։ Պղնձահողի փայլը, կարբի-
դի լուսով վողողված, շողշողում է նրանց դեմքին։ Նրանց դեմքե-
րը խանդավառ արտահայտություն են ստանում։

Գանձերի հեքիաթական աշխարհում չէ՞նք արդյոք։

Վոչ, Այդ հեքիաթ չէ, այլ իրականություն։

— Իիչ հետո,—բացատրում է Պավլեն, — այստեղ դինամիտ ենք
դնելու, և լեբը ժամը 1-ին սկսի պայթել, բոլոր լեռները կդրդան։

Հրաժեշտ ենք տալիս պղինձ հանող բանվորական։ Չոկատին և
շարունակում ենք սողալ տունեկներով։

1. Ել ինչ պղնձահանքեր կան Նորհրդային Հայաստանում։

2. Ի՞նչպես են հանքը ձեռք բերում։

ջողատ — խումբ
զոնգ — մետաղյա սկավառակ, վո-
րով տալիս են աշդանշան
արտոնագիր — գրութիւն վորեկ
բան թույլատրելու համար

պրակտիկանտ — պրակտիկայով —
գործնական աշխատանքով պա-
րասպար
որդեր — հրամանագիր
շախտ — հանքահոր
խանդավառ — վոզեոված

Հետեւյալ ձեովով լիազորագիր գրիր յեւ՛ տուր քո ստորագրու-
թուներ վավերացնեն:

Ջիւալորութիւր

Ջիւալորութիւն քաղաքացի վաւերան
Գրիգորյանիւն՝ Սիլվափրդու պղծ-
չաւոյարանի վարչութեանից արա-
նայրու 1929 թ. հուլիս ամսիս իմ ու-
նիքը — երեսուն (50) ուսրի :

Սիլվափրդու պղծչաւոյարանի
բանւորի վարդան Գիւրգյան

1929 թ. հունիսի 15-ին

ՁՄՈՒՍՆԱՍ

Լիազորագրի մեջ ցույց ե տրուոմ

1. Այն անձի անունը յեւ՛ ազգանունը, վորին լիազորում են:
2. Ի՞նչ ե լիազորում:
3. Ո՞վ ե լիազորում յեւ՛ նրա ստորագրութիւնը, ժամանակն ու տեղը սովորական կարգով:
4. Վերջում ավելացվում ե, թե ով ե ստորագրութիւնը վավե-
րացրել:

ԾԱՆՈԹՈՒԹ.— Ստորագրութիւնը կարող ե վավերացնել հիմնա-
կի վարիչը կամ քարտուղարը կնիքի դրողմամբ:

10. Հին գործարանում

Դեպքը պատահել է այն ժամանակները, յերբ բանվորները Հեյլին համարձակվում խոսք ասել և անտրտունջ կուլ ելին տալիս ամեն վիրավորանք, անխոս տանում և յին կյանքի բոլոր դառնությունները:

Այստեղ պես միտա է: Կանգնած ելի գործարանում սեղմիչները յետևը, մեկ էլ յետևիցս մի սրտակոտոր անմարդկային ձայն: Ի՞նչ պատահեց: Արագ լիտ նայեցի՝ վոր ի՞նչ: Յերեք քալ ինձնից հեռու փռվել է մի միրուքավոր խոշոր մարդ ու ցավից կուլ ու ձիգ է անում: Թևիցը, վորից մի կտոր եր միայն մնացել, արյունը աղբյուրի պես լսփում եր: Հենց այդ նույն մարդու արյունը կաթկաթում եր կանգնած մեքենաների ատամներից: Դադգյահի տակ վայր եր ընկել պոկված թեք, վորի դաստակը մեռել-կապտել եր:

Դեռ մտքերումս եր այն ձուլող բանվորի պատկերը, վորը կենդանի այրվեց: Հիմա չեղ արհեստանոցում բանվորի գոռոցը վոր լավեց, բանվորները խելակորույս դուրս թափվեցին արհեստանոցներից: Յեկան գործարանատերն ու մյուս իշխանությունը:

— Մեղավորը ինքն է: Պետք է մոտիկ տաք: Աչքը դրա համար ե...— վրա տալով խոսեց գործարանատերը՝ դեռ չիմացած, թե ինչ կա:

— Նա ինձ տվեց կտրիչը, — պատմում եր սրողը, — ձեռը մեկնեց... ու վոնց ձեռը ընկավ դադգյահի ատամների մեջ՝ չնկատեցի: Կլինի վոր բլուզիցը չանթեց:

— Յես ել հենց այդ եմ ասում, վոր ինքն է մեղավոր: Հենց միշտ ել բանվորներն անգագուշ են: Մի, տղերք, ապա մի սրան տալիք հիվանդանոց: Յես ֆելդշերին իմաց կանեմ, — ավելացրեց գործարանատերը:

Ջարդված բանվորին վերցրին և արհեստանոցից դուրս տարան: Գոռոցն ու տնջոցները դադարեցին: Իսկ այնտեղը, ուր ընկել եր բանվորը արյունը կանգնել եր անշարժ լճի պես:

Բանվորներից մինը կուցավ, մտավ դադգյահի տակ ու դուրս բերեց պոկված թեք՝ կապույտ բլուզի ծլանգները վրայից կախ:

Բերդի յերեսը վողջ սարսափ եր ու զզվանք: Յեվ յերբ թեվը տանում եր՝ յերեքալով եր գնում:

— Ինքն է մեղավոր: Աչքն ել հենց դրա համար է տված, վոր մոտիկ տաս, — տասն անգամ կրկնում եր գործարանատերը, վորի խիղճը՝ յերևում եր՝ իր տեղում չեր:

1. Յարական գործարանում բանվորներին աշխատանքի պաշտպանութիւն կ'աւր:
2. Այժմ ովքեր են հետեւում աշխատանքի պաշտպանութեան:
3. Հին գործարաններում սոցիալական ապահովագրութիւն կ'աւր:
4. Սոցալայն ի՞նչ դեպքերում ե ոգնում բանվորներին, որինակ՝ վատաւորչներին, հիվանդներին, գործազուրկներին, աշխատանքի անկարներին, հաշմանդամներին և այլն:

11. Արտադրական խորհրդակցութիւն

(Մի բանվորի հիշատակարանից)

Այսոր մեզ մոտ արտադրական խորհրդակցութիւն կար. Ճիշտն ասած՝ վաղուց սպասում էլի այդպիսի մի խորհրդակցութեան: Վաղուց յես մեր գեպոյում միքանի բացեր էլի նկատել, վորտեք փաստում են արտադրութեան բարձրացման. այդ պատճառով էլ յես ուզում էլի բոլորի առաջ թվել այդ բացերը: Յես միքանի անգամ այդ մասին ասել եմ գործարկումի նախագահին, բայց նա ուշք չի դարձրել: Վերջապես այսոր բոլորի ներկայութեամբ ասացի:

Հալ եր, վոր զեկուցողը հենց ինքը գործարկումի նախագահն եր: Յերբ նա զեկուցումը վերջացրեց, յես ձայն խնդրեցի:

— Դուք,—սկսում եմ յես,—ասում եք, վոր պետք ե իշեցնենք ինքնարժեքը մեր արտադրութեան մեջ, բայց մեզ մոտ արտադրութեան բարձրացմանը փաստող միքանի պայմաններ կան: Միքանի բանվորներ շարունակ ուշանում են աշխատանքից և շուտ գնում: Ուրիշներն անտեղի կերպով բացակայում են: Յես անձամբ ասել եմ ձեզ այս մասին, բայց դուք պետք լեղած ուշադրութիւնը չեք դարձրել:

Իմ խոսքից հետո նայում եմ շուրջս. ամբողջ դահլիճը, վոր լիքն եր բանվորներով և մասնագետներով, ինձ եր նայում: Նրանցից շատերը ձայն են խնդրում և հերթով խոսում:

— Արտադրութեան բարձրացման համար,—ասում ե փակա-նագործ Պաշիկը,—վարչութիւնը քիչ ե մտածում կարծես. պատահել ե, վոր մենք միքանի ժամ պարապ կանգնել ենք նյութեղէն չլինելու պատճառով: Վարչութիւնը պետք ե մեզ ժամանակին նյութեղէն հասցնի:

— Ճիշտ ե ասում,—տեղից բղավեց սլեսարի աշակերտ Ունիկը,—միջանկյալ ասեմ, վոր այս Ունիկը միշտ այդպես ե. ինքը յերբեք չի վեր կենա խոսի. միայն նստած տեղից կըղավի «ճիշտ ե» կամ «սխալ ե» և նման բաներ: Այդպիսի մարդկանց յես չեմ սիրում. խոսք ունեն, թող վեր կենան՝ ասեն. չունեն՝ թող լռեն ու տեղները նստեն:

Այնուհետև իմ ընկեր Վարդանը դուրս յեկավ:

— Մենք ինքնարժեքը կիջեցնենք այն ժամանակ, — սկսեց Վարդանը, — իբրեւ բարձրացնենք աշխատանքի դիսցիպլինան: Մեզ մոտ թույլ եւ աշխատանքի դիսցիպլինան, Յերիտասարդ բանվորներից շատերը փոխանակ սովորելու վարպետներից, մասնագետներից, նրանք հակառակում, կովում են վարպետների հետ և աշխատելով չեն վորակավորվում: Պետք եւ բարձրացնել աշխատանքի դիսցիպլինան:

— Վարպետներն իրենք ուշք չեն դարձնում մեզ վրա, — տեղից դարձյալ բղավեց Ունիկը:

— Մնւտ եւ, սնւտ եւ, — դահլիճի այս ու այն կողմից պատասխանեցին նրան:

— Կարգ պահպանեք, ընկերներ, — գոչեց նախագահը և ձայնովեց ստափավոր բանվոր Արտեմին:

— Դատարկ բան եւ, ընկերներ, — սկսեց վարպետ Արտեմը, — վոր առում են, թե ուշացավ կամ բացակայեց ու արտադրութունը տուժեց: Դրանից արտադրութունը մեծ մնաս չի կրի, դրա դեմ կովելը հեշտ եւ վարչական միջոցները միջիչ սևեղացվեն թե չե, եզ բոլորը կվերանաւ: Միայն մի բան եւ կարևոր արտադրութւան. այն, վոր բանվորն իր աշխատանքի ժամին, իր ստանոկի առաջ նրտանց ու յեռանդուն գործ անի. այդ ժամանակ բանվորը, հավատացած յեղեք, աշխատի արդյունք կտա, վոր ուշացումն եւ կծածկի ու մի 20 տոկոս եւ ավելի արդյունք ցուլց կտա: Այս եւ վոր արտադրութւունը կբարձրացնի: Մի բանն եւ այն եւ, վոր մեր տեխնիկական միջոցները պահաս են: Միջանի մեքենաների կարիք ունենք, և այդ կարիքը պետք ե բավաբարել:

Յորհրդակցութւունը յերկարեց: Բոլոր խոսողները միջոցներ եյին առաջարկում արտադրութւունը բարձրացնելու համար: Մի ընկեր, վոր Փաբլորթուսում ինձ հետ միասին ե սովորել ու միասին ել դեպոյ յենք մտել, առաջարկեց կազմակերպել սոցիալիստական մրցում: Այդ շատ խելոք առաջարկ եր: Այդ շատ կնպաստի գործին:

Վերջում յես առաջարկեցի հետևյալ բանեմքը:

«Անհրաժեշտ համարել ինքնարժեքի իջեցումը և ամեն կերպ աշխատել իրականացնել այն՝ պայքարելով աշխատանքի դիսցիպլինայի թուլացման դեմ ու բարձրացնելով արտադրութւունը: Անհրաժեշտ համարել միևնույն ժամանակ սոցիալիստական մրցումների կազմակերպումը»:

1. Ի՞նչ թերութւոյնների վրա կանգ առան բանվորները:

2. Ձեզ մոտ արտադրական հանձնաժողովներ կան: Ի՞նչպիսի հարցեր են ըննվում այդ ժողովներում:

բանածեմ—ժողովում լեզած սուս- | պայքարել—կազմակերպված, գի-
ջարկների կամ խոսքերի ամփոփում, | տակցական կերպով կռիւ
վոր դրվում և քվեարկութիւն |

Հետեւյալ ձեւով ստացական գրի.

Արարական

Արարաց ջիւղերականի քիֆարիլ գոր-
ծարանի երաւեանգլխի ընկ. Սոֆիլ Գրի
գործարանից 30 որբնակ «Զաւարանի
Նիշխարավորոսի» №1 պարտադրովի
պարգաւնավորոսիների մի քանակի
յաւար:

Կարգաւորարարի յա. Վարդան

1929 թ. Դարբի 14-ին

Ջիւղերական

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչպե՞ս և որովո՞ւմ ստացականը:
2. Ինչո՞ւ և նման լիազորագրի ձեռն:

12. Սեանա լիճը

Սեանա լիճը գեղեցիկութեան մի իսկական հրաշալիք է և Նրա
դիրքը Հաիւադանց բարձր է և Զորս կողմից նրան սեղմում են ժայ-
ռերը, և նա տարածված է ափերով գեպի վեր բարձրացած՝ ափ-
սեյի նման:

Ափերն այնքան էլ բարձր չեն, բայց տարրինակ են ու տեղ-
տեղ չքանում են մշուշապատ հեռուներում: Նրա լերեսին սահում
են մեծ ալիքներ՝ արծաթափայլ գալարումներով: Մի տեղում, լիճը
շրջապատող լեռնաշղթայի վրայով, բամբակի հաստ շերտի նման,
ոտաբոսի կերպով ծփում են ամպերը: Քիչ հեռու նրանք անցնում

են լեռների դադաթներով ու մի ամբողջ ժամ տարածվում լճի կապուտակ մակերևութի վրա թանձր սպիտակ մշուշով:

Մենք գնում եյինք մոտորային մակուկով, վոր ճոճվում եր ծովային թեթև ակեղծուվից: Լեռների սառնորակ ջուրը իր ծը-



մանքներն եր թափում մեր լերեսին: Լճի մոտերքը մարդկային կացարաններ քիչ եյին, մանավանդ վոր դեռ չեր սկսվել իսկական ձկան-վորսը: Իսկ Սևանա լիճը հայտնի չե անբնական մեծության իշխան ձկներով, վորից մենք հաճույքով ճաշակեցինք: Այժմ, բացի այս ձկներից, խորհրդային կառավարութունը վորոշել ե Սևանա լճում ուրիշ տեսակներ ևս բաղմայցնել: Հեռավոր հյուսիսից այստեղ են ուղարկել միլիոնավոր մանրիկ սալմոն-ձկիկներ, վորոնց զցել են լիճը: Նրանք լավ են զարգանում և մոտ ապագայում կդառնան Հայաստանի հանրապետության յեկամտի աղբյուրներից մեկը:

Այդպես բարձր դիրքի վրա գտնվող հսկայական ջրի ուժից ոգտվելու մի ծրագիր կա Ջրա-էլեկտրոկայան կառուցելու համար, վոր հսկայական նշանակութուն պիտի ունենա ամբողջ Անդրկովկասի համար: Այդ լճի մեջ անշուշտ Հայաստանն ուժերի մի ահագին աղբյուր ունի, վորը մեծ ազդակ կլինի յերկրի լերիտասարն արդյունաբերության համար:

1. Ի՞նչ ձկներով ե հարուստ Սևանա լիճը:
2. Ի՞նչ ոգուտներ են սպասվում Սևանա լճից ապագայում:
3. Ի՞նչ հնություններ կան Սևանա կղզու վրա:

ափսե—սնակ		մակույկ—նափակ, լողկա
տարրորինակ—վոչ սովորական, ո-		հաճույք - բավականութուն
տարտի		մաշակել—համ առնել
մոտորային—մոտորի ոգնութամբ		հաճույք մաշակել—բավականու-
շարժվող		թյուն ստանալ

Այս ձեւով կազմի՛ր ձեռնադրութեանի ժողովի արձանագրութիւնը.

Ներշնչագրութեան

շարաւիճի խումբի համերակարարմանի
N1 խմբի 1929 թվի փետրվարի 9-ի ժողովի
Ձեռնարկ յիշ 24 հոգի.

Չափազանի Ս. Փանդուրյան

Քարտուղար՝ Վ. Մարտիրոսյան

Զեւիչիւն	Վարդիշիւն
1. Քարտուղարից նշ. վրա արաւած 10 հաւ- նար «Նախկալի» հասին	1. «Նախկալի» համար նիւրը երբեքով քաւ առ- վարդիշիւնի քանիւ կարդալու համար:
2. Նձնաշիւն աշխա- տանիւնիւրի հասին	2. Նաին որ կիս յիշիւ գրաւոր աշխատանք քաւ կարարիւր:
3. Պատասխանիւրիւն դատարանում չհա- յտ հասին	3. Պատասխանիւրիւն, քաւ երբեքաւաւիւրիւ վրա վրիւ չթողիւր քա- ւարանում:

Չափազանի Ս. Փանդուրյան

Քարտուղար՝ Վ. Մարտիրոսյան

1. Ինչ է գրվում առաջին տողում. իսկ յերկրորդ տողերում:

2. Վերջին է գրվում՝ նախագահ և քարտուղար:

3. Ինչ է գրվում առաջին սյունակում և ինչ է գրվում յերկրորդում:

4. Վերջին է գրվում նախագահի և քարտուղարի ստորագրութիւնը:

13. Տեխնիկայի տոնը

Այդք լճի ավազանը և Մեծամորը վաղուց ի վեր անպետք են յեղել, վորովհետեւ նրանց ավազաններն այնքան են խոր, վոր Արարտայան դաշտը մնացել է չոր: Ամառվան տապին, չեբբ Արարտայան դաշտի ամալությունները խանձվում են, և գարնան կանաչ խոտն սկսում է դեղնել, հեղեղների նման հոսում են առունները:

Ձկա հողի մի շերտ, վորի մեջից սառ հոսանքներ չժայթքեն դուրս: Թե լճի և թե Մեծամորի յեղերքներն ամալի չեն: Ձկա վոչ մի ծառ: Զրի միջից միայն յեղեղներ են բարձրանում, վորոնք ջրի առատությունից շուտով հագեցնում են և սկսում դեղնել:

Դարեր շարունակ այս վայրերում միայն գորտերն են կոկոացել միորինակ, միորինակ: Խոշոր կրիաներ, դանդաղ և վախկոտ, փուռի մեջ նետված քարերի նման տաք քարերի վրայից յերերալով՝ գալիս ընկնում են ջուրը, լողում են և զոմանում:

Այստեղ գիշերողներ չեն յեղել: Միայն ճամպորդներն են անցել, վորոնք ցած են յեկելիբենց իշույ, կռացել, խմել են Արարածի սրտից ժայթքած սառ ջրերից, հետո վրտներն են վաղել, նայել են շուրջը հուսահատ նայվածքներով, գլուխները թափահարել թե ինչպես ջրի այս հարուստ ավազաններն այսքան խոր են և հաբուստ, իսկ հողի տարածություններն այնքան բարձր:

Մեքենաների ստեղծագործ աղմուկը լռեցնում է հիմա գորտերի կոկոացը: Ձկա հիմա Լուսավորչի կանթեղը: Գիշերն ելեկտրական լույսերը վրդովում են ամալի տարածությունների անդորրը: Դարավոր անմարդաբնակության փոխարեն տասնյակ հարյուրավոր բանվորներ և տեխնիկներ են ձգտում այնտեղ վերջնականապես կոտրելու ընության համառությունը:

Անվերջ խոխոռոց, յերկաթի աղմուկ: Պայթում է դինամիտը: Լիճը անորթնակ հոգումներ է ապրում: Վիթխարի և վաղըկենական շատրվան է զոյանում լճի կրճքի վրա: Փորում են լճի ավազանը, նրա խորությունը ավելի չեն խորացնում, վորպեսզի հափշտակեն լճի սառ հոսանքները, բարձրացնեն վեր և զովացնեն դարերի չորությունը:

Այս ամալության մեջ մեր նախնիքները միայն մատուռ կկառուցելին միջնադարի վոգով, մութ, փոքր: Խնկավետ մի մատուռ, վորի շուրջը միբանի վանականներ՝ աշխարհից փախած կաղթելին, կուտելին, կխմելին, ելի կուտելին և կքնելին:

Բանվորներն այստեղ, ժայռի գաղաթին կառուցել են մի շենք, վորի ներսը վոչ խաչ կա, վոչ մոմ և վոչ ել մի դռնակ՝ ծունք չու-

քելու համար. այլ տրանսֆորմատորի յերկաթյա թելերն են, վորոնց ուժը պիտի գրկի լճի ջուրը, բարձրացնի վեր և կանաչացնի դարավոր ամայությունը:

Բանվորները նստած ճաշ են ուտում: Նստած են նրանք խոշոր յերկաթյա խողովակների վրա, վորոնց միջից ջուրը՝ հլու և հնազանդ, շուտով պիտի հոսի և տարածվի հացի դուչն ունեցող դաշտերում:

Այստեղ անհատներ չկան. չկա մեկը, վորը գլուխն ավելի բարձր կանգնի քան տասնյակ հարյուրավորներինը: Նրանց ինժեները կոչվում և աշխատանքների ղեկավար, վորի գեմքը քաղաքից հեռու՝ նման և բանվորների գեմքին—ախոսացած, նրբությունը կորցրած:

— Մեր բանվորները ձմեռն աշխատում էյին ջրի մեջ կանգնած, յերբ առաջ էյին տարվում բետոն թափելու ամենահանդուգն և գործի ամբողջ հիմքը կազմող աշխատանքները:

Արարատյան դաշտի գլուղացիությունն զգում և այս մեծությունը և դրա համար ամեն մայիսի 1-ին, առավոտյան մթնշաղին, լցվում և Մեծամորի և Այդը լճի ավերում տոնելու համար տեխնիկայի տոներ:

Նոր որերի տոներ—գա չքավորությունից, կեղատոտությունից, բնության դաժանությունից ազատվելու տոնն և:

Յեվ Արարատյան դաշտի գլուղացիները լիաթոք, բարձրադաշակ և ուրախ բացականչում, բացականչում են հավաքականորեն կեցցեն խորհուրդները...

1 Ինչպես և Այդը լճի շրջակայքը հնում և այժմ:

2. Ինչ վերաբերմունք ունեն բանվորները դեպի իրենց աշխատանքը: Ինչ՞ա. Կոլեկտիվիստական ինչ գծեր կան նրանց աշխատանքի ու կյանքի մեջ:

3. Ինչ նշանակություն ունի Այդը լիճը հիմա շրջակայքի գլուղացիության տնտեսության համար: Ինչ՞ա համար գլուղացիությունը պիտի բացականչեր՝ «Կեցցեն խորհուրդները»:

տապ—շոգ

ամայություն—գատարկություն

ժայթքել—դուրս նետվել (հեղուկի)

անորինակ—անսովոր, տարբերակ

դաժանություն—խստություն,

անարտոթյուն

14. Բայլշէիկ եւ Շիր-Կանալը

Յեկել եմ...

Յեկել եմ, վոր մի որում յերգեմ յերգդ այն գիւ—հնչուն,
վոր ձուլեցին պոետներդ լոթըհարլուր որվա միջում:

Յեկել եմ, վոր վողջունեմ այն վալրերին քո սիրատուն,
ուր դարերում յերբեմն միայն ծղրիզներն ելին խոսում...

Յեկել եմ...

Յեկել եմ համբույր տալու յերաշտացած կոշտ հոգերիդ,
վորոնց միջից առատորեն կաթ ու մեղր եւ այսոր հոսում:
Դու, Շիր-Կանալ, վոր հազարանց քրտինքների միջից բուսար,
նրանց քրտինք գետեր շինած՝ դարձար խորհուրդն աշխատանքի:
Դու, վոր հազար հազարների քլունկների յերգը լսած՝
առատության հիմնը շուրթիդ հիմք ես դնում մի նոր կյանքի,
մեծ վողջունիի և հրճվանքի յերգն եմ բերում քո դաշտերին
և հիացածունք բոլոր ազգի, բոլոր յերկրի պոետներին:

Բայլշէիկ եւ Շիր-Կանալը—մի աժդահա հեքիաթային,
նրա շուրթը շուր եւ խմում պաղ ակունքիցն Արփաշայի.
գլուխը հաղթ թաղել եւ խոր կանաչագույն, գուլալ գետում,
պոչը հեռու Կապսի ծոցում, ալիքներ եւ հեռու նետում:

Մեծ ու մեծ եւ Շիր-Կանալը, կամարած, գեղեցկաթով,
փաթաթվել եւ, վոնց եւ գրկել Շիրահարթը յերկու թոթով:
Մի խանդավառ կարոտ ունի,—են ծարավը սիրած յարի,
վոր կարծես թե սեր ու խանդի կարոտել եւ հազար տարի,

Հուլգեր ունի սրտի խորքում խորհրդավոր իր հորձանքով—
վողջ իրանքը դողունքի մեջ ապրումների մի կրքոտ ծով:
Յեւ ամենքին իր յերթի մեջ ում տեսնում եւ ու ճանաչում,
խոխոջումով լսում ես մեկ, ավետում ե՝ վողջո՛ւն, վողջո՛ւն...

Մատաղ լինեմ յես այն որին, մատաղ լինեմ յես այն ժամին,
յերբ ինձ նորից կվիճակվի այցի գալու Շիր-Կանալին:

Տեսա նրա յերկունքը յես՝ պեղումները տարի առաջ,—
Այժմ՝ նրա բաղ ու բախչեն, արան ու հանդը, ծառ ու կանաչ:

Վիլլանների թավուտ անտառ, ծառուղիներ, ծաղկանոցներ,
վորոնց բույրից կզգա նորից ջահելություն իմ հոգին ծեր:
Յեւ գիշերը հազարաչյա տարածելով լուսի փշեր՝

ինձ կերևա հեռու տեղից մի աստղազարդ հեքիաթ-գիշեր,
 Յեվ կսուլեն ֆաբրիկները գուլոկները ուրախ կանչով՝
 վողջունելով դյուղ ու քաղաք ալ բոցերի հուր ճաճանչով:

Բայլընիկ ե Շիր-կանալը, մեծ զավակը Հայաստանի,
 նրա վորդին՝ Ղահր ձեռքին, լուսի աղբյուր մի տխտանի:

սիրասուն—սիրելի	խորհուրդ—խմաստ
հիմն—հանդիսավոր յերգ,	զեղացկաթով—զեղեցիկ և թովիչ, կա-
նվազ	խաղիչ
խանդավառ—սիրով լի	յերաշտացած—չորացած
ված	հույզ—հուզմունք, ուժեղ զգացմունք
այց—այցելութուն, տեսու-	յերկունք—ծննդաբերութեան ցավ
թյան	պեղում—փորելը (հետազոտութեան նը-
թավուտ—խիտ	պատակով
ծառուղի—ծառերի շարք	համանչ—ճառագայթ, շող
յերկու կողմից	տխտան—հսկա

15. Դժբախտությունը Մեշադի Ղադրմի տանը

Մեշադի Ղադրմի ունեք յերկու կին: Յերկրորդ կնոջը Մեշադի Ղադրմի իր տունն էր վերցրել յերկու տարի առաջ: Իսկ մինչ այդ նրա մոտ ապրում էր միայն զեղեցիկուհի Գյուլ Սաբան խանըմը,—սևամազ, մեծ, ինչպես կեռասը՝ աչքերով: Յեվ յերբ Մեշադի Ղադրմի իր մոտ վերցրեց ևս մի զեղեցիկուհի՝ Գյուլ Ջան խանըմին—նա իր յերկրորդ ամուսնությունը զրկիցների մոտ պատճառաբանեց յերեխա ունենալու ցանկալթամբ:

Գյուլ Սաբան խանըմը իմանալով, վոր Ղադրմի ուզում է ամուսնանալ ևս մեկի հետ՝ մոտեցավ Մեշադի Ղադրմին տխուր և հուղված:

— Մեշադի,—ասաց Գյուլ Սաբան խանըմը,—պետք չե... Յեռքեդ ալիլի ամուր կսիրեմ:

— Այ կին, — պատասխանեց Մեշադի Ղադրմը,—եքեզ և ինձ յերեխա յե պետք: Յերբ արդեն նույնիսկ ներկը չի ծածկի իմ ծերացած մազերը, նա ձերությանս տարիներին իմ ել, քո լե ձեռքից կբռնի և չի թողնի մեզ... Յեվ դու, կինս, մի վախենալ... Դու կմնաս ինձ հետ...

Յեվ Մեշադի Ղադրմի իր տունը բերեց Ղահել, զեղեցիկ Գյուլ Ջան խանըմին:

Կանանցից լուրաքանչյուրն իրեն զգում էր առաջինը և ամե...

նասիրելին: Դրանով ել պետք է բացատրել նրանց մրցակցությունը և Մեշաղի Ղադըմին հաճոյանալու ցանկությունը: Յեթե կանոնացից մեկը հազուադէպերը փոխում եր, մյուսը նույնպէս նույնն եր անում: Մեկն իր մագերէն եր ներկում,—անմիջապէս ներկել եր սկսում նաև մյուսը: Մեկը բաղնիք եր դնում,—նրանից հետո վաղ եր տալիս մյուսը:

Ինքը՝ Մեշաղի Ղադըմը շոյում, փայփայում եր լերկուսին ել: Յեթե նա վորեւե նվեր եր առնում իր կանանց համար, վերցնում եր նույնանման գուլդ առարկաներ: Պատահում եր, վոր Գյուլ Զան խանըմը, ձու ծախելով, դնում եր իրեն համար մի գեղեցիկ թաշկինակ և Գյուլ Սաբան խանըմըն ամբողջ ժամանակ ջղայնանում եր, մինչև վոր Մեշաղի Ղադըմը նրան չբերեր ճիշտ նույնպիսի մի նվեր: Մեշաղին շրջում եր բոլոր խանութները, ապրանքներն եր թրքում, բայց և միշտ գտնում եր հարկ յեղածը:

— Այ, Մեշաղի Ղադըմ,—ասում ելին նրան առևտրականները,—ի՞նչ տարբերութիւն... Վերցրու ալ լավ թաշկինակը. այստեղ գեղեցիկ ծաղիկ ե նկարված, և թող քու կինդ բարով մաշի...

— Վո՛չ, վո՛չ,—պատասխանում և Մեշաղի Ղադըմը,—չեմ վարող այդ թաշկինակը վերցնել... Իմ կինը,—Գյուլ Սաբան խանըմն ալդ չի վերցնի:

Կրկնամուսնութիւնը Մեշաղի Ղադըմի ձանձրալի կյանքում շատ անհանգստութիւն և ջղայնութիւն մտցրեց, բայց Մեշաղի Ղադըմը գոհ եր իր կանանցից:

Կա՛կ եր ապրում Մեշաղի Ղադըմը, և նա յուրաքանչյուր ուրբաթ ուտում եր քյաբաբ և անուշ փլավ, վոր իր կանայք ելին պատրաստում:

Բայց դժբախտութիւնը յուրաքանչյուր տուն մտնում ե...

Ո՛վ կըռուշակեր: Յեթե կանանց ակումբը բաց չանելին ճիշտ և ճիշտ Մեշաղի Ղադըմի տան դիմաց, գուցե և վոչինչ չպատահեր: Յուրաքանչյուր լերկիւ ամբողջ քաղաքից ալդ տունն ելին գալիս կանայք: Ալդ բանը չվրիպեց Մեշաղի Ղադըմի կանանց աչքերից: Առաջինն ալդտեղ գնաց Գյուլ Սաբան խանըմը: Գյուլ Զան խանըմն իմանալով ալդ մասին, նույնպէս վորոշեց ակումբը գարդարել իր ներկայութիւնը:

Մեշաղի Ղադըմն ալդ բանից գոհ չմնաց: Նա ասաց Գյուլ Սաբան խանըմին.

— Ի՞նչ լավ բան գտար ալդ տանը, վորտեղ կանայք սկսում են նմանվել տղամարդկանց:

Գյուլ Սաբան խանըմը պատասխանեց.

— Ինչո՞ւ լես ինձ ասում այդ մասին, քանի վոր Գյուլ Զան խանըմն ասնտեղ ե գնում յուրաքանչյուր որ... Յես նրանից ինչի՞մ եմ վատ...

Մի անգամ, մութ յերեկոյան, յերբ Մեշադի Դադըմը, հաշվելով որվա վաստակը և կրպակը փակելով վերադարձավ տուն, նա իր կանանց տանը չգտավ Վոչվոր նրան սրբիչ չմատուցեց, վորպէսդի նա լվացվելուց հետո ձեռները սրբեր, իսկ անկյունում վոչվոր չփռեց փոքրիկ գորգը, վորի վրա Մեշադի Դադըմն ամեն յերեկո նստադ եր կատարում:

Յերբ կանայք վերադարձան,— նրանք ուրախ ելին, և միայն ժպտն եր խաղում նրանց դեմքերին:

Մեշադի Դադըմն ապշեց:

— Գյուլ Սաբան խանըմ, Գյուլ Զան խանըմ, սա ի՞նչ ե նշանակում: Վճրտեղ եյիք դուք. թե ալլես լես ձեր ամուսինը չե՞մ. ի՞նչ ե:

Նրան ընդհատեց Գյուլ Սաբան խանըմը:

— Այժմ,— ասաց նա,— դու մի բղավիր մեզ վրա... Մենք կարող ենք բողոքել կանանց ժողովին...

Մեշադի Դադըմը նույնիսկ գունատվեց: Նա միայն բերանը բաց արեց և ուղեց ինչ-վոր բան ասել, բայց Գյուլ Սաբան խանըմը նորից ընդհատեց նրան:

— Այնտեղ, կանանց ժողովներում խոսում են անպիտաների մասին, ինչպիսին դու յես, վորոնք միջանի կին ունեն:

Մեշադի Դադըմը լռեց: Նա վոչ մի բառ չասաց: Դժբախտություն եր Մեշադի Դադըմի տանը: Կանայք Մեշադի Դադըմի տանը դավադրություն ելին սարքել:

Արդեն վաղուց, շուկայում և խանութում Մեշադի Դադըմը շատ անգամ հանդիպել եր իրենց կանանցից դժգոհ ամուսիններին, վորոնց կանայք հաճախում եյին կանանց ակումբ: Յեւ Մեշադի Դադըմը շատ անգամ ծունկի յեկած շնորհակալ եր յեղել ալլանից՝ նամադը կատարելիս: շնորհակալ եր յեղել նրա համար, վոր իր կանայք նման չեյին նրանց, վորոնք ձայն ելին բարձրացնում իրենց ամուսիններին վրա...

Ժամանակն անցավ: Մեշադի Դադըմի կանայք շարունակում եյին հաճախել ակումբ: Բայց բավական ե, վոր մի տուն դժբախտության աչքովն ընկնի, և անա բոլոր դժբախտությունները կհաջորդեն նրան:

Ինչպէս միշտ, փակելով կրպակը և վաստակը հաշվելով՝ Մեշադի Դադըմը վերադարձավ տուն, վորտեղ նրան հանդիպեց հուզված Գյուլ Զան խանըմը:

—Մեշադի, — ասաց նա, — ջու ցանկալի կին Գյուլ Սաբահը դը-
նում ե Բադու: Նրան ուղարկում են համադումարի... Յես նուշն-
պես պետք ե գնամ... Դու պետք ե փող տաս, հակառակ դեպքում,
լես ըս մոտից կգնամ:

Մեշադի Դադըմը դարձացած բաց արեց աչքերը և չկարողա-
ցավ վոչ մի ձայն հանել:

Այսպես մտավ Մեշադի Դադըմի տունը ծանր դժբախտություն-
նը և իր վստենքով ճգմեց, արդյոք հին թուրքի—մանր-առևտրական-
նի խաղաղ ընտանեկան կյանքը:

1. Ի՞նչպիսի ընտանիք ե քայքայվում, Ի՞նչ սովորություններ են վե-
րանում: Բացատրիր բազմակնություն ֆեսանները:

2. Ի՞նչը չեղավ պատճառը, վոր «դժբախտություն» մտավ Մեշադի Դա-
դըմի տունը: Իս դժբախտություն եր ո՞ւմ տեսակետից:

3. Համեմատիր Մեշադի Դադըմի կանանց դրությունն ակումբ հա-
ճախելուց տուջ և հետո:

վրիպել—փոտալ

16. Պառավ թրքունին

Գնացքը վերջին անգամ սուլեց և ուժգին թափով առաջ սլա-
ցավ: Վազոնում շատ եր տաք, ողը ճնշող: Մեր դիմաց նստած
ճանապարհորդներից մեկը թաշկինակով սրբում եր ճաղատ գլու-
խը, վորտեղ յերևում եր մեծ վերքի տեղ՝ ըսա յերևութին այդ
վերքը մնացել եր շախսել-վախսելից:

Այդ ժամանակ մոտս նստած ծեր թրքունին մի զննական հա-
յացք դեցեց հարեանի վրա և չերեսը դարձրեց հակառակ կողմը: Յես
տեսա՝ ինչպես նրա դեմքած աչքերից արցունքի կաթիլներ ելին
թափվում: Յես նայում եյի այդ տանջված դեմքին և գլուխ, թե
վորքան խորն ե նրա վիշտը: Այդ ժամանակ անվստահ քալեբրով մո-
տեցա նրան ու հարցրի.

— Մայրիկ, ինչո՞ւ չես լաց լինում:

— Ե՛հ, վճրդի, ի՞նչ ասեմ. դարդերս նորոգվեցին, վոր նրա
գլխի վերքը տեսա:

— Իսկ ինչո՞ւ այդ վերքը քեզ վիշտ պատճառեց:

— Իմ միակ զավակս զոհ գնաց...—ասաց նա ու խոր ախ քա-
շելով լացակումած լռեց:

Յես չկարողացա համբերել. նորից հարցրի.

— Ի՞նչպէս պատահեց այդ, մայրիկ! — Նա մի տխուր հայացք դրեց շուրջն ու սկսեց պատմել.

— Ինչպէս շատ-շատերը, իմ վորդի Հասանն ել դուրս եր յեկել վողոց և ծեծում եր կուրծքը շղթաներով: Այդ որը շախսեյ-վախսեյի սըն եր: Արշունը շատրվանի նման խփում եր նրանց դըլուխներէից: Գարնան առավոտ եր, — շարունակում ե հա արցունքները սրբելով. — քուրը հալաքով եյին մեշիղի դռանը և սպասում մողային: Յերկար սպասելուց հետո մողան դուրս լեկավ և իր յերկար քարոզով կապեց հարլուրավոր յերիտասարդների աչքերը: Սկսվեց մի սուսկալի տեսարան: Թշնամիս ել եդ որը չտեսնի: Քանի-քանիսն արշունչով գետին ընկան, ուշաթափվեցին, թե ի՞նչ ե՛ պլահի դատաստանին աբժանանան:

Հենց դրանից մեկն ել իմ աղաս եր, Հասանս: Նրան արշուն-վա հաղիլ տուն հասցրին: Յերկու քողեյից հետո մեռավ: Սև լինեը են որը. — Միքանի վաչրկյան լռելուց հետո՝ շարունակեց. — դեռ ականջիս հնչում են Հասանի վերջին խոսքերը. — «Յես մեռնում եմ, անա, բայց իմ միակ քրոջ՝ Սոնային լավ պահիր: Ել չգնաս մեշիդ, եդ անիծած մողաների յերեսը չտեսնես», — ասաց ու աչքերը փակեց...

Ախ եդ շախսեյ-վախսեյն ու խաբերա անիծված մողաներն ինձ նման քանիսի տունն են քանդել, քանխի...

Նա վերջացրեց իր պատմութիւնը: Գնացքը բավականին ճանապարհ եր անցել: Յես շարունակում եյի նալի ծեր թրքուհուն, վորը բարձրացրել եր պատառոտած զգեստի փեշը և սքրում իրար յետևից դլորվող արցունքներէ կաթիլները:

1. Ո՞վ և ձեզնից տեսել շախսեյ-վախսեյ: Պատմեցե՛ք:

2. Ինչի՞ց ե առաջ յեկել շախսեյ-վախսեյը:

3. Ի՞նչ միջոցներով և իս. իշխանութիւնը կովում կրոնի և նրա արտահայտութիւնների դեմ:

նաղատ—քաշալ, կունդ, անմազ գլուխ		զննական հայացք—քննող, դի-
շախսեյ-վախսեյ—մահմեդական աշ-		տող հայացք
խաբհում կրոնական արարողութիւն		լացակումած—սիրտը շուռ յե-
մահառամի ժամանակ, յերբ մասնա-		կած, լաց լինելու աստիճան
կիցները ծեծում կամ վիրավորում են		հուզված
իրենց		

Կ Ա Ր Դ Ա՝

Մ. Դիմիտրիև—Տպիտութիւն և անհավատութիւն, գինը 12 կոպեկ:

17. Մ ա ր ո ն

Յերեկոնները, յերբ Սեղրակը շուտ եր տուն վերադառնում, պարապում եր Մարոյի հետ: Մարոն մեծ յեռանդով կապով գործիտան աշխատանքներից հետո այլևս ժամանակը բամբասանքներով չեր անցկացնում, այլ տանը նստած, գիրքը ձեռին դասն եր սովորում: Հարևանները նրան ծաղրում էին.

— Ե՛, յերանի քեզ, Մարո՛, ել նո՞ր պետք ե սովորես. հավան ել ունես: Զլինի՞ դու յեյ կոմունիստ ես ուզում դառնալ:

— Այո՛, — պատասխանում եր Մարոն կարուկ կերպով, — յես ել առաջ քեզ պես էլի մտածում, հիմա փոշմանել եմ:

Հարևաններն ել առաջվա նման Մարոյի հետ մտա չէին՝ խեթ-խեթ էլին նալում նրա վրա, վորովհետև Մարոն ինքն այլևս նրանց հետ քիչ եր լինում:

Գիշերները, յերբ Սեղրակը ժողովի յեր գնացած լինում, Մարոն այլևս ձանձրույթով չեր սպասում նրան մինչև ուշ գիշեր: Նա հիմա ուներ իր համար զբաղմունք, վորին կալել եր ամբողջ հոգով... Յերեխային քնեցնելուց հետո՝ սեղանի տուջև նստած կարդում գրքում եր մինչև Սեղրակի դալը:

Յեվ միքանի ամսից՝ Մարոն արդեն սովորել եր գրել-կարդալ: Կինբաժնում աշխատանքները յեռում էլին. բանվորուհիները մեկը գնում, մյուսը դալիս եր: Մարոն ներս մտնելով դիմեց վարիչին.

— Յես ցանկանում եմ կինբաժնի անդամ զրվել:

— Դու պատգամավորուհի՞ յես: — հարցրեց նրան վարիչը:

— Վո՛չ, — պատասխանեց Մարոն կարմրելով, — գեո սոր եմ ուզում եդ գործերի մեջ մտնել:

Մի ամիս անց՝ Մարոյին հաջողեց մտնել կինբաժնի բացած կարուձևի արհեստանոցը: Սեպտեմբեր ամսի մեջ եր... Յերեկոյան, յերբ Սեղրակը տուն վերադարձավ, Մարոն ուրախ-ուրախ ասաց.

— Դիտես, յես արդեն գործ եմ ճարել ինձ համար: Լավ ե, չե՞, յես ել կաշխատեմ, քո բերը կթեթևացնեմ: Ահա ձեռն ե գալիս, իսկ մեր կարիքները շատ մեծ են՝ քո վղին ընկած:

— Իսկ Միշային ի՞նչ կանես, վոր դու գործի գնաս, — հարցրեց Սեղրակը:

— Նրան դպրոց ենք ուղարկելու: Ի՞նչ անեմ, բավական ե, վորքան քո հաշվին ապրեցի, — ասաց Մարոն ծիծաղելով:

Այնուհետև ամեն առավոտ Մարոն շուտ վեր եր կենում, տունը կարգի գցում ու շտապում դեպի արհեստանոց: Արհեստանո-

ցում աշխատում ելին 45 բանվոր-բանվորուհիներ՝ Աշխատանքները վերջացնում ելին ժամը 4-ին։ Տուն վերադառնալով նա սկսում էր տնային աշխատանքներով զբաղվել։

Շաբաթ որ եր. աշխատանքներից հետո նշանակված եր ժողով։ Բոլորը հավաքվել ելին արհեստանոցի մեծ սրահում։ Ժողովը բացված է. որակարգում գրված է տեղկումի ընտրութունը։

— Ընկերներ, իսա առաջարկում եմ տեղկումի մեջ անցկացնել Մարոյին, — խոսեց բանվորուհիներից մեկը։

— Յես եղ աշխատանքներին ծանոթ չեմ, — կմկմալով խոսեց Մարոն. ուզում եր առել. — Ժամանակ չունեմ տանը...

— Վ՛շինչ, կսովորես, — լավեցին ձայներ տեղերից։

Մարոն կարմրելով նստեց տեղը։

— Ընկերներ, դնում եմ քվեարկության. ով է համաձայն, վոր Մարոյին տեղկումի մեջ մտցնենք, թող մաս բարձրացնի։

— Բոլորս, բոլորս, յերևում է՝ ղոչաղ ե, ինքն ել զբաղեալ թող աշխատի։

Ժողովը վերջացավ յերեկոյան ժամը 6-ին։ Սեդրակն արդեն տուն եր յեկել, յերբ Մարոն վերադարձավ։

— Ինչո՞ւ ուշացար. սոված եմք, ուտելու ի՞նչ ես պատրաստել, — քիչ բարկացած ասաց Սեդրակը։

— Ժողով ունեյինք, — հանդիստ պատասխանեց Մարոն, — դիտե՞ս, ինձ ել տեղկում ընտրեցին։

Սեդրակը քմծիծաղով կպցրեց ծխախոտը։

Այս հոգիվածի հիման վրա նկարագրեցե՛ք կանանց աշխատանքի պայմանները, նրանց մասնակցությունը հասարակական յեվ խորհրդային աշխատանքներին, նրանց առաջաճումը յեվ ալին։

18. Հ ե ու ա գ ի ը

Ո՞վ հնարեց հեռագիրը։

Հեռագիրը հնարեց մի անգլիացի՝ Մորգե անունով, 19-րդ դարի 30-ական թվականներին։ Մորգեն կարողացավ յերկու կամ ավելի կայարաններ կապել իրար հետ ելեկտրական ուժով՝ յերկաթալարերի միջոցով և ապա նույն ուժով հաղորդել կայարանից կայարան հատուկ պայմանական նշաններ՝ այսպես ասած՝ հեռագիր։ Ելեկտրականությամբ գրեր հաղորդելու առաջին փորձը կատարվեց 1838 թվին, և առաջին հեռագրագիծը հիմնվեց Անգլիայում։ Այսպիսով

Մորզեն տվեց մարդկության հեռագրագիծ և այդ գծով ելեկտրական ուժի միջոցով խոսելու գրավոր հատուկ նշաններ: Այնուհետև Անգլիայից սկսեցին որինակ վերցնել և այլ յերկրներ, փորոնց թվում և ցարական Ռուսաստանը, փոր հեռագիր մացրեց իր մոտ միայն 1852 թվին, և այդ որմանից հեռագրագծերն սկսեցին շատանալ և մուտք գործեցին նաև մեզ մոտ Կովկասում, ապա և Հայաստանում:

Հեռագրագիծը տարվում է կամ գետնի լեռնով, սյուների վրայով և կամ գետնի տակով, խողովակների միջոցով: Արևմտյան Յեվրոպայում այժմ ավելի շատ այս վերջին ձևն է գործածական:

Ելեկտրո-հեռադրով հաղորդակցութուն սարքելու հարմարությունն ու արագությունը տեսնելով՝ մարդիկ մտածեցին Անգլիան ու Փրանսիան կապել իրար հեռագրաթելով: Բայց ինչպես անելին. Անգլիան ու Փրանսիան բաժանվում են Լամանշի նեղուցով. դրա վրայով կամուրջ չկար և չեր ել կարելի դեցել: Մնում եր հեռագրաթելը գցել ջրի տակով՝ ծովի հատակով:

1851 թվին գգվեց առաջին ստորջրյա հեռագրաթել՝ կարելը, մի պոնտոն լար՝ ընկած ծովի հատակին 50 մետր խորությամբ, 40՝ կիլոմետր լեռկարությամբ, փոր ուներ 200 տոնն ծանրութուն և հազցրած եր գուտապերջի խողովակի մեջ և փորը մինչև որս ել գործում է:

Լամանշի ստորջրյա հեռագրաթելի հաջողությունը ծնունդ տվեց մի վիթխարի հեռագրաթելի նախագծի իրագործման մտքին—Յեվրոպան Ամերիկայի հետ կապել ստորջրյա հեռագրաթելով Ատլանտյան օվկիանոսի հատակով:

1866 թվին Ամերիկան միացավ Յեվրոպայի հետ մի ստորջրյա հեռագրաթելով: Այս հեռագրաթելի լեռկարությունը մոտ 5.500 կիլոմետր է: Գուտապերջ հագած յերկաթալարի փոխարեն սա արդեն մի յերկաթե պարան է, փոր մի միլիոն փթից ավելի ծանրութուն ունի և նստել է 6 ու կես միլիոն ուղբի:

հաղորդել—հալոսնել
նեղուց—յերկու ցամաք իրարից
բաժանող և լեռկու ջուր իրար
միացնող ջրալին նեղ շերտ

ստորջրյա ջրի տակի
գուտապերջ—մի տեսակ ծառի
խեժ, փորից շինում են ուտին:

ԿԱՐԴԱ.—Նիկ. Կարինցև.—Ելեկտրիֆիկացիայի պիոներ Եգիպտոսը
գինը 40 կոպեկ:

19. Հ ե ո ա խ ո ս

Հեռախոսը կամ, ինչպես ասում ենք՝ տելեֆոնը հնարեց Գրամամ Բել ամերիկացին 1877 թվին: Ճիշտ է, այժմ տելեֆոն դնելը, նրա սարքը շատ հեշտ է, բայց դժվարը նրա հնարելն էր:

Հեռախոսն էլ հեռագրի պես սկսեց հեազհետե տարածվել ու ընդհանրանալ: Սկզբում հեռախոսագիծ սկսեցին սարքել անից-տուն, ապա՝ քաղաքից-քաղաք, իսկ ներկայումս՝ արդեն յերկրից-յերկիր:

Միջքաղաքային առաջին հեռախոսագիծն անցկացրեց Ամերիկյան 100 կիլոմետր յերկարությամբ: Այնուհետև Գերմանիան 1882 թվին միացրեց Բեռլին և Համբուրգ քաղաքները մի հեռախոսագծով: Ամերիկայի ամենայերկար հեռախոսագիծը 1600 կիլոմետր է կազմում, վերով միանում են Չիկագո և Նյու-Յորկ քաղաքները:

Ցամաքի վրայով հեռախոսագիծ անցկացնելուց հետո մարդիկ սկսեցին մտածել նույնը անցկացնել և ջրի տակով: Ստորջրյա առաջին հեռախոսագիծն անցկացրեց Ամերիկյան Պա-դը-Կայե նեղուցով:

Հեռախոսը մարդկանց հաղորդակցությունն ալնջան է հեշտացրել, վոր այժմ նա դարձել է անխուսափելի մի պահանջ, մի անհրաժեշտություն կուտուրական բոլոր յերկրների համար: Մարդկային հարաբերության բոլոր ճյուղերում նրա կարիքը մեծապես զգացվում է, և դրա համար էլ շատ արագ է տարածվում: Տներ, գործարաններ, գրասենյակներ, թատրոն, կինո, ամեն աեսակի հիմնարկություններ իրենց սեփական հեռախոսն ունեն: Ամերիկայի Նյու-Յորկ և Չիկագո քաղաքներում ամեն մի տուն պարտադրաբար իր սեփական հեռախոսն ունի: Ամենամեծ հեռախոսացանց ունեն Ամերիկյան ու Յեվրոպան:

Հեռախոսի գործածությունը մուտք գործեց մեր մեջ դեռ ցարական Ռուսաստանից, վորտեղ հեռախոսի գործածությունը նույնպես մեծ չափերի յե հասնում: Մոսկվա և Լենինգրադ միացրած են մի հեռախոսագծով, վորի յերկարությունը 650 կիլոմետր է:

Մեր հանրապետությունը ևս աստիճանաբար հեռախոսի ցանցով է ծածկվում: Մեր յերկու կենտրոնական քաղաքները՝ Յերեվանն ու Լենինականը ունեն բավական մեծ հեռախոսացանց, գլխավորապես կառավարական և հասարակական հիմնարկները: Մեր գավառական բոլոր կենտրոնները՝ Նյսիաձին, Նոր-Բայազետ, Ղաբաբիխա, Դիլիջան, Քեշիշքենդ, Գորիս, Մեղրի և մինչև իսկ աջքի ընկնող շատ գյուղեր կապված են կենտրոնի և իրար հետ հեռախոսներով: Յերևանը հատուկ հեռախոսագծով կապված է Թիֆլիսի հետ:

20. Ռադիո-հեռագիր և ռադիո-հեռախոս

Անթիլ հեռագիրը հնարեցին 19-րդ դարի վերջում համարյաթե միաժամանակ յերկու դիտնականներ՝ իտալացի աշխարհահռչակ Մարկոնին և ռուս Պոպովը։ Յերկուսի հնարածն էլ գրեթե միևնույն միջոցն է, վորով հեռագրական նշանները հաղորդվում են մի կայարանից մյուսը առանց վերջիններիս իրար հետ վորևե մի նյութով կապելու՝ հենց ուղղակի ողի միջոցով։

Անթիլ հեռագրի սարքը շատ պարզ է։ Այստեղ իրար հեռագրական նշաններ հաղորդող կայարաններից յուրաքանչյուրն ունի շատ բարձր և ամուր կանգնեցրած մի մետաղյա կայմ, վոր միանում է լերկաթալարով ելեկտրական հատուկ մի ապպարատի հետ։ Այս ապպարատը, վոր դրված է կայարանի մի փակ մասում, միացած է Մորզեյի հեռագրական սովորական ապպարատին։ Հեռագիր խփող կայարանը բանի չե գցում իր կայմի հետ լերկաթալարով՝ կապված ապպարատը, և ահա կայմի ղլխից չտեսնված արագությամբ ելեկտրականությունը, վոնց վոր կայծը յերկնքից, ցրվում, չաղ է տալիս ողի մեջ ամեն ուղղությամբ բազմաթիվ ճառագայթներ, վորոնք հասնելով ընդունող կայարանի կայմին՝ դրա միջոցով բանի չեն գցում նրա հետ կապված ապպարատը, իսկ նա յեւ իր հերթին՝ իր հետ կապված Մորզեյի ապպարատը, վորը սովորականի պես սկսում է ապել հաղորդած նշանները՝ կետերը։

Ելեկտրականությունն ուղարկում և ընդունում են բարձրից կախ արած հատուկ լարացանցերը, ուստի և անթիլ հեռագիրը հաճախ կոչվում է կայծավոր հեռագիր, կամ, ավելի ճիշտ՝ ռադիո-հեռագիր, իսկ ապված հեռագիրը՝ «ռադիո» կրճատ ձևով։

Ինքնրաթիւնքյան հասկանալի չե, վոր ռադիո-հեռագրի սարքն անհամեմատ ավելի պարզ է և եժան, քան սովորական հեռագրինը։ Նա պետք չունի այլևս վոչ ցամաքով զգված մեծածախս հեռագրագծի իր սյուներով հանդերձ, և վոչ եւ ստորջրյա հեռագրաթեղերի։

Ռադիո-հեռագիրը խիստ մեծ և կարևոր դեր ունի ռազմական դործի և դեռ ավելի շատ՝ նավերի համար, չիքը կարիք է լինում ծովի ափերի կամ հենց ծովի վրա իրար հետ հաղորդակցություն ունենալ։ Այստեղ ալլևս հեռագրական թելեր չկան, վոր թշնամին մնասել կարողանար։ Ռադիո-հեռագրով ալժմ շոգենավերը, բաց ծովերում ու ովկիանոսներում լողալիս, կարող են ցամաքից կարգադրություններ ստանալ՝ ուր լողալ, դժբախտության պարագայում ափից կամ ծովերի վրա լողացող նավերից շուտափուլթ ոգնություն խնդրել, ծովային ժամն ու ժամանակը ճշտել, նույնիսկ ցամաքի

վրա կատարվող ամեն տեսակի նորոգիչ աշխատանքներն ստանալ ու լրացնելը տպել և բաժանել նախորդներին, վորոնք հաճախ շարաթններով և ամսով ցումաքից կտրված են լինում:

Գիտնականները կանդ չառան անթել հեռագրի վրա: Առանց թելի ողի միջով միայն կետեր ու գծեր հաղորդելը քիչ թվացւոյեաք եր անթել հեռագրով կենդանի խոսքեր հաղորդել—անթել հեռագրի դարձնել անթել հեռախոս՝ ռադիո-հեռախոս:

Յեւ շնորհիւ մի շարք գիտական ջանքերի այդ ել հաջողվեց, և այժմ արդեն գործում ե ռադիո-հեռախոսը: Համարյա մեր բոլոր տկումքներում և նույնիսկ բանվորներից շատերի բնակարաններում ամեն ոք Յերևանից, Թիֆլիսից, Մոսկվայից և այլ տեղերից լսում են ռադիո-համերգներ, ռադիո-դասախոսութիւններ և այլն:

ապագարատ—գործիք

պարագա—հանդամանք

ԿԱՐԴԱ.—Փոխ. Հ. Զախմախտաղան—Հեռագիր, հեռախոս, ռադիո, գինը 25 կոպեկ:

21. Առաջին գնացքը

Այս բանը պատահեց Անգլիայում մոտ հարյուր տարի առաջ: Այնտեղ հին ժամանակներից մինչև այժմ մեծ քանակութիւնով քարածուխ են հանում: Անգլիացիք այդ ածուխը մեծ ոգուտով ծախում ելին ուրիշ յերկրների: Միայն մի արգելք կար՝ քարածուխի հանքերը հեռու ելին ծովերից:

Ածուխը նավահանգիստները տանելու համար խճուղիներ ելին շինում: Այդ ճանապարհով ածուխը տանում ելին ծովի մոտ, այնտեղ բարձում ելին նավերին և ուղարկում ուր պետք եր: Ածուխը ծովի մոտ ձիերով ելին կրում, դրա համար ել շատ մարդ ու շատ ձիեր ելին հարկավոր, ուստի թանգ եր նստում:

Այդ ժամանակ շոգեմեքենաներն արդեն կային: Դրանցով ելին շուրը հանքերից դուրս հանում կամ հանքը ներքեից գետնի յերեսը բարձրացնում:

Անգլիացի միջանի հաբուստներ՝ ածխահանքի տերեր, չերը մտածեցին, թե ինչպես անեն՝ ածուխի կրելն արագացնեն ու եժանացնեն, հայտարարեցին, թե ով վոր ապրանք կրող մեքենա հնարի՝ նրան պարգև կտան: Յեւ ահա անգլիացի մի վարպետ՝ Մոե-

Ֆենստներ ալդալիսի մի մեքենա հնարեց. նա մի շողեկառը շինեց և անվանեց «Ռակետա»:

Մեքենան փորձեցին, պիտանի համարեցին, նրա համար յերկաթուղի շինեցին յերկու քաղաքների միջև: Ուր եր նշանակված, յերբ Ստեֆենսոնի շողեկառը պետք է գնար յերկաթուղու վրայով: Շուտով բոլորն իմացան ալդ մասին:

Նշանակված որր յերկաթուղու մոտ մեծ ամբոխ եր հավաքվել: Վստանք ամենեկին չելին հավատում. ասում ելին, վոր այդ բոլորը սուտ է. տեսնված բան է, վոր մեքենան ինքն իրան վաղի: Ուրիշներն Ստեֆենսոնի հնարքը դատարկ բան ելին համարում և ավելացնում ելին.

— Եդ Ստեֆենսոնի կողերը պետք է ջարդել, վոր ժողովրդին չխաբի: Ախր մեքենան ինչպես կգնա տափակ ռելսերի վրայով:

— Թող մի ինքը փորձի սառուցի վրայով գնա՝ իսկույն գրլուխը կկտորվի, — վրա ելին բերում մյուսները: Բոլորը հետաքրքրութլամբ, վոմանք ել յերկյուղով նայում ելին մեքենային, վոր կանգնած եր ռելսերի վրա և թշալացնում եր:

Ահա յեկավ Ստեֆենսոնը: Նա մոտեցավ շողեշարժին և բարձրացավ վրան: Ամբոխն իրար անցավ:

«Մի, տաք է եդոնդ, վառարանի վրա», աղաղակեց ամբոխի միջից մեկը: Ստեֆենսոնին ծաղրում էլին, բայց նա լսում եր ու չեր պատասխանում ծաղրանքներին:

Ածուխ բարձած վազոններ հանեցին ռելսերի վրա: Ստեֆենսոնը բոլորը մեկ-մեկ կպցրեց շողեշարժին, սուլեց ու տարավ այնպես արագ...

«Յհե, այ քեզ ձի: Մենակ հարչուր ձիու բեռ է տանում», ճշում էլին ամբոխի միջից:

Ստեֆենսոնի գլուտը պարզևի արժանի համարվեց: 1829 թվին եր: Դրանից հետո ամբողջ աշխարհում յերկաթուղիներ, շողեշարժներ ու վազոններ սկսեցին շինել: Բոլորի համար պարզ եր, վոր յերկաթուղով ապրանք կրելը կամ հենց մարդկանց ճամպա գնալը ձեռնտու յե՛ և՛ աժան է, և՛ արագ:

Հիշեցեք այժմյան շողեշարժը և համեմատեցեք «Ռակետայի» հետ: Մի դարի ընթացքում ինչքան է փոխվել շողեշարժը:

22. Ռուբերտ Ֆուլտոն

Շոգենավի հնարողի անունն է Ռուբերտ Ֆուլտոն։ Նա ծնվել է Ամերիկայում մի շատ աղքատ ընտանիքում։ Նրա հայրն որավարձով աշխատող բանվոր էր։ Յերբ հայրը մեռնում է՝ ընտանիքը մնում է ուղղակի քաղցած։ Ռուբերտի մայրն ինքն է գնում որավարձով աշխատում, վոր յերեխաների համար մի կտոր հաց ձեռք բերել։ Ռուբերտը վերջացնում է դյուկական դպրոցի դասընթացը։ Նա դիտեր կարգալ և զբել։ Ավելի բարձր կրթություն ձեռք բերել չեր կարող, վորովհետև տանն ուրիշ աշխատավոր չկար։ Հարկավոր էր մտն ունել։ Յեվ նա մտավ դործի՝ վորպես արհեստավորի աշակերտ։ Նա շատ ընդունակ տղա յեր։ Հատկապես հետաքրքրվում էր մեքենագործությամբ։ Նրա ընդունակութունները տեսնելով՝ գտնվեցին մարդիկ, վոր դրամ տվին նրան Յեվրոպա անցնելու համար։ Նա հասավ Անգլիա և մասով մի դործարան, վորպես հասարակ բանվոր։ Գործարանում նա շատ առաջ գնաց։ Լավ ուսումնասիրեց մեքենաների կազմը և շատ բան կարող էր շինել։ Գործարանում աշխատելիս նա իմացավ, վոր շատերն են փորձեր անում շոգենավ շինելու համար։ Այդ միտքը պաշարեց նրան. միթե ինքն ուրիշից պակաս դիտե մեքենայի մասին։ Նա արդեն ուսումնասիրել էր Ուատտի շոգեշարժ մեքենան և համոզված էր, վոր այդ մեքենայով կարելի յեր նավը շարժել։ Հարկավոր է մի այնպիսի նավ շինել, վորի մեջ կարելի լինի տեղավորել Ուատտի շոգեշարժ մեքենան։ Բայց վերտեղից այդքան փող վերցնի. ինքը մի սովորական բանվոր էր։ Բայց ունեղ կամքի ուժ և շարունակ հետամուտ էր դրած նպատակին։ Տեսնելով, վոր Անգլիայում իր դործը գլուխ չի գա՝ անցավ Ֆրանսիա։ Այնտեղ ծանոթացավ ամերիկացի Ռուբերտ Լիվինգստոնի հետ, վոր բավական հարուստ մարդ էր։ Տեսնելով, վոր Ֆուլտոնը դործի մարդ է, և նրա հետրած շոգենավից կարելի յե մեծամեծ ոգուտներ ստանալ, համաձայնեց նրա հետ ընկերանալ այդ գործում։ Ֆուլտոնը Ուատտի մեքենան բերել տվեց և սկսեց նավ շինել։ 1803 թվին շոգենավը պատրաստ էր։ Առաջին փորձը տեղի ունեցավ հազարավոր հետաքրքրողների աչքի տակ։ Փորձից ինքը Ֆուլտոնը գոհ մնաց։

Այնուհետև Ֆուլտոնը Լիվինգստոնի հետ մեկեց հայրենիք՝ Ամերիկա։ Այնտեղ նա մի նոր շոգենավ շինեց։ Յերբ բաղմությունը լսեց, վոր մի նոր նավ է մեկնելու Հուգոն գետով՝ առանց առաքատի, առանց թիբրի, միայն մեքենայի ուղնությամբ, իմքերով հավաքվեց գետավեր։ Յերբ մեքենան գործի դրվեց և սուլիչը

սուրեց, մարդիկ ասլիած նայում եյին, թե ինչպէս նա ուղղվեց և գետնի վեր սկսեց առաջ խաղալ: Շատերը ծափահարում եյին և ուռա գոչում, բայց շատերն ել կարծում եյին, թե շոգենավի մեջ սատանա կա, ու խաչակնքում եյին յերեսները:

1. Ուրիշ բանվոր գլուտարարներ զրոհք:

2. Խնչ ձևով և խորհրդային իշխանությունը ոգնում բանվոր գլուտարարներին:

հետամուտ ե լինում—մի բանի լետեից և ընկնում, հետևում և առ ազատ—նավի փարդա, վոր քամին ուռցնելով նաղն առաջ ե մղում:

23. «Թեթև հեծելազոր»-ի արշավը

1

«Թեթև հեծելազոր»-ի յերկրորդ շոկատը պատրաստվում եր իր հերթական չորրորդ արշավը կատարելու: Քաղաքում բավական մեծ հեղինակութուն եր վայելում այդ յերկրորդ շոկատը. իր կատարած յերեք արշավների ժամանակ նա ինչեք չեք հանել լույս աշխարհ:

Առաջին արշավը յերևան եր հանել բազմաթիվ թերություններ հիմնարկներից մեկում: Յերկրորդ արշավի ժամանակ ծխախոտի գործարանում յերևացել եյին անտեսեալարության բավականին խոշոր դեպքեր ու յերևութներ: Իսկ յերրորդ արշավը, դեպի բազմաթիվ մրդի խանութները, բաց եր արել հազար ու մի խայտառակութուն՝ փչացած մրդեր, ճանճ, մըջուն, սարդի վոստայն...

Այս բոլորը յենթարկվել եյին կոմյերիտականների աշալուրջ քննության, վորից հետո հավաքված նյութերը մտաւմ տալվել եյին մամուլում և մասսսք ել անմիջականորեն հանձնվել եյին Բանվորագլուղացիական Տեսչությանը: Յեւ շատ փոփոխություններ եյին տեղի ունեցել արշավի յենթարկված այդ հաստատություններում, վորոնց աշխատավորների ու ծառայողների հիշողության մեջ դեռ թաքմ եր «հեծելազորի» անակնկալ այցելության թողած ապավորությունը...

Ջորրորդ արշավի մասին հայտաբարված եր թերթում: Բոլորը գիտեյին այդ մասին, բայց թե ուր պիտի արշավեր շոկատը,—այդ մասին վոչվոք չգիտեր: Վոչ միայն հետաքրքրվողները չգիտեյին, այլ և արշավի մասնակիցները: Ջոկատի շտաբը դեռ վոչինչ չեք հայտնել:

Այդ նախագգուշությունը Հափաղանց կարևոր էր. հակառակ դեպքում դրսում կարող ելին իմանալ, և արշավի յենթակա հաստատութիւնը կես ժամում կվերածվեր «գրախտի»։ Այդպիսով արշավը կանցներ անհաջող։

Ջոկատի համալսութիւնը նշանակված էր ժամը յերկուսին Բանփորա-գյուղացիական Տեսչութիւն շէնքի բակում։

2

Նախագահը վեր կացավ։

— Սկսենք.

Համալսութիւնները շուտ յեկան դեպի նա։

— Այսօր գնալու յենք պետական ու մասնավոր ճաշարանները։

Մենք գիտենք, Վոր բաղմամբիւ մարդիկ ճաշում և ընթրում են վոշ իրենց տներում։ Բայց մենք Հգիտենք՝ արդո՞ք այնտեղ ի՞նչ են տալիս հաճախորդին՝ սննունդ, թե թույն։ Ճիշտ է, կա սանիտարական հսկողութիւն. կան հետազոտութիւններ. բայց խոստովանենք, Վոր այդ բոլորը քիչ է, և մեր ցույց տված աշակցութիւնն զգալի կլինի։ Մենք անախակալ կերպով վրա կհասնենք։ Կտեսնենք, թե ի՞նչ են յեփում, ի՞նչպէս են յեփում, կնայենք մաքրութիւնը, ճաշի վորակին, ծառայողների վերաբերմունքին դեպի հաճախորդները և այլն։

Նախագահը հաղաց և հարցրեց.

— Հասկանալի՞ չէ.

Յեւ ապա հանկարծ շարունակեց.

— Հասկանալի չէ, գիտեմ։ Անցնենք այսօրվա մեր անելիքներին։ Այստեղ համալսվել ենք՝ մեկ, յերկու, յերեք... Տասնութ ընկերներ։ Միասին շրջելն աննպատակահարմար է։ Այդ շատ արտակարգ կլինի և կնմանի պաշտոնական ըննութիւն։ Իսկ մեր նպատակն ու անելիքն այդ չէ. կբաժանվենք փոքր խմբերի։ Այդպէս և՛ հարմար կլինի, և՛ շատ ժամանակ չի խլի։ Խմբակներում կլինեն...

— Չորսական մարդ...

— Գուցէ յերեք-չորեք...

— Վո՛չ, հինգ...

Նախագահն առանց քվեարկելու վորսաց ձայների մեծամասնութիւնը։

— Նո՛ւ, լավ։ Հնգական։ Կլինի չորս խմբակ։ Մի խմբակը կայցելի իրրե հաճախորդ-վոմանք կճաշեն, վոմանք գրույցի կըսնը-

վին և արև: Մի ուրիշ խմբակ թող փորձի մի փոքր պաշտոնական ձև տալ իր այցելությանը: Բացի դրանցից, թող մի խմբակն ել...

Նախադասն ընդհատեց ու ժպտաց, հարցականորեն շուրջը նայելով.— Գուցե նպատակահարմար չի՝ և անտեղի թեթևություն ե, հը... Ապա վճռական շարունակեց.

— Թող մի խմբակն ել իրեն ձևացնի պաշտոնական քննություն կատարող ժարմին, տեսնելու համար, թե ինչ վերաբերմունք ցույց կտան իրեն: Բայց այդ պեսք ե անել մասնավոր ու յետ ընկած ճաշարաններից մեկում: Այդ բոլորից հետո մենք ի մի կ'գումարենք մեր արածը և այնտեղից, հետագա արշափների ժամանակ, հարուստ փորձ կունենանք:

Հավաքվածների միջով աշխուժ ու բախուժյան ալիք եր անցնում: Իսկ յերբ նախադասը խոսքը վերջացրեց և անցավ խմբակների բաժանման և այլ մանրամասնություններին, բոլորի տրամագրությունն արդեն շատ բարձր եր: Յերբ ամեն ինչ վերջացել եր, դուրս յեկան փողոց:

— Վերջան կարելի յե՝ սովորական, առօրյա և առանց հանդիսավորության:

— Լավ:

— Վերջը կհավաքվենք «Մասիս» պահպանի դռանը և այնտեղից կվերադառնանք: Իսկ այժմ՝ ամենքս մի-մի կողմ:

1. Ի՞նչ և «թեթև հեծելազոր»-ի նպատակը:
2. Ի՞նչպես են կատարվում «թեթև հեծելազոր»-ի արշափերը:
3. Ի՞նչ արդյունք են տալիս այդ արշափերը:

հեծելազոր — ձիավոր
հոկատ — խմբակ
անսակնկալ — անսպասելի բան

հետազոտություն — դնում, ուսումնասիրություն
արտակարգ — վոչ սովորական
արակցություն — ոգնություն

24. Լուսաբացին

Նորից յեկա այցելության
գործարանի պարխապներին,
լերկաթակուռ ահն շենքերին,
վոր շունչ տվին իմ լերգերին,

Ահա մտա նրա շեմքով.
ինձ վողջունեց արթուն սուլիչ,

մերենաներն ուրախացած՝
արձակեցին յերկաթե ճիւղ:

Իրար անցան ճախարակներ,
ժիր փռեցին ու պտուտակներ,
Շողիմուրճը հպարտ թնդաց
ու վորոտաց՝ դեռ չեմ հոգնել:

Նրան խմբով ձայնակցեցին
չարածճի հազար ժուրճեր.
Ճլվլալով զրնգացին՝
ինչպե՞ս ուրախ դեղձանիկներ:

Յե՛վ այս ժխոր համերգի մեջ
մեծ քուրայից ժայթքեց վոստնու՛ւմ,—
Այդ՝ անհանգիստ կալճն եր անշեջ—
նոր կյանքի լերզն եր պատրաստու՛մ:

1. Ի՞նչ տրամադրութեամբ ե գրված այս բանաստեղծութիւնը,—ուրախ ու վոգեորված, թե՛ տխուր, ընկճված:

2. Ի՞նչ ժամանակին (Հոկտեմբերից առաջ, թե՛ հետո) և ի՞նչ յերկրին (խորհրդալի՞ք, թե՛ բուրժուական) ե վերաբերում այս բանաստեղծութիւնը:

3. Ի՞նչ «նոր կյանքի» մասին ե խոսում հեղինակը:

յերկաթակուռ—յերկաթի պէս ամուր,
յերկաթից կռած
ճիւղ—ճչոց, ըարձր ու սուր ձայն
անշեջ—վոր չի հանգչում, չի մարում

համերգ—խմբական յերգ
քուրա—հնոց
ճախարակ—չարիս
պտուտակ—վինս

դեղձանիկ—դեղնափուր լերդող
թռչուն (սարեկի մեծութեան)

ժխոր—խառն աղմուկ
ձայնակցել—միասին լերդել, խոսել

ժայթքել—պատռելով՝ թափով
դուրս գալ
ընկճվել—թուլանալ, հուսահատվել

ՆՈՐ ՅԵՎ ՀԻՆ ԳՅՈՒՂԸ

25. Կոմունի խոտհարքը

Խոտերնացիոնալովկա գլուղի գլուղացիները պատրաստվե-
ցին խոտհարքի Աղմկեցին, իրար անցան, թափվեցին փողոց իրենց
տներինց, վոր՝ ինչպես գազանների վորջեր՝ միայն ձմեռվա քնի յեն
հարմար և վոչ թե հանգստության: Գլուղացիք աշխուժ, ասելով-
խոտելով, ինչպես տոն ուր՝ խմբված գնում հավաքվում էին ար-
տելի դարբնոցի առջև: Քամին դաշտերից արևից տաքացած հողի
անուշ հոտն է բերում: Բակերից անասունների աղբի հոտ է փչում:
Գարունը դինու պես զրգռում է աշխուժ, գլուխն է խփում, վո-
րից ջահելանում են ձերերի խռպոտ ձայները, գլում են ջահելների
կրծքի հնչյունները, արծաթի պես զրնգացնում լերեխանների խոս-
քերը:

Որն ուրախ եր, տաք, դաշտերի բուրմունքով լցված: Կոմունի
մեջ ընտրվածները գնացին արոտները չափելու: Գլուղացիք ուկնա-
նիք աղմկալի խմբերով ճամպու դրին նրանց: Ձիավորները փայտե
սաժենները ձեռներին՝ շարքով կանգնեցին:

Առջևի ձիավորը «բո՛ւ» արեց: Սրան ձայն տվին մյուսները—
կոմունից ընտրվածները և այն լերեխանները, վոր խնդրել էին՝
իրենց ել թույլ տալ գլուղացիների հետ գնալու: Աղմկալի խումբը
թռավ դեպի տափաստան:

Փաղաքշում է տափաստանը հազար տեսակ խոտերով, բարև և
տալիս ճերմակ սմբուկներով, աչքով է անում հազար տեսակ ճեր-
մակ, կարմիր, կապույտ ծաղիկներով: Իր հարստությունն է ցույց
տալիս: Յեվ ողի մեջ բզգռում, գնգռում է նրա ձայնը—թռչունները
դայլալյում են, ճպուռները ճռռում, ժժմուկները խշշում: Կարծես
նա ձմեռը մեռած չի լեղել: Ամեն բան նրանում քաղցր է բուրբում:
Հոտավետ են ծաղիկները, հոտավետ են խոտերը. և ռուսական քիչ
դուռնատ լերկնքից կարծես, արևի բույր է գալիս: Քամին ծուխ է
բերում հետը. նա տափաստանում տաք է, քաղցր, հոտավետ:
Ոչինգրը, այդ դառը խոտը, նա չեւ լիովին ծաղկել է, խիստ սուր

հոտ եւ արձակում: Տափաստանը ձայն եւ տալիս: Եհեհեհէյ... ան-հայ... Ձայն եւ տալիս հեռուն, հեռուն: Ականջ դիր: Տափաստանը մարդկային ձայնին արձագանգ եւ տալիս: Ականջ դիր, փոքրիկ դադան, թռչուն, ժժմօկ, լսիր մարդկային ձայնը: Եհեհէյ... Մարդու կուրծքը լցվում եւ, ուզում եւ ձայն տալ:

Ձիերից իջան: Սկոռեցին իրենց փայտե սաժեններով քայլ փոխել: Մանր լերեխաները տակնուվրա քերին թփերը լոք բռնելու համար: Ճղովում ելին, կարծես ճղավոցը կապալով են վերցրել:

Ամբողջ որը մարդագետնները թնդում ելին գլուղացիների խոսակցութունից: Իրանց զիտեցած, տեսած և հասկացած բաների մասին. խոսելիս նրանց լեզուն դունավոր եր, ճկուն, տափաստանի պես ծաղկում են հազարավոր-բառերով:

Ամենից առաջ շարժվեցին մեքենաները: Նրանց չիտից ճափա ընկան սայլերը՝ վրան կնանիք, որորոց, տակառ, վրան, վեզրո, հագուստ, կաթսա, գավաթ: Յերբ տեղ հասան՝ տափաստանը ցնցվեց հազարավոր ձայներից: Տափաստանը շարժացին կանանց գլուխները՝ կարմիր-դեղին, ճերմակ-կարմիր բաղմազուն թաշկինակներով կապած:

Արամոնդովի կոմունն անտառից եր սկսվում: Անտառը փոքրիկ եւ հեռվից տափաստանում, մտիկ տալիս՝ կարծես սեղանի վրա փունջ լինի դրած: Մոտ եւ դնում՝ սովերախիտ, ծածկված տեղ եւ, սառ աղբյուրի մեջը:

Կանաչը տեղ հասան, վեր յեկան, իջևանեցին: Յերեխաներն սկսեցին լաց լինել: Գյուղացիք մեքենաները քշեցին մարդագետնները: Դեմյան Կալասովը նստեց մեքենայի վրա: Նրա դեմքն այնպես ուրախ եւ, ինչպես յերեխա ժամանակ, յերբ առաջին անգամ դնացք նստավ:

Շուտով իջևանում միայն Դարիա Սոֆրոնովան մնաց, վոր ճաշն յեփի: Հեռուն, հեռուն, ինչքան աչքը կտրում եր, յերևում եր, թե ինչպես մարդիկ շարժվում ելին տափաստանում: Վանկա Սոֆրոնովը սկսեց հաշվել:

— Մեր կոմունն ութ ընտանիք եւ: Տղամարդիկ, պատիկ—տասներեք, կնանիք—տասնյոթ: Պանտելեիկ կոմունը—տաս ընտանիք եւ: Վոչինչ, բոլ մարդ եւ յեկել խոտհարքի:

— Վամանկա, ան Վան: Ի՞նչ եւ վոտներդ բացել. արի:

— Եհ,

— Նյո-ո-ո, նյո... Պանտելեյ, պրծնում ես,

— Ես ե՛ պրծնում եմ: Ո՛ւլլա, հավասար տար թևերը:

Ձինվորի կնիկ Ակսինիայի կրծքից ձայն ինքն իրեն դուրս թռավ:

— Զան, ջան, խոտը պառկեց մանդաղի տակ:

Քրտնքոտ շապիկները կ'ալան մարմիններին, արուհի կարմիր գույնով ալբեց դեմքերը, քի՞նքերը կշտացած հնձած խոտի հոտից, մեջքները հոգնեցին: Բայց դեռ վաղ մի կոմունար դադար չտվեց: Վոչ մինը չէր ուզում տեղի տալ: Վերջապես Արտամոնը իրայիններին ձայն տվեց, վոր բանթողի ժամանակ ե: Մյուս տեղերում ել մեքենաները ձայները կտրեցին:

— Մերիկ, դե, վեր կաց, գալիս ենք ճաշ ուտենք:

— Դե', հայդե, հայդե. յերեք անգամ ձեն եմ տվել:

Մի խմենք, ե: Ամենից առաջ մարդ ուզում ե խմել սառը, կենդանացնող ջուրը: Զրով քաղցրացնել ցամաքած շրթունքները:

Յերկար լվացվեցին աղբյուրի մոտ, չոփ տվին ջուրը, սառ ջուրը կուշտ խմեցին: Հետո՝ ինչպես յերկար ջանասիրությամբ աշխատում ելին, նույնպես ել սկսեցին ուտել Դարիայի յեփած կեւակուրը ընդհանուր կաթնայից, վրան ել մի կուշտ խփշտեցին թթու կվասը:

Ճաշից հետո տափաստանը հանդարտվեց: Թափվեցին գետնին ու քնեցին՝ բոլորովին հանդիստ չլինելով բարի արևի շողքերից, վոր ընկել ելին նրանց զլխներին:

1. Ի՞նչ տրամադրությամբ են համակված կոմունայի անդամները:

2. Ի՞նչ առավելութուններ ունի կոլեկտիվ աշխատանքը, համեմատած անհատական աշխատանքի հետ:

տափաստան — դաշտավայր
բուրմունք — բույր, անուշ հոտ
ժամակ — միջոց

ողինդր — զեղարույս ե
ստվերախիտ — խիտ ստվեր ունեցող:

26. Կոմունարներ

Սա ի՞նչ կարգ ե, սա ի՞նչ կանոն,
շիտթվել ե ռանչպար Տոնոն:
Տոնոն ունի մի լուծը յեզ,
գուլթան չունի,—դու բանը տես:

Մկոյի յել հենց տունն ե ծակ,
ման ե գալիս հարբածի պես.
Ժանգոտ գուլթան ունի մենակ,
բայց յեզ չունի,—դու բանը տես:

Ռսոյի յել բանը բուրդ ե,
ամեն ինչը ջարդ ու բուրդ ե:

Խեղճը ունի ցանելու բան,
բայց չունի յեզ, չունի գութան:

Մկոյի մոտ գնաց Տոնոն,
են կողմից ել յեկավ Ռոնոն,
Զրույց արին, տվին, առան,
դարդից ասող-աշուղ դառան:

Թրած եսպես կյանքի միջին.
ախպեր, հոգիս դուրս ե գալի,—
ասին, ասին ու վճռեցին
մեկտեղ գտնեն ճարը ցավի:

Ինչ աջող չեր ջոկ-ջոկ, մին-մին՝
գլուխ յեկավ հենց միասին.—
կա կոմունա. իսկ կոմունում
կա յեզ, գութան... Ինչ ես ուզում:

Արան հերկում են Մկոն, Ռոնոն,
յեզն ու գութան՝ սարքին-կարդին,
ընդհանուր տան հետ ե Տոնոն,
զոռ ե տալիս իր ուրազին:

Յեւ գործ, ինչ գործ—խաղ ու պար ե,
ինչ յերջանիկ, լավ աշխարհ ե—
Հաջողություն, ապրեք, եղպե՛ս.
կոմունարներ, նոր որեր ձեզ:

1. Ինչ ունեն Տոնոն, Մկոն և Ռոնոն առանձին-առանձին:
2. Կարողանա՞ւ են ոգովել իրենց ունեցածից: Ինչո՞ւ:
3. Ինչ պայմանների մեջ ե աշխատանքը հաջող արդյունք տալիս:

27. Մի որավար հող

Սոնան և իր ամուսին Մարտիրոսն աղքատ գյուղացիք էլին: Ունեյին չունեյին՝ մի գույգ ալժ, վորոնց կաթով ապրում էյին, մի ճախարակ, վորով Սոնան բամբակի թել եր մանում վաճառքի համար, և մի բահ, վոր ամեն որ վաղ առավոտյան Մարտիրոսն ուսին դրած՝ գնում եր գյուղամեջ և այնքան վիզը ծռած կանգնում, մինչև վոր դրացիներինց մեկը՝ միքանի աբասի վճարելով՝ վարձում եր նրան և ամբողջ որը բանեցնում իր դաշտում:

Այսպիսի դառն աշխատությամբ դարձյալ գոհ էլին նրանք, յերբ

Արարողանում ելին իրենց խճիթի մէջ հանգիստ քուն վայելել: Իսկ այդ բախտը խիստ սակավ էր աջողվում նրանց:

Մի որ Մարտիրոսին իր մոտ կանչեց գլուղատեր խանի վորդին՝ Ռիզա բեկը:

Յերէյուդից խեղճ գլուղացու շունչը կտրվեց մինչև խանի վորդու մոտ հասնելը. բայց տեսնելով նրա ուրախ դեմքը՝ ազատ շունչ քաշեց և մինչև գետին խոնարհվելով՝ յերկրպագեց նրան:

— Ինչո՞վ ես պարապում, Մարտիրոս, — հարցրեց Ռիզա բեկը:

— Աղքատի պարապմունքն ի՞նչ պետք է լինի, ադա, վտարվ մտխիւր դառնամ: Որը գաղտւմ եմ, որն ուտում, — պատասխանեց գլուղացին կրկին գլուխ տալով:

— Դու ուժեղ և առողջ տղամարդ ես, Մարտիրոս. — դու կարող ես ունենալ քո արորը և որովարը. վոր պարապես հողագործությամբ:

Մարտիրոսը չգաղաքելով գլուխ տալուց՝ պատասխանեց.

— Յես աղքատ մարդ եմ, ադա, քեզ մատաղ դառնամ:

— Հիմար, — հպարտությամբ գլուղացու խոսքը կարեց բեկը. իմ հպատակներից. ո՞վ է հարուստ. բայց յես տալիս եմ նրանց հող, սերմ և բոլոր պարագաները, վորոնք հարկավոր են վաճուցանքի համար, և նրանք դրանով ապրում են:

— Դուք միշտ վողորմած եք դեպի ձեր ծառաները, տեր իմ:

— Յես քեզ հուշն հպատակով կանչեցի ինձ մոտ: Յես գիտեմ, վոր դու աշխատավոր մարդ ես: Յես չեմ կամենում, վոր դու աղքատ ապրես: Գնա սանուտիրոջ մոտ. յես հրամայել եմ նրան տալ քեզ բոլոր պիտուկները վարուցանքի համար:

— Աստված քեզ յերկար կյանք տա, աստված իմ կյանքից կտրի, ձերի վրա ավելացնի, — ասաց գլուղացին և շնորհակալությամբ հեռացավ:

**

Գարնան սկիզբն էր:

Մարտիրոսի յերգի ձայնն արդեն լսելի յեր լինում դաշտից, ուր նա հերկում էր իր որովարը:

Միջանի շաբաթից հետո նրա ցանքն սկսավ բուսնել, կանաչել և աճել: Բայց նրա հետ անկատելի կերպով աճում ու բազմա նում էր տոկոսը նրա պարտատոմսակի, վոր նա տվել էր խանի վորդուն:

Անցավ ամառը, յեկավ աշունը: Մարտիրոսը հնձեց իր արտը, կալը կալսեց և զուտ ցորենի շեղջը կիտեց կալի մեջ: Ուրախությամբ նայում էր իր հունձքի պտղաբերության վրա:

Յեկավ կալվածատիրոջ գործակալը, ցորենը չափեց, ասանորդը վեր առավ վորդեա հողի վարձ, մի մասը վեր առավ դիվանի տուրքի փոխարեն, մի մասը վեր առավ նրա պարտքի տոկոսի փոխարեն: Կալի մեջ մնաց միայն հարդը և այնքան ցորեն, վոր բռնական չեր խեղճ յերկրագործի նուէն ձմեռվա ապրուստին:

— Ինչու յես աշխատեա տաւր,—հարցրեց կինը:

— Այնպես, քեֆս տեղը չի,—պատասխանեց Մարտիրոսը:

— Ասա, ինչ ե պատահել, հիվանդ ես, ի՞նչ ե:

— Շհ, ել ինչ պետք ե լինի: Ամբողջ տարին աշխատեցի, մաշվեցի, ելի դատարկ մնացի:

Յեւ Մարտիրոսը պատմեց կնոջը, թե ինչպես աշխատեց կողոպտեցին իրեն:

— Գոնե պարտքդ թափեցիր,—հարցրեց կինը:

— Պարտքը մնաց ելի ափսոսեա, ինչպես կար,—պատասխանեց Մարտիրոսը՝ խոր հոգաց հանելով:

— Հիմա ինչ պետք ե անես:

*
*
*

Անցան միջանի գարուններ, անցան միջանի աշուններ:

Գյուղից դուրս, իր փոքրիկ յերեթան կրծքին սեղմած՝ կանգնած եր Սոնան: Արտասուքն աչքերին, նա ճանապարհ եր դնում ամուսնուն դեպի ոտար աշխարհ:

— Կգնամ, Սոնա, յերկրե-յերկիր ման կգամ, կմաշվեմ, կկատորվեմ, փող կվառտակեմ և կազատեմ քեզ և իմ յերեթան պարտատերերից,—ասաց խեղճ գյուղացին և համբուրելով տղի յերեսը, հեռացավ դեպի պանդխտություն:

1 Յուլայ տվեք կալվածատիրերի և անհող գյուղացու հակադրությունը: Նկարագրեցեք նրանց յուրաքանչյուրի կենցաղը և հոգեկան կյանքը:

2. Մարտիրոսը և Սոնան գյուղացիության վճիռ շերտին ելին պատկանում:

Նրանց հոգեբանությունը կապված ե արդյոք նրանց նյութական վիճակի հետ: Ի՞նչպես:

3. Ի՞նչ եր Ռիզա բեկի «բարեբարության» աստատը:

4. Ինչի՞ հետևանք և պանդխտությունը:

սակավ—քիչ
յերկյուղ—վախ

դիվան—գրասենյակ
հոգոց հանել—ախ քաշել

28. Ծերունու հառաչանքը

Մի՞նեց, Ծերունին լուռ չարչարանքով
միքանի կռճեր դրեց կրակին,
նորից բարեկեց իր լերկրի կարգով
ու բարի մաղթեց ջահել զոնադին:

Ծանր տնքալով թեք ընկավ ծերը,
յերկար կոթավոր չիբուխը լցրեց.
գիշերվա նման կիտած նոթերը՝
խուլ վորոտալով եսպես հարցրեց.

— Ի՞նչ կա քաղաքում, դե պատմիր տեսնեմ,
իմանամ, լես ել ուրիշին ասեմ.
մեռնող-ապրողից, թանգ ու եժանից,
կամ նոր դուրս յեկած գաղեթից, բանից...

Յերեք թագավոր, — ասում են իբրեւ,
խելքս չի կտրում, վոր եսպես լինի, —
խորհուրդ են արել, վոր ալսուհետե
իր թախտից զրկվի, ով կռվ մանի:

Ո՞վ ե իմացել եսպես հրաշք բան.
եւ ի՞նչ թագավոր կամ եւ ի՞նչ իշխան,
վոր կռիվ չանի, ուրչին չտիրի,
մարդ չկոտորի, լերկիր չավերի...

— Ե՛հ, աստված սիրես, թո՛ղ դրանց, պապի,
լես շատ եմ զրդվել քաղքից, դագեթից,
ինչպէս եք ապրում, դու ձեզնից պատմի՝
ձեր որ ու կյանքից, ձեր ցավ ու դարդից:

— Ի՞նչ ես կորցրել — ընչի՛ ման գալի, —
խոսեց ծերունին դառը խնդալով, —
բա մեռած հո չմե՛ք, ապրում ենք, ելի,
ամեն մեռնողի յերանի տալով:

Մեր ապրուստն ի՞նչ ե, — մի կտոր չոր հաց,
են եւ հրբեն հա՛ — լերկընքից կախված:
Մի մարդ վոր նրա յերեսը պահի՝
նրա ապրուստը ի՞նչ պետք ե լինի...

Յեա քեզ որինակ, Ես խոր ձորերում
 ես եւ չորս քսան տարին լրացավ.
 Վոչ մի խնդութիւն տեսա իմ օրում,
 Վոչ ել մի անգամ աչքս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիւնի
 պլտիտ եմ գալի ես ձորի միջին,
 կռիվս եմ տալի հազար ցալի հետ
 ու չեմ կարենում—չեմ հասնում վերջին:

Վազներից ենքան ոգուս չի գալի,
 ինչ նրանց համար յես փող եմ տալի.
 զըլուխը քարը, դռնե փող լիներ,
 ել ինչո՞ւ ետքան մարդ գանգատ կաներ:

Ցախ եմ հալածում, կրակ եմ վառում,
 սրա համար ել փող եմ վճարում:
 Ես դափեն լինչ ե,—մի յերկու լատան,
 հինգ ու վեց անգամ տարան դատաստան:

Ասում են՝ գեջ ես կտրել դու մերին:
 Իրանցն ասում են ու քեզ չեն լսում.
 մինչև չտեսնես մեծին, պիտերին.
 հիմի տես նրանք ինչքան են ուզում:

Դողն ել մի կըռնից, գելն ել մլուս կըռնից.
 աչքըդ թեքեցիր—բանիդ տերը չես.
 քաշում են տանից, քաշում են դռնից,
 ու չես իմանում՝ վոր կողմը թռչես:

Թե տանուտերին գանգատ եմ դնում,
 բան չեմ վաստակում՝ բացի դուշմանից.
 գողերի հետքը իր առնն են տանում,—
 համեցեք դիման ուզիր սրբանից:

Նստեցնում ե քեզ, մի յերկու բաժակ
 տաք ջուր խմեցնում կամ մի թաս ողի.
 — Դու զնա, պապի, միամիտ քնիր,
 յես աչքի լուսը կհանեմ գողի...

Դարձել ե աշխարհն, ախպեր, առուփախ,
 սերը դարձել սուր ու ջուրը՝ արին,
 Վոչ ամթ ունի ուժեղը, վոչ վախ.—
 վալը յեկել ե տարել տկարին:

Յերեկ իրիկուն եղ կողքիդ սընից
կախ եյին արած լերեք հըրացան.—
Տղերք են՝ փախած տանից, դիվանից.—
յեկան ու ծեքին ել յետ հեռացան:

Ո՛վ ե մեղավոր... Միտք եմ անում, միտք,
ու չեմ հասկանում՝ ո՞վ ե մեղավոր:
Հենց են եմ տեսնում—մուժ, անգետ մարդիկ—
ել մենք՝ հնք մեջտեղ տանջվում ամեն ոք...

Նստեղ մեզ մոտիկ թավադներ ունենք,
ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
փորներն վողողած, փոխկները թողած,
կըռները կանթած կըտերը կանգնած:

Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի,
թըքես մի ծերից, մշուս ծերը կընկնի.
վոչ ինքն ե վարում, վոչ տալիս մեկին,
բուն ե հավաքել գյուղացու հողին:

Գնում ե ուրշի ապրանքը տանում,
թագուն հավաքում, իր հանդն ե անում,
ազմուկով քշում իր հանդի միջից,
շտրափ ե առնում անմեղ ախրոջից:

Մի որ սա յեկավ, թե՛ չորան Չատին
վոչխարը թագուն իմ հանդն ե քաշել:
Չատին ել կուլ չի գընաց թավադին.
— Թող գա մի տեսնենք՝ եղ ո՞վ ե տեսել:

Աղաչանք արի, պաղատանք արի,
— Այ աղա, ասի, յետ քաշվի, հեռի,
բեր ձեռը վեր կալ, անեծք չար բանին...
Բայց ի՞նչ հասկացնես բոլի չորանին:

Ձե ու չե, ասավ, են լեռ սարի պես
գընաց դիք կանգնեց դեղի մեղանում.
ես դատաստանը, ես թավադն, ես յես,—
թող գա մի տեսնենք՝ ինձ ինչ ե անում:

Յեկան իրարու, խոսք-խոսքի հասավ,
Չատին միքանի կոշտ խոսքեր ասավ—

յեկտվ եսՉաանիս հաջիցը կապեց,
ինչքան վոր գիտես՝ քո տաած թակեց՝
թե պետք է կորցնեմ քեզ ենքան հեռու,
վոր ել չտեսնես արևը լոռու:

Մեր մեջ միքանի ծեր մարդ ընտրեցինք,
գնացինք թավադի վտը խընդիրքով,
ինչքան վոր ավինք, ավել խնդրեցինք—
բանը վերջացնի գեղակուն կարգով:

Ախպեր, ասեցինք, ինչ արիք իրար.
խոսք եք կռվացրել, արին հո չարիք.
համ ծեծել տրվիր, համ ըշտրափդ առ.
Արի վերջացրու, բոլ ելավ, հերիք:

Սա վտը դրեց վերի թարեքին.

— Եսքան ու եսքան բերեք, վոր ներենք...

— Ես ե ունեցածն աստըծու տակին,

եւ չկա, ախպեր, վորտեղից բերենք:

Ինչ արինք-չարինք, չեկավ հավատի,
գընաց ավելի բարձր գանդատվեց,
թե՝ ինքըս թավադ, թավադի վորդի,
ու չորան Չատին ինձ ուչունց տվեց...

Վերեկից մի մարդ չեկավ քննութուն,

միրուքը հաչա, աստղը ճակատին,

յեկավ, վեր չեկավ, մտավ քյոխվի տուն,

— Վորտեղ ե, տաավ, են չորան Չատին...

Չատին ել չեկավ՝ անճոռնի ու մեծ,
են փետի նման մեջտեղը տնկվեց.
վոչ որենք գիտի, վոչ կարգն ու լեզուն,—
բերանը կապած սարի անասուն:

Քննութունն արին, բռնեցին գյադին,

թե՝ ինչպէս ուչունց կտաս թավադին.

բաց արին տեսան՝ զըրած զակոնում,

թե չորան Չատին Սիբիր ե գնում:

Ո՛վ ե մեղավոր, Միտք եմ անում, միտք,

ու չեմ հասկանում՝ ո՛վ ե մեղավոր.

բայց իմ կարճ խելքով ենքանն եմ տեսնում—

ապրիլ չի լինիլ եսպես ամեն որ:

1. Ի՞նչ հասարակական շերտեր են հանդես գալիս այստեղ և ի՞նչ փոխ-հարաբերութիւնք:

2. Ո՞ւմ պաշտպանն և հանդիսանում ցարական որեւէն ու արդարապատուութիւնը: Ի՞նչ՞:

3. Մեր կյանքի վճիռը շրջանին և վերաբերում այս հոգովածը: Հեղինակը չքավոր գյուղացիութեան ազատագրման ուղիները ցույց տալիս է:

4. Համեմատելով այս հոգովածը «Կոմունալի խոտհարքի» հետ և նշել տարբերութիւնները:

տաքիլեթ—տաք կերակուր
դափնն—կտոր հող
լատան—հողաչափ հող չափելու
համար

թավադ—վրացի ազնվական, իշխան,
խան, կալվածատեր
գեջ—թաց, կահաչ,

29. Թանգին

... Մեռնելիս հայրը Թանգուն փալասի մեջ փաթաթած վոսկիներ հանձնեց և աչքերը փակելուց առաջ մի անգամ եւ վերդուն պատվիրեց ապրանքը լավ խնամել, տան կողքին մի ուրիշ ամուրաթ շինել և ընդարձակել այգին:

— Աչքդ բաղին պահիր, — ասաց և աչքերը փակեց:

Ազգ ու բարեկամ լաց չեղան: Իսկ Թանգին զնաց գոմը՝ նախ հոր թողած վոսկինները հաշվելու և ապա մի լղար լեզ ջոկելու մեռելահացի համար:

Գրեթե մահաժամանակ Թանգին բաղի մոտով եր անցնում: Վերադարձին Թանգին բաղի դռնակը բաց արեց, ներս մտավ, նախ ծառերին և՛ շատ փոքր թվաց նրան հայրական այգին: Գրպանում զրնգում եր վոսկին. և դրպանի վոսկուց ցուլք եր լեկնում: Թանգու աչքերը շլացնում:

Կանգնեց այգում վորպէս հաստարմատ ծառ, նախեց պատերից դեն ձգվող պարարտ հողերին, մտքում գծեց մի սահման և այդ սահմանը դրեց իր կյանքի կետ-նպատակ:



* * *

Գյուղում Թանգին հզոր եր, բազումն՝ ուժեղ, ասածն՝ որեւէ մոռլ բողոք կար և տրտունջ, թե Թանգին աղքատի պատան և

կուլ տալիս, պայմանագիր և կնդծում, կաշտում որենքը և զամ-
թում, թաթը դնում մսոս հողերի վրա, դառնում խան ու սարգար:
Գմծիծաղ եր առլիս Թանգին, յերբ ականջին եր հասնում դշու-
ղի խոսքը, վրորում եր բեղը և ինքնագոհ հայրական այգու ճա-
նապարհը բռնում:

Տարիները դրովում եյին, բաղը պտուղ եր առլիս, արար՝ վոս-
կեհատ ցորեն: Թանգին պինդ եր կոխում սեփական հողը և մըտ-
քում դրած սանմանին ձգտում անխոռով:

* *

Մի դարուն եր յերբ որերը յերկաբացան, հողը տաքացավ և
գոլորշին բարձրացավ հանգստացած հողից, մի դարուն ել Թանգու
համար ուրախ լուրեր չեկան քաղաքից: Արեն ելի առաջվա տեղից
եր ծագում, բայց Թանգուն թվում եր, թե ծովել և աշխարհի ա-
ռանցքը:

* *

Ուրիշ որեր չեկան:

Կռունկները չեկան, սեահողը տաքացավ, սեահողում արևի տակ
ծլեց վոսկե հատիկը:

Թանգին գոհ կլիներ, յեթե միայն կռունկները գային, և արե-
վի տակ հատիկը ծլեր:

Գարունքին չեկան հողերը չափելու, հավասարելու: Գյուղը
մըջնոցի պես հըր, գարունքին զարթնած մըջնոց:

Ժողով կար, աղմուկ, աղաղակ:

— Վեր թափե՛ք Թանգու հողերը, հավասար բաժին անենք, —
կանչում եյին ժողովում: Թանգու յերեսին շարտում՝ «քլասիբ ու-
տող»:

Յեվ բարակ շղթաներով չափեցին հողերը, ապառաժն ու այ-
գին, ջրովին ու դեմին: Զափեցին, նկարեցին, բաժին արին:

Թանգու հողերը սելավի բերանն ընկավ, պարարտ հողերը թը-
ռան ձեռքից հեռացող կռունկի պես, և մնաց այգու կեսը, մի որա-
վար ջրովի, յերկու կտոր վարելահող: Շունչը քիչ եր, այդքան եր
հասնում:

Յերբ շղթաները զնգալով կտոր-կտոր արին Թանգու հողերը,
նրան այնպես թվաց, թե սիրտն են կտրատում: Բողոքեց, սպառ-
նաց, դանդառավեց — հեռացին, ծաղրեցին:

Թանգին հենվեց այգու քարապատին, նայեց չափարարների հե-
ռացող խմբին:

Շալրամուտ եր, իրիկնամուտ եր արդեն:

* *

Հենց նույն գիշերը Թանգու տանը միքանի հոգի՝ ազգ ու բարեկամ՝ ժողովի նստեցին։ Թանգին եր կանչել իբ ճանաչմարդկանց՝ մի հնար գտնելու հողերի բաժանումը խանդարելու, մինչև՝

— Մեզ համար մի լույս ծագի,—ինչպես ասում եր Թանգին։

— Թողնեն իմ ձեռով հողերս բաժանեմ։ Մեկը քեզ տամ. ազգես ինձ, ինչձև խախը ուտի։

Մինչև կես գիշեր հնար եյին փնտռում, խափանման միջոց։

— Թանգի՛ ամի, մենք վա՛ր բողոք տանք, չեն ընդունի. վերջը լավ չի լինի,—ասաց մեկը։—Յեկ, կնանոնց կազմակերպենք, թող նրանք անեն։

Հենց այդ գիշեր ել կանչեցին մեկին, վորին Թանգին խոստացավ չորս փութ ցորեն, և գիմումը զրվեց նախ միայն «կանանց միութեան» կողմից. բայց վերջում անհրաժեշտ համարվեց, վոր տղամարդիկ ել ստորագրեն։

Յեւ գրադիրը թղթի վրա շատ պարզ գրեց նախ՝ «ՀՄԽ», ապա ներքև՝ «Մերվան գյուղի կանանց և տղամարդկանց միութիւն»։

Աքրորականչին ժողովը ցրվեց։ Թանգին ճրագի տակ նայում եր դրած թղթին, վորին ներկա յեղողներից միքանիսը բռն մատով կնքել ելին «վտան անգրագիտութեան»։

Մյուս ուրը Թանգին գլուղում մարդու չեր ման գալիս, կողմնակից ճարում, համագում, վոր թղթին ձեռք քաշեն։ «Մերվան գյուղի կանանց և տղամարդկանց միութեան» գիմումը Թանգին հատուկ մարդով քաղաք ուղարկեց։

* *

Յերկար ժամանակ չանցավ։

Մի իրիկուն, յերը Թանգին տնքալով շորերն եր հանում ընելու, գգիրը կտուրից ձեն տվեց նրան, թե շտապ գործով կանչում են գյուղխորհրդից։

Թանգին գնաց, ճանապարհին հաղաւ միտը անելով, հազաք կասկած։ Դիմումը մերժել եյին, հողաբաժանումը հաստատել։

— . —

1. Հողը ինչ գեր ե կատարում գյուղական տնտեսութեան մեջ։ Արտադրական միջոցների շարքում նա ինչ տեղ ե գրավում։ Ուրիշ ինչ արտադրական միջոցներ գիտեք (գյուղատնտեսութեան մեջ)։

2. Հին իշխանութեան ժամանակ այդ միջոցներն ինչպես ելին բաժանված։ Այսպիսի բաժանումից ինչ եր առաջացել։

3. Խորհրդային իշխանութիւնն ինչ փոփոխութիւն մտցրեց։

Դեպի նոր կյանք—5

4. Ի՞նչ տիպի գլուղացի յեր Թանգին և ի՞նչ հոգեբանություն ուներ նա: Վերլուծեցեք նրա բնավորությունը:

5. Գլուղի վճիռ խավին եր պատկանում «Մովան գլուղի կանանց և տղամարդկանց միությունը»:

6. Ի՞նչ շերտավորում կա ներկայումս գլուղում և ի՞նչ վերաբերմունք ունի լուրաքանչուր շերտը դեպի խորհրդային իշխանության քաղաքակա- նությունը:

պարարտ—աղբած, բերքառատ
(հող)

հզոր—ուժեղ, զորեղ
բազուկ—թև

բմծիծաղ—ժպիտ (արամարհա- կան)

անխռով—հանգիստ, անվրդով
առանցք—սունի (վորի շուրջը
պտույտ և գալիս մի բան)

30. Իվանեն

I

Իվանեն դաշտային աշխատանքի մեջ եր, յերբ կինը անսպա- սելի կանգնեց նրա առաջ և անհանգստությամբ ասաց.

— Տանուտերը ուղում ե քեզ տեսնել, պրիստավից թուղթ ե չեկել:

— Տանուտերը, — դարմացած պատասխանեց Իվանեն և գու- նատվեց. — Խելագարվել ես, ինչ ե: Ինչո՞ւ համար, վճիռ մեղքիս հա- մար:

— Յես, ասում ե, պարտավոր չեմ ամեն բան ասելու քո կարմիր—սոցիալիստ ամուսնուն... Թող բարեհաճի գնալ դրասենյակ և ախտեղ իմանալ, թե նրան ինչո՞ւ չեն կանչում:

— Տես եղ անիրավին, ինչպես թե եր ասում: Յերես ենք տվել. չտղացել, խող ե կտրել, ել ուրիշի վիճակի մեջ չի մասնում: Մի հարցնող լինի, թե ինչո՞ւ համար ե այդ թշնամանքը — ում վիդն եմ կտրել, ում տունն եմ թալանել, վորի՞ն եմ վատություն արել, ումից կաշառք վերցրել, ի՞նչ ե ուղում այդ անխիղճն ինձանից:

— Այն, վոր լեզուդ կարճ չեյիր պահում և շարունակ խոսում եյիր նրա դեմ և թշնամացնում քեզ հետ: Այսր ով ե նրա ձեռքից պրծել, վոր դու պրծնեյիր: Ամբողջ գլուղը ճանաչում ե նրան, բոլորն ել նրա վատ արարմունքների մասին են խոսում, բայց ծա- ծուկ, իրար մեջ և վոչ թե քեզ նման՝ յերեսովը տալիս ամեն ինչ: Ախր շարունակ ասում եյի՝ ալ մարդ, լեզուդ քեզ քաշիր, վատ որեր կզան գլխներիս: Բայց ով եր լսում ինձ. յես ասի, յես լսե- ցի... Տես... շուրջդ նայիր ու տես, թե ինչ են անում ուրիշները...

պապանձվել, լռել են, վսշվոք չի առարկում նրա դեմ: Ասում են՝ «կառավարութեան մարդ ե, տանուտեր ե, ի՞նչ կարող ենք անել»:

— Հերիք ե, այժմ ինչի, դու ել մի կողմից ես սիրտս կտրա-
տում: Ի՞նչ խրատների ժամանակ ե: Բողոքել եմ և միշտ ել կը-
ղոքեմ ամեն տեսակի անարդարութեան դեմ,—ասաց վճռական և
շարունակեց իր աշխատանքը...

Սիրտնիս մտազբաղ տուն վերադարձավ...

Արդեն կեսր եր...

Կիզիչ արևը կարծես կանգ եր առել յերկնակամարի վրա՝ Ի-
վաննիկ գլխավերել և հանգիստ ու անտարբեր նայում եր ներքև
կատարվող ժրաշան աշխատանքին...

II

— Բարի որ... անժպիտ կերպով կանգնեց գլուղի տանուտերը
Իվաննիկ գլխին՝ ձեռավոր գզիրների հետ միասին:

— Բարև հազար բարի,— անբավականութեամբ պատասխանեց
աշխատավորը՝ հազիվ իր գլուխը բարձրացնելով:

— Այս առավոտ կանչել եյի գրասենյակ, ինչո՞ւ չներկայացար:

— Այ՛ մարդ, աշխատանքի այս յեռուն որերում ի՞նչպես ար-
տըս կիսատ թողած՝ գրասենյակ գալի: չե՞ վոր ինքդ ել գյուղացի
յես և լավ դիտես մենակ աշխատավորի վիճակը:

— Դա իմ գործը չէ: Ինձ հրամայված ե, և յես պարտավոր
եմ ճշտութեամբ կատարել հրամանը:

— Ի՞նչ ես ուզում, ասածդ ի՞նչ ե:

— Հենց այժմ պիտի պրիստավին ներկայացնեմ քեզ,—չոր-չոր
պատասխանեց տանուտերը և նայեց գզիրներին:

— Ինչո՞ւ, վճիռ հանցանքիս համար: չե՞ս կարող արդոք ասել:

— Ինչու համար՝ չգիտեմ: «Նաչալնիկի» գրութեանն ե—«վոր-
տեղ պատահեց Իվանե կեթիլաշվիլուն, անմիջապես ձերբակալե՞ր և
ուղարկե՞ք ինձ մոտ»:

— Այս բոլորը քո բաներն են, Փիթո, ուրիշ վոչվոքի,—ասաց
վրդովված Իվաննի:

— Ինչպես, ուրեմն հանցանք ել ես բարդում վրաս: Լավ,
չատ լավ: Ինչպես տեսնում եմ, առանց մտրակի գործը գլուխ
չի գա:

— Ինչպես, ուզում ես մտրակի բաժին դարձնել ինձ: Վոչ,
այդ քեզ չի հաջողվի: Իվաննի դեռ այնքան չի ընկել, վոր այդ
տրին հասնի...

— Բավական ե, ստույգ եմ: Յես չեմ յեկել այստեղ խոսք ուղղուլց անելու: Յեկել եմ ձերբակալելու, ձեռք ու վտաքդ կապելու և պրիստավին ուղարկելու: Այդպես ե հրամայված: Յնթե ըմբոստանաս և չուզենաս հնազանդվել, տեղն ու տեղը կարող ես սպանվել — ասված ե հրաման-կարգադրության մեջ:

— Ինչո՞ւ, վճռ հանցանքիս համար. ավադակ հո չե՞մ, ո՞ւմ ինչ վատութիւն եմ արել, ա՛յ մարդ...

— Ո՛ւմ ինչ վատութիւն ես արել... Դու կարծում ես՝ մոռացվեց այն բոլորը, վոր գլուղացիները ականջները մոտած՝ դիշերցեբեկ հուզում, աղմկում, զրգում ելիւ տգետ գլուղացիներին իմ դեմ, կառավարության դեմ: Մոռացանք այդ բոլորը, հա՛, կարծում ելիւ եժման կնատեր այդ: Կարճ կտրիւր, վեր կաց այս բոլորին, վեր կաց, — դուռաց տանուտերը և քացավ տվեց գետնին փռված Իվանեյի կողքին:

— Դուռուղ քավական չե, քացի յե՛կ ես տալիս, շահ տե՛ղ ես դնում դու ինձ, հա՛...

— Ձայնդ, թե չե՝ մարակս կիջնի մեջքիդ:

— Ի՞նչպես, դու համարձակվում ես...

— Ա՛յ, թե ինչպե՛ս... շարժվեց մտրակը ողի մեջ և պինդ իջավ Իվանեյի հողնած մեջքին:

— Վա՛յ... — բռունցքը կրծքին տալով դուռաց զարացած Իվանեն և ատամները կրծաուցնելով՝ առյուծի նման վտաքի թռավ...

— Կապեցե՛ք ձեռքերը, — նորից լավեց տանուտերի կատաղած ձայնը, և յերկրորդ անգամ մտրակը խաղաց...

Դղիւններն իրար անցան...

— Տո՛ քավթա՛ւ, ի՞նչ ես ուղում ինձնից, — համբերութիւնից դուրս գալով՝ դուռաց Իվանեն, հարձակվեց, արեւի ճառագայթներէ տակ փալվիւղ մանգաղը շողաց ողի մեջ, և մի տկնթարթում գետին փռվեց տանուտերը...

Դղիւնները սարսափից դեռ ու դեռ փախան, տուն վերադարձան...

Իվանեն ուշքի գալով՝ նայեց իր շուրջը, տեսավ ինքն իրեն միայնակ կանգնած տանուտերի անշնչացած դիակի առաջ...

— Անպիտաններ, գոնե դիակին տեր կանգնեյիք, — փնթփնթաց Իվանեն դղիւնների յետեից:

Մի բոլակ կանգ առավ... նայեց հեռուները... լիառատ թոքերով ազատ շունչ քաշեց և գլուխը կախեց...

*
* *

Այն որից ի վանհն թողեց դաշտն ու մանգաղը և հրացանը ձեռք առնելով՝ զնաց միանալու ըմբոստ վոգիներին, հեղափոխա-
կաններին:

1. Գյուղական Վժը խավի ներկայացուցիչն է ի վանհն:
2. Վժը ժամանակաշրջանին է վերաբերում այս հոդվածը. ինչից և այդ լերևում:
3. Ինչո՞ւ է յին ուղղում ի վանհյին բանտարկել: Որենքը վժը դասակար-
գին էր պաշտպանում:
4. Ի վանելի կատարած սպանությունն անհատական, թե՞ դասակար-
գային պատճառով էր:
5. Սպանությունից հետո ի վանհն մեր զնաց և ինչո՞ւ:

մտազբաղ—մաքերի մեջ ընկած
կիզիչ—այրող
ժրաջան—ժիր, աշխատասեր

ծերբակալի—բռնել
ըմբոստ—անհնազանդ

31. Վաշխառուն

Աննկարագրելի ահ ու դողով գյուղացի Ավետը ներս մտավ և հեռվից խորին կերպով գլուխ տվեց մի կարճահասակ ալևոր մար-
դու վոր նստած էր զրաւեղանի մոտ և քրքրում էր իր առջև ա-
ծած թղթերի կույտը:

Նրա առաջին յերկրպագությունն աննկատելի մնաց, վորովհե-
տե աղան զբաղված էր: Հետո գյուղացին ծոծրակը քորելով՝ մի-
քանի անգամ հազաց, վոր ցուլց տա իր ներկայությունը: Աղան
գլուխը վեր բարձրացրեց և տեսավ նրան: Ավետը կրկնեց իր յեր-
կրպագությունը:

Աղան քաղաքավարի յեր, ժանավանդ դեպի այն մարդիկ, վո-
րոնց հետ հաշիվ ունեւր: Հաշվի ժամանակ նրա մարդահաճությունը
համոզում էր մինչև ցած կեղծավորության: Տեսնելով գյուղացուն՝
նա իր կոշիկ դեմքի վրա ձեւացրեց մի անսովոր ժպիտ և հարցրեց.

— Բարձով, Ավետ ապեր, Վժնց ես, լմիլ ես. տղերքդ, տանե-
ցիքդ լմիլ են:

— Աղթթարար ենք, աղա,—պատասխանեց գյուղացին.—թող
տեր աստված մեր կլանքիցը կտրե, ձերի վրա դնե:

— Անասուններդ, ցանքերդ լմիլ են:

— Անասունները, փառք առտծո, վատ չեն, բայց ցանքերը

ցամաքել են: Մեր մեղքից շուրջ պակաս է այս տարի. անձրև եր
չի գալիս: Գնացին տերտերի մոտ, նա գիր բացեց, ասաց՝ լեր-
կինքը կապել են...

— Աղան մտածեց դյուղացու անահավատութունից ոգուա-
քաղել:

— Այա վոր յես ձեզ ասում եմ, թե ինչ պարտք վոր անուր
եք, իր ժամանակին բերեք, բայց ձեր ականջը չի մտնում: Տես-
նում ես, տոտված եղպես կբարկանա: Ասել են՝ «առ և տուր, չեն
ասել՝ առ և կուլ»։ Քեզ վրա չե խոսքս, Ավետ ապեր, դու լավ
մարդ ես: Քո հանգուցյալ հայրն ել լավ մարդ եր: Բայց են անի-
րավ Թաթոսենց Գևորգ՝ մի տարի չե յերեսը չեմ տեսել: Քսան մա-
նեթս տարավ: Ինքն ել կորավ, փողս ել:

— Սևերես ե, աղա,—պատասխանեց դյուղացին՝ վողորմելի
ձայնով: Խեղճ ե, ընտանիքի տեր ե: Ի՞նչ անի, վոր չունի: Ունե-
նա — կտա, իր հոգին կաղատի:

— Յես խեղճ չեմ, յես ընտանիք չունեմ,—պատասխանեց
աղան բարկացած ձայնով:

— Աստված ձեզ տվել ե, թող ավելի շատ-շատ տա: Բայց նա
աղքատ ե:

— Ձե՛, Ավետ ապեր, դու խելոք մարդ ես, բայց այսքանը չես
հասկանում,—դյուղացու խոսքը կտրեց աղան մեղմությամբ:—
Ախր ամեն մարդ վոր տարածը յետ չբերե, յես ել ձեզ նման կը-
լինեմ:

— Դրուստ ես հրամայում, աղա: Բայց վանց վոր ըլի, պետք
ե սպասես: Գեղըցին փող չի ուտի. լերը ունենա, կտա: Մեր տերը
դու լես: Վերևում աստծուն ենք ճանաչում, ցածումը քեզ... Ձենք
ուտում, չենք խմում, մեր յերեխեքի բերնիցը կտրում ենք ու բե-
րում քեզ սալիս, վոր մեր հոգին պարտական չմնա:

Աղան կրկին սկսեց գրասեղանի վրա ածած թղթերի կուլտը
քրքրել և նրա միջից գտնելով Ավետիսի պարտածու: Բհակը՝ տվեց
գործակառարներից մեկին՝ ասելով:

— Գիտեմ, Ավետը փող բերած կլինի. նրա հաշիվը տես:

Դյուղացին հասկանալով, վոր իր խոսակցութունը աղայի հետ
վերջացած եր՝ մոտեցավ գործակատարին և հանելով իր ծոցից մի
բուռ թղթադրամ՝ առանց համբարելու ածեց նրա առջև:

Դյուղացու հաշիվը գործակատարին հանձնելը մի տեսակ խո-
րամանկութուն եր աղայի կողմից, ինչպես վորսորդը յերեսնի իր
վորսը շան առջև է գցում՝ նրան լավ գողգողելու համար:

Գործակատարը համարեց իր առջև ածած թղթադրամները,

նայեց պարտամուրհակներին, համբրիչի հատիկները ալս կողմը դարձրեց, ալն կողմը դարձրեց և ապա ասաց.

— Բերած փողերդ դուրս գալուց հետո՝ կմնաս հիսուն ռուբլի պարտական.

Գյուղացին սարսափել մեջ ընկավ:

— Իմ պարտքն առաջ հիսուն ռուբլուց ավելի չեմ,— ասաց նա արտի նեղութիւնից խեղդելո՞ծ ձայնով.— ապա եղ նոր աված փողերս ո՞ւր ե գնում:

— Բա տոկոսը չե՞ս հաշվում,— կոշտ կերպով պատասխանեց գործակատարը.— քո ալժամ բերած փողը հազիվ տոկոսը լրացնի:

Աղան նկատելով գյուղացու և գործակատարի վիճաբանութիւնը՝ հեռվից ձայն տվեց:

— Ավետ ապեր, քեզանից հո ավել չե՞ն ասնի:

— Գրիգոր,— դարձավ նա դեպի գործակատարը,— տոկոսից մի բան բաշխիր Ավետին. մեր մարդն է, թող շնորհակալ լինի: Պանութից ել մի բան տուր, թող տանե իր յերեխաների համար. դատիկ որ ե գալիս, թող ուրախանան:

Հաշվում ավել վեր ասնել, խաբել և կրպակից մի բան ընծայելով՝ գյուղացու աչքերը կապել— աղայի առևտրական տան հին սովորութիւնն էր: Ավետին ընծայեցին յերկու գունավոր աղուլս և միքանի արշին եփանագին չիթ: Նա ընդունեց ընծաները և որհնեց աղայի կյանքը:

Գործակատարը դրեց մի նոր պարտամուրհակ և գյուղացու առջևը դնելով՝ ասաց, վոր մատը թաթախե մեկանի մեջ և կնիքի փոխարեն ղնե թղթի վրա: Ավետը կատարեց պատվերը, վերովհետև վաղուց սովորած էր այս գործողութիւնը:

1. Ո՞վ էր «աղան», ի՞նչ դասակարգի ներկայացուցիչը:

2. Վճիռ դասակարգի ներկայացուցիչ էր Ավետ ապերը: Ունե՞ր նա դասակարգալին ցայտուն զիտակցութիւն:

3. Վճիռ ժամանակաշրջանին և վերաբերում այս հողվածը. ինչից ե ալք յերևում: Առևտրական և վաշխառուական կապիտալի վճիռ գծերն են այստեղ յերևում:

4. Ի՞նչպէս եր գյուղի և քաղաքի կապը հեղափոխութիւնից առաջ. ի՞նչպէս ե հիմա:

5. Ի՞նչ դեր ունի ներկայումս կոոպերատիվը գյուղի և քաղաքի դոգման մեջ:

մարդահաճութիւն—լավ վերաբեր-	մնահավատութիւն—կեղծած
մունք, քաղա-	բաների (աստ-
քաղաքութիւն	ված, սատանա և
կրպակ—փոքրիկ խանութ	այլն) հավատալը

32. Տրակտորը

Գլխիլը կտուրներէից ձեն ե տալիս, վոր ժողով կա:

Գլուղացիք ժողովի լեն գալիս, բայց բոլորի բերնում մի խոսք կա միայն.

— Մաշինը:

Գալիս են մեկ-մեկ նստում բակի քարերին: Գլուղխորհրդի նախագահը մինչև ժողովի բացելը միջանի դործեր ե քննում, դանգատներ ընդունում:

Հետո, գործերը վերջացնելով, բաց ե անում ժողովը ե ասում.

— Այսորվա ժողովի որակարգում մի հարց ունենք...

Յեւ միջանի խոսք ե ասում այն մասին, թե ինչքան դժվար ե գլուղում լեզներով վարուցանք անել:

Նախագահը խոսքը վերջացնելով ասում ե.

— Պետք ե մենք տրակտոր բերենք:

Այդ ասելիս մի թեթեւ շարժում ե նկատվում ունկնդիրների մեջ, վորոնց դեմքերը կիսամութի մեջ պարզ չեն լերևում: Զիջուլի կրակներն են, վոր պապղին են տալիս:

Ընկերս ե խոսում տրակտորի առավելութունների մասին, բացատրում ե, վոր հարկավոր ե ընկերություն կազմել, ընկերության կանոնադրությունն ե կարգում:

— Մեր հողերում բան կանի՞ եդ տրակտորը,—հարցնում ե մեկը:

— Իհարկե,—միջամտում ե մի ուրիշը,—մի որում հինգ որավար ցել կանի:

— Հինգ որավար... Նդ հո հրաշք ե:

Գնի մասին են հարցնում, ուզում են իմանալ, թե՝

— Եդ տրակտորի լեզուն հասկացող կճարվի՞ գլուղում:

Սկսում են թեկնածուների անուններ սալ, թե ով կարող ե տրակտորով վարել: Գլուղը տաանյակ մեքենավար ունի Բագվում. պետք ե մեկին գրել, վոր տրակտորի լեզուն սովորի ե գլուղ գա:

— Դե ինչ եք ասում, ալ ժողովուրդ,—ասում ե նախագահը.—են մաշինին ել հավան չեյիք, ասում եյիք, թե մեր հողերում չի կարող աշխատի:

— Ինչ պիտի ասենք: Վորոշ դեննք. մարդս մի լեզ տա, տրակտորը բերենք... Յեա իմ Մաղիկ լեզն ես գլխից տալիս եմ եդ նըպատակին,—ասում ե մեկը, տեղից կանգնում ե սպասողական դիրքով նստւմ, թե մյուսներն ինչ կասեն:

Գասնից ավելի գլուղացիք համաձայնվում են իրենց լեզները տալ, տրակտոր առնել:

Բայց ժողովը վերոշում ե ցորեն հավաքել՝ ընկերության ամեն մի անդամի 80 կիլո: Հենց տեղնուտակը ցուցակ են կազմում, գրվում են ներկաները, բացականչելի կողմից ել են լերաշխարհում:

Ուշ ե արդեն: Գյուղացիք ցրվում են. հարևանը հարևանի հետ մինչև տուն խոսում ե արակտորի մասին:

Մի խումբ լերիտաաարդներ շրջապատել են մեզ, ուզում են տվելին խմանալ, անհամբեր սպասում են արակտորին:

— Մի պրծնենք ես չարչարանքից, են ժամանակ տես դու-դում ապրելն ինչքան կհեշտանա,—ասում ե նախագահը: Վոր մինչ այդ ցորենը ե անդամների քանակն եր հաշվում:

1. Ինչ՞ա դյուղատնտեսական մեծ մեքենաներ պետք ե ընկերով ձեռք բերել:

2. Ձեր շրջանում մեքենատագործական ընկերություններ կան:

3. Վարկային ընկերությունները ե Հայգյուղատնտեսական դուրսություն-ներ են տալիս կոմունաներին, ընկերություններին ե չքավոր գյուղացի-ներին՝ մեքենա ձեռք բերելու գործում:

4. Ի՞նչ նպատակ ունեն այդ բոլոր ձեռնարկումները:

ունկնդիր—լսող, ունկնդրող
առավելութուն—մի այլ բանից տ-
վելի լավ լինելը, դերագանցելը

ցել—վարած, դեռ չցանած արա

ԿԱՐԴԱ՝

1. Ակսել Բակունց — Պատմվածքներ, գինը 20 կոպեկ:

2. Արազի — Տրակտորը, գինը 15 կոպեկ:

33. Տրակտորի յերգը

Հեյ ջան ախպեր, պողպատ ախպեր,
գե շուտ արի: Դալդ բարի,
տրակտոր ջան, մեր նոր ընկեր,
քեզ փեշքեշ ե հանդը գլուղի:
Մեր սրտի հոլյա, մեր աչքի լույս,
բեր ճակատդ կարմիր կապենք,
ման յեկ գլուղում, յերթդ անուշ:
գութան ու չութ թող դարդոտվեն:
Ես մեր գլուղը հազար տարվա,
աղքատների մի բանտ եր-մութ:
Նրանց ելին՝ թե հող, թե հաց—

ով գորբա յեր, տիրող, անգութ:
Մատաղ լինեմ մեր վրաստին,
լեկավ ու մեզ նոր շունչ տվեց:
բերեց խորհուրդ, կոպերատիվ,
տրակտոր ջան, հիմի յե՛ք քեզ:
Դու վոր մերն ես, ել ինչ կուլտի,
ել ինչ գորբա մեզ կնեղի:
սարքը վրան տասը գութան՝
վոչինչ բան ե բո առաջին:
Կարմիր գլուղի աղքատ մարդիկ,
նոր ճամպա յենք հիմի բռնել:

վարուցանքը միասին դիմի,
միացել ենք, ախպեր դարձել:
Մեր պապերը լավ են ասել՝
«գեղը կանգնեց, գերան կոտրեց».
Նոր վառարանի կամքն ել ե եզ,
նա եդ ճամպան ցուլց տվեց ժեզ,
Դու վոր լեկար, մեր նոր ճամպան
շատ հեշտացավ, ել դարդ չունենք.
Դե, քեզ ցուլց տուր, տրակտոր ջան,
հինը քանդենք, նորը շինենք:

34. Գեղջկուհու դարդը

Տան-դո, տան-դո... Նազլու, վեր կաց-
արեն արդեն մայր ե մանուկ.
տես, Պաթուհն ել գործը պրծած՝
փողոցումն ե, ժամ ե շտապում:

Շուտով նախիրն հանդից կգա.
գնանք, վոր շուտ ելի լես գանք,
կովը կթենք, թ՛րւ-թ՛րւ կաթ տա,
կովը կթենք, մեր ցափն հոգանք...

Ա՛խ, Նազլու ջան, չես իմանում—
եգուց ելի ազան կգա.
նրա սիրտը միշտ անկշտում,
ել ամպի պես պիտի գոռա.

«Շուտով, Գրիգոր, փողերը բե՛ր...
Ելի չկա՛. կովդ հանի՛ր»...
Ա՛խ, Նազլու ջան, այն ի՞նչ բան եր,
մ՛իտդ ե հերու... տեր, դու փրկի՛ր:

Հայրիկդ արդեն գնացել ե,
վոր փող ճաբի. լե՛րբ պիտի գա.
տեսնենք մեկը խղճացե՛լ ե...
ախ, սե որը տերն ել չտա:

Բարի մարդիկ միշտ կլինեն.
հայրիկդ հետը փող կբերե.
փողը կտանք չար աղային,
վոր մըր երթոն ել չլսե...

Տա՛ն-դո, տա՛ն-դո... Նազլու, գնանք.
 արեն արդեն մայր ե մտնում.
 եղուց տանենք, վոք վեր կենանք,
 ի՛նչ նոր արե ե մեզ ծագում...

1. Գյուղի վճիռ շերտին ե պատկանում գեղջիկուն:
2. Ինչի՞ մասին ե հոգս անում գեղջիկուն:
3. Ինչի՞ վրա յե հույս դրել նա:
4. Վճիռ ժամանակաշրջանի աղքատ գյուղացիութան հոգերանութունն
 ե այստեղ պատկերացրած: Ինչի՞ց ե այդ լերևում:
5. Հեղինակի համակրութունը գյուղի վճիռ խավի կողմն ե: Պայքարի
 ուղի ցույց տալիս ե հեղինակը:

35. Նորերը

Ինչքան ել գիշերը նստել ե,
 ինչքան ել վողջ գյուղը քնած,
 ներս մտի՛ր ալս խրճիթը, նայի՛ր,
 տե՛ս՝ թե ինչ են անում նրանք:

*
* *

Ճրագը տխուր, մերձիմահ,
 հնկեկում ե կարծես մթում.
 լերեքը գլուխները հակած,
 կարգում ու վիճում են թունդ:

Յերեքն ել կոմիերիտ տղերք են.
 քարտուղարն ե մեկը բջիջի:
 Ամեն որ նրանք գալիս են,
 հավաքվում, կարգում Իլլիչին:

Խրճիթի սե ու դորշ պատից—
 ամեն որ նայում ե Իլլիչը,
 ժպտում ե.—կարծես թե սրտից,
 ժպտում ե նրանց, լերեքին:

Ու նրանք ել գլուխները միքիչ,
 միքիչ, յերբ, դրքից հանեն վեր,
 նայում են ուղիղ Իլլիչին
 և ուրախ ժպտում նրա հետ:

Ու ելի գլուխները հակում,
կարգում են, բացատրում ու վիճում,
յերեքն ել անխոնջ ու արթուն,
յերեքն ել համառ, անզիջում:

Գիշերը անցել է շատ,
հեկեկում է ճրագը մթում.
Իլիչը նայում է անթարթ,
ու նրանք կարգում են դեռ վիճում:

1. Ինչո՞ւ չի «ժպտում» Իլիչը, Հիշիր նրա պատգամը սովորելու մասին:

Ո. Իշխանութիւնն իրագործում է այդ:

2. Կոմիտիականի ինչ բնորոշ կողմերն են արտահայտվել այստեղ:

մերժման—մեռնելու մոտ
հակած—թեքած, կոացրած
հեկեկալ—բարձր ձայնով լալ

գորշ—մուգ
անխոնջ—անդադար
անզիջում—առանց դիմելու, համառ

36. Բայլշէիկուհի Մարիամը

Նորհուրդներն ընտրութիւնն էր: Այնքան գեղշկուհի չի հա-
վաքվել, վոր ժողովի տեղը ասես ուխտատեղի լիներ:

— Մարիամին ենք ուզում, Մարգարյան Մարիամին, — կանչե-
ցին կանայք:

Ընտրող տղամարդկանցից մեկն էլ, հանաքչի մի մարդ, կա-
տակով կանչեց.

— Այն, այն, Մարիամին:

Կարծում էյինք, թե կատակ է. բայց արի ու տես, վոք գործը
լուրջ բնույթ ստացավ: Այլրինքն ու զինվորների կանայք էլ պա-
հանջում էյին, վոր անպատճառ Մարիամին ընտրենք: Փյուղացի
մարդիկ այնքան էլ չեն սիրում պաշտոնի դնալ, մանավանդ մեր
որերում, յերբ պաշտոնը միայն հոգս է պատճառում ընտրվողին:
Ու ձեռքերը թափահարեցին:

— Մարիամին եք ուզում՝ լավ, թ. դ Մարիամը լինի: Թթու թան-
չի—ամեն մարդու բան չի: Համը կառնի, լես կկանգնի:

Ու Մարիամին ալին իրենց ձայնը: Մարիամը չերկու հարյուր
տասնհինգ ձայնով շրջանային խորհրդի նախագահ ընտրվեց: Մա-
րիամի յերեսը կարմրեց. այտերին կարծես կրակ վառեցին: Բայց
զրջությամբ վերաբերվեց ընտրությանը:

— Թող ձեր կամքը լինի, ընկերներ. յես ուժերս ներածին չափ կծառայեմ ձեզ: Յեթե չկարողանամ՝ ողնեցեք:

— Յերմոգ ե, թե իրականութիւնս: Գեղջկուհին— ու շրջանա- լին խորհրդի նախագահ: Ուրեմն նա իր կնիկ տեղով պետք ե դա- տաստան նստի, դատ կարի, ու ժննք ել՝ աղաքարդիկս զլիարկներս հանենք, լաշակավորի առաջ զլիարկներս բաց կանգնենք, դանգատ- անենք: Վալ, վալ:— Սկսեցին մեկ-մեկու մեղադրել, կովել իրար հետ:

— Հիմար ենք. միթե կարելի չե գեղջկուհուն այդպիսի պաշ- տոնի դնել:

Նաղար-ամին ել տարավ. բերեց ու Մարիամին յեհեսին ասաց.

— Մարան, եդ քո խելքի բանը չի. դուր ես հանձն առնում:

Բայց Մարիամը խոսքի տակ չմնաց.

— Ինձ հասարակն ե ընտրել, յես հո չեմ խնդրել:

Յերբ Մարիամն արգեն ծանոթացել եր իր պաշտոնին, զնա- ցինք շրջարծկոմ, վոր տեսնենք, թե ինչպես ելին դործ տանում: Նա անճանաչելի յեր դառել: Լուրջ նստել եր սեղանի առաջ. սե- ղանի վրա թանաքաման, գրիչ, կարմիր ու կապույտ մատիւներ: Կողքին ել քարտուղարը թղթերն առաջը քաշել՝ գրում եր: Մարիա- մի ձայնն ել եր փոխվել, տեսնել ել: Աչքերը խլվում, քարտուղա- րի գրած մի թղթից մյուսին ելին անցնում:

— Մա հարկի մասին ե, ընկեր Յհրեմ,— հարցնում եր նա:

Ստորագրում եր թուղթը ու նորից իսկական մեծավորի պես հարցնում.

— Յուցակները պատրաստ են: Շուտով պատրաստեք:

Աչքերիս չենք հավատում: Այլ քեզ Մարիամ: Գոնե մեղինց քաշվել, ձայնը դողալ կամ ամոթից կարմրեր. ուն ես ասում: Այլ ու ձախ ճընկեր այս-ինչ, ճընկեր այն-ինչ եր ասում ե լրջու- թյամբ կատարում եր իր վրա դրած պարտականութիւնը:

Աշխատասեր ե պարտաճանաչ կին եր բայջկուհի Մարիամը:

1. Ինչպես եր կնոջ գրութիւնը հեղափոխութիւնից առաջ. ինչպես ե հիմա:

2. Կենցաղական ինչ փոփոխութիւններ կան հիմա:

3. Ինչ իմաստով ե Լենինը գործածել «Յուրաքանչյուր խոհարարու- հի լերկի կառավարել պիտի լիանա» խոսքերը:

4. Ինչ՞ա գլուղացիք թերահավատ ելին դեպի կինը: Այդ թերահավա- տութիւնը գլուղի վճի շերտից ե բխում:

5. Վերմք են Մարիամի ընտրոշ գծերը: Ինչ՞ա չարդարացան գլուղա- ցիների թերահավատութիւնն ու կասկածները:

37. ՆԵՍՈՅԻ քարաբաղնիսը

Կիրակոսը մրսել եր, անկողին եր ընկել, տանջվում եր տաքության մեջ: Հարևանները հիվանդի շուրջը հավաքված, ողեն լիբը, զրույց ելին անում, չիբուխ քաշում:

— Տղերք, սա վոր քրտնի վոշ, բան չի դառնալ: Յեկեք սրան մի քարաբաղնիս անենք, — ծխի միջից առաջարկեց նեսո բիձեն:

— Հա, եդ խելքս կտրեց, — հավանութուն տվեց մի ուրիշը:

— Դրան ել ուրիշ ճար չկա, — ձեն տվին ես ու են կողմից:

— Կիրակոս...

— Հը:

— Ասում ենք՝ քարաբաղնիս անենք, — լնչ ես ասում:

— Վախենում եմ... չդիմանամ...

— Տո՛, կղիմանաս, լերեխա հա չես:

— Դե... դուք զիտեք... ձեզ... մատաղ:

— Աղջի, պղինձը շուր լցրեք բերեք: Մի փեշ ել քար բերեք, փրակն ածենք տաքանան:

Պղինձը դրին կրակին, քարերն ածին կրակի մեջ ու նստոտեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հոգի յեն ազատվել քարաբաղնիսով. Մատղաշնեց Դանելը, Մաթոսանց Մինասը, Ծատուրանց Ստեփանը, Մաշկավորանց Մկոն — մինչև վոր շուրն լեփ յեկավ, քարերն ել կարմրեցին:

— Դե ժամանակն ա, վեր կացեք:

— Տղերք, վախում եմ... — կանչեց հիվանդը:

— Դու սոս կաց: Աղջի, մի յերկու հասոտ լինեք բերեք, մի չորս-հինգ ուժով՝ աղեք ել յեկեք եստեղ:

Շարերով փաթաթած լեռման ջրով լիքը պղինձն ու հիվանդին դրին իբար հետ, կարծրած քարերը լցրին ջրի մեջ. քարերը թշնամեցին, ամպի նման գոլորշին սկսեց բարձրանալ, շտապով վերմակները ծածկեցին ու չորս կողմից վրեն նստոտեցին:

— Վալ, խեղդվեցի, — խուլ գոռում եր հիվանդը:

— Խեղդվի չի... աղերք, պինդ նստեք: Գլուխն ու վոտները ամուր պահեք:

Հիվանդն ազադակում եր, որհասական ջանքեր եր անում շարժվելու. բաց հինգ-վեց աժդահա աղամարդ վրեն նստած՝ չեյին թողնում:

— Ուր ես գնում, — կանչում եյին ես ու են կողմից, վերևից սեղմում ու հռոտում:

— Հիմի թե չքրանի:

Ու Նեսո ըրձեն, հիվանդի վրեն նստած, չիբուխը բերանին՝ շարունակում եր իր պատմությունը:

— Մի տարի ես մեր Արգարն ել եսպես մըսել եր: Ղանթափու ծագիկ բերին, չալ շինեցին խմացրին, պըաշոկ բերին, շուր աւրին, տվին նրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի՝ տղեք, բերեք լես դրան մի քարաբաղնիս անեմ: Թե՛ դե, դու գիտես: Բերի մի թե՛ կրակ արի, Բարան տատի պռունգը կտորած պղինձը շուր լցրի վրեն դրի, քար հավաքեցի՝ ածի շեղջը: Զուրն յեփ եկավ, քարը կարմրեց: Սա թե՛ վախում եմ: Ախր նա յի սրա նման մի լեղապատառ ոքմին ա:

— Աղա, ինչի՞ լես ասում, Աբգարը հո սրտոտ մարդ ա:

— Վա՛յ ե, նրա սրտոտը վմրն ա: Մի աշունք լես մի արջի բուն գտա: Յեկա ասի՝ Աբգար, արջի բուն եմ գտել, արի գնանք արջին բնիցը հանենք: Գնացինք: Յես մի ձողի վեր կալա, ես արջի բունը խըրխըթորեցի: Մին ել հանկարծ՝ ես անտեր արջը դուրս ելավ ու ինձ կալավ: Աբգար, քոմագ, հա՛: Քոմագ ով կտա: Աբգարը՝ մին ել տեսնեմ՝ հրես փախած գնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պըծա լեկա տուն: Ասում եմ՝ աղա, դու ես ի՞նչ արիլ: Թե՛ լեկա տուն, վոք թվանք բերեմ: Սուտ Վախիցը փախավ:

— Են ելի ասում—հիմի սա կանգնել ա թե՛ Նեսո ջան, վախենում եմ, ինձ քարաբաղնիս մի անիլ:

Ականջ չգրինք, բերինք կեծացած քարերն եփման շուրը լըցրինք ու հենց ենպես բուզը վեր ըլելով սրա հետ կս խեցինք տեղի տակը:—Վա՛յ, մեռա, հա՛ մեռա: Լսողն ով ա: Վրեն նստոտեցինք: Յես եմ, ես մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գարոն ա, Արութն ա: Հիմի սա տակիցը դոռում ա, վո՞նց ա գոռում... ենքտն դոռաց, մինչև դինջացավ: Բաց արինք տեսանք՝ շուր ա կարել: Են եր ու են, լավացավ, տեղիցը վեր կանգնեց վողջ-առողջ մարդ: Նեսո ըրձու պատմությունը վերջացավ: վեր կացան, վերմակները յետ քաշեցին: Գոլորշին ողեն բռնեց: Բաց կիրակոսը...

— Կիրակո՛ս:

Ժած չի գալի:

— Կիրակո՛ս...

Պատասխան չի տալի:

— Կիրակո՛ս.— ձեն տվին, շարժեցին, քաշեցին: Կիրակոս չկա:

— Ա՛յ տղա, ես վո՞նց ելավ,— մոլորված արտասանեց Նեսոն: Մյուսները լուռ ելին:

— Վա՛յ, տունս քանդվեց...— ծղրտաց Կիրակոսի կինը: Իբար

հրհրելով աղեքը դուրս եկան կտուրը: Ու մինչդեռ ներքե կիրակոսի կինը սուգ էր անում, կտերը արևում նստոտած աղեքը պատմում ելին, թե քանի-քանի հոգի լին խեղդվել քարաբաղնիսից՝ Հանրասնց Հարոնը, Մեղքոնանց Վանեսը, Հախվերդոնց Աղեն, Շիմալանց Շամիրը, .. վո՞ր մինն ասես:

— Տո՛, դե ճակատի զիր ա, ելի. հո նրան ել նեսոն չի խեղդել: Նեսոն լուռ, զլուխը կախ արած, լսում էր ու չչիլուխ էր քաշում:

1. Ինչից մեռավ կիրակոսը:

2. Ի՞նչ սնահավատություններ կալին և դեռ շարունակում են պոլսթյուն ունենալ մոլթ և լեռ ընկած վայրերում:

3. Ինչո՞ւ լե կրոնը հովանավորում և տարածում սնահավատությունները: Ի՞նչ դասակարգերի շահերին և ծառայել և ծառայում կրոնը:

4. Ի՞նչ ենք մենք հակադրում կրոնին. ինչո՞ւ:

որհասական նիզ—մահամերձի ջանք

38. Մաղկավոր չիթը

I

Ցեխաշեն պատերի մոխրադուլնն ունեւ իր հագուստների վրա և աթարի սրճադուլնն ունեւ իր փափախի վրա այն տղան, վոր դուրս չեկավ մի փռքրիկ դանից և ուղևորվեց գեղի քաղաք: Նրա ուաի խուրջինի վրա կաբմիր գուլն կար: Դեղին գուլն ել կար խուրջինի ու նշանի վրա: Իսկ սպիտակ միայն նշանի վրա կար և այդ սպիտակը հի՛մ տառերն ելին: Բացի խուրջինից ու նշանից, ամեն ինչ դորշ էր տղայի վրա: Փոշեկալուծ մաղերի դանգուրը կախվել էր նրա ճակատին, և այդ ճակատից ներքև տղայի թուլի դեմքն էր: Այդ թուլի դեմքի վրա կար մի դժվար հասկանալի արտահայտություն: Լայն ճակատի վրա հույս գրված լինեւ կարծես, շրթթուներեի ծայրերին՝ ժպիտ և աչքերի մեջ՝ կամք: Իսկ խուրջինի մեջ կար մի աման չուղ, վոր նշանակում էր, թե չչիթ է հարկավոր, մի գլուխ պանիր, վորի իմաստն էր՝ ճնովթ չունենալ, և յիլկու պուտուկ մոծուն, այսինքն՝ ճաղ, լուցիկ, միքիչ ել յերեխանց համար միրգ:

Իաշտի ծաղիկների գունազեղությունը չունեւ և դաշտի ծաղիկների գեղեցկությունը չունեւ այն տղան, վոր քաղաք էր գնում փոշոտ ճանապարհով...

Այդ աղան Արշակն եր' Վոչինչ չէր փոխվի, յեթե նրա անու-
նը չտայի. և վոչինչ չփոխվեց, չերբ տվեցի նրա անունը:

Յերբ ծախեց խուրջինի մեջ յեղածը և փողը զրպանը դրեց,
նա գնաց բաղարի ծայրի կոռպերատիվը՝ պետք յեղած իրերը գնե-
լու: Յերկար տնտղեց նա աղի ու լուցկու տեսակները, մրգի լաջն
ու վատը, գնեցր հարցրեց, նորից տնտղեց ու նորից հարցրեց և
վերջապես առավ: Իսկ հետո անցավ խանութի մյուս կողմը, վոր-
տեղ ծախում էին շորեղենը:

Շատ յերկար ու շատ ուշադրությամբ և ստուգում իր գնելիքը
գլուղացի: Արշակն ել ուշադրությամբ եր ստուգում: Բայց չերբ
գործը չիթ գնելուն հասավ, նրա աչքերն ավելի լարվեցին, նա
մատնեղով շոշափեց կտորը, թքոտեց միքիչ ու տրորեց իր ձեռքի
մեջ և այդ բուրբից հետո նայեց չիթ գուլնին: Դուր չեկավ: Ուրիշ
տեսակն ուզեց: Գործակատարն ամենայն համբերությամբ բերեց
ուրիշ տեսակը: Արշակը յերրորդ տեսակն ել ուզեց, և գործակա-
տարը յերրորդ տեսակն ել բերեց:

— Ի՞նչ արժի,—հարցրեց Արշակը այս անգամ: Դա նշանակում
էր, վոր չիթը իր սրտովն է:

Գործակատարը գինն ասեց:

— Հը՛մ ..

Բազար անել չի կարելի, կոռպերատիվ ե սա և գնեցր վերջ-
նականն է: Արշակն այդ մասին վաղուց ե կարդացել նույն խա-
նութի պատին կպցրած պլակատի վրա:

— Կտրի մի... վեց-յոթ արշ... մետր:

— Վեց թե յոթ...

— Յոթ մետր:

Իսկ յերբ մկրատը ճռռաց ու չիթից պոկեց Արշակի բաժինը,
Արշակը ժպտաց:

— Հը՛, ի՞նչ կա, ստա՛նա՛ Արշակ: Եդ ո՛ւմ համար ես տանում
եդ սիրուն չիթը՝ Ձի՛նի՞ թե...

Փողը վճարեց Արշակը և յեկավ գործակատարի մոտ՝ չիթն
ստանալու: Մի անգամ ել նայեց և մի անգամ ել հավանեց:

Ձիթն ստանալուց հետո մի բան միտքն ընկավ ու հարցրեց.

— Ես վո՞ր յերկրի չիթն ե, ընկեր...

— Տեղական...

Վո՞նց թե տեղական... Ձհա՛կատաց Արշակը: Յեթե գլուղում
մեկն եղպես բան ասեր, Արշակը կբա՛մփեր նրա գլխին:

Նորից հարցրեց.

— Ընկեր ջան, ներողություն, վոր զբաղված ես, ամա շատ
ա հետաքրքիր, վո՞նց թե տեղական չիթ:

— Քաղաքում գործարան ե բացվել, եդ գործարանում են չլթը պատրաստում, — բացատրեց դործակատարը:

Յեզ վորովհետև նա զբաղված էր, դրա համար ել Արշակն ուրիշ վոչինչ հնարքեց և դուրս յեկավ կոպերատիվից:

— Դրա համար եր չլթը եժան: Հենց յես ել ասում ելի՝ վա՛յ թե լավ տեսակիցը չի, — մտածում եր Արշակը ճանապարհին, գլուզ վերադառնալիս: Կեսորվա արեւ սաստիկ շոգ էր անում: Նլի լավ եր, վոր ամպի վորքիկ պատառները մերթ-մեքի ծածկում էլին արեն ու միքիչ հով անում:

Դաշտում ծաղիկները, գունագեղ, գեղեցիկ ծաղիկները ժրպտում ելին աչս ու աչն կողմից, և Արշակին թվում եր, թե ամբողջ դաշտը մի չիթ ե, մի ծաղկանկար չիթ, եժան ու դիմացկուն:

II

Մի որ բշիշի քաղտուղարը հանդիպեց Արշակին ու կանչեց իր մոտ:

— Արշակ՛:

— Ի՞նչ:

— Դու ի՞նչ աշխատանք ես անում. լերեք յեղրայրներդ առանց քեզ արտն ու անասուններին յոլա տանել չեն կարող:

— Յոլա յեն տանում, Յես յեղած-չեղած՝ մեկ ե: Յանի ի՞նչ արտ ու նախիր ունենք, վոր յոլա տանել չլինի: Մն ա՛ յես ուզում եմ բատրակ գրվեմ, մի տեղ վարձով աշխատեմ:

— Ձե, եդ հլա թող: Դու վոր բացակայես, ձեր տունը, տնտեսությունը հո չի՞ տուժի:

— Յես ասի, չե: Բատրակ եմ գրվելու...

— Քարտուղարը տեսնես ի՞նչ ե ասելու: Շատ հեռվից ե քոնացրել, — մտածում եր Արշակը:

Հենց եդ ժամանակ քաղտուղարն ասեց.

— Դիտե՛ս ի՞նչ, Մեր բշիշից մեկին զրկելու յենք քաղաք, «կուրսերը»: Մի յերկու ամսից հետո պիտի ավարտի ու «չթի գործարանի» բանվոր դառնա: Ուզում ես գնալ...

Յեթե ճամպի կողքով մարդիկ չանցնելին ու դիմացի կտուրի վրա աղջիկները կանդնած չլինելին, Արշակն ուրախութիւնից պար կը դա:

— Դե շուտ պատրաստվի, վոր եգուզ դնաս, — ասավ քաղտուղարը:

Ավշակը վոնց հասավ տուն, — ինքն ել չիմացավ:

Ձորս ամիս հետո Արշակը, կանգնած տեքստիլ գործարանի դադգլահներից մեկի առաջ, չիթ եր գործում: Գործում եր ու մտածում: Ինչքան չիթ կա:.. Սրա կիսի կեսը վոր բաժանելին իրենց գլուղին, ամեն մի մարդուն կհասնեք հազար մետր: Յերկու հազար ել կհասնեք: Եսքան չիթ վոր տեսնեն գլուղում, կգժվեն: Տեսակ-տեսակի գուլնգուլն...:

Արշակը չիթիկացնում եր մաքուքն ու հիշում:

Հրեն, իրենց գլուղը, Հիմի տեսնենք Նարգիզն ի՞նչ ե անում: Յերեկ փոցիս անելիս կըլի՝ Բա իր չերեք չեղբայրները, փաքրիկ Ուսիք...:

Հետո հիշեց իր քաղաք գալը: Սկզբում սիրտը տխրեց, բայց վերջը սովորեց: Հանրակացարանում բոլորն ել իր պես տղերք եյին: Բոլորի հետ դոստացավ ու ընկերացավ: Վարիչը խոսք եր տվել, վոր մի ամսից հետո արձակուրդ պիտի տա Արշակին: Արշակն ել գործում եր չիթն ու սպասում: Սեպտեմբեր ամսից հետո նա բանֆակ կգնա և ուսումը կշարունակի:

Արշակը գործում եր ու մտածում:

Նամակ:

«Հասնի գլուղն Ս... լու, ձեռն Պետրոս Դամաղլանցի:

Միքելի չեղբայր Պետրոս:

Մաքուլենց տղեն խաբարը բերեց. իմացա, վոր վողջ-առողջ եք: Մաքուլենց տղեն ասաց, վոր միքիչ փող ա պետք. փողն ուղարկում եմ:

Յեթե ինձանից կհարցնեք, յես վողջ և առողջ եմ ու բանվոր եմ: Որեկան ենքան չիթ ու կտավ ենք գործում, վոր մեր տանը հերիք կանի հինգ-վեց տարի: Անցած ուրը գործարանի մի ուրիշ մասն ել գործի դրեցին: Ես չերկու որս նոր մաշինաներ են բերելու:

Յես եստեղ լավ եմ... սովորեմ պիտի բանֆակում ու ավարտեմ պիտի: Բջիջ եստեղ ել կա:

Նամակիս հետ ուղարկում եմ ուղածդ փողը, նմանապես չիթ ու կտավ, վոր ռոճիկիս հաշվին առա: Նմանապես են նախշուն չրթից ել եմ ուղարկում, վոր Նարգիզին տաք, իրեն շոր կարի:

Այլ վոչինչ չունեմ գրելու: Մի ամիս հետո յես կգամ: Բարև բոլոր տանեցոց, նմանապես Նարգիզին:

Մնամ ձեր Արշակ Դամաղլանց:

Յերբ Սաքուկնց տղեն նամակն ու կտորեղենը տվեց Արշակի չեղորբը, նա ժպտաց:

Բաց արեց կապոցն ու տանեցոց կանչեց: Բոլորը հավաքվեցին իր գլխին ու սկսեցին նայել զարմանքով և ուրախությամբ:

Են չիթը, վոր նարգիլի համար եր ուղարկել, շատ սիրուն եր: Ծալրին մի թուղթ եր կպցրել Արշակը, վորի վրա քիմիական մատիտով գրել եր:

«Նարգիլ ջան, ևս ծաղկավոր չիթը իմ գործն ա»:

1. Ի՞նչ դեր ունի կոպերոտիվը գլուղի և քաղաքի կապի տեսակետից:

2. Ինչո՞ւ համար «տեղական» չիթն ավելի եման պիտի լինի:

3. Արգյունաբերությունն ինչո՞վ և նպաստում գյուղատնտեսությանը:

4. Քանի՞ մասից և բաղկացած այս հոդվածը: Ի՞նչ վերնագիր կդնես ամեն մի մասին:

39. Հ ե ք ի ա թ ը

Ըստ սովորութան՝ այդ յերեկո լել յերեխաներս հավաքվել էինք Ջարգարի տանը և անհամբեր սպասում նրա խոստացած հեքիաթին:

Դուրսը ձյուն եր, յերկար ձնագնդի խաղալուց հետո մե՛ք ներս վաղեցինք այն ժամանակ, յերբ Ջարգարը իր համեստ ընթերցը վերջացնելով՝ թիկնել եր թախտին, ոջախի մոտ ու քթի տակ մըրմըռում եր՝ «Ն՛շյա, Վարդան, անուշ քնով»:

Ոջախում ծուլլ ծուլլ թշնշում ելին թաց փայտերը՝ լցնելով սենյակը ծխով: Մի թիթեղյա անապակի ճրագ, վոր կախված եր սեւացած սնից, հագիվ եր լուսավորում իր աղոտ լուսով ու յերևան հանում տան խղճուկ պարագաները՝ դիմացի պատի թարեքը իր հասարակ ամանեղենով ու հնացած ծալքը:

Ջարգարի կինը յերեխաների լվացքն եր անում՝ լաթերը փռելով բուխարու մօտ. իր մայրը ծալապատիկ նստած կրակի մոտ՝ գուլպա յեր գործում՝ ստեպ-ստեպ հորանջելով ու յերեսը խաչակնքելով: Յերեխաներից փոքրերը քնած ելին, իսկ յերկու տղաները խաղում ելին մեծ, բրդոտ կատվի հետ, վոր ուշադրություն չդարձրնելով նրանց վրա՝ հանգիստ մոլտում եր:

Ամեն ինչ ախտեղ տրամադրում եր մի անդորը, աներազ քնի: Միայն մենք էինք, վոր պատրաստ էինք յերկար ժամերով նստել, միայն թե Ջարգարը հեքիաթ պատմեր:

Ամբողջ գլուղում նրա նման հեքիաթ պատմող չկար:

Յեւ Ջարգարն սկսում եր, կարծես լերդելով, աչքերը փակ, կուլը առողի նման, սկսում եր պատմել իր սիրած են մեծ հեքիաթը՝ հրեղեն թռչունի և յերեք յեղբայրների մասին: Իսկ մենք՝ շնչ-նքս դապած՝ աղահուլթամբ վորսում ելինք նրա ամեն մի խոսքը: Ու չնայած դուրսը ձյուն ձմեռ եր՝ մենք տեսնում ելինք մտքով մայրսյան դաշտեր ու ծաղիկներ, շինջ յերկիր, ամբոցներ...

...Յոթը սարերի յետևում հրեղեն թռչունն ե ապրում իր վտակե վանդակում: Նա արևի պես լույս ե տալիս, և ում դիպչում ե նրա շողքը՝ սիրտը լցվում ե քաջերի արլունով, ու դառնում ե անհաղթ:

Բայց նրա շուրջը հաստ, ամբակուռ պատեր են քաշած, ու յերկաթե մեծ դռների մոտ սև, դաժան վիշապներ հսկում են դիշեր-ցերեկ, վոր մարդիկ չտեսնեն ու չտիրանան են հրեղեն լուսին:

Յեւ ահա յերեք յեղբայրներ մեկ-մեկու յետևից գնում են ալդ հրեղեն թռչունը փնտռելու. բայց միայն վորք յեղբայրն ե գտնում ու տիրանում նրան՝ հաղթելով են աժդահա վիշապներին: Մակայն ճամպին դալաճան յեղբայրները, վորոնց նա ազատել եր վիշապներից, խաբելով իջեցնում են նրան հորը ու թողնում մեջը, ապա աւնում նրա վաստակած հրեղեն թռչունն ու հեռանում գնում...

Հանկարծ դառն շեմքում շունը հաջաց և վազեց դեպի վորոց՝ միանալով ուրիշ շներին, վորոնք հարձակվել ելին ինչ-վոր անցորդի վրա: Աղվակի մեջ դրսից լավեց մի կնոջ ձայն:

Ջարգարը՝ կարծես քնից նոր արթնացած՝ աչքերը բացեց ու հոնքերը կնճռած ականջ դրեց. ապա մի կերպ հազնելով տրեխները ու գլխին դնելով փափախը՝ դուրս յեկավ վորոց: Դուռը բաց մնաց, և դրսից մի անախորժ սառնություն յեկավ ցնցեց մեզ:

Նա շուտով վերադարձավ ալալված դեմքով:

— Աղեն կանչել ա,—ասաց նա և ցրտից ու հուզմունքից սրթսրթալով՝ սկսեց ամրացնել իր տրեխները:

Նա գնաց: Միքիչ հետո նրա յետևից դուրս յեկանք տխուր ու հուսահատ: Ջրացան մեր յերևակայությունից մայրսյան դաշտերը, ծաղիկները: Մեզ կծկում եր ձմռան ցուրտը, իսկ մութ անկյուններից չարագուշակ փափսուկը դաժան աղալի տնունն եր տալիս, վոր մեր վառ հեքիաթը կտրեց - կիսատ թողեց:

Բայց ինչո՞ւ ալդ որվանից Ջարգարը կարծես պապանձվեց, ու յերբեք մենք չլսեցինք նրա հեքիաթները:

Յերկար ժամանալ մենք չելինք հասկանում, բայց ահա մի որ գարնան սկզբին, մեր առաջ բացվեց տխուր գաղտնիքը:

Այդ որը յեկան յերկու աստիճանավոր տանուտերի ու նրա ոգնեականի հետ, յեկան, նաչեցին Ջարգարի տունը, հարցուփորձ արին, ինչ-վոր գրեցին:

— Յեկել են տունը վեր գրելու,— լսում ելինք հաքեանե-
րից.— փող եր պարտ աղին, ժամանակին չտվեց, այժմ տունը խը-
լում են ձեռքից:

Ջարգարը կանգնել եր գլխիկոր, անշարժ, քարացած դեմքով:
Միայն յերբ նրա ականջին հասավ իր յերեխաների ձայնը (նրանք
կարծում ելին, թե յեկել են հորը բերդը տանելու), մոտեցավ գըլ-
խավոր աստիճանավորին:

— Աղա, խնդրում եմ՝ համբերե՛ք... Ամառը աշխատանք կա-
նեմ, պարտքս կտամ...

Բայց աստիճանավորը չթողեց, վոր նա իր խոսքը վերջացնի:

— Գնա քո պարտատերին խնդրի՛ր: Որենքը չի համբերում:
Նրանք գնացին:

Բայց դեռ յերկար լսվում եր Ջարգարի մոր աղերսական լա-
ցը, նրա հուսահատ գոչերը: Սակայն զուր եր նա ծնկները թա-
կում, ձեռքերը բարձրացնում: Ջարգարի տունը խլեցին: Իսկ գար-
նան վերջին նա հեռացավ մեր գլուղից:

Անցել են տարիներ:

*
* *

Այն տեղը, ուր Ջարգարի տունն եր, յերևում ե փլատակների
մի կույտ:

Միայն սևացած պատի մի բեկոր հիշեցնում ե, վոր այնտեղ
յերբեմն ծուխ եր յելնում: Սափանված ե վաղուց նաև ջրհորը տան
առաջ, իսկ նրա տեղը յերևում ե կիսով չափ թաղված հողի մեջ
մի քար:

Յեւ ամառվա լուսինը սահում ե, անցնում՝ խորհրդավոր ըստ-
վերներ գցելով փլատակների վրա:

Ու ծղրիդներն անվերջ, անդադար կրկնում են յերգը ախուր:

— Այնտեղ... այստեղ... յերբեմն մարդիկ ելին ապրում...
ապրում...

Ու այս ժամերին թվում ե, խափանված ջրհորից ձայն ե գա-
լիս. են հեքիաթի յերբորդ յեղբայրն ե. են ինքը Ջարգարն ե, վոր
ձգնում ե յելնել մութ հորից:

Իսկ շատ հեռից, ուր տղատ հովերն են ասլում, չոթը սարի
յետևից թռչելով վերջապես յեկավ չորրորդ յեղբայրը. իր կարմիր
նժույզով աղատելով Ջարգարին իր խավար բանախց:

1. Խնչ հեքիաթ եր պատմում Ջարգար ամին:
2. Խնչ իմաստով և գործածված «Երեղեն թռչուն»:
3. Ովքե՞ր են պատմվածքի յերեք լեզուները:
4. Խնչ՞՞ Ջարգարն ալլես հեքիաթ չե՞ր պատմում:
5. Ո՞վ վերջապես ազատեց Ջարգարին և բոլոր Ջարգարներին իրենց խավար բանտից: Խնչ՞՞ հեղինակը նրան անվանում և չտրուգ յեղբայրը:

անդորր—խաղաղ, հանգիստ | այլալված—չփոթված
գոլ—գոռոց

40—42. Կոմսոմոլիստկայի նամակները

40. Առաջին սպավորությունները

Միրելի Կիմա, ներիւր, հենց առաջին որերից չկարողացա նամակ գրել. զբաղված ելի գործերս կարգի բերելով: Սրանից հետո խոստանում եմ շարունակ գրել:

Խնձ նշանակեցին կոմսոմոլի գավառային հրահանգչուհի: Տպարանի փակ աշխատանքներից հետո այս աշխատանքն ինձ վրա շատ լավ եւ անզբաղառնում: Այնպես եմ չազացել ու կարմրել, վոր յեթե անխոս հանդիպեմ քեզ, դժվար թե ճանաչես:

Դու ծանոթ չես գավառի կյանքին: Այստեղ աշխատանքի մի առանձին հետաքրքիր կողմ կա.—մի աշխատանք վոր սկսում ես, ու ես ել՝ լավ, ել դժվար ե, քեզ բաց չեն թողնում: Հենց այդ ե, վոր սիրում եմ:

Հանգիպում եմ նորանոր կոմսոմոլիստների, վորոնց հետ աշխատելը շատ հարգատ է, ու ժամանակն աննկատելի յե անցնում: Խնչ ե հարկավոր մեզ, կոմսոմոլիստներին.—աշխատանք և աշխատանքի ընկերներ: Այնուհետև ամենահետին գյուղումն անգամ, ուր կոմսոմոլիստները նոր գրագիտութիւն են սովորում, քեզ համար բացվում ե աշխատանքի անշափ հետաքրքիր շրջան:

Յես հիշում եմ, սիրելի Կիմա, վոր դու գյուղ դնացողներին յերանի չելիր տալիս և ինձ ել ուզում ելիր համոզել, վոր չգնամ: Խնչքան ոգտակար ե, յերբ աշխատանքդ փոխում ես, ուրիշներին ես սովորեցնում: Ճիշտ ե, կարոտում եմ տպարանի ընկերներին: Բայց դա հասարակ բան ե, ելի ժամանակ կգա, կհանդիպենք ու, Կիմա, դու ինձ կտեսնես: Բոլորովին առողջացած ու հասունացած:

Գնում եմ գյուղերը յերբեմն ձիով, յերբեմն վոռքով ու վերադառնում կենտրոն, վորտեղ մի փոքրիկ սենյակ ունեմ:

Դյուղում սկզբում անպայման հանդիպում եմ կոմսոմոլիստներ-

ըի. ու վոնց վոր աշխարհ եմ բերում նրանց համար, այնպես են ուրախանում, ինձ հետ անպայման ունենում եմ լրագրեր. նրանք հափշտակում են իմ ձեռքից, սկսում են կարդալ. Ունենում ենք քաղաքապետներ, զրուցներ՝ տնտեսական, կոպեքատիվ հարցերի շուրջը, լերբեմն, սահրաժեշտ դեպքում, ունենում ենք և ժողովներ: Ամենից շատ ուշադրություն եմ դարձնում գործնական աշխատանքներին:

Գլուղը շինելով լավ շինելով քիչ են. այդ ինձ շատ և մտաւորանշում: Միքանի գլուղներում իմ ջանքերով կամաց-կամաց շատանում են:

Գլուղում աշխատելը դժվար է. Հիշում ես՝ ինչ շարություններ ելինք սարքում տպարանում: Ի՞նչ այժմ ինձ չես ճանաչի—այնպես եմ լրջացել, վորովհետև աշխատանքը պահանջում է, վոր յեթե այդպես չլինեմ, կոմսոմոլիստներն ինձ չեն հարգի, և իզուր կանցնեն ջանքերս, թեկուզ այդ լրջության համար յես շատ ու շատ ուրախ եմ. արդեն ինձ համարում եմ գիտակից մի մարդ, վոր ղեկավարում է ուրիշներին:

Առաջին որերից այնպես հեշտ չել: Նրանք ինձ վստահությամբ չեղին նայում. կարծում էին, վոր աղջիկ եմ, ենքան ել չեմ աշխատելու: Յես այդ կարգում ելի նրանց հայացքներում:

Սակայն յես բոլորովին վստահ ելի. սկսեցի յես ինձ ամրացնել ու գործի հանձնվել:

Անհատապէս դնում ելի նայում կոմսոմոլիստներին տնտեսությունները, քննում ելի գլուղխորհրդում աշխատող կոմսոմոլիստին, իրենց թերությունները մեկ-մեկ բացատրում: Այդպես, մի շարք գործնական աշխատանքներից հետո, իրենք սկսեցին իմ փոստից վազել, և աշխատանքների աշխարհը բացվեց: Ձեռք բերի նրանց վստահությունն ու ավելի համարձակ սկսեցի գործել:

Այժմ, չերբ որերով բացակայում եմ գլուղերից, կոմսոմոլիստներն իրար են անցնում, ասում են. «Ընկեր Լենան չեկա՞վ. էարե՞վոր հարցեր կան. մենք ուզում ենք, վոր ընկ. Լենան ներկա լինի»: Հենց վոր գլուղն եմ մտնում, կասես աշխարհ եմ բերում նրանց համար, ենպես են վոգեւորվում:

Գլուղ գնալիս մտածում եմ անելիքներիս մասին, վերադարձին ինձ հաշիվ եմ տալիս, թե ինչ եմ արել: Կոմսոմոլիստների դեմքերը, վորը պայծառ, վորն աղոտ՝ անցնում են աչքիս առաջից, և ինքս ել չեմ իմանում՝ ինչպես եմ տեղ հասնում:

Այնպես վոր, սիրելի Կիմա, Ժամանակ չեմ ունենում ձեզ կարոտելու: Դրանից ել վատ բան չեր լինի, յեթե զբաղմունք չունե-

նայի. Են ժամանակ յերևի շատ կտխրելի, իսկ տխրութիւնն ինձ համար մահից ել վատ ե:

Սենյակումս հանգստանում եմ, շորերս մաքրում ու թռչում գազկոմ գեկուցելու աշխատանքներին մասին ու նոր հրահանգներ ստանալու:

Կոմսոմոլիստական բարեներով՝ ԼԵՆԱ

41. Գազկոմն իմ տունն է

Աշխատանքն ինձ այնպես է վարժեցրել, վոր դանդաղություն չեմ սիրում: Այնքան արագ եմ քայլում, վոր ցուրտ որերին անդամ տաքութիւնից նեղվում եմ: Ուզում ե ցուրտ լինի, թե բորան—հագնվում եմ շատ թեթեւ,—ալդպես եմ սովորել:

Մանում եմ գազկոմ համարձակ, ուրախ ու տաքութիւնից այտերս վառվելով: Աշխատակիցները զուխները բարձրացնում են ու ժպտում բարեկամարար, վոնց վոր մի տան մարդիկ, — այնպես լավ զխտենք իրար:

Դռան ձախ կողմում չխչխկււմ է գրամեքենան: Հենց առաջին բարես ուղղում եմ մաշինիստկա Սոնյային, վորովհետեւ աչքի ընկնողը՝ առաջին սեղանը նրանն է: Սոնյան թեպետ շրթունքները ներկում է և խոսելու ժամանակ կոարտվում, բայց նրան սիրում եմ: շատ արագ է տպագրում գրութիւնները, շրջաբերականները: Ինձ համար շատ անսովոր կթվար, յեթե մի որ չչխչխկար Սոնյայի մեքենան: Ինձ կթվար, թե աշխատանքները կանգնել են: Անկարելի յե, վոր այդ չխչխկուցի տակ մարդ չարմազովի աշխատելու: Սոնյան շատ միամիտ է. լերը աշխատակիցներից միջանիսն ասում են. «Սոնյա, գեղեցիկ ես, Սոնյա, սիրում ենք քեզ...», նա վոգեկոմվում է ու միջանի անգամ նույն գրութիւնը տպագրում: Հավատում ե, շատ է հովատում, իսկ գրավելու մեջ՝ սատանա չե:

Դռան աջ կողմում կոմսոմոլիստ Գարոյի սեղանն է: Յեթե մի փոքր ուշադիր լինես՝ նրա մի հատիկ աչքի լարված մկաններից դու կիմանաս, վոր նա լե գազկոմի գործավարը: Իսկ պաշտոնական դիրքն ու դեմքի լրջութիւնը քեզ կասի, վոր ինքը նորեկ չե, այլ վաղուցվա աշխատակից է: Սակայն, Կիմա, դու չկարծես, թե Կարոն բուրդոկրատ է: Վնչ, նա լուրջ է, հենց թեկուզ նրա համար, վոր ամեն տարի պատգամավոր է ընտրվում ու գնում է Համահայաստանյան համագումարը: Նա հասարակ կոմսոմոլիստ չե, ակտիվ է: Նա մի աչքով է նայում, վորովհետեւ մի աչքը փչացած է. սակայն մանջ այնպես ենք սովորել, վոր իսկի չենք նկատում նրա

պակասությունը՝ ինքը Կարոն ել ուշադիր ե ու խնամքով կատարում ե զործերը։ Յեթե ամեն անգամ Կարողին չտեսնեյի իր տեղում՝ ելի լրիվ չէր թվա դավկումի աշխատանքը։

Հերթով մտահոսւմ եմ սեղաններին. աստիճանաբար աշխատանքները խորանում են ու լրջանում։ Աշխատակիցների այդ համապատասխան դիրքին ու նայվածքին վարժվել եմ, վոնց վոր տպարոնում տառերին։

Սովորություն ունեմ ամեն անգամ կազմութնի վարիչի սեղանի մօտ միքիչ յերկար կանգնելու։ Յերեկ նրա համար, վոր Սահակը միամիտ կատակներ ե անում. «Բա յես կարծում եյի, թե մեռել ես, չվազդ չեր յերեւում, ընկեր լենա»։ Կամ թե ասում ե. «Գավկոմն ելի ծագկեց»։ Յես ել, չգիտեմ՝ ինչո՞ւ, ալ միամիտ կատակներից սկսում եմ բարձր ծիծաղել։ Այա մտնում եմ յերկրորդ սենյակը։ Կիմա, եստեղ ավելի ուշադրություն։

Կոմսոմոլի գավառային ղեկավարությունն ե—քարտուղարն ու ադխապրոպը։

Բարձրաձայն բարևում եմ ու հենվում քարտուղարի սեղանին։ Առաջին խոսքը հենց այն ե լինում՝ քանի՞ բլիշներում եմ յեղել։ Կապտավուն աչքերը մի վայրկյան հառում ե ինձ վրա ու ելի դնում։ Յես սկսում եմ պատմել, նա ինձ ընդհատում ե. «Բլիշը հեղինակություն ունի՞ գուղում»։ Յես պատասխանում եմ՝ Նա ինձ ընդհատում ե. «Կոմսոմոլիսաների տեսեսություններն որինակելի չեն, կոլեկտիվներն ինչ պակասություններ ունեն»։

Սկզբներում ջղայնանում եյի, միջանի սպիտակ թերթիկներ ճղճղում, փչացնում, յերբ չեր թողնում խոսքս վերջացնեմ։ Հիմա սովորել եմ։ Առաջին անգամ նրան հանդիպելիս պիտի յենթադրեա, թե հպարտ ե ու ընկերական չե. սակայն աշխատանքի ընթացքում յես ճանաչեցի նրան և սկսել եմ հաբզել։ Ամեն անգամ ասում ե. «Այդպես, ուրեմն»,—և ձեռքը ծանրությամբ դնում սեղանին. դրանից հասկանում եմ, վոր նա իմ աշխատանքներից զո՞հ ե։

Այդ ադխապրոպը՝ Սուրենը հանգիւտ տեղը չի նստում. գրելու կամ խոսելու ժամանակ ծնկները շարժում ե, թղթերը ձեռքին՝ հաճախ ե դնում մյուս սենյակն ու Սոնյայի հետ կատակներ անում։ Ինձ տեսնելիս ել չի ուզում բաց թողնել, այնքան ե խոսում։ Իսկ յես չեմ սիրում աշխատանքի ժամերին նրանց խանդարել, ստանում եմ հարկավոր հրահանգներն ու տեղեկություններն և դուրս գալիս։

Պավկոմն իմ տունն ե, բոլորը մի ընտանիքի անդամներ են՝ տարբեր տարբեր ու սիրելի։ Պարավորի պես գալիս եմ, ջուր վերցնում ու ելի դնում։ Մեքենայի չխչխկոցը—Կարոն, Սահակը, Սու-

ըննն անընդհատ շարժման մեջ. Հայկի կապտավուն աչքերի լուրջ նայվածքը մզում են ինձ նորից. գլուզի Վոնց վոր արյունը շատու- նում ե յերակներիս մեջ, ել չիմ կարողանում կենտրոնում մնալ. պիտի նորից գլուզ գնամ:

Յերբ կենտրոնում եմ լինում, աշխատանքի ժամերից հետո մերոնք գալիս են ինձ մոտ: Սուրենը հաճախ ե գալիս, ու յերկար նստում, իսկ Հայկը յերբեք մենակ չի լինում. կամ Սուրենի հետ ե գալիս, կամ մի ուրիշ կոմսոմոլիստի: Հայկի հետ շախմատ եմ խա- ղում, նա միշտ ինձ տանում ե, վորի համար շատ եմ դարմանում. այդ նրանից ե յերկի, վոր նոր եմ սովորել շախմատ խաղալ: Սու- րենի հետ չեմ սիրում խաղալ, վորովհետեւ հեշտությամբ տանում եմ խաղը: Հետո խաղի ընթացքում շատ ե խոսում, ասում ե, վոր յես այնքան ել ազատամիտ չեմ, վոր Հայաստանի բանվորունին գեղջկուհու նման ամաչկոտ ե: Խաղի ժամանակ ձեռքերը հանգիստ չի պահում, խփում ե ուսիս, յերեսիս, յես ել զայրացած շող եմ տալիս շախմատի խաղերն, ու մենք կռվում ենք:

Սուրենն ուսում ե իր ճառերը: Լավ ե խոսում: Իգուր չե, վոր ագիտաբոս ել Հեռվից դիտողը կտաի՝ սրա պես աշխատող չկա, բայց ափսոս, այդ խոսելու հետ՝ գործի մաքդ չե: Յես իմ անձնա- կան փորձիցն եմ ասում. մինչև նրանից թեղիաներ եմ ստանում, հո- գիս դուրս ե գալիս:

Սուրենը և միջանի ուրիշ կոմսոմոլիստներ յերբ ինձ մոտ են գալիս, սկսում են ծխել ու ինձ ել ստիպում են, վոր ծխեմ: Ընկեր- ներիս խաթրը չկտրելու համար միջանի անգամ փորձեցի, բայց խեղդվում ելիս լուրորովին ել դուր չեք գալիս: Հայկը հակառակ կարծիք ե հայտնում, — բոլորովին անհրաժեշտ չե, վոր կինը ծխել իմանա, այդ ֆեառում ե նրա ֆիզիկականին, — ասում ե նա: Յես նրան հարգում եմ ու լսում հենց նրա համար, վոր նա չի դեկա- վարվում միջանի կոմսոմոլիստներին փշած տեսակետներով:

Յերեկ նա լեկավ ինձ մոտ մի ուրիշ կոմսոմոլիստի հետ: Շատ յերկար շախմատ խաղացինք. վերջապես մի անգամ կարողացա նրան տանել. դրա համար շատ ուրախ եյի, իսկ Հայկը ծիծա- դում եր:

Ամենից պաշտառ նրա նայվածքն ե տղվում հիշողությանս մեջ:

Լավ աշխատող ե Հայկը, կոմսոմոլիստները սիրում են նրան, յես նույնպես շատ եմ հարգում:

Լ Ե Ն Ա

42. Մենք հեղափոխության սերունդ ենք

Եղ որն ավելի խնամքով եյի հազնվել, մագերիս սանրվածքով միքիչ ավելի յերկար զբաղվել: Յեվ զիտե՞ս՝ ինչ, Կի՞մ, առաջին անգամ հայելու մեջ տեսա, վոր բավական գեղեցիկ էմ: Յերեսս շրջեցի հայելուց, ծիծաղեցի ինձ վրա, հետո ավելի համարձակ նայեցի հայելու մեջ. տպարանի սշխատանքի թողած դալկութիւնը վաղուց ե տեսել այտերիցս, արևից այրվել են այտերս, ու այդ հենց սազում ե ինձ:

Յեթե Հայկն այնպես համառ չաշխատեր, յերևի դեռ յես իմ գեղեցկութիւնը չնկատեյի:

Սովորականից ավելի արագ ներս մտա դավկում: Մաշինիստկա Սոնյան և բոլորն իրենց տեղերումն ելին: Յես անգամ կանգ չառա առաջին սենյակում ու հենց մտա քարտուղարի սենյակը: Ինչպէս միշտ, գեկուցեցի աշխատանքներիս մասին, սակայն ավելի կարճ: Կոմսոմոլիստները գործով դալիս եյին, դնում, յես դեռ կանգնած եյի:

Մի նոր, բոլորովին նոր հուզմունք տրոփում եր յերակներին մեջ:

Մինչև աշխատանքների վերջանալը զավկոմում դես ու դեն եյի շրջում: Հայկը վեր կացավ, պիտի գնար, յես մոտեցա.

— Սպասի՛ր, Հայկ, միասին գնանք, քեզ բան պիտի ասեմ, մի նոր բան. — ու գլուխս կախեցի:

Ինչքան ել վոր համարձակ ես լինում աշխատանքների մեջ, զգացմունքի խնդրում միքիչ այլ ե լինում, — խոստովանվում եմ այդ:

— Բըիջների մասին, — հարցրեց Հայկը:

— Ձե, հենց ամեն ոք նրանց մասին: Ուրիշ բան:

Բոլոր աշխատակիցները դնացել եյին: Մնացել ելինք յերկուսով: Մառան մօքրում եր առաջին սենյակը:

— Հայկ, քեզ սիրում եմ, — ասացի առանց ամաչելու:

— Ինչո՞ւ ալդպես հանկարծ, Լենա, — հարցրեց Հայկը:

Առաջին խոսքն ասված եր, նրանից հետո պատասխանելը շատ հեշտ եր, վոնց վոր աշխատանքներիս մասին լինելի գեկուցելիս:

— Յերբ շատ-շատ սկսեցի հարգել, յես ինձ իրավունք համարեցի հանկարծ ասել:

— Ուզում ես, վոր ընտանիք կազմենք, — հարցրեց նա:

— Ս.մ.ռ.ն.ութիւն, ելի — պատասխանեցի յես:

— Դե, ուրեմն, ընտանիք, — ասաց Հայկը:

— Յերկուսս ել հավասար մարդիկ ենք, ինքնուրույն աշխատող. մեր ընտանիքը կլինի նոր ընտանիք, — ասացի յես վոզևորված:

— Գիտեա, Լենա, կենցաղային հարցերում միքիչ չես ծածկաւ միտ եմ:

— Դրա համար լռում ելիր, յերբ մենք խոսում ելինք այդ հարցերի շուրջը:

— Դե ամեն միտք չի կարելի հրապարակորեն հայտնել. չես ավելի նոր կենցաղային եմ, դեռ միքիչ ել դենն եմ անցնում, դրա համար ել լռում ելի:

Այստեղ ել շատ սակավախոս եր նա. մտածեցի՝ «աշխատանքը ժամանակ չի տալիս նրան յերկար մտածելու այդ հարցերի շուրջը»:

Նա թեթեւ ժպտաց:

— Բայց լավ աղջիկ ես, Լենա, ուրեմն այդպես. — ասեց նա ու շտապ վեր կացավ: Համամիտ ե, յենթադրեցի յես: Նա գնաց կուսգավիճմի նիստին, յես ել տուն գնացի:

Վոչինչ, վոչինչ չեմ ուզում թաղցնել քեզանից, սիրելի Կիմա. աս, ինչ վոր յերեկ պատահեց, ուզում եմ քեզ պատմել:

Յերեկոյան յես կարդում ելի, Սուրենը յեկավ ինձ մօտ. գիրքս մի կողմ շալտեց, թե՛ բավական ե, միքիչ խոսենք: Յես նրան հանդիմանեցի իր կոպտութեան համար, բայց նա կատակի տվեց և մոռացաւ:

— Լենա, դու հասկանո՞ւմ ես, մենք նոր աշխարհի մարդիկ ենք, և ուրախութիւնը մերն ե. հեղափոխութիւն ենք վայելում, դա հասարակ բան չե: Հեղափոխութեան փորձութենքը կուտելին նրանք՝ իժերն ու կարիճները, հա՛-հա՛-հա՛, բայց ո՞վ ե տվողը, — ասաց Սուրենը ծիծաղելով:

— Հենց փոքրորում ես և ուրախութեան մասին ես ճառում. իսկ կարողանո՞ւմ ենք լավ աշխատել, — ասացի յես:

— Աշխատանքն իր հերթին: Բայց վոր մենք ավելի ուրախ պիտի լինենք, այդ եմ արձանագրում: Մանավանդ վոր դու հաճախ լուրջ ես, հենց քեզ համար եմ ասում, — պատասխանեց Սուրենը ծիծաղելով:

— Յես ուրախութիւնն աշխատանքի մեջ եմ գտնում, — պատասխանեցի կարճ:

— Հա-հա-հա, — ծիծաղեց նա: — Յես գիտեմ, դու սերն ել աշխատանքի մեջ ես գտնում:

Գլխարկը ծուռ դրած՝ ձեռքերը գրպանում՝ յետ-յետ գնաց նա:

— Որինակ՝ մաշինիստկա Սոնյային սիրել աշխատանքի մեջ, դե արի՛ հասկացի: Յես հասկանում եմ. աշխատանքը՝ աշխատանք, սերըն ել՝ սեր, բայց, նորագույն իմաստով, ինչպես ասում ենք, նոր կենցաղի բովանդակութեամբ:

Յերեկի յերկար կխոսեր, չեթե նրան չընդհատելի:

— Յես սիրում եմ աշխատանքի ընթացքում աշխատող ընկերոջս, վորի միտքն ու մկանները սոցիալիզմի համար են գործում:

— Դե, ո՞վ բան տեսց: Դրանք հառարակ բաներ են, ինչպես կոմունիզմի ալրուրները: Դու ուրիշ բան ասա, վոր ելի նոր լինի, ու կենցաղը միանգամից հեղաշրջվի, — ասաց նա ծիծաղելով:— Հը, խելքի մոտիկ չէր:— հարցրեց նա ու նորից ավելացրեց.

— Սիրելի բանվորուհի, կենցաղային հարցերը բարդ են և այժմ, յերբ նա չի ձևակերպվել: Ով ինչպես մտածում ե, ինչպես սիրում ե, թող ասնպես սիրի. միթե դրանից հեղափոխությունը կսուսի:

— Հենց այդ ե, վոր դու չես հասկանում, — զայրացա յես, — հեղափոխությունը կսուսի...

Յերեկ շատ կերկարեր մեր վեճը, յեթե չգար Հայկը, միանգամայն անսպասելի: Նա մենակ եր: Գլխարկը հաճախ հանում եր ու նորից ծածկում և ամեն անգամ թվում եր, թի նա գնալու յե: Նա խառնում եր թղթերս: Յես լուռ ելի: Սուրենը չերգում եր մի կոմսոմոլիստական մոտիվ:

— Հետաքրքիր ե Հայկի կարծիքը նոր սիրո մասին, — ասաց Սուրենը:

— Յես ժամանակ չունեմ, — պատասխանեց Հայկը կտրուկ:

Սուրենը կողքից «հը» արեց ու շուռ չեկավ:

— Վերոհեան ներսդ են չի, վոր պլաի լիներ, հը...

Հետաքրքիր եր, յեթե Հայկը խոսեր: Բայց նա միշտ խուսափում եր այդ հարցերից: Իսկ Սուրենի ակնարկները յես միմիայն բամբասանք ելի համարում Հայկի վերաբերյալ:

Հայկը հանկարծ դարձավ Սուրենին.

— Գիտես, բարեկամ, դու քո աշխատանքը վոչ թե դեկավարում ես, այլ քեզ ղեկավարում ես: Թեզիսներդ մաշինիստիկան իր ուղածի պես ապագրում ե: Եսոր թերթում ելի և մի խոշոր սխալ դատ. «կոմսոմոլի բջիջը դեկավարում ե դուդի խորհուրդը»: Դա քաղաքականության մի խոշոր սխալ ե:

— Դա թյուրիմացություն ե, նա չի կարողացել գրածը լավ կարդալ, — բացականչեց Սուրենը:

— Փաստն ասն ե, վոր այդպես պլաի ուղարկվեր բջիջներին ու ահագին թյուրիմացություններ առաջ գար: Իսկ դրա համար դու պետք ե ուշադիր լինես ու հետեես ապագրությանը:

— Ահ, այդ մաշինիստկան: Յես նրան ցոլց կտամ, — զայրացավ Սուրենը:

— Իզուր ես վրդովվում, մաշինիստիկան մեղավոր չե. նա կա-

քող եւ սխալ հասկանալ: Դու շատ ուշադիր պիտի լինես: Բազմաւան եւ մի փոքր սխալ դեկլավարութիւն—եւ գործը տուժում եւ Հետո՛ խմբակներդ կարգին չես դեկլավարում. արգեն կես տարի չես գնացել, ծրագրի չնչին ստեղծես եւ անցել: Աշխատում ես, կարգին աշխատի: Իմ ու քո քեֆը չի...

— Լավ, քեզ ել դիտենք, — նեղացավ Սուրենը, — կարծես հաշվետու դեկլացում սովի, սկսել ե գլխիս մեղադրանք կարգալ:

— Ամեն վայրկյան իրավունք եմ համարում ինձ աշխատանքը քննադատել: Բոլորի համար վերջնականապէս յես եմ պատասխանատու:

— Պատասխանատու՞. յես, խնդրեմ: Դեպ ել դիտենք, — ասում էր Սուրենը քթի տակ:

— Ճիշտ եւ ասում Հայկը, — հաստատեցի յես:

— Հերիք եւ: Ապա ձեր աշխատանքի բացերը հետո կտեսնե՞ք:

— Բո՛ւն՝ աշխատանքի բաց չե, այլ խոշոր անփութութիւն, անգործութիւն: Թեկուզ աչքիս լույսը լինի, յերբ աշխատանքին մատերի արանքով ե նայում, համարում եմ սոցիալիզմի թշնամի:

— Հա՛-հա՛-հա՛. — ծիծաղեց Սուրենը, յերևի կենտրոնից քեզ հուպ են ավել, շատ խիստ ես դարձնլ:

— Յեթե այդպես ես կարծում, վատ չե, — ասաց Հայկը:

Հայկն աչքումս հասակ եր առնում, համառ ձայնն ու հալացքն ավելի յեր խստանում: Յես նայում ելի նրա կապտավուն աչքերին, վոր այժմ վառվում ելին կարմրագուն. յերևի այդ նրա հուզմունքից եր: Յես սիրում ելի աշխատանքի այդ խիստ դեկլավարին:

Յերկար ժամանակ մեղանից ե վոչ մեկը չեր խոսում: Սուրենը ձեռքերը զրպանում՝ կանգնել եր լուսամուտի առաջ, իսկ Հայկը խառնում եր իմ թերթերը: Հետո՛ շախմատը բացեց, ու սկսեցինք լուռ խաղալ:

Սուրենը գնաց:

Նլի շախմատում տարվեցի: Յես շղափնացած պառկեցի անկողնիս վրա: Բոլորովին անսպասելի, — Հայկը շատ մոտիկ նստեց կողքիս: Յես յես քաշվեցի: Նա ժպտաց: Այդ ժպիտը շատ տարորինակ եր: Նրա դեմքն այն արտահայտութիւնը չուներ, ինչ վոր աշխատանքի մեջ, կամ բարկացած բոպեններին: Յես նայում ելի նրան. այժմ ուրիշ եր: «Նրան ասել եմ, վոր սիրում եմ, ուրեմն ինքն ել...», — մտածում ելի յես:

— Ձե՛ս հասկանում, — ասաց Հայկն ու ավելի սեղմվեց ինձ, — ամուսնութիւնը կատարվում ե շատ հասարակ Դու գիտես, Լենա, վոր մենք հեղափոխութեան սերունդ ենք:

Կտպտալուն աչքերն այժմ վառվում ելին կարմրագուն:

«Հեղափոխութիւն սերունդ ենք», — այդ այնպէս հրամայող ու ազնիւ հնչեց: Յետ համարձակ ելի և թույլ հենց այդ ըոպելին:

— Մենք ամուսնանում ենք, — հարցրի յետ շնջալով:

Նա ելի ժպտաց... վորչափ հավատում ելի նրա աշխատանքին, նուրնչափ հավատում ելի նրա զգացմունքներին:

Այն շատ հասարակ պատահեց. աշխատանքի ընկերոջս հետ այդ գիշերը մենք միասին ելինք...

Առավոտը վաղ նա իմ սենյակից դնաց, իսկ յետ գլուղ մեկնեցի: Ճանապարհին շատ մտազբաղ ելի: Այլևս չեյի մտածում գլուղի բջիջների մասին. այդ սովորական եր դարձել. միջիչ անսովոր եր այն, ինչ վոր պատահեց լերեկ գիշեր:

Երևի այդ յետ չգիտելի Հայկի կենսագրութիւնը, իսկ գիշերը յետ իմացա. այդպէս պատահում ե, կամ ինքն և պատմում, կամ դու յետ հարցնում:

ՔՈ ԼԵՆԱ

Այս լերեք նամակների հիման վրա՝

1. Բնութագրիր Լենայի տիպը (նրա արտաքին և ներքին հատկութիւնները, հայացքները):

2. Պատմիր, թե նոր կենցաղն ինչ գծերով և նկարագրված:

3. Պատմիր, թե ինչ նոր հարաբերութիւններ են առաջացել արդի գյուղում. կյանքի ինչ վերելք գոյութիւն ունի այնտեղ:

ԴԵՊԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ

43. Պարիզի Կոմունան

1871 թվի սկզբներին գերմանական զորքը լեկել կանգնել էր Պարիզի շրջակայքում:

Ֆրանսիական կառավարութիւնը վախենալով բանվորութիւնից՝ շտապեց մարդիկ ուղարկել գերմանական հրամանատարների մոտ հաշտութիւն կնքելու համար:

Յերկու կողմից ել շտապում էին հաշտութիւնը շուտով կնքել, վորովհետև լավ տեսնում էլին, թե ինչ է կատարվում Պարիզի փողոցներում:

Այնտեղ, այդ մեծ քաղաքում, բանվորութիւնը վրաքի յեր կանգնել է պատրաստվում էր հայտնելու, վոր ինքն է իսկական կառավարութիւնը, ինքն է Ֆրանսիայի տերը...

Մարտի 18-ն էր, մի գեղեցիկ օր:

Պարնան արեւը փայլում էր և դուրս կանչում բոլորին դեպի քաղաքի կենտրոնը:

Միլիոնավոր ժողովուրդը ցնծազին աղաղակներով դիմում էր առաջ՝ դեպի քաղաքային տունը, ուր պիտի ինքը վորոշեր իր բախտը...

Իսկ այնտեղ, քաղաքային տան մեջ, բեմ էր լեկել ժողովրդի ընտրած բանվորական կառավարութիւնը՝ Կոմունան:

Հսկայական ամբոխը լցրել էր մեծ շենքի ներսը, դրսի յերկար ու ձիգ փողոցները և սրտատրոփ սպասում էր...

Հանկարծ հարցուը-հազարավոր ամբոխի բերանից՝ վորպես ահեղ ամպի մի վորոտ՝ լսվում է.

— Կեցցե՛ Կոմունան...

Կոմունան՝ բանվորական կառավարութիւնը հայտարարված էր...

Թնդանքների վորոտը շնորհավորում է հաղթանակը, յերաժըշտութիւնը նվազում է Մարսելյոզը, վոր միախառնվելով մարդկային ցնծազին գոչերին, յեռանդ է ներշնչում ապրելու և մեռնելու Կոմունայի համար...

Կոմունան կոպում էր և ստեղծագործում:

Կոմունան լեկեղեցիները թափոններէ լեր վերածել, ու ամեն յերեկո այնտեղ հարյուրավոր բանվորներ ողբ թնդացնում ելին հեղափոխական յերգերով:

Այնտեղ արտասանվում ելին ճառեր, տեղի ունենում դասախոսութիւններ նոր կյանքի մասին:

Ի՞նչ ելին քարոզում կոմունարները:

— Մենք կոմունիստներ ենք,—ասում ելին նրանք,—վորով հետև մենք չենք ուզում, վոր հողը և մլուս բարիքներն ընկնեն միջանիսի ձեռքը, այլ լինեն Կոմունայի սեփականութիւն:

— Մենք ցանկանում ենք, վոր բանվորներէ աշխատանքը չհափըջաւկեն բուրժուա-հարուստները: Մենք ցանկանում ենք, վոր բանվորներն ազատվեն բոլոր կապանքներից և, տեր-դառնալով աշխարհին, դաբնեն այն խաղաղ աշխատանքի, ազատութեան և բարոութեան, և վոչ թե տանջանքի, ստրկութեան և վողբերգութեան մի վայր...

— Մենք կվոչնչացնենք մասնավոր սեփականութիւնը, վորի միջոցով բուրժուա-հարուստն ստրկացնում է բանվորին, և դրա հետ կվոչնչացնենք և ալն բոլոր հիմնարկութիւնները, ուր բուն է դրել բուրժուա-հարուստը...

— Մենք մերժում ենք աստվածը և կվոչնչացնենք այդ աստվածը, վորն ստեղծել է հոգեւորականութեան հետ տիրող դասակարգը, վերացնել մտավոր խավարի և ստրկութեան մեջ պահի ժողովուրդը:

Ահա այսպիսի նպատակներէ համար ելին կոմունարները կըռվում բուրժուա-հարուստների կառավարութեան դէմ:

Բայց Կոմունան շրջապատված էր թշնամիներով:

Հին կառավարութիւնը, վորի գլուխն էր կանգնել արյունաբուրժսերը, շատ լավ գիտեր, վոր Կոմունան պիտի վերջ գնի բուրժուաների և հոգեւորականների իշխանութեան, և ատամները կընտացնելով մտածում էր, թե ինչպես վոչնչացնի նորածին Կոմունան:

Տիբը բուն էր դրել Վերսալի շքեղ պալատներում, իր կողմն էր քաշել Ֆրանսիայի բոլոր զորքերը և ստերով համատացրել նրանց, թե Կոմունարները ավազակներ ու մարդասպաններ են, թե նրանք ազգի դավաճաններ են, միացել են դերմանացիների հետ և ուզում են Ֆրանսիան կործանել:

Այդ պիտի սուտ լուրերին հավատալով՝ Վերսալի զինվորները գնում ելին կռիւն իրենց յեղբայրների՝ Կոմունարների դէմ:

Այլիւի սկզբից Վերսալի կառավարութեան թնգանոթներն ակահցին ոմբակոծել Պարիզը:

Ու սկսեց մի կատաղի կոխիլ:

Մահավասար ելին ուժերը. յերեք հազար կոմունարները կըռ-
վում ելին լերեսուհազարանոց բանակի դեմ:



Բայց մեծ եր կոմունարների քաջութիւնը, մեծ եր նրանց
հավատը և անձնազոհութիւնը:

Մայիսի 21-ին, յերկու ամսվա կռվից հետո, թշնամին լքեստի միջոցով իմացավ, վոր Պարիզի Սեն-Կյուլի դռները պաշտպանված չեն:

Յեւ յայդ գիշեր Վերսալի քսանհինգհազարանոց զորքը մտաւ Պարիզ:

Վերսալի զորքը քայլ առ քայլ տիրում է քաղաքին:

Նա անողոք հնձում է, սպանում բոլորին, ում պատահում է:

Արշան առուները հորդառատ հոսում են փողոցներում:

Ու ամեն տեղ, ամեն քայլին դիակներ, դիակներ...

Իբար յետևից ընկնում են Կոմունայի առաջնորդները, բայց նրանց տեղը նորերն են ընում:

Կոմունա են կոմունարներն առչուծի անվեհերությամբ, բայց Վերսալի զորքերը հետզհետե շրջապատում են նրանց:

Կոմունայի վերջին բեկորները հավաքվում են Պեր-լա-Շեզ գերեզմանատանը, թեպետե թնդանոթներն արդեն ճեղքել են նրա պալիսպները:

Կոմունա են ալստեղ մինչև վերջին շունչը. բայց թշնամին շրջապատում է չորս կողմից... և Պեր-լա-Շեզի գերեզմանների մոտ ընկնում են կոմունարների դիակները:

Վերջին բարբիկադը...

Ռազմածիճքի վերջին մնացորդներն են...

Լսվում է բարբիկադի թնդանոթների վերջին որհասական վորոտը:

Ապա ամեն ինչ լռում է:

Կոմունան ընկնում է...

Ընկնում են վերջին հերոսները...

Քառասուն հազար դիակների վրա Ֆրանսիայի բուրժուազիան հիմնեց իր իշխանութունը:

1. Յճրք և վճրտեղ կատարվեց իշխանությունն իրենց ձեռքը գցելու՝ բանվորների առաջին փորձը:

2. Ինչձե Պարիզի Կոմունան տապալվեց:

3. Ինչ նշանակութուն ունի Պարիզի Կոմունան համաշխարհային հեղափոխական շարժման մեջ:

ցնծագին—ուրախ

արյունարբու—արյունխում
անվեհեր—քաջ, անվախ

բեկոր—կտոր, մնացորդ

որհասական—վերջին որվա

44. Կոմունարները

Նրանք առյուծի պես ելին կռվում:
Թշուղանոթների խուլ վոռնոցների,
կուլը, դաժան աղմուկ և ճայթյունի տակ,
չեղք ու մուտքերում բլուր փողոցների
կառուցում էլին ամուր բարրիկադ
ու խենթի նման կռիվ ելին նետվում՝
Նրանք առյուծի պես ելին կռվում...
Աշխարհ եր բռնել մշուշն ու ծուխը,
և ծխի, մութի, մշուշի միջից,
վորպես հրեղեն մի կարմիր չերիդ
կորչում, չքանում, նորից բարձրանում,
նորից փայլում եր դրոշը պայքարի,
Նրանք առյուծի պես ելին կռվում...
Յեվ ընկնում ելին...

Սակայն մեկի տեղ տաս նոր անվեհեր
մարտիկ եր կանգնում թշնամու առաջ,
զոհ ելին բերում կյանքերը իրանց,
դեերով լցնում անդունդն ու վիհեր,
վար ճանապարհը ծանր վերելքի
հարթվի, հեշտանա, փոխվի վայելքի:
Նրանք առյուծի պես ելին կռվում...

յերիզ—ժապավեն, լինա | դի—դիակ

45. Ստրուկների վաճառքն Ամերիկայում

Մոտավորապես վաթսուհ տարի սրանից առաջ Ամերիկայում
վերջ դրվեց նեգրերի վաճառքին, իսկ դրանից առաջ ամերիկացիք
նեգրեր ելին զնում Աֆրիկայում և Ամերիկա տանելով՝ վաճառում
եյին: Արար օգուտը անհատականների զինված խմբերն Աֆրիկայի խորքերն
եյին զնում և խաղաղ ու անպաշտպան նեգրերին վորսի կենդանի-
ների պես վորսում եյին: Գիշերանց գաղտնագողի կերպով նեգրերի
գլուղին մոտենալով՝ ավազակ-վաճառականներն ողակում եյին գլու-
ղը, փակում նրա յեղքն ու մուտքն, ապա մահում եյին նեգրերի
խրճիթները, դիմադրողներին սպանում և մուսուներին գերի ելին
վերցնում: Գերվածներին շղթայակապ եյին անում և վաճառքների
հոտի պես ծովափ քշում: Այնտեղ պատրաստի նավերը վաղուց դը-
րանց եյին սպասում: Գերիներին փոխարինում եյին հրացանի, վա-

ռողի, հուլունքի և գունավոր հլուսվածքները հետո նոր տերերը գերիններին նազ էյին տանում: Այնտեղ էլ նրանց շղթայված էյին պահում: Գերի գնողներն աշխատում էյին փորձան կարելի չե շատ գնել: Նավերն այնքան էյին լցնում, վոր գերիններն իրար գլխի եյին թափվում: Շատերն ողի պակասութունից խեղդվում էյին: Ռաւիան միջոտնի գիւակ էյին ծով նետում: Հաճախ հիվանդներին եյին ծով գցում, վոր մյուսներին չվարակեն: Պատահում եր, վրբ միանգամայն առողջ մարդկանց էլ եյին ջուրը նետում, յեթե հաւկատա՛հ քաթիները դանդաղեցնում էյին նավի ընթացքը, և ուսեսաւի պակասութունն եյին զգում:

Ամերիկա տարած նեղրերին ամերիկացի ազարակատերերն իրենց ընտանի կենդանիների պես բանեցնում էյին:

Վաղ առավոտից մինչև ուշ յերեկո ստրուկ նեղրն աշխատում եր: Արեն այրում եր, յերկիքից կարծես կրակ եր թափվում, շիկացած ողը հուր եր շնչում, իսկ ստրուկ նեղրը, մեջքը կռացած, բաւթակ եր հավաքում, յեղեգն կտրում, հող մշակում: Հենց վոր նստում եր, վորպեսզի փոքր ինչ շունչ աւնի, յետեից վերակացուր խարազանի շրխկոցի ձախն եր լսվում, և մեջքին, ուսերին իջնող հարվածները պոկում էյին նրա կաշին:

Եթե անժամանա ստրուկն աշխատելիս ուշաթափվեր, վոր վատ աննդի և ուժից վեր աշխատանքի ժամանակ հաճախ ե պատահում, նրան ուշքի կբերեյին՝ կրծքին կամ փորին մի յերկու քացի հասցընելով:

Չոր միայն տերերն ու վերակացուները, ալլե ինքն որհնքն անխիղճ եր դեպի ստրուկները: Սարկի վրա ախպես էյին նստում, ինչպես զրասաւի կած լծկանի վրա կնայեն: Նրան վատ էյին կերակրում, չեյին խնամում, նրա միտքը լուսավորելու մասին չեյին մտածում: Ստրուկների լուսավորության մասին հոգալը նույն իսկ փնանգավոր եր համարվում:

— Հենց վոր ստրուկները կաբդալ ու մաածել սովորեն—ասում էյին աղաները,—իսկույն կսկսեն դժգոհութուն հայտնել. լավ ե անտաշ ու վալրենի թողնենք: Անասունների հոտ կառավարելն ավելի հեշտ ե, քան քննող ու դատող մարդկանց կառավարելը:

Նույնիսկ այնպիսի պատարներ կային, վորոնք յեկեղեցիներում իրենց քարոզների մեջ անամոթաբար հայտարարում էյին, թե աստված ե տնորինել, վոր նեղրերն սպիտակամորթների ստրուկը լինեն:

1. Վերադարձից ելին նեղրեբին տանում Ամերիկա վաճառելու:
2. Վեր Ամերիկայումն եր տարածված գերավաճառությունը և ինչպէս:
3. Պատուրներն ինչ ելին քարոզում գերնվաճառության մասին: Այսպիսով յիկեղեցին վեր դասակարգել շահերի պաշտպան հանդիսացավ:

ազարակատեր—կալվածատեր
շիկանալ—կարմրել (տաքությունից)
ածխահատ—ածուխ փորոզ բանվոր

զրաստ—բեռնատար անասուն
տնորինել—կարգադրել

46. Կյանքի գնով

Հսկայական առաքաստանով. հարյուր հոգի ստրուկներ թիա-վարում են: Գորգի վրա նստած և նավատերը:

Ստրուկները մերկ ելին. միայն ազդերը թեթև ծածկված ելին պատառոտուն գոգնոցներով, և յուրաքանչյուրը շղթայով կապված եր իր հարեանին: Արեւի կիդիչ ճառագայթները ամբողջ խուրձեր ելին թափվում նրանց վրա. իսկ խափշիկները յետ ու առաջ վազ-վըզելով, ձաղկում ելին նրանց կաշվե խարազաններով: Ստրուկները պարզում ելին իրենց ցամաքած ձեռները և դժվարությամբ շար-ժում ջրի մեջ ծանր թիերը:

Վերջապես նրանք մի փոքրիկ ծովախորշ մտան և սկսեցին հա-փել խորությունը:

Հենց վոր խաբիսիւր ձգվեց, և առաքաստները հավաքվեցին, վատերը նավեզրից ծովը զցեց սանդուղքը, նախորոջ նրա ծայրն ամբացնելով յերկու յերկաթե չանգալների վրա: Դրանից հետո խափ-շիկները վեցերին ստրուկներից կրտսերին, նրա քթածակերն ու ա-կանջները խցեցին մեղրամոմով և զոտից մի մեծ քար կապեցին: Ստրուկը հոգնածութեն ցած իջավ սանդուղքներով և անհետացավ ծովի մեջ: Միքանի բռնիկներ բարձրացան ծովի յերեսը, ափտեղ, վորտեղ նա սուզվեց ջրի մեջ: Ստրուկներից միքանիսը հետաքրք-րությամբ նայում ելին նավերից:

Կարճ ժամանակից հետո դեռատի ստրուկը դուրս լեկավ ջրից և ծանր շնչելով բռնեց սանդուղքից: Այլ ձեռքում բռնած ուներ մի մարգարիտ: Պափշիկները վեցերին նրանից մարգարիտն ու իրեն նորից հրեցին ջրի մեջ: Ստրուկները ննջում ելին թիակների վրա:

Նորից ու նորից լերևում եր ջրից դեռատի ստրուկը և ամեն անգամ բերում եր իր հետ մի-մի գեղեցիկ մարգարիտ: Նավապետը կշռում եր մարգարիտները և ապա դնում կանաչ կաշվե տոպրակի մեջ:

Վերջապես դեռատի ստրուկը դուրս լեկավ ջրից վերջին ան-
շամ, և մարդարիտը, վոր նա բերեց, դեղեցիկ եր բոլոր մարգա-
րիտներից, վորովհետև նա լրացած լուսնի ձև ունեւր և ավելի պայ-
ծառ եր, քան լուսաստղը: Բայց ստրուկի յերեսը ծածկված եր մահ-
վան գունատութեամբ. նա ընկավ տախտակամածի վրա, և նրա ա-
կանջներից ու քթածակներից արլուն բղեց: Նրա մարմնով մի թեթե
դող անցավ, և ապա նա անշարժացավ: Խափշիկներն ուսերը թոթ-
վեցին ու նրա մարմինը նավեղրից ծով շարտեցին:

Կ Ա Ր Դ Ա

Ա. Միխայլով.—Սպարտակ, դինը 15 կոպ.:

առագաստանով — առագաստ
(վարդույր, վոր քամու
միջոցով շարժվում և առաջ)
ուռեցող նավ
ազդը—վտքի մասը՝ ծնկից մին-
չև գավակ
խափշիկ—սևամորթ ցեղ, նեղը
ծաղկել—ձեծել

ծովախորշ—ջրի նեղ մաս, վոր
ցամաքի մեջ և մանում
կրտսեր—փոքր
խցել—փակել (ծակը), խցկել
անճետանալ—կորչել
սուզվել—սկել
դեռատի—մատղաշ

47. Անխոս պրոպագանդիստը

Գործարանի բիմիական բաժանմունքն անշատված եր արհես-
տանոցից ապակե պատով:

Պղնձարջասպի չոր փոշին աչնպես եր սեպրել պատուհանի ա-
պակիներն ու փեղկերը, վոր դրսից նայողը չեր տեսնում, թե ինչ
ե կատարվում դործարանի ներսում:

Սեպյա աչնտեղից շարունակ լսվում եր մեքենաների չխչըլ-
կոցը:

Բանվորները յերկար չելին դիմանում այստեղի ծանր աշխա-
տանքին...

Մի սորի կյանք ունենալն այս դործարանում, այս առժանա-
կիր աշխատանքի մեջ՝ համարվում եր հերոսութուն: Հանկարծա-
կի բանվորները խմբերով ընդհատում ելին իրենց աշխատանքները
և գործարանի վարչությանը դիմում, թե այլևս չեն կարող աշխա-
տել, ուզում են հեռանալ:

Հին բանվորներից միայն մեկն եր մնացել: Նա մի բարձրահա-
սակ, լախաթիկունք ծերունի յեր, վորի վրա նուչնպես ծանր կնիք
եր դրել գործարանային դաժան աշխատանքը: Նրա գունատ դեմ-

քը, փոս ընկած աչքերը, վոսկրացած կազմվածքն ու անկենդան շարժումները շատ բան էին ասում ամեն տեսողին՝ նրա քաշած տանջանքների մասին:

Գործարանի գլխավորը հաճախ եր գալիս արհեստանոց ստուգելու բանվորների վիճակը: Վերահասու լինելու, թե ո՛վ ինչպե՞ս է գդում իրեն արհեստանոցում: Յե՛վ ամեն անգամ թվում էր նրան, թե մի արտակարգ բան կատարված կլի՞նի գործարանի ներսում...

Սովորականի նման, նա մի որ դուռը բացեց և մնաց դռան շեմքին քարացած կանգնած... Նրա առաջ ուրվականի նման անշարժ կանգնած է բարձրահասակ ծերունի բանվորը՝ գունատված, անկենդան արտահայտությամբ:

Գործարանի գլխավորը ծերունու թորշոժած դեմքին նկատեց արցունքի կաթիլներ...

— Դուք լավիս եք...

Ծերունին դուխը շարժեց և մատով ցույց տվեց պղնձարշաս պի փոշին...

— Յերկար ժամանակ է, ինչ դուք աշխատում եք գործարանում, — հարցրեց գլխավորը:

Միջանի տարի լեր արդեն, ինչ նա գործարանում անխոս եր, մի բառ անգամ չեր արտասանել: Այստեղ տիրող աշխատանքը և պայմանները նրան վարժեցրել էին լռակեցության — միշտ լուռ, միշտ անխոս... Նրա ներս ընկած կրծքից բառերի փոխարին դուրս են գալիս չոր հազ ու տնքոց...

— Յերեսուն և հինգ... — քթի տակ հազիվ մոմաւոց ծերունին: Խորը գերեզմանից հազիվ լսվող այս խուլ ձայնը զարհուրանք ազդեց գլխավորի վրա, փոր սարսուռ դգաց մարմնում...

Բայց հանկարծ սթափվեց ու մտածեց.

— «Սա անշուշտ մեկն է այն անհատներից, վորոնք պրոպագանդի նպատակով մնում են գործարաններում, խմբում են իրենց շուրջը բանվորներին, գինում նրանց ու կազմակերպում կուսակցական կամ արհեստակցական միությունների շարքերում, համարձակ ու վստահ խոսում են միտինգներում և ժողովներում, իսկ ժողովրդական շարժումների ժամանակ իրենց այս խուլ ձայնով ընդունակ են վտոքի կանգնեցնելու միլիոնավոր մարդանեք...»

— Ասացե՛ք խնդրեմ, հրապարտիչ չեյի՞ք գալիս դուք 1905 թ. միտինգներում:

— Վնչ, — կարճ կտրեց ծերունին:

— Պատգամավոր չե՞ք չեղել:

— Չե՛ վոր ձայն չունեմ, — հազիվ լսելի խուլ, խուլոտ ձայնով պատասխանեց ծերունին:

Նրա հազը բռնեց: Ինչ-վոր բան շարունակում էր խոսել: Սակայն գլխավորը վոչինչ չէր հասկանում նրա խոսածներին:

— Սլօժ կատարյալ հանգիստ ե պետք ձեզ,—ասաց գլխավորը և մի քայլ մոտեցավ ծերունուն:— Յես կմիջնորդեմ դործարանի վարչութիւն առաջ, վոր ձեզ մշտական կենսաթոշակ նշանակվի:

Ծերունին գլուխը շարժեց: Յանկունում էր պատասխանել, սակայն չկարողացավ: Մի փոքր շունչ առնելուց հետո նա իր վերջին ճիգերը հաժարեց և ասաց պարզ ու վորոշ...

— Ձե՛ վոր յես պատգամավոր եմ...

— Ո՛ւմ կողմից ընտրված,—զարմացած հարցրեց գլխավորը,

— Ահա՛ նրանց...—ծերունին մատով ցույց տվեց դետինը:

— Ո՛վքեր են նրանք... ո՛ւմ մասին եք խոսում:

— Վորոնք գնացին... վորոնք չկան...

— Ո՛ւր գնացին... ո՛վքեր,—նորից կրկնեց գլխավորը:

— Այնտեղ... դամբարանները...

Լսվեց սուլիչի ձայնը: Աշխատանքները կանգ առան դործարանում: Ծերունին բանվորական շապիկը հանեց, մի կողմ գլխից և դադարեցրեց իր-աշխատանքը:

Հեռվից լսվում էին տուն վերադարձող բանվորների խոսակցութեան ձայները:

Ուղադուրս ընկավ դործարանում: այլևս չէր լսվում մեքենաների չիկչիկոցը: Այս խաղաղութիւնը խանգարում էր չերբեմնակի լսվող ծերունու չոր հազը:

Հետզհետե ծերունու հազը սաստկացավ: Շնչել այլևս դժվարանում էր: Աչքերը փոս էին ընկել, և մի անորոշ աղերսական հայացքով կտրծեա նայում էր հեռունները...

Այս կրկին հազաց, մինչև վեր շունչը կտրվեց, աչքերը մըթնեցին, և շնչասպառ գլուխից դետին...

Գործարանում մնացած բանվորներն անմիջապէս շրջապատեցին նրան...

1. Նկարագրի բանվորի առողջապահական դրութիւնը քիմիական արդյունաբերութեան մեջ:

2. Վեր ժամանակին և վեր յերկրներին ե վերաբերում այս հողմածրկնչից և այդ յերևում:

3. Աշխատանքի պաշտպանութեան պայմաններն ինչպէս են կապիտալիստական յերկրներում և ինչպէս մեզ մոտ: Ինչով ես բացատրում այդ տարբերութիւնները:

4. Ինչպէս են աշխատապանութեան պայմանները ձեզ մոտ:

անցատված—բաժանված, զատված
վերահասու լինել—իմանալ, տեսնել
զեկանալ

արտակարգ—անսովոր
ուրվական—սովոր
սթափվել—ուշքի գալ
դամբարան—գերեզման

48. Հունվարի 9-ը

Ձմեռվա մի սաստիկ ցուրտ առավոտ էր, 1905 թվի հունվարի 9-ին (22) Լենինգրադի բանվորական թաղերից ահագին ամբոխ էր առաջ շարժվում: Առաջից տանում էին թագավորի ու սրբերի պատկերները, յետևից դնում էին բանվորները, բանվորուհիներ ու նրանց յերեխաները տոնական հագուստներով:

Ուր էլին գնում և ինչո՞ւ:

Մեզն ու կարիքն էին ստիպել 'նրանց' սիրտ անել թագավորի մոտ դնալ ու խնդրել, վոր իրենց պաշտպանի հաջուստներից ու վոստիկաններից:

Թագավորին ուղղած իրենց խնդրում նրանք գրում էին.

«Թագավոր, մենք՝ բանվորներս, մեր կանայքն ու յերեխաները և մեր ծերունի ծնողները լեկել ենք քեզ մոտ արդարություն և պաշտպանություն խնդրելու:



«Մենք ծայր սղջատության ենք հասել մեզ ծանրաբեռնում են անտանելի աշխատանքներով, մեզ անպատվում են, մեզ մարդու տեղ չեն դնում, մեզ ստրուկ են համարում, վոր պետք է միայն համբերենք ու լռենք: Նլ ուժ չմնաց, թագավոր, մեր համբերությունը կտրվում է, հասել է այն սոսկալի բոլեն, յիրք մեռնելն ավելի լավ է, քան չտեսնված անարգանքներ կրելը»:

Յերկու հարյուր հազարից ավելի բանվոր-ամբոխ մոտենում էր թագավորի պալատին:

Գնում ելին հանդիստ, առանց լերդերի, առանց կարմիր զրոշակների... Գնում ելին խնդրելու, աղաչելու...

Յեզ հանկարծ՝ հրացանի կրակ:

Առաջին շարքերում շփոթութիւն ընկավ. կարծեցին, թե ինչ-վոր սխալ բան կատարվեց. շարունակեցին առաջ գնալ, նորից կրակեցին:

Ամբոխի առաջ յեւան կապակներ՝ մերկացրած սրերով. աղաղակ բարձրացավ...

Մեկն ընկավ կուրծքը վիրավոր... ամբողջ կանգ առավ...

«Միթե Հպիտի հասնենք թագավորին, միթե կրակում են մեզ վրա», — շնչացին ամենքը:

Հինգ հազար հողի վիրավորվեց, հազար լերկու հարյուր տասնվեց հողի սպանվեց. և այդ բոլորը մի սրում, Արյունոտ կերակրի որը, հունվարի 9-ին (22):

Լավագույն բանվորները հեռ թագավորն այս ձևով հաշիվ մաքրեց:

Այդ որից բանվորները հասկացան, վոր քանի թագավոր կա, նա միշտ բուրժուազիայի կողմը կլինի, բանվորն որ չի ունենա, պետք է դահից վանգել թագավորին:

«Բանվոր դասակարգը քաղաքացիական կռիւի մի մեծ դաս բաժանացավ,— գրում եր Իլիչը այն ժամանակվա «Վպելոդ» թերթում.— պրոլետարիատի հեղափոխական կրթութիւնը մի որում այնքան առաջ գնաց, վոր չեր կարող նա առաջ գնալ ամիսներում և տարիներում:

«Հեղափոխական մոմենտի ամենամեծավոր խնդիրներից մեկը դառնում է ժողովրդի զինումը»:

«Միայն զինված ժողովուրդը կարող է ժողովրդական ազատութիւն ձեռք բերել»:

1. Ինչո՞ւ լեր ժողովուրդը գնում ցարի մոտ:

2. Ինչո՞ւ պատասխանեց ցարը:

3. Ի՞նչ է գրում Լենինն Արյունոտ կերակրի մասին:

4. Ի՞նչ դաս հանդիսացավ «Արյունոտ կերակրին» բանվոր դասակարգի համար:

վոստիկան—գարդափոշ
անարգանք—վիրավորանք, նա-
խատինք
ամբոխ—հասարակ ժողովուրդ

շնչալ—փափսալ
մոմենտ—ժամանակ, վայրկյան
մերձավոր—մոտիկ

Կ Ա Ր Դ Ա

Ա. Շահգյալի. — Գյուղացին ու բանվորը ցարի ժամանակ, գինը 8 կոպեկ:

49. Գործաթողներ յերեխաները

Ջենտլալուս, յերկաթուղու կայարանի առջև, փոքրիկ հրապարակի վրա հավաքվել և խուռն ամբոխ, վորի մեծ մասը բանվորներ են: Փողփողում են բանվորական կազմակերպութունների դույնը գողնալն զրոյակները: Շողողում են զրոյակների վոսկենկար փրջերը, անկվածներն ու ծոպերը, հուրհրատում են փոսկենեուս տեգերը կաթերի ծալքերին, խշխշում և մետաքսը, և մարդկանց ամբոխը՝ հանդիսորեն տրամադրված՝ թնդում և կիսաձայն յերգող յերգեցիկ խմբի նման:

Նրա գլխավերիը, բարձր պատվանդանի վրա կանգնած էր դեղեցիկ արձանը Կուսմբոսի—ալն յերազողի, վարը շատ տառապեց այն պատճառով, վոր հավատում էր, և հաղթեց, վորովհետև հավատում էր: Այժմ ել նա նայում և ներքև մարդկանց, վորպես թե ասելիս լինեի իր մարմարյա շրթունքներով:

— Հաղթում են միայն իրենց գործին հավատացողները:

Նրա վոսների մոտ, պատվանդանի շուրջը, յերաժիշաները դարսել են իրենց պղնձյա յերաժշտական գործիքները, և պղինձն արեկտակ շողողում և վոսկու պես:

Կոր կիսաշրջանով կանգնած և յերկաթուղու կայարանի մարմարյա ծանրանիստ շենքը՝ թևերը տարածած, կարծես թե ուզում և գրկել մարդկանց:

Նավահանգստից լսվում և շոգենավերի ծանր հնքը, ջրի մեջ գործող պտուտակի խուլ ձայնը, շրթաների շառաշը, սուրոցներ ու կանչեր: Հրապարակի վրա հանգիստ և Ողը հեղձուցիչ և և ամեն ինչ վողողված տաք արևի շողերով: Տների պատշգամբներում և պատուհաններում նստած ու կանգնած են սպիտակազգեստ կանաչ՝ ծաղիկները ձեռքերին, գուգված-զարդաբոված յերեխաներ՝ ծաղիկ ների նման:

Դեպի կայարան սուրալով՝ սուլում և յերկաթուղու շոգեկառքը:

Ամբոխը ցնցվեց: Սև թռչունների նման վերև թռան միջանի ճմուռ զգակներ: Յերաժիշաներն առան գործիքները: Ինչ-վոր տարիքոտ լուրջ մարդիկ հագուստը կարգի բերելով՝ առաջ յեկան, դիմեցին ամբոխին և ինչ-վոր ասացին՝ ձեռքերը շարժելով աջ ու ձախ:

Ծանր ու առանց շտապելու ամբոխը յիտ-յիտ բաշվեց՝ լայն անցք բանալով դեպի փողոց:

— Ո՛ւմ են դիմավորում:

— Պարմայից յեկող յերեխաներին:

Այնտեղ՝ Պարմայում գործադուլ և Գործատերերը չեն զիջում:

Բանվորները նեղն են ընկել, նրանց յերեխաներն սկսել են հիվանդանալ սոփածությունից. և ահա, հալաքելով նրանց, ուղարկել են Ջենովա, վոր ընկերները խնամեն:

Կայարանի սլուների յետևից յերևում և առաջ ե շարժվում փոքրիկ մարդկանց մի թափոր կանոնավոր շարքերով: Նրանք կիսամերկ են և իրենց ցնցոտիների մեջ թվում ե թե ծածկված են մաշոփ, կարծես ինչ-վոր տարրերնակ փոքրիկ գազաններ լինեն: Առաջ են շարժվում իրար ձեռքից բռնած, ամեն մի շարքում հինգ հոգի: Նրանք շատ փոքր են, փոշոտ, պարզապես հոգնած: Նրանց դեմքերը լուրջ են, բայց աչքերը վառվում են կալտառ ու պարզ. և յերբ յերաժշտությունը նրանց դիմավորելով՝ նվազում ե Գարիբալդիի հիմքը, այդ նիհար, սրված ու սովահար դեմքերին գոհունակության ուքախ ժպիտ ե փայլում:

Ամբոխը վողջունում ե ապագայի մարդկանց խլացուցիչ աղաղակով. նրանց առջև խոնարհվում են դրոշակները: Վռոնում են ողնձի շեփորները՝ խլացնելով և շլացնելով յերեխաներին: Նրանք միջիչ շնչել են ալդ ընդունելությունից, մի վայրկյան յետ են ընկնում և հանկարծ, կարծես մեկեն, ձգվում են, բարձրանում, միաձուլվում և հարյուրավոր ձայներով, բայց կարծես մի կեծքից լսած կանչով աղաղակում:

— Կեցցե՛ յերիտասաբդ Իտալիան:

— Կեցցե՛ յերիտասաբդ Պարման,—թնդում ե ամբոխը, գրոհ տալով նրանց վրա:

— Կեցցե՛, կեցցե՛.—աղաղակում են յերեխաները, դորշ սեպի պես զցվելով ամբոխի մեջ և չքանալով ափսոսել:

Հիվանդանոցների պատուհաններում, տների կտուրներում սպիտակ թռչունների պես թռթռում են թաշկինակներ: Անտեսից մարդկանց գլուխների վրա ծաղիկների անձրև ե թափվում, և ուրախ, բազմազույ աղաղակներ են լսվում:

Ամեն ինչ տոնական կերպարանք ստացավ, ամեն ինչ կենդանացավ, և դորշ մարմարը ծաղկեց ինչ-վոր պայծառ պուտորով:

Մածանվում են դրոշակները, վերև թռչում գլխարկներ ու ծաղիկներ: Տաբիբով մարդկանց գլխավերեք բռնում են մանկական փոքրիկ գլուխներ: Մերթ յերևում, մերթ չքանում են սև թաթիկներ՝ ծաղիկներ վորսալով ու վողջունելով, և ողում անընդհատ թնդում ե հուժկու աղաղակը:

— Կեցցե՛ սոցիալիզմը:

— Կեցցե՛ յերիտասաբդ Իտալիան:

Բանվորական ամբոխը ձեռքից-ձեռք ե խել գրեթե բոլոր յերեխաներին: Նրանք նստած են հասակավոր մարդկանց ուսերին:

սեղմված են ինչ-վոր հաստադեմ բեղ ու միբուքով մարդկանց լայն կրծքերին: Յերաժշտության ձայնը հաղիվ է լսվում աղմուկի, ծիծաղի և տղաղակների մեջ:

Ամբոխի մեջ դես ու դեն վազում են կանայք՝ վերցնելով մընացած չեկվոր յերեխաներին՝ և կանչում ինքից բաց:

— Դուք յերկման եք վերցնում, Աննիտա:

— Այո: Դուք ե՞լ:

— Յես մեկին վերցնում եմ վոտը կտրած Մարգարիտի համար:

Ամեն տեղ նկատվում է ուրախ մոգեկորություն, յերևում են տոնական դեմքեր, բարի աչքեր: Արդեն տեղ-տեղ դործադուլավորների յերեխաները հաց են ծամում:

— Մեր ժամանակում այս մասին չէին մտածում,—ասում է մի ծերունի բանվոր սև սիգարն ատամների մեջ սեղմած:

— Բայց տեսնում եք՝ ինչքան հասարակ բան է...

— Այո: Հասարակ և խելացի:

Ծերունին սիգարը հանեց բերանից, նայեց ծայրին և մի թառանչ քաշելով թափ տվեց մեխիբու: Հետո, տեսնելով կողքին Պարմալից յեկած յերկու մանուկների, վորոնք ըստ յերևութին յեղբայրներ ելին, դեմքը խոփոռեց.—մանուկները նայում եյին նրան լուրջ,—գլխարկը քաշեց մինչև աչքերը և ձեռքերը տարածեց: Մանուկները, իրար սեղմվելով, հոնքերը կիտեցին և յետ-յետ քաշվեցին: Ծերունիը հանկրծ պաղպեց և ծուղրուղու կանչեց՝ աքաղաղի կանչին շատ նման: Յերեխաները քրքջացին, մերկ վտանների կրունկներով ծածկելով քարերը: Իսկ ծերունիը վեր կացավ, գլխարկն ուղղեց և, սլոնելով, թե արավ ամեն բան, ինչ վոր հարկավոր էր, յերերուն քալեբով հեռացավ:

Պարզալով գալիս է սևահեր մի շենոյուհի՝ ձեռքից բռնած յոթ տարեկան մի յերեխայի, վորի վոտներին փայտե վոտնամաններ են և գլխին՝ մինչև ուսերը ծածկող դորշ գլխարկ: Յերեխան թափահարում է գլուխը, վորպեսզի գլխարկը յետ գցի ծոծրակի վրա, իսկ գլխարկը միշտ ընկնում է նրա դեմքին: Կինը գլխարկը թոցընում է նրա փոքրիկ գլխից և ողի մեջ թափահարելով՝ յերգում է ու ծիծաղում: Տղան նայում է նրան, գլուխը յետ գցած. նա ամբողջովին ժպիտ է կարվել, հետո վեր-վեր է թռչում, վորպեսզի ձեռքը հասցնի գլխարկին, և յերկուսն ել չքանում են:

Բարձրահասակ մի մարդ՝ կաշե գոգնոցով, ահագին մերկ ձեռքերով, ուսն է առել վեց տարեկան մի աղջիկ՝ մկան պես դորշ. իսկ նրա կողքին քալում է մի կին, վոր ձեռքից բռնած տանում է կրակի պես շեկ մի տղայի:

Յեւ կաշվե զոգնոցով մարդը, բարձր, հաղթանակող ձայնով քրքշոււմ ե ու, վերսւկեր նետելով իր փեքրիկ բեռը կապույտ ոգի մեջ՝ ազադակում:

— Կեցցե՛ք լերիտասարդ Պարման:

Մարդիկ հեռանում են՝ տանելով իրենց հետ յերեխաներին: Հրապարակի վրա մնում են տրորված ծաղիկներ, կոնֆետներ, թղթեր, իսկ նրանց վերեւ՝ Նոր Աշխարհը:

Փողոցներից, կարծես ահագին շեփոճներից, հոսում են դեպի նոր կյանք գնացող մարդկանց դվարթ աղաղակները:

1. Ինչ՞ով բացատրել գործաթողների լերեխաների սրտագին ընդունելութիւնը:

2. Բռնվոր դասակարգի ի՞նչ բնորոշ գիծն է յերևում այս հոգեվածու՞մ:

3. Վժիռն է «Յերիտասարդ Իտալիան»:

անկված—հյուսվածք, գործվածք
ծոպ—փնջիկ, պուխ
տեգ—նիզակ
վոսկեհուռ—վոսկուց կռած

գորշ—մուգ
սեպ—չվի
քրքշալ—հրեռալ
շեփոք—փչելու գործիք և

50. Առաջին գաղտնի տպարանը Բազմում

Ռուսաստանում գաղտնի տպարաններից լավագույնը Բազմինե-
եր, վերը հիմնել եր Լադոն Կեցխովելին: Այդ թվին ելին կազմա-
կերպվել առաջին բանվորական խմբակները:

Գաղտնի գրականության պահանջը շատ մեծ եր. անհնար եր
արտասահմանից մեծ քանակութեամբ ստանալ, իսկ Թիֆլիսի տպա-
րանը չեր կարող Բազմի պետքերին ծառայել: Անհրաժեշտ եր սե-
փական տպարան ունենալ: Բայց վճիռեղից փող ճարել:

Կեցխովելին խորամանկ միջոցների գիծեց. գրեց լեզրորդ, թե
ինքն ընդմիշտ հրաժարվել է հեղափոխական գործունեութեանից,
և թե իրեն փող է հարկավոր ուսումը շարունակելու համար: Յեղ-
բայրը շատ ուրախացավ, վոր Լադոն ճեղքել յե լեկել, և ուղարկեց
նրան 200 ռուբլի: Այդ փողով և Թիֆլիսի ընկերների աված 100
ռուբլով մենք շինել ավինք մի փոքրիկ մամուլ, նրա այս ու այն
մասը պատվիրելով զանազան արհեստանոցներում: Տառերը համար
լես գնացի Թիֆլիս, ու վերջապես հասավ տենչայի որը, մենք տպե-
ցինք առաջին թուղթիկը՝ վրացերեն ու ռուսերեն:

Բայց, ավանդ, մամուլն այնքան փոքր եր, վոր միքանի որից

հետո ել չեր կարող մեզ բաժարարել: Վորոշեցինք զնեւ «խակա-
կան» մեքենա, «ամերիկական»: Նահանգապետից հեշտությամբ ըս-
տացանք իրավունք կեղծ վկայթղթերով: Գտանք նաև մեքենան,
բայց 900 ու. վճարել դրան, իհարկե, մեր ուժերից վեր եր:

Շնորհիվ Բազլի միջանի ընկերների աջակցության մեզ հա-
ջողվեց հավաքել 800 ու., մնացած փողը յես տվի իմ պարգևից, վոր
յես ստացա իմ ծառայության տեղից՝ լերկաթուղու վարչությու-
նից: Գնեցինք մեքենան և առողջ-փառող տեղափոխեցինք մեր նոր
բնակարանը, Վորոնցովյան փողոցը:

Տպարանը կազմակերպելուց հետո մենք շուտով կապ հաստա-
տեցինք «Բսկրա» յի հետ (արտասահմանում հրատարակվող Ռուս.
Սոց.-Դեմոկրատական Կուսակցության թերթը) և սկսեցինք գրա-
դրություն ընկեր Լենինի հետ: Արտասահմանից ստանում էյինք
նույնիսկ «Բսկրա»-ի մալրերը և հրատարակեցինք «Բսկրա»-յի 4
համարը:

1901 թ. վերջերին «Բսկրա»-յի ստացումը փոքր ինչ դադարեց:

Մալրերը հատուկ տուփերում դասավորված ստանում էյինք
զանազան ապահով հասցեներով: Յեվ ահա տուփերից մեկը մաք-
սատանը շարժվում ե, և մալրերը ցրիվ գալիս: Զինովիկները գլխի
չընկան, թե ինչ բան է սա, բայց իրենց ծախու հոտառությամբ
ինչ-վոր վատ բան գուշակելով, հայտնեցին ժանդարմներին, և հետե-
վանքը յեղավ հասցեատիրոջ՝ մեր ընկերուհու ձեռքակալումը: Նա
պատվով տարավ յերկարատև բանտարկությունը՝ հրաժարվելով ա-
մեն տեսակի ցուցումներից:

*
* *

Հարց բարձրացավ տպարանը մի ալլ վայր տեղափոխելու:
Գտանք նոր բնակարան և սկսեցինք մեքենան ու տառերը տեղա-
փոխել: Տանտիրոջ՝ թուրք Զիբայիլին այնպես եր հասկացրել Լա-
դոն, վոր սա սովորաթղթի արհեստանոց ե, ինքը նրա տերն ե,
մենք՝ նրա բանվորները:

Զիբայիլին ու Կեցիսովիլին շատ շուտով մտերմացան ու նույն-
իսկ «ախպերացան»: Իսկ ով արևելքում մտերմանում կամ ախպե-
րանում ե մեկի հետ, ապա դա հաստատ գրավական ե, վոր նա
յերբեք չի դավաճանի նրան: Շատ շուտով մենք այդ զգացինք մի
ցավալի փորձով:

Մեր ընկերներից մեկը տառերը տեղափոխելիս, վատան իր
ուժին, շալակեց 80—90 կիլո: Բայց ինչ: Զանապարհին, մի հայտնի
տեղում, յերկաթուղու կայարանում, թուրք կտրվում ե և տառերը


ցրիվ են գալիս: Հավաքվում ե անագին բազմութուն, կողմնակի հետաքրքրվողներ, «պաշտոնական մարդիկ», դեպուլի կառավարիչը, ժանդարմը: Ձերբակալութիւն, խուզարկութիւն, և վերջը ծուղակն ե ընկնում մեր գործի հոգին՝ Հադո Կեցիսովիին:

Յես և մեր մյուս ընկերակիցը դեռ ազատ եյինք: Պետք եր փրկել տպարանը:

Դարսեցիք մեքենան ու տառերը արկղներում, բերինք բեռնակիր սայլ և... անսպասելի դիպված: Զիբրայելը, վորին մենք ասել ելինք, թե Դավիթը (Կեցիսովիին) հանկարծակի հեռացել ե Բազմից կնոջ մահման պատճառով, սկսեց կասկածել, չլինի թե մենք ուզում ենք թալանել մեր տիրոջ՝ նրա բարեկամ Դավթին:

Հորդորներն ու համոզելը չազդեցին նրան. նա ասում եր.

— Արտաքուստ դուք լավ մարդիկ եք լերևում, իսկ գործով կարելի յե սրիկաներ, գողեր եք, ուզում եք իմ բարեկամին թալանել:



Մենք պնդում ելինք մերը, և վորովհետև րոպե առ րոպե սպասում եյինք ժանդարմներին, բնականաբար սաստիկ հուզվում ելինք, վոր ավելի կասկածի մեջ եր զցում Զիբրայելին: Մենք լսեցինք, թե ինչպես նա թուրքերեն ասաց իր բանվորին.

— Գնա, վոստիկան կանչիր: Ա՛ա՛ եստեղ գողեր կան, պետք ե բռնել նրանց:

Այն ժամանակ վճռեցինք ամեն ինչ ասել Զիբրայելին:

— Դավիթը բռնված է, ժանդարմները շուտով կգան, տպարանը կվերցնեն, քեզ ել Սիրիբ կտանեն:

— Մօնք կասենք, վոր դու մեր ընկերն ես և մեզ ոգնում եիր դադտնի բաներ տպելու:

Մանրամասն բացատրեցինք մեր զբաղմունքը, և Զիբբայելը վայրկենապես փոխվեց, գունատվեց, դողդուղաց և... դուրս վազեց: Հետո մենք իմացանք, վոր նա հանդիպում է դեպի մեզ յեկող վոստիկանին, կարողանում է համոզել, վոր իրարանցումը կեղծ էր:

Բայց և այնպես Զիբբայելը չթողեց, վոր տպարանը տեղափոխենք, ասելով, վոր մենք կընվինք, իսկ տպարանը ինքը կպահի:

Զիբբայելն իր խոսքը կտատարեց. տպարանը թաղցրեց և հետագայում նա շատ ծառայութիւններ մատուցեց Բագվի բանվորներին:

Նույն գիշերը ևեթ յես հանդիպեցի իմ բարեկամ Կեցիսովելուն մի «հաճելի» միջավայրում՝ Բագվի բանտում:

Յերկու շաբաթից հետո մեզ տեղափոխեցին Թիֆլիս, հռչակովոր Մետեխի բանտը: Այնտեղ պահապան զինվորներից մեկը՝ բանալի վարչութիւնն զրգումով ու կաշառումով, գնդակահարեց ընկեր Կեցիսովելուն:

1. Բանվոր դասակարգի պաշտարի վճիռ շրջանին է վերաբերում այս հոդվածը:

2. Խնչ պայմաններում եր տարվում ընդհատակյա և դադտնի աշխատանքը:

3. Հնարավոր եր բանվոր դասակարգի հաղթանակը առանց ալգ դժվարին զայմանների և լուրջ նախապատրաստութիւն:

ավադ—ափսոս
մայր (տառի)—այս կամ այն
առոր ձուլելու համար մայր տառ
մաքսատուն—տամոսնի

ստվարաթուղթ—կարտոն
ծուղակ—թակարդ
հորդոր—խրախուսանք, քաջալերութիւն

Կ Ա Ր Դ Ա՝

Մեզվեղեվա յեվ Տեր-Պետրոսյան — Հեղափոխութեան հերոսը, գրեր 25 կոպեկ:

51. Դավաճանք

Գործարանը կանգնած էր, Լոեց մեքենաների գորգացը, շոգու-
ադժուկը, Անվերդով լուսթյունը, վորի մեջ ընկղմվեց քաղաքը, ան-
հանգստացրեց բնակիչներին: Ամբողջ քաղաքում խոսում էլին Սե-
լիմ-բեկի գործարանում տիրող դործադուլի մասին: Այդ բառը բնա-
կիչներն արտասանում էին հարգանքով: Թվում էր, թե այդ բառի
մեջ թաղնված կան զարմանալի հնարավորություններ: Նա գործա-
րանում կանգնեցրեց մեքենաները, մարեց կրակները: Գործադուլը
փոխեց բանվորներին: Նրանք շրջում են քաղաքում աշխուժ ու ինք-
նավստահ: Իսկ գործարանատերը մոայլ նստած է տանը և չի յե-
րևում: Յեվ քաղաքի բնակիչները համոզված էին, վոր այս ամենը
կատարվում է այն պատճառով, վոր կյանք մտալ «գործադուլ» բառը:

Փոքրիկ քաղաքի բնակիչները վոչինչ չգիտեցին դասակարգա-
յին պայքարի մասին և չէին յենթադրում, վոր վոչ թե բառը վա-
խեցրեց Սելիմ-բեկին, այլ բանվորների միությունը՝ իրենց շահերի
համար մղվող պայքարում:

Գործարանը դատարկվել էր, սակայն Մոհարրամի վոքերիկ սե-
նյակում չէին դադարում աշխուժ հավաքուլթները: Թե՛ տուսվո-
տը, թե՛ ցերեկը, թե՛ գիշերը խոնվում էին այստեղ բանվորները և
ուշագիր լսում այն ամենը, ինչ ասում էր նրանց Մոհարրամը, յեր-
կար մտածում էին նրա ասածների մասին և գտնում էին, վոր
նա իրավացի յե:

Մոհարրամը յերբեք չէր յեղել վոչ առաջնորդ, վոչ կազմակեր-
պիչ: Բայց յեկավ սուր վայրկյանը, և նա դարձավ թե՛ մեկը, թե՛
մյուսը: Անընդհատ խորհրդակցությունների մեջ անցնում էր որը, և
միայն դիշերը նա հնարավորություն ուներ մտածելու կատարվող
զեպքերի մասին: Յեվ այդ վայրկյաններին նա կարիք էր գտում մի
մարդու, վորի հետ կարելի լիներ խորհրդակցել և քննել առաջա-
ցած հարցերը: Նա հիշեց այն յեկվոր ընկերոջը, վոր հարստացրեց
իրեն գիտելիքներով, Վորջման հարկավոր էր սուր մարդը հիմա: Մո-
հարրամը վորոշեց գրել նրան և հայտնել իրենց գործադուլի մասին:
Նա շտապ թուղթ հանեց, նստեց սեղանի մոտ, տարտամ վառվող
ճրագի առջև, և սկսեց գրել: Մի թերթը չհերիքեց: Նա հանեց յեր-
կորդ թերթը և շարունակեց գրել:

Ուշ գիշեր էր, յերբ նամակը վերջացրեց, ծրարեց և պատրաս-
տեց ուղարկելու:

Պատուհանի մոտ լսվող շրջունը Մոհարրամին հարկադրեց ըզ-
գաւշանալ: Փակված փեղկերից ափս կողմը մեկը կամացուկ շարժ-
վում էր, աշխատելով աղմուկ հանել: Մոհարրամն անձայն բարձրա-
ցավ և մոտեցավ դռանը: Նա միանգամից բաց արեց դուռը և թռավ
դուռը: Պատուհանի մոտից վախեցած յես ցատկեց մի մարդկային
կերպարանք: Նա ծանոթ թվաց Մոհարրամին:

— Սալման, դու չես, — զարմացած բացականչեց Մոհարրամը:
Բայց փախչողը ձայն չտվեց: Նա ցատկեց ցանկապատի վրա-
յով և կորավ մթության մեջ:

— Նրան ի՞նչ է եստեղ հարկավոր, — զարմացած մտածում էր
Մոհարրամը: — գուցե նա ուզում է միանալ մեզ, բայց վախենում է
զալ ցերեկով: Բայց այդ դեպքում նա ինչո՞ւ փախավ:

Հոգնածությունը հարկադրեց նրան սենյակ վերադառնալ: Նա
փակեց դուռը, մարեց ճրագը և հենց վոր ընկավ չոր թախտի վրա՝
խփուկ ջրեց:

Առավոտվա գորշ մշուշում վոստիկանությունը շրջապատեց Մո-
հարրամի տունը: Յերբ վոստիկանների մեջ չերևաց պրիստավը,
դուռը պոկեցին և սենյակ լցվեցին զինված վոստիկանները:

Մոհարրամն արթնացավ կոպիտ հրոցից, ուզեց վեր կենալ,
բայց չկարողացավ: Նրա ձեռները շատ ամուր կապված էին պա-
րաններով: Սենյակում վառեցին ճրագը, և Մոհարրամը զարմանքով
դիտեց հավաքված մարդկանց: Այստեղ էր քաղաքի ամբողջ վոստի-
կանությունը, և նրանց մեջ էր Սալմանը:

Պրիստամեն արհամարհանքով գլխով նշան արավ Մոհարրամի
կողմը: Մի ափսոսանք և կոպիտ վոստիկան լուռ բռնեց Մոհարրամին
և սկսեց խուզարկել:

— Յույց տուր, թե նա վորտեղ ի՞նչ է թաքցրել, — հրամայեց
պրիստավը Սալմանին:

Սալմանը վրա ընկավ և վորսկան շան նման սկսեց քրքրել
Մոհարրամի իրերը: Նա շուռ տվեց անկողինը և հանեց նրա տա-
կից պատրաստի նամակը: Անկողնի մոտից Սալմանը ցատկեց դեպի
մութ անկյունը և սկսեց փորել կոխտած հողը:

Մոհարրամը կրճտեց ատամները և ուզեց ձգվել դեպի անկյունը,
բայց վոստիկանի ուժեղ ձեռքը պահեց նրան տեղում: Սալմանը բար-
ձրացրեց միջանի աղյուսներ և նրանց տակից հանեց նվիրական թը-
ռուցիկները և զրքուկները: Դրանք հանձնվեցին պրիստամին:

Այս կապոսած Մոհարրամին, վոստիկաններով շրջապատած,
տարան քաղաքի ամալի փողոցներով:

Վոստիկանների թողած սենյակը թողնում էր մռայլ տղավորութուն: Կարծես այստեղ տեղի չեր ունեցել մի դաժան ճակատամարտ, Հատակին, կահ-կարասիների կտորսանքների մեջ ընկած էյին Մոհարրամի պատառոտված ու կոխոտված զգեստները: Այդ ավերմունքը կատարված էր այն նպատակով, վորպեսզի նախազգուշացնեն նրանց, ովքեր կմտածեն զնալ Մոհարրամի ճանապարհով:

* * *

Մոհարրամը տաղնապով դես ու դեն եր ընկնում կամերում: Դանդաղ սահում է ժամանակը: Գունատվում է գիշերը, շուտով առավոտ կլինի: Յեթե նա կարողանար տեսնել բանվորներից մեկնումեկին և նախազգուշացնեք նրանց Սալմանի դավաճանության մասին, այն ժամանակ նա ասլև չէր մտածի փախուստի մասին: Նա համոզված կլիներ, վոր բանվորները կշարունակեն պաշտարը մինչև վերջ և կհաղթեն: Իսկ այժմ... Ինչո՞վ կվերջանա գործադուլը...

Հեռավոր, անորոշ մի ձայն գրավեց Մոհարրամի ուշադրությունը: Նա բարձրացավ սեղանի վրա, վեր թռավ և բռնեց շարդեց պատուհանի ապակին: Փշրանքները զնոցով ընկան հատակին:

Մոհարրամը հենվեց պատին և տագնապալից սրտով սկսեց լրսել: Ձայնը կրկնվեց և ավելացրեց Մոհարրամի սարսափը: Ձայնը գալիս էր գործարանի մեքենայից: Մեքենան գործի էլին զնում: Բայց Մոհարրամը չհավատաց իր լսողությանը: Նա բարձրացավ վոռների մատների վրա, շնչառությունը պահեց և սկսեց ակնջ դնել:

Գործարանային շշակի ձայնը, արթնացած զադանի վոռնոցի նման, վրդովեց լուսադեմի լուսթյունը:

Մոհարրամը դողաց անզոր բարկությունից և դադարվունքից: Ամեն ինչ կորավ: Գործադուլը վիժված է: Բանվորները պարտված են: Սելիմ-բեկն ու արխատավը ցնծում են:

Ո՛, յեթե այդ շշակը լիներ այստեղ, իր կողքին: Յիդ ժամանակ Մոհարրամը կհարձակվեր նրա վրա և իր ձեռքով կսեղմեր նրա կոկորդը:

Շշակը չէր լուռ: Նա վոռնում էր ու վոռնում, կարծես ուրախանալով և հաղթանակ տոնելով:

Մոհարրամին թվաց, թե հողը դողաց իր վոռների տակ: Ուրորվեցին բանտի պատերը, աչքերի առաջից մի կողմ լողաց պատուհանի գունատ բացվածքը: Մոհարրամը գիտակցութունը կորցրեց և ընկավ հատակին:

1. Բնութագրիր Մոհաբրամին և Սալմանին: Ի՞նչ ազդեցութիւններ ե կրել նրանցից յուրաքանչյուրը:

2. Վէճը շրջանից ե վերցված այս պատմվածքը. բանվորական շարժման վճիռ շրջանն և ներկայացնում:

անվրդով—հանգիստ, խաղաղ
ընկղմվել—սուղվել, սկել
խռնվել—խրար հրելով խիտ հավաքվել
տարտամ—անորոշ
շրջյուն—խշխշոց
ամայի—գատարկ

մռայլ—մութ, տխուր
դաժան—խիստ, անսիրտ
տազնապ—նեղ, վտանգավոր դը-
րություն
պարտվել—հաղթվել
ցնծալ—շատ ուրախանալ

52. Մետեխի բանտը

Մետեխի բերդը կանգնած ե ժայռի գլխին: Հին Գուռը լեքիաւս-
սարդի պես խաղում ե նրա վտոների տակ: Մերթ դարկում ե ժայ-
ռերին և փոխում նրանց վրա, մերթ գուրգուրում, փաղաքշում, լի-
զում ե նրա վտոները, մերթ քերում և ժայռերի դարավոր մո-
մուռը և քշում-տանում ե դեպի հեռուներ:

Միայն մի կողմից կարելի յե մոտենալ աչդ ամրոցին: Մի դիք
դառիվեր տանում ե դեպի ափն: Վերևը լեռկու կողմից նեղ անցքե-
րում ծվարել են դարլնոցները: Հազվադեպ ե, վոր նրանց քուրա-
ներում կրակ վառվի, հազվադեպ՝ լերը մի բան կոեն այնտեղ: Նը-
րանք բոլորը լուռ սպասում են, վոր ամրոցից նրանց մի վողորմու-
թիւն գա:

Պատահում ե, վոր բանտի վերակացուն վազում և շուտով
ձայն ե տալիս.

— Ահա՛մ, մի տասը մարդ վերցրո՛ւ հետդ և արի՛ բանտ:

Ադամն ու իր տղերքը լավ վարձատրության հոտն առնելով՝
բավականութիւնից ձեռներն են շփում: Արագ վերցնում են գոր-
ծիքներն ու լուռ, գողերի նման սողոսկում են դեպի ամրոց:

Ներքևը, շուկայի մոտ, նույն դառիվայրի վրա, փոքրիկ խա-
նութում առևտուր ե անում Դարչոն: Կուպր ու նալթ ե ծախում:

Յերկաթի շառաչը և շղթաների գնդոցը Դարչոյին դուրս են հա-
նում խանութից, և նա յերկար ժամանակ տխուր հայացքով ուղեկ-
ցում ե դարբինների լուռ խմբին:

Նրանք շուռ տվին նեղ միջափողոցը, դեպի դարպասները: Դար-
չոն դայրութից թափ ե անլիս գլուխը:

Սիրան ուղղում եր ամբողջ շուկայով մին գոռալ. «Մն կողմը

մտիկ տվեք, դահիճները գնացին կենդանի մարդկանց շղթայելու: Եւ այց Դարչոն մտածում եւ, վոր դրա համար կարող են նրան ուտացնել, այն եւ այնպես կուտացնեն, վոր... և նա ճնշում եւ գոռոցը սրտի խորքում և կրծքից հառաչանքներ եւ արձակում:

Այնտեղ հազարներով... վախով չորս կողմն եւ մտիկ տալիս և բարկացած ասում. — շղթայում են:

Նստում եւ կարոտ սեղանի մոտ և բռունցքներն ամօթահար սեղմելով աչքերին՝ լուռ արցունքներ եւ թափում:

Այդ փոքրիկ խանութում, ալդ դադաղի մէջ նա անց եւ կացրել իր ամբողջ կյանքը:

Նա քսան տարեկան եր, յերբ հայրը մեռավ: Նա միայն ալդ ժամանակ հասկացավ, վոր ինքն ալիս չի կարող իր արհեստը փոխել: Տանը յոթ հոգի չեն: Շուտով նա վերջնականապես հաշտվեց ալդ մտքի հետ, վոր ինքը պիտի նստի և առևտուր անի ալդ դադաղի մէջ և այդ մոայ բերդի տակին:

Յերբեմն մահւման պես խիստ մի ցանկութուն եւ դարթնում մեջը՝ վեր կենալ, կորչել մի տեղ, հեռու ալդ բերդից, թեկուզ սատանայի մոտ:

Մի անգամ, առավոտյան, յերբ նա խանութը բաց եւ նստւմ, բերդի տակից ուժեղ պահակով անցնում եւ կալանավորների մի խումբ, վոր գնում եւ ծանրաբայ, բեռնավոր, շղթաների շառաշով:

Աշնան վաղ առավոտ եւ: Մարդ չկար փողոցներում:

Կալանավորներն անսպասելի կերպով շփոթվեցին: Նրանցից մինը, մոխրագուլն բաճկոնով մի չերիտասարդ, քայլելու ժամանակ շղթաները շարտելով դուրս պրծավ շրջանից և սկսեց շուկայով փախչել: Նրա չետեից չերկու պահակ վագեցին և վագելով փախչողի չետեից՝ կրակեցին հրացաններն ու գոռացին:

— Բռնեցե՛ք, բռնեցե՛ք:

Յերիտասարդը փախչում եւ դեպի Դուռը: Կամուրջի գլխին հայտնվեց վոստիկանը ատրճառակը ձեռին, պատրաստ՝ փախչողին տեղն ու տեղը վալը գցելու: Սա նկատեց սպառնալի ատրճառակը, նստեց և սկսեց նայել մերթ առաջ՝ վոստիկանին, մերթ չետ՝ վրա հասնող պահակներին: Հնար չկար: Յեւ նա գորտի ցաակումներով նետվեց մինչև կամուրջի ճաղերը և անսպասելի կերպով նրանց վրա լարվ իրեն գցեց շուրը, հոսանքի զարուբելի ջրապտուտի մեջ: Մոտ վագեցին պահակները, մոտեցավ վոստիկանը և չերեքով, կարծես խոսք մեկ արած, սկսեցին կրակել ջրի մեջ:

Հրացանաձգութունը դադարեցրին, մոտ յեկավ պահակապետը, ինչ-վոր բան փսփսացին, թուղթ հանեցին և գլխով նշան արին Դարչոյին՝ մոտենա իրենց:

Յե՛վ Դարչոն ստորագրեց: Կալանավորը փախավ, կամուրջից իրան դցեց ջրապտույտը— սա ճիշտ է. ձիշտ է և այն, վոր նրա վիզը ղնդակով ծակված է, և նա մեռավ: Նա այդ կարող է վկայել, վորովհետև փախչողի վզին նա արյուն նկատեց: Յե՛վ վոր նա մեռավ, առանց տատանվելու հաստատում է նա, վորովհետև ջրապտույտը քշեց նրան սատանայի ողակի մեջ ինչպես փախսի կտոր և միայն մի յերկու անգամ դիակը դուրս հանելով ջրի լերեսը՝ տարավ իր խորքը, վորպեսզի ել լերքեք ցույց չտա նրա արյունոտ վիզը:

Պահակապետը քառակուսի ծալեց թուղթը և դրեց դրպանը: Նըրանցից ամեն մինը հերթով՝ զգացված, սեղմեց վոստիկանի ձեռը և վերադարձավ կալանավորներին խմբի մոտ:

Դարչոն վերադարձավ իր խանութը, նստեց սեղանի մոտ, գըլուխն առավ ձեռներին մեջ ու մնաց այդպես: Յերբ նրան արթնացըին այդ զրույթյունից, կալանավորներն այլևս այնտեղ չեյին:

1. Այս պատմվածքը վոր ժամանակի կյանքից է առնված:
2. Յարի իշխանութւան դեմ կռվելով ինչպիսի քաջադործություններ եյին ցույց տալիս հեղափոխականները:
3. Կալանավորն ինչո՞ւ իրեն ջուրը նետեց:
4. Վերջիվերջո՞ հեղափոխականների այդ համարձակ պայքարն ինչ հետևանք ունեցավ:

53. Կիսատ տունը

Նդ են ժամանակ եր, յերբ ամեն ինչ շարժվեց, յերբ մութ խորքերից լույս աշխարհ յեկավ դարավոր տանջանքը, յերբ բացվեցին փակ բերանները հզոր աղմուկով..

Են ժամանակ Սարգիսը վերադարձավ քաղաքից ու հայտարարեց գլուղի շուկայում:

— Նլ հարուստ-աղքատ չկա. սրանից դենը բոլորս մին ենք: Ու պատմում եր քաղաքի բաներից, շշմեցնում գլուղացիներին իր բերած նոր մտքերով:

Շուտով յեկան և ուրիշները՝ նույն հովերով, ու ամբողջ գլուղը դղրդաց նոր խոռքերի տարափից:

Նդ որերին եր ահա, յերբ Սարգիսն ուրախ-ուրախ սկսեց իր նոր տան շենքը՝ նա բարձրացրեց պատերը, բայց չկարողացավ ծածկել ու սարքել իր տունը:



Անցան տարիներ, անցավ են ժամանակը...

Սարգիսը մնացել էր գյուղում, ել դուրս չկար քաղաքում:

Նա ման էր գալիս լուռ, ինքն իր մեջ խորատուգլած՝ աշխատելով աննկատելի դարձնել իրեն: Խոնարհացել էր նրա շուխան, վորի վրա յերևում էյին յերկու մեծ կարկատաններ. դժգունել էր նրա դեմքը, ասես նույնպես խոնարհացել, իսկ նրա տունը դարձյալ կիսատ էր:

Անցել էր են ժամանակը. կյանքը նորից իր նախկին հունի մեջ էր մտել: Գյուղի շուկայում դարձյալ իրենց առաջվա դիրքերն էյին գրավել յերկու վաշխառուները՝ հաստափոր Սանդրոն և Նիհար, չորացած Մարտիրոսը:

Ու ամեն անգամ, յերբ Սարգիսը լուռ, իր մտքերի հետ ընկած անցնում էր շուկայով, Մարտիրոսը տերոգորմյա դցելով՝ սպասում էր, վոր նա մոտենա, ու կամացուկ ասում էր.

— Սարգիս, կարելի չե փող ե հարկավոր, արի առա՛մ, տունդ վերջացրու:

Յեւ նրա խոշոր, վոսկրացած դեմքի վրա խաղում էր խորամանկ ժպիտը, իսկ մանր, խոր ընկած աչքերը պսպղում էյին հեղնոդ փայլով:

Սարգիսն աշխատում էր արհամարհել, լուռ անցնել, բայց անա նրա առաջ էր գալիս հաստափոր Սանդրոն՝ շրջապատված իր մարդկանցով: Դեռ հեռվից նա բզավում էր իր լիառատ, հրճվալից ձայնով.

— Սարգիս, բա ասում էյիր՝ ել հարուստ աղքատ չկա՛. բա ինչի՞ չես տունդ շինում. ախր կիսատ ե մնացել:

Սարգիսն ալրվում էր եզ խոսքերից, վորոնք հիշեցնում էյին անցած օրերը, յերբ ինքն էր հարձակվում յերկու վաշխառուների վրա, ու ել չէր համբերում:

— Շատ մի յեղակալիլ,—ասում էր նա.—մի առվով վոր ջուր ե գնացել, մին ել կգնա. սաղ աշխարհի տունն ե կիսատ մնացել, մենակ իմը հո չի: Լսիվ իմանաս՝ են օրը ելի կզա, տունս կթափամեմ, քու աչքն ել կհանեմ...

— Հա՛, հա՛ հա՛... Մին ել կզա,—հռհռում էր Սանդրոն ծիծաղելով և ավելի ևս փքվում ու լախացնում իր տեղը:

Նրա հետ ներդաշնակ հռհռում ելին նաև իր շուրջը պատած համախոհները:

— Ծիծաղիր, ծիծաղիր. տեղդ լենացել ե, ամա լա՛վ միտդ պահիր. քանի ես խալիսի ցավը կա, են օրերն ուղտի նման կչոքեն դոստդ առաջը:

Ասում եր Սարգիսը, դառը հեղնանքով չափում վռտից գլուխ Սանդրոյին ու հեռանում դանդաղ քալերով:

Գնում եր ու իր արվող աչքերով մի յեւք փնտռում են նեղ փողոցում:

Յեւ վորպես մի արձան են անցած որերի՝ խորհրդավոր լռութիամբ հանդիպում եր նրան իր կիսատ տունը...

1. Ինչ՞եւ հեղինակն իր հողվածի անունը դրել է «Կիսատ տունը»։ Թնչ իմաստով է դորժածված այն:

2. Վթր իրավակարգի ներկայացուցիչներն ելին հաստափոր Սանդրոն և չորացած Մարտիրոսը:

3. Յճրը շինվեց այդ «Կիսատ տունը»:

տարափ—ուժեղ անձրև, ձյուն,
կարկուտ

խորասուզված—մտքերի մեջըն-
կած, ջրի տակ սուզված

վաշխառու—կեղեքող, մեծ տո-
կոսներով շահագործող

54. Լենայի կոտորածը

1912 թվի մարտի 3-ին Լենայի վոսկեսանքերի բանվորական մասսան պայքար սկսեց Լենայի վոսկու արդունաբերական ընկե-
րութւյան դեմ: Ինչ՞եւ Հանուն Թնչ նպատակների: Այդ հարցին մեզ պատասխան են տալիս այն 16-18 պահանջները, վոր մշակվել և ա-
ռաջագրվել ելին բանվորների անունից հանքային վաճառությանը մարտի 3-ին: Յեթե քննելու լինենք այդ պահանջները, կտեսնենք, վոր 18 պահանջից 15-16-ը նպատակ ունեին միայն ստիպելու Լենայի ընկերությանը կատարել լեռնային կանոնադրքով ու պարտադիր վորո-
շումներով սահմանված կանոնները: Դրանցով պահանջվում եր՝ բանվոր-
ների համար բերել լավ վորակի կենսամթերք, բանվորներին տալ նորմալ բնակարանային պայմաններ, հատալճարների հաշիվները ճիշտ կատարել, աշխատավարձը տալ դրամով և վոչ թե տալոններով, բավականաչափ բժշկական ողնություն ցուլց տալ, տոներին հանդիսա-
տալ և ալլին: Յեւ միայն յերեք պահանջ կար, վոր պահանջ ելին բառիս իսկական իմաստով: Մեկը վերաբերում եր աշխատավարձի բարձ-
րացման: Մյուսը՝ բանվորական Ց-ժամյա որ մուցնելուն: Յերրորդը՝
այն ծառայողներին արտաքսելուն, վորոնց վարմունքը հնարավո-
րություն չեր տալիս բանվորներին հանդիստ աշխատելու և ստի-
պում եր գործադուլի դիմել: Այդ պահանջներին, ընտրվածներից մեկի առաջարկով, ավելացված եր նաև յերաշխավորություն բան-

վորների ներկայացուցիչների համար հանձնախնայի և ընդհանուր վարչության հալածանքներից...

Կամենսկով գործադուլի գաղափարումն արագացնել, Լենայի ընկերության վարչութիւնն առաջարկեց իր իրավագետ խորհրդակա-նին... դատապահանջ ներկայացնել բանվորներին՝ նրանց հեռացնելու գորանոցներից և հանքերից: Իսկ հանձնախնայի վարչութիւնն առաջարկեց բանվորներին այլևս կենսամթերք չտալ: Ուրիշ խոսքով՝ վարչութիւնը վորոշել եր ձմեռվա սառնամանիքներին միջանի հազար բանվորի իրենց կանանցով ու յերեխաներով շարժել փողոց, առանց պարենի՝ այն ժամանակ, յերբ վոչ մի հնարավորութիւն չկար վորեւե տեղ մեկնելու մինչև նախագնացութեան սկսվելը:

Վորոշված եր ձերբակալել ընտրված բանվորներին և նրանց դեմ դատ բաց անել:

Այնքի մեծ վախ պատճառելու համար գորանոցները շրջապատված եյին զինվորներով...

Խաղաղ մարդկանց ձերբակալութիւնը նման պայմաններում ճնշող տպավորութիւն թողեց բանվորների վրա: Առավոտյան ձերբակալութեան լուրը տարածվեց ամբողջ հանքերում:

Վրա հասավ ապրիլի 4-ի սարսափելի որը: Բանվորները՝ թվով 2-3 հազար հողի, գնում եյին, վոր... խնդրեն՝ ընտանիքի որապահիկն ավելացնելու և ձերբակալվածներին ազատել:

«Բոլորն ել գնում եյին բաց սրտով»: «Բոլորի սիրտն ել միամիտ եր»: «Կարծես յեկեղեցի եյին գնում»: «Կարծես գնում եյին հաղորդելու, զարդարվել եյին»: «Գնում եյին, վորովհետև յերեխաները սոված եյին»: «Գնում եյին խնդրելու, վոր ազատեն ձերբակալվածներին»: «Բոլորն ել հանդիստ եյին գնում»: Գնում եյին ժապավեն կազմած՝ մեկից մինչև յերկու կիլոմետր, յերեք-յերեք հոգով:

Քալող ամբոխին ճանապարհի ամբողջ յերկարութեամբ տեսնում եյին վոստիկաններն ու ամեն ինչի մասին զեկուցում եյին Տերեշչենկոյին:

Իսկ Բնչպես նայեց այդ մարդը բանվորների յերթի վրա: Նա զեկուցողներին միշտ նույն խոսքերն եր անդադար կրկնում. «Թող գան»: Յեվ բանվորները գալիս եյին. նրանք մոտենում եյին Նադեժդինյան հանքին: Յեվ յերբ մինչև Ժողովրդական Տունը 250-300 մետր եր մնացել, այն ժամանակ Տերեշչենկոն գնաց Ժողովրդական Տունը, վորտեղ հավաքվել եյին զինվորները: Նա դիմեց զինվորներին հետեյալ խոսքերով. «Շտապեցեք, ձեզ ուզում են զինաթափ անել»: Յիդպիսի խոսքերով նա ուզում եր զինվորներին զրգռել բանվոր-

ների դեմ: Յեվ, իհարկե, նա հասավ իր նպատակին: Նրան հավատացին: 110 զինվորների առաջ պատկերացավ հազարավոր բանվորների կողմից լեկող վերահաս վաճառք:

Տրված եր հավաքի ազդանշան:

Զինվորները յերկու շարքով ձգվեցին յերկար շղթայով ճանապարհի վրա... Ամբոխը կանգ առավ: Առաջին շարքերը շրջապատեցին Տուլչինսկուն և տվեցին նրան իրենց դիմումը: Տուլչինսկին սկիւզ կարգալ: Բանվորները կանգնել էին նրա կողքին. նրանց մի մասը նստած էր գերանների վրա, մի մասը՝ ցանկի վրա: Սկսեցին ծխել:

Բայց ահա Տերեչենկոն նշան արավ ձեռքով, և հանկարծ ճայթեց համազարկը:

Համազարկին հաջորդեց հապճեպ հրաձգություն: Լավեցին ճիւղեր, հառաչներ: Գլուխը կորցրած զինվորները շարունակում էին կրակել փախչողների վրա... Վերջացավ:

Սկսեցին հավաքել ու տանել սպանվածներին ու վիրավորներին: Վտարկաններից մեկը կանգնել էր սայլերի մոտ, հաշվում էր ու գրում, թե յուրաքանչյուր սայլի վրա քանի դիակ է դրած:

Սպանվածներին ու վիրավորներին տարան:

Տեղում մնացին հաղթողները:

1. Խնչպիսի պայմաններում էին աշխատում բանվորները Լենայի հանքերում:

1. Խնչպե՞ս կատարվեց բանվորների գնդակահարումն ապրիլի 4-ին:

3. Խնչ նշանակութուն ունի Լենայի կոտորածը Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման գործում:

հանուն — վորեն բանի համար,
նրա անունով
նորմալ — սովորական, կանոնա-
վոր

հապճեպ — շտապ

համազարկ — զալս

55. Ընկերները

Նրանք փոքրիկ էին՝ յերեխան ու կատուն.
մեկտեղ խաղում էին տախտակների վրա,
մինչև մութն իջներ, մինչև հալը գար տուն
ու հողագույն հացով կերակրեր նրանց:

Հայրը բանվոր էր: Միշտ առավոտ ծեփին
 նա գործարան կերթար ու յետ կգար մութին.
 հաց կքերեր իրա յերեխային միքիչ,
 յերեխան ել կտար՝ կեսը կատուն ուտի:

Ծսպես ապրում էյին: Հայրը նրանց մեկ-մեկ
 բան կպատմեր դրսի, հարուստների մասին,
 վոր կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում յերեք.—
 «Ինտերնացիոնալ» կերգեր՝ յերեխան լսի:

Ու կպատմեր, վոր միշտ ինքը հոգնի պիտի,
 պիտի արլուն թքի, վոր չոր փշրանք գա տուն.
 ու լուռթյուն դարձած՝ իրիկնային մութին
 կլսեին նրան յերեխան ու կատուն...

Բայց մի որ, մի որ կարմիր
 գործարան չգնաց ել հայրը.
 աչքերում վճիռ կար մի,
 ժպիտը հաստատ ու անծայր էր:

Փողոցում մարդիկ, մարդիկ.
 դրոշները ավան.—կարծես տոն էր...
 ու նման էր մայիսյան վարդի՝
 որերում ալդ հոր խնդութունը:

Յեվ մի որ համբուրեց զավակին
 բանվոր հայրը՝ ձեռքին հրացան.
 համբուրեց աչքերը կատվի
 ու գնաց անձայն...

Բայց դարձավ դռնից բանվոր հայրը
 համբուրեց նրան վերստին.
 —«Հասկանում եք,—ասավ.—ժամանակն է՝
 զարկելու յենք հարստին»:

Ու յելավ: Փողոցում կրակոց էր,
 փողոցում չոքեց բանվոր հայրը:
 Զորքերով լիքն էր փողոցը:
 Փողոցում կռիվ ու պայքար էր:

Ձարկեցին... Ճշաց բանվոր հայրը.
հարվածը կրծքին եր հատու:
Բայց հառաչը խոր ու անծայր այն
լսեցին յերեխան ու կատուն...

Վազեց, վազեց փողոց փողերիկ յերեխան.
կատուն վազեց հետքից իր ընկերոջ փողերիկ:
Նրանց զլխին կարկուտ կարմիր զնդակ տեղաց,
ու յերկունս ել ընկան հայր բանվորի կողքին:

Զխաղացին նրանք ել հատակի վրա.
չսպասեցին ել զուր՝ հայրիկը դա տուն.
նրանք փողերիկ-փողերիկ նահասակներ յեղան—
յերեխան ու կատուն:

— —

1. Վճիռ ժամանակաշրջանին և վերաբերում այս վոտանավորը. ինչից
և այդ յերևում:

2. Յժրը բանվորը վերջնականորեն հաղթանակեց:

3. Այս վոտանավորը արձակի վերածիր (ա. բառերը դասավորիւր աշն-
պես, ինչպես խոսելիս ենք սովորաբար անում. բ) դժվար բառերի տեղ դիր
ավելի հեշտ ու գործածական բառեր. գ) ավելորդ տեղը կրկնված բառերը
մի կրկնիր. զ) կրճատված անհրաժեշտ բառերը (լրացրճւ):

— —

հատու—կարուկ:

56. Կրակը

Ո՛ւր և թշնամին: Նա ամենուրեք թողել և դիակներ և դերի-
ները շարաններ, վորոնցից մեկը հեռվում այնտեղ, դեռ յերևում և
գորշ մառախլապատ հորիզոնի վրա: Մեր շուրջը դեռ ու դեն, հատ-
հատ, ընկնում են ուռածքեր. ծաղրում ենք նրանց: Ազատ ենք աշտմ,
հանգիստ, մճնակ՝ այս անապատում, ուր դիակների անսահման տա-
րածությունը վերջանում և այնտեղ, ուր սկսվում և կենդանի մարդ-
կանց գիծը:

Գիշեր և: Փոշին չքացել և: Կիռաստվերն ու ստվերը փոխա-
րինել են փոշուն և ծածկել անկարգորեն շարված մարդկանց շրդ-
թան: Մարդիկ մոտենում են իրար, նայում, կանգնում, քայլում՝
հենված մեկը մյուսին: Ուժով, կուչ գալի մեռելներով լի թաղա-
տոցներում: Միջանիսը հրաքանները դրել են դետին և թափառում

են փոսի յեզերքները՝ թևերը կախ արած։ Մոտիկից յերևում է, վոր նրանք սև են, այրված, աչքերը կարմիր, ցեխապատ։ Վռչվող չի խոսում։ Փնտռում են։

Յերևում են պատգարակալիները, վորոնց կցկաուր ուրվա-կանները փնտռում են, խոնարհվում, առաջանում յերկու առ յերկու՝ կառչած իրենց յերկար բռններին։ Այստեղ, մեր աշակողմը, լսվում են բահի ու բրչի հարվածները։

Թափառում եմ այս մռայլ յեռուզեռի մեջ։ Ռմբակոծութունից քանդված խրամատի յեզրին մեկը նստել է։ Տաքտամ մի լույս դեռ տրոնում է։ Իր առջև նայող և խորհող այս մարդու կեցվածքն արձանի տպավորութուն է դրածում և դրավում է ուշադրութունս։ Թեքվելով ճանաչում եմ նրան։ Տասնապետ Բերտրանն է։

Նա դեմքը դարձնում է դեպի ինձ, և զգում եմ, վոր ժպտում է ինձ իր մտածկոտ ժպիտով։

Նայում ենք անշարժ և քալող մարդկանց, վորոնք շարժվում են վորպես թանաքի բծեր՝ կորաքամակ, ծռած զանազան դիրքերով, յերկնքի գորշագույն ֆոնի վրա, կիսակործան պատվարների յերկայնքին։ Նրանք կաղմում են մի արտառոց և մռայլ իրարանցում, փոքրացած միջանների և ճիճուների նման, սավերածածկ այս դաշտերում, ուր մահը տարածել է խաղաղութուն, ուր յերկու տարի յե, ինչ ճակատամարտերի մեջ թափառում են բաղմահազար բանակներ՝ անսահման և անհուն մահաքաղաքների վրա։

Յերկու մութ ստվերներ տնցնում ելին մեզնից միջանի քալ հեռու։ Նրանք կիսաձայն խոսում ելին իրար հետ։

— Այ տղա, հեշ ականջ չգրի՝ ինչ էր առում, խշտիկա ենենց կոխեցի, վոր ել չնչի կարուստ դուրս քաշեմ։

— Բա լես։ փոսում չորսը կուշ ելին յեկել։ ձեն տվի, վոր դուրս գան։ մեկ-մեկ դուրս ելին գալիս, մեկ-մեկ ծակոտում ելին սող շորերս կաբմբել են։

— Մհ, — հառաչեց առաջինը, — յեթե սաղ մնացինք, տուն դարձանք, ոջախի ու ճրտդի շուրջը հավաքված տնեցիներին պատմենք ես բոլորը, — ասա՛ ձվ կհավատա, ձվ։ Բա սա գուլում չե, ինչ է։

— Ջհաննամը, զոնե պրծնենք։ — պատասխանեց մյուսը, — պրծնենք ու տուն գնանք։

Բերտրանը սովորաբար սակավախոս էր և ինքնիրեն ընտել չէր խոսում։ Մտկայն նա ասաց։

— Ինձ ել յերեքը բաժին ընկան, խփեցի խելադարի պես։ Ախ, բոլորս հիմար ելինք, յերբ դալիս ելինք եստեղ։

Նրա ձայնը բարձրանում է զսպված տոնով։

— Անհրաժեշտ եր այդ, — ասաց նա, — անհրաժեշտ՝ ապագայի համար: Թե երբ խաչաձևեց և գլուխը թափահարեց:

— Ապագան, — գոչեց նա հանկարծ մարդարեայի պես: Մեզնից հետո ապրողները ինչ աչքով կնայեն այս սպանդանոցին և նախնիներին

— Յեվ սակայն, — շարունակեց Բերտրանը, — տես, ահա մի դեմք, վորը ծառացավ պատերազմից վեր և վորը փայլելու չէ իր արիության մեծությամբ և գեղեցկությամբ:

Լսում եյին հենված մի փայտի, թեքված դեպի նա: Հավատում եյի այդ ձայնին, վոր գալիս եր, վերջալուսի լուծյան մեջ, մի բերանից, վորը գրեթե անմուռնչ էր միշտ: Նա մեկեն բացականչեց հստակ ձայնով.

— Լիբկնեխար...

Վտաքի լելավ, թե երբ միշտ խաչաձև, նրա գեղեցիկ դեմքը նույնքան խորապես լուրջ, ինչպես արձան, թեքվեց կրծքի վրա: Բայց մի անգամ ևս դուրս չեկավ նա իր լուծությունից և կրկնեց.

— Ապագան, ապագան. ապագայի գործն է լինելու ջնջել այս ներկան, ջնջել հիմնովին, վորպես անարդ և ամոթապարտ մի բան: Բայց ներկան ել պետք եր: Ամոթ ուղմական փառքին, ամոթ բանակներին, ամոթ զինվորի արհեստին, վոր դարձնում է մարդուն ապուշ գոհ կամ զզվելի դահիճ: Այո՛, ամոթ. Սա ճշմարտությունն է, բայց ավելի քան ճշմարիտ, ճշմարիտ հավերժության համար, դեռ վոչ մեզ համար: Այս ճշմարտություն կդառնա, չերբ մարդիկ կգրեն ճշմարիտ աստվածաշունչ:

Մենք ճանապարհը կորցրել ենք և դեռ հեռու յենք այդ դառաշրջանից: Այսոր այդ ճշմարտությունը գրեթե մոլորությունն է, այդ նվիրական խոսքը՝ սրբազդծություն:

Նա խնդաց մի տեսակ ծիծաղով, վոր կարծես արթնացնում եր արձագանգներ և յերազներ:

— Մի անգամ չես ասացի զինվորներին, վոր հավատում եմ մարդարեություններին, վորպեսզի ստիպեմ նրանց առաջ քալել:

Նստեցի Բերտրանի կողքին: Այս զինվորը, վորը միշտ կատարել եր ավելի քան իր պարտքը, այս պահին մարմնացնում եր բարոյական վաճառ մի գաղափար և ուներ ուժ՝ բարձրանալու խառնիճադսոճ բազմությունից վեր և ծառանալու իրենց դարաշրջանից բարձր:

— Յես ել միշտ մտածում եմ այդ բաների մասին, — մրմնջացի չես:

— Ահ, — գոչեց Բերտրանը:

Անխոս նայեցինք իրար, մի փոքր զարմանքով և մտահոգութեամբ: Յերկար լռութիւննից հետո նա ասաց.

— Ծառայութեան ժամանակ ե, վերցրու հրացանդ և արի:

1. Յէրբ և վճիռտեղ ե տեղի ունենում այս դեպքը:
2. Ի՞նչպէս ե քնդրադառնում պատերազմը զինվորների հոգեբանութեան վրա:
3. Ո՞վ եր Կարլ Լիբկնեխտը և Թոնզ դեր խաղաց նա պատերազմի ժամանակ:
4. Ի՞նչ հալացքներ ունեւ Բերտրամը:
5. Գերմանիայում ձվ շարունակեց Կ. Լիբկնեխտի գործը:

գորշ—մուգ
մառախլապատ—մշուշոտ
պատգարակ—ձեռնասալլ
ուրվական—ստվեր
կառչել—պինդ կաշնել (մի բանից)
խրամատ—փորած փոս դէրք
բռնելու համար, ահող:

տարտամ—անորոշ
փոն—հիմնական գույն, վորի վրա
ցայտուն լերևում ե նկարը
պատվար—պատ
արտառոց—շատ տարրինակ

57. Թշնամիները

Ճակատամարտը վերջացավ: Հեռվում դեռ լսվում եյին թնդանոթների դղրդոյունը և հաղթանակող զորքերի համադարկերն ու փողերը: Կովի դաշտում կոտորոված սայլերի, թափթփված հրացանների, փշրոված ռերբի մեջ ընկած եյին սպանվածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ, ալլանդակված, հոշոտված: Այդ կույտերի միջից տեղ-տեղ լսվում եյին վիրավորների խոր հառաչանքներ:

Մի չորացած առվի լեզերքին, խիտ յեղինջի մեջ, իրարից վոն հեռու պառկած եյին յերկու զինվոր, յերկուսն ել ծանր վիրավորված:

Նրանց համազգեստները տարբեր եյին: Միջանի ժամ առաջ դեռ կատաղի թշնամիներ եյին, իրար դեմ կանգնած, պատրաստ՝ սվիններով միմյանց խողխողելու, իսկ այժմ...

Այժմ լուռ նայում եյին իրար և այնպէս ուզում եյին խոսեն, գոնե մի բան ասեն, բայց ափսոս վոր իրար լեզու չեյին հասկանում: Հանկարծ ավելի յերկտասարդը դժվարութեամբ մի լերկու քայլ հազիվ սողիսող տալով, մոտեցավ իր թշնամուն և մեկնեց նրան իր զինու սրվակը. հետո լեւ աշխատում եր թաշկինակով կտրի նրա վերքից հոսող արյունը: Բայց վոնչինչ դուրս չեկավ. միայն ինքն ալելի թուլացավ ու պառկեց:

Յերբեմն մեկը, յերբեմն մյուսը ճիգ ելին թափում վեր բարձրանալու միջի՝ թեի վրա, ոգնության ելին կանչում, բայց նրանց կանչերին մոտերքից պատասխան եր տալիս միմիայն փորը ճղված մի ձիու աղեկառու խրխինջը:

Վերջապես յերիտասարդը հոգնած ու թուլացած քուն մտավ: Վրա հասավ պարզկա գեղերը. ցուրտ քամին գալիս փչում եր հեռավոր լեռներից: Կովի դաշտում ավելի ու ավելի նվազում ելին հառաչանքները. վերավոր ձին ել չեր խրխինջում:

Կես գեղերին ավելի տարիքով վերավորը կրկին մի փորձ արավ նստելու, բայց իզուր. արդեն բոլորովին արյունաքամ եր յեղել: Մահվան սառնությունը սկսել եր պատել նրա անդամները:

Աջքը գցեց իր հարևանի վրա, Յերիտասարդ վերավորը քնած եր խոր և մի տեսակ ակամա կուչ եր յեկել գեղերվա կտրող ցրտից:

— Պիտի սառչի, — անցավ հասակավորի մոքովը, — անպատճառ պիտի սառի խեղճը. ինչքան ել յերիտասարդ ե:

Յերբ արշալուսի դեմ վերավորներին հավաքող խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթնեց, ուզեց բարձրանալ ու զարմացավ, վոր իր վրա մի վերարկու կար գցած:

Նայց շուրջը, նայեց հարևանին: Հարևանը մեռած եր և պառկած առանց վերարկուի. նրա վերարկուն եր իր վրա:

Ի՞նչ չարչարանք պիտի կրած լիներ այդ հոգևորքի մեջ արյունաքամ յեղող մարդը, մինչև վոր վերարկուն հանել կարողանար և ծածկեր մոտը պառկած վերավորին:

Յերբ յերիտասարդին բարձրացնում ելին, վոր տանն, նա խորին հուզմունքով ու յերախտագիտությամբ նայում եր «թշնամու» տանջված յերեսին ու չեր կարողանում հայացքը հեռացնի նրա կիսախուփ մարած աչքերից:

1. Այս պատմվածքի վերավորներն իսկապես իրար թշնամի էին. ի՞նչ իմաստով ե գործածված «թշնամիները» բառը:

2. Ի՞նչո՞ւ նրանք դուրս պիտի գային իրար դեմ կովի. ի՞նչ կարգերի հետևանք ե այդ:

3. Ի՞նչ վերաբերմունք ունի խորհրդային Միությունը դեպի պատերազմը:

4. Ովքեր են պատերազմ մղողները և ի՞նչ նպատակով:

5. Ուրիշ տեղ կարդացել կամ լսել եք սրա նման պատմություն: Պատմեցե՞ք և համեմատեցե՞ք:

ճակատամարտ — պատերազմ, մեծ

կռիվ

համազարկ — զալլ, հրտոնները

միասին կրակելը

հոշոտված — պատառոտված

աղեկառու — սիրտ մաշող, շատ

տխուր

արշալույս — լուսաբաց

58. Սևերն իմպերիալիստական կռիւում

1.

Նրանք դուրս են նայում ապրանքատար վազոններից: Ամեն ինչ անավոր ե, անհասկանալի ու հետաքրքրական՝ հսկայական կայարան և ապակե ծածկոցների տակ մռնչացող տասնյակ հրեշներ: Ահա անցկացրին 155 միլիմետրանոց թնդանոթը—շվարում են՝ ինչ ե սա: Այսոր առավոտ նրանք շոգենավով ժամանեցին իրենց Սե. նեգալից—նրանք դեռես չեն հոգնել զարմանալուց, չեն վարժվել անտարբերության: Վազոններից դուրս են գալիս գլուխները հըպարտորեն դեպի յետ թեքած, դեմքերը քնքուշ ու ձվաձև, աչքները լուսարձակ: Շատերի ձեռքներին կապիկներ կան, վորոնք նույնպես շարժուն ու հետաքրքրությամբ լի յեն: Միայն թե ցուրտ ե ինչպես նեգրերի, նույնպես և կապիկների համար: Նրանք սըրթ-սըրթալով իրար են կաշոււմ:

Կայարանի հրապարակի վրա յերկրացիներ կան: Մեկի գլուխը փաթաթված ե մաուլալով, մի ուրիշն առանց վոտքի յե, յերրորդը հագոււմ ե խիստ ու անընդհատ: Նորեկներն իրենց սուր ու կոկորդալին ձայնով ինչ-վոր բանի մասին ճշոււմ են նրանց: Պատասխանոււմ են: Յես բռնեը չեմ հասկանոււմ. բայց զգոււմ եմ,—նրանք իրար հարցնոււմ են՝ «վո՞րտեղից»:

Հարցրեք առաջին իսկ հանդիպած պարիզեցուն, թե վորտեղից, ինչու յեն այստեղ սենեգալցիները: Նա անկեղծորեն կապտախոսի ձեզ. «Փրանսիան պաշտպանելու համար» կամ՝ «Ռո՞ճիկն ե քաշել», կամ, վերջապես, «Միրում են կռվել»:

Իսկ սենեգալցիները ձեզ կապտեն, թե ինչպես սպիտակները յեկան նրանց խուլ գլուղերը, անտառների թավուտները, վորտեղ նրանք գազաններ եյին վորսոււմ ու կարթ եյին գցոււմ: Մպիտակները բռնեցին մարաբուտին (հոգևոր ղեկավար) և ասացին. «Մեզ զինվոր տվեք, թե չե մենք կկախենք մարաբուտին»: Յեւ տարան իրենց հետ, քեցին շոգենավերը և հետո այստեղ...

Իսկ այն յերեքն արդեն յեղել եյին այստեղ: Նրանք դիտեն, թե ինչ ե նշանակոււմ յերկարաքիթ աչն տարորինակ իբը, վորի վրա ժպտալով են նայոււմ այս յերիտասարդ նորեկները: Նրանք այժմ դիտեն, թե ինչու սենեգալցիները կոշվոււմ են «հարվածալին դորքեր»:

Նրանք տեսել եյին անձրևն ու մոխրագուլն խրամատները: Գիտեն, վոր շուտով կապիկները կսատկեն, զինվորներին կըջեն կրակի տակ, ու նրանք, վոր կվերադառնան, կսկսեն սառչել, սըմ-

քել—իրենց վախճանին կապասեն, վորովհետև չկա վերադարձի ուղի դեպի հեռավոր ու դեղեցիկ Սանեգալը:

2.

Սան-Ռաֆայելում սենեգալցիների բանակն է կանգնել: Հոյակապ հյուրանոցների յետևում, ծովի անապատ ափին ընկած է աֆրիկական գյուղակ: Նորակոչներին սովորեցնում են: Ո՛ր, վո՛րքան ժրջան են նրանք, ի՛նչպես աշխատում են արտահայտել իրենց պետի ամեն մի ժեստը: Ինչու — չգիտեն, բայց ի՛նչպիսի տեսք, ի՛նչպես են քայլերթում, ի՛նչպես են գրոհ՝ ձեռնարկում:

Սովորեցնում են յենթասպաները: Չնչին ու ալլանդակ «սպիտակներ» — նրանք տքնում են փառավոր լինել: Նրանք անխնայորեն անողոր են: Վայ նրան, ով չի հասկանա, թե ինչ է նշանակում ձեռքի ալս-ինչ շարժումը: Պետերի ամբողջ կազմը «ոտարերկրյա լեզեոնից եր»։ դերմանական դասալիքներ, սպանական մաքսանհնգներ, ֆրանսիացի մարդասպաններ, գլխավորաբար մարդասպաններ և քրեական հանցավորների մի ամբողջ հավաքածու: ավազակներ, շարդարարներ ու դահիճներ: Սենեգալցիները չափազանց լսող, չափազանց համեստ ելին, վորպեսզի նրանց մահվան ուղարկել կարողանային սովորական մարդիկ, վորոնց համար սպանությունը դեռևս մասնագիտություն չեր դարձել:

Կան և ուրիշ ուսուցիչներ: Տասներկու տարեկան աղջիկը յերեկոները սենեգալցիներին կարդալ է սովորեցնում: Նրանք խմբովին ու գրավված կերպով կրկնում են դասը, և նրանց հրաշք է թվում, վոր տառերից վանկեր են կազմվում, իսկ վանկերից՝ բառեր: Գրքի վրա գրված է. «Սկզբնական ձեռնարկ գաղութային զորքերի համար: Սենեգալցիները գոհունակ ժպտով կարդում են.

— «Ֆրանսիան բոլոր գաղութների սիրող մայրն է»...

3.

Յերբ սկերն առաջին անգամ հրետանային ուժաձգություն են լսում, նրանց պատում է անարտահայտելի սարսափ: Շատերը յերեսնիվար ընկնում են՝ վորպես աստվածություն առաջ: Բայց հետո ել ալդ սարսափը չի անցնում: Յերեսանների նման, նրանք ել թընդանոթները կոչում են «բումբում» և այդ մի խոսքից իսկ վախեցած նալում են շուրջները: Նրանք մահից չեն վախենում և ձեռնամարտի մեջ զարմանք են պատճառում իրենց անվեհերությանը. բայց «բումբում»-ը ինչ-վոր անըմբռնելի, խորհրդավոր ու սարսափելի բան է:

Թնդանութալին կրակի ժամանակ դժվար ե ստիպել, վոր նեղ-
րերը խրամատներէից դուրս գան: Բայց Ֆրանսիացիներն ու «ո-
տարերկրյա լեգեոններն» անդամներն ստիպում են: Ահա թե ինչ
եր պատմում մի սերժանտ.

— Դուք չեք պատկերացնի, չեք կարող պատկերացնել, թե
նրանց հետ ինչքան պետք ե չարչարվել: Ստիպված ես լինում ա-
տորճանակով վռնդել: Ահա թե յես ինչ հնարեցի. Դարդանելի մոտ
եր: Դրոհից հետո յես յոթ մարդու կախեցի և ասացի.—Ահա թե
ինչ կլինի ձեզ, յեթե գուք դուրս չգաք: Նրանց հետ այլ կերպ չի
կարելի—վորպեսզի իրենց աչքերով տեսնեն: Նու, և դուրս յեկան...

1. Ինչպես են սենեգալցիներին պատերազմի բերել:
2. Ինչպես են սևերին դաստիարակում:
3. Ինչպես են սևերին գրոհի ուղարկում:
4. Հանուն ձև շահերի կովում ելին սևերը. ինչ վերաբերումնք ունի
խորհրդալին իշխանությունը դեպի գաղութալին ժողովուրդները:

Թավում—անտառի բուսակա-
նության խիտ տեղը
ժեստ—ձեռքի կամ մարմնի շարժ-
վածքը խոսելու ժամանակ
լեզիոն—բանակ, զորագունդ

դասալիք—գեղերտի, վորևև բան
լքող, փախուստ տվող
մաքսաննդ—կոնտրաբան-
դիստ
սերժանտ—ֆրանսիական ստորին
հրամկազմ (յենթասպա)

59. Փոթորկից առաջ

Իզմայլովյան գնդի վաշտերից մեկը, վորի կազմի մեջ միջանի-
եսերներ կային, լերկար ժամանակ բանվորների ու զինվորների աչ-
քի փուշն եր իր պաշտպանողական ու հակահեղափոխական տրամա-
դրությամբ: Յեվ ահա բանվորները լերեկոներն սկսեցին հավաքվել
նրանց զորանոցների մոտ և իրենց պարզ ու հասկանալի լեզվով բա-
ցատրել տեղի ունեցող անցքերի աժդող իմաստն ու զինվորի գերը
բանվորա-գլուղացիական շահերի պաշտպանության գործում՝ բայլ-
շնիկների կուսակցության մեջ:

Սկզբում նրանց հետ շատ կոշտ խոսեցին.

— Դեհ կորեք դեն: Թրե են դալիս այստեղ...

Որեցոր կակդեցին:

— Քաղաքացի: Ընկեր: Հեռացե՛ք: Իզուր ե...

— Թողե՛ք, ընկեր...

Բանվորները համառ ելին: Մի առ ժամանակից հետո զինվոր-

ներք հաշտ զրուցում ելին ըմբռնողները հետ, զարմանում ելին իրենց միամտության վրա, վոր մենչեկներն ու եսերներն իրենց ձեռ են առել, խարել են:

Մի անգամ ըստ սովորության նրանց այցելելու յեկավ մի ինչ-վոր ինտելիգենտ: Ըստ յերևութին նա չէր իմանում զինվորների հայացքների ու տրամադրությունների մեջ տեղի ունեցող փոփոխությունները մասին:

Հավաքելով մի խումբ զինվորների՝ նա միանգամից սկսեց տաք-տաք բացականչել. «Պետք է կռվել գերանացիների դեմ ճակատում ու թիկունքում մինչև հաղթական վախճանը»:

— Դու ասում ես, պարոն, «պատերազմը մինչև հաղթութուն»:
Մեր միտքն էլ եղ է,—հազիվ զսպելով փոթկոցը՝ ասաց մի վիթխարի հասակով զինվոր:

— Այ, սքանչելի լե,—շտապ վրա տվեց ուրախացած հայրենասերը,— լեա ընդհանրապես չեմ հավատում, վոր բալչեկները ձեր վստահությունը վայելեն: Նրանք ուզում են Վիլհելմին ոգնած լինել:

— Դեհ, ինչո՞ւ... Մենք մեր վաշտում մի հաս բալչեկի չենք թողել: Մենք բոլորս էլ մի մարդու պես ենք: Պատերազմ մինչև հաղթանակ: Բոլորս էլ դեպի ճակատ,—ընդհանուր ծիծաղի տակ վերջացրեց կծու հեգնանքի տակ հսկան:

— Յես... լեա ուրախ եմ այդ տեսնել: Հայրենիքը ձեզ չի մոռանա,—հուզված ու հիացմունքով շնչում եր ինտելիգենտը:

— Դեհ լավ, արի՛ գնանք,—քաշեցին զինվորները հայրենասերի ձեռքից:

— Ո՛ւր, ինչո՞ւ,—զարմանքով հարցրեց նա:

— Ապա ո՞վ է կռվելու: Ի՞նչ, միթե մենք: Բավական է, մեր բաժինը մենք կռվել ենք: Յեթե մինչև հաղթական վախճանն եք ուզում, ապա դու յեկ պիտի գաս,—արդեն մի այլ՝ «պաշտպանողին» վախեցնող շեշտով, խոսեցին զինվորները:

— Ներեցեք, պարոններ, քաղաքայինք: Յես զորակոչի յենթակա չեմ: Յես աշխատում եմ պաշտպանության համար:

— Վեր թվից ես 86°: Զորակոչիկ ես: Ծառայության համար պետքական ես: Հայդե, տղերք, զորանոց գնանք: Վաղը ճակատ կուղարկենք,—վախից ալլալված ինտելիգենտի շուրջը լավում ելին ծաղրալի ու չարախիտ ձայներ:

Շրջապատի ընդհանուր ծիծաղի տակ մի չափազանց յերկար շինել հաջնելով՝ նրան քարշ տվին զորանոց, խոստանալով ճակատի համար նման պարոններից կազմակերպել մի ամբողջ գումարտակ:

Յեւ միայն յերկարատև աղերսագին խնդրանքներից հետո «հայ-բենիքի պաշտպանին» դուրս շարտեցին զորանոցից:

1. Ի՞նչ իմաստով և զործածված «փոթորկից առաջ» վերնագիրը:
2. Վճիռ հեղափոխությունը հանդիսացավ այդ «փոթորիկը»:
3. Ճիշտ և տրված մենչիկներն և եսեներն ընդլծաղիլը:
4. Ի՞նչ նպատակ ունեւր և ի՞նչ շահերին եր ծառայում «պատերազմ» մինչև հաղթական վախճան» լողունքը:
5. Ի՞նչ տրամադրությամբ եյին լցված զինվորները:
6. Բնորոշ և այս հոգվածը ժամանակավոր կառավարության շրջանի համար:

խեր—բարիք
այլալված — կերպարանափոխ-
ված
չարախինդ—ուրիշի դժբախտու-

թյան վրա ծիծաղող, ուրա-
խացող
աղերսագին — աղաչանք-պաղու-
տանք անելով

60. Լ ու յ ս ե ռ

Մի անգամ՝ աշնան մի մութ գիշեր՝ վիճակվեց ինձ նավարկել Սիբիրի մուլլ գետերից մեկի վրա:

Հանկարծ, դետի ջրապետւոյտին, իմ հանգեպ, մութ սարերի առաջ մի լույս չերևաց. փայլեց պայծառ, ուժեղ և մոտիկ...

— Ո՛հ, փա՛ռք աստծու, — ուրախությունից բացականչեցի չես, գլուղը մոտիկ ե, կհանգստանանք:

Սիբիրացի թիավարը շուռ յեկավ, ուսերի վրայով նայեց կրակին և անտարբերությամբ կրկին ձեռքն առավ թիւրը:

— Հեռու չե:

Յես չեյի հավատում. լույսը անորոշ խավարից առաջ անցնելով՝ այնպէս մոտեցել եր... Բայց թիավարն, ըստ յերևութին, ճիշտ եր ասել. իսկապես վոր՝ նա հեռու չեր...

Գիշերային լուսի հատկությունն եր այդ—խավարին հաղթելով մոտենալ, փայլել, խոստանալ և հրապուրել մոտիկությամբ. Թվում ե՝ բավական ե թիակով յերկու-յերեք հարված, — և ճանապարհը վերջացած ե... Բայց իսկապես—հեռու չե...

Յեւ մեր նավակը դեռ յերկար լողում եր մութ ու մուլլ, թանաքի պես սև գետի վրայով:

Կիրճերը և ժայռերը լողում, շարժվում եյին ու հեռանում՝ յես մնալով և կորչելով, թվում եր, թե անծայր հեռվում. իսկ լույսը

մեր առաջն եր, փալլում և կանչում եր—առաջվա պես մոտիկ, առաջվա պես հեռու:

Յեա հաճախ եմ հիշում այժմ և՛ այդ մուգ գետը խեղդված լեռների ապառաժների մեջ, և՛ այդ կենդանի կրակը: Առաջներում, ինչպես նաև հետագայում, շատ լույսեր են վռչ միայն ինձ, այլ և շատերին հրապուրել իրենց մոտիկությամբ: Այնուամենայնիվ, կյանքը հոսում և նույն անհրապույր ափերի մեջ, իսկ լույսերը դեռ հեռու յեն: Յեվ նորից հույս պետք է դնել թխակների վրա...

Բայց և այնպես... բայց և այնպես մեր առաջն են լույսերը...

1. Ի՞նչ իմաստով և գործածած «լույսեր» բառը:

2. Ի՞նչո՞ւ նա միաժամանակ այնպես հեռու յեր թվում:

3. Ի՞նչ պայմաններում հնարավոր յեղավ հասնել նրան և ի՞նչպես: Հոգվածից չերևում և այդ:

Կիրոն—յերկու սարի միջև նեղ անցք

IV. ՀՈԿՏԵՄԲԵՐ

61. Յերգ ժողովրդի մասին

Աղետ յեղավ: Պատերազմ: Ու ժողովուրդը անտեր
զավակներին իր հեռու թշնամու դեմ ուղարկեց:
Ձեր հասկանում, թե ինչո՞ւ. ինքը վոչինչ չգիտեր:
Գնաց յերկրորդ զավակն ել—ու տունն ամբողջ մնաց խեղճ:

Եսպես յեղավ: Յեվ անա քաղաքներում բազմամարդ,
ուր յերկաթե բլուրավոր գործարաններ կային մեծ.
մի առավոտ յերկնահուպ ծխնելույղները յերկաթ
կոշ նետեցին զինվորին՝ զինվորի դեմ չկովես:

Ձամբերեց ել զինվոր-զորքը, յեւով զահի դեմ,
ամբողջ յերկիրը յեւով, վորպես զինվոր մի արթուն.
ժողովուրդը հասկացել ու արթնացել եր արդեն.—
ու զինվորը են ծերից պատերազմից յեկավ տուն:

— Ել չեմ կովի,—ասաց նա,—թշնամու դեմ դրսևի.
մենք թնչ ունենք կիսելու, բաժանելու աշխարհում,
նոյն արեն և բոլորիս արեն և կարևի—
մեր ունեւորն և միայն մեր թշնամին արնախում:

Կո՛ւ՛ մզբուկ ու վիշապ հարուստների դեմ բոլոր,
վոչ մի հարուստ չմնա թող աշխարհի յերեսին:—
Եսպես ասին ու հսկա բանակներով անավոր
հակառակորդ տուն դարձան նրանք մի որ միասին:

Ու տվեցին կրակի որենքները հնամյա,
հարուստների ստեղծած իրավունքը արնառատ,
ասին՝ ամբողջ աշխարհում մի իրավունք միայն կա՝
մարդու քրտինքը զուլալ ու աշխատանքը արդար:

Հողերն առան, ցանեցին աշխատունակ, ժրաշն,
գործարանները մի նոր հպարտությամբ յերգեցին:
Մինչդեռ յերկրի ծայրերից թշնամիներ բարձրացան,
վոր յետ խեն կարգը նոր ու հաստատեն կարգը հին:

Բայց ել զինվոր եր հիմա բանվորն ու գյուղացին,
բազմահազար հրացան ու թնդանոթ ուներ նա.
հավաքվեցին բլուրավոր ու բանակներ կազմեցին,
վոր մարտնչեն մինչև վերջ, մինչև վոսոխ չմնա:

Յեւրան, հաստատ, վորպէս սար ու սարի պէս անսասան,
կուրծք տվեցին բոլորավոր անհղաղարկ հարվածի,
Հաղար կոխվ արեցին, բայց պարտութիւնն չտեսան:
հաղար կռիվ արեցին ու բոլորին հաղթեցին:

Ու կռոււմ են հիմա ել, վոր լետ չտան ել լերերք
իրավունքը բանվորի, վոր անսասան է արդեն.
բարձրացել են նրանց դեմ ունեւորներն անարեկ,
բայց կռոււմ են նրանք դեռ—ու կհաղթեն. կհաղթեն:

1. Վճիռ պատերազմի մասին ե հիշված այս վոտանավորի սկզբին:
2. Յերբ և ինչպէս իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածվեց:
3. Խնչ լողունները տակ էլին մղվում քաղաքացիական կռիւները:
4. Խնչ հակահեղափոխական շարժումներ լեզան քաղաքացիական պատերազմների ժամանակ. ինչ յեղավ նրանց վախճանը:

աղետ—դժբախտ պատահար
յերկնահուպ —յերկնքին կպած,
բարձր
հնամյա—հին տարիների, հին
դարերի

ժրաջան — աշխատասեր
վոսոխ—թշնամի
անհղաղարկ—ուժեղ հարվածող
անարեկ—վախից հույսը կորցը-
րած

62. Փետրվարյան հեղափոխութիւնը

Փետրվարի 23-ին, հինգշաբթի որը Պետրոգրադում սկսվեցին հուզմունքներ: Քաղաքի զանազան մասերում ժողովուրդը հավաքված «հաց», «հաց» եր կանչում: Յերեացին կարմիր դրոշակներ հեղափոխական նշանաբաններով: Հիսունի չափ ձեռնարկութիւններ իննսուն հազար բանվորներ բանթող եյին արել: Կարգապահութիւնը դեռ հսկում եր վոստրիկանութիւնը, բայց արդեն զինվորական մասեր ել էլին դուրս բերվում:


Այս բանը տեղի ունեւր փետրվարի 24-ին, ուրբաթ որը, լերը ցուցաբարները անցնում էին փողոցներով և հաց պահանջում: Զիւավոր քաղաքապահներն արդեն կատաղած՝ մայթերից քշում և ցրում էին հետաքրքրվողներին. ելեկտրաբարշներն ել չեյին գործում:

Վիբորգի կողմում, Սամպսոնյան փողոցով անցնում էին մի խումբ բանվորուհիներ, դժբեքը կապտած, աչքները բոցավառ, քայլերն անգոր: Անցնում էին անգեն և առանց լերգի: Հեռվից լեւեացին մի խումբ ձիավոր քաղաքապահներ: Ցուցարարները շփոթ-

վեցին, կանգ առան: Բանվորուհիներէից մեկը կանչեց բարձրաձայն.

— Նրանք մեզ ձեռք չեն տալ: Ձե՛ վոր մենք հաց ենք խընդ-
րում միայն:

Համոզվելու բան չէր: Մի՞թե հաց խնդրելու համար կարելի չէ
ձեծի լենթարկել: Յեւ խումբը լուռ ու մունջ առաջ անցավ:



Բայց քաղապանները ձիերի գլուխը բաց թողած՝ շեշտակի մը-
տան անդին, քաղցած կանանց բազմութեան մեջ և սկսեցին ձեծել
նրանց: Նրանք վոչ կին ելին խնայում, վոչ սոված:

Այդ քանը ուրբաթ, փետրվարի 24 ին էր:

Վոչ ալդ և վոչ ել հեղափոխութեան հետևյալ մեկն ու մեկ որ
փողոցում հսկահեղափոխական զօրք չերևաց: Մենակ քաղաքապա-
ններ, ձիավոր ժանդարմներ և զինվորի հագստով ծպտված վոստի-
կաններ ելին: Մեծո՜ւմ էյին և կրակում գնդացիներէից, հրացաննե-
րից ու ատրճառակներէից:

Զնամենակի հրապարակում պրիստավը հրամայեց քաղաքապա-
ններին մերկացնել իրենց սրերը ու խողխողել անգեն ցուցարարնե-
րին:

— Կազակներ, պաշտպանեցե՛ք մեզ, դիմեց ցուցարարներից
մեկը կազակների հեծելախմբին:

Յեւ ահա այստեղ էր, վոր՝ կատարվեց այն անհավատալի բա-
նը, վոր միքանի որ հետո պետք է արիւնների պես հեղեղեր ամբողջ
մայրաքաղաքը: Կազակները վրա պրծան ցուցարարներին ողձու-
թեան, սրախողխող արին, վոտի տակ առան պրիստավին և քաղաքա-
պաններին:

... Ու հանկարծ... Ի՞նչ: Ինչ-վոր մի տեղից փողերի ձայներ են գալիս: Յերաժշտութիւնն Այո՛ւ, այո՛ւ, զինվորական յերաշտությունն եւ, լսվում ե հեռվից զինվորների խուլ, միաշափ, հաստատուն վոտնաձայնը:

Յերեկ յես տեսիլ ելի, վոր նրանց մեր դեմ ելին կանգնեցնում: Փողի ձայնով մեզ նշանի ելին բռնում, բայց չեյին կրակում: Սպանել մի բան փնթփնթում եր, բայց վոչ լուրջ և վոչ ել խիստ, այլ ցուլցի համար, վոնց վոր զինվորներն ելին մեզ նշանի առնում: Նորից փողը փչում եր, նորից զինվորները պատրաստվում ելին իբր մեզ կրակ տալու:

Յերեկ յես այս բանը տեսա միջանի անդամ և չեյի հավատում, վոր նրանք մեզ վրա կրակ են տալու: Իսկ յեթե կրակել տային, ալդ միևնույն չե՛, մենք պատրաստ ելինք մեռնելու:

Յերաժշտութիւնը մոտենում ե ավելի: Մեզ են հասնում մեր սրտին մոտիկ ուրախ հնչյուններ: Մարսելյոզն ե դա:

— Յեր, ծառացիր, բանվոր ժողովուրդ...

Չես հավատում, կարծում ես՝ աւանջդ խաբում ե:

Մի բանվոր, կուրտկա հագած, ձեռքի կուշ լեկած մատները հուպ տալով՝ վոտի յե կանգնում և վազելով անելուն՝

— Տղերք, աղերք, զինվորներ են,— կանչում ե խապոտ ձայնով ու գժվածի պես:

— Տղերք, — բղավում են ամենքն ելնույնպիսի խապոտ ձայնով:

— Մեկ-յերկու, մեկ-յերկու... Շատ պարզ կերպով լսվում ե զինվորների վառնաձայնը:

Յեվ ահա մի քունջից գլուխը հանում ե լեկող գորքը՝ կարմիր դրոշակն ու ամբոխն առաջից: Դա իսկութիւնն չի, մտածում ես, դա յերազ ե, յես խելքս կորցրել եմ: Բայց չե՛: Յերազ չի, իսկութիւնն ե: Տեսնում ե աչքս, բայց հավատս չի գալիս դեռ:

1. Ինչո՞ւ զինվորները չեյին կրակում բանվորների վրա և միացան հեղափոխության:

2. Ինչո՞ւ Փետրվարյան հեղափոխութիւնը կոչվում ե բուրժուական:

3. Հիմնվելով ձեր տեղեկութիւնների վրա՝ տվե՛ք Փետրվարյան հեղափոխության պատկերը:

հուզմունք — անհանգստութիւն,
իրարանցում
նշանաբան — լողունգ
շնչտակի — կտրուկ
ծպտված — հագուստը, կերպա-
բանքը փոխած

փող — նվագելու գործիք
Մարսելյոզ — հեղափոխական չիրգ
ծառանալ — ծառի պես բարձրա-
նալ, առաջը ցցվել

63. Վ. Ի. Լենին

I

Վլադիմիր Իլյիչ Ուլյանովը (Լենին) ծնվել է 1870 թվին, Սիմբիրսկ քաղաքում։ Նրա հայրը լեզել է Սիմբիրսկի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ։

Յերբ Վլադիմիր Իլյիչը վերջացրեց գիմնազիան, Ուլյանովի ընտանիքին մի դժբախտություն պատահեց։ 1887 թ. ցարական կառավարությունը Վ. Իլյիչի ավագ լեղքայր Ալեքսանդրին, վոր Պետերբուրգի համալսարանի ուսանող եր՝ դատապարտեց մահվան։ Ալեքսանդրը մի խումբ տերրորիստների գլուխ անցած՝ 1887 թ. մարտի 1-ին Ալեքսանդր III ցարի վրա ուռմբ նետելու փորձ եր կատարել։

Վլադիմիր Իլյիչը Կարլ Մարքսի հետ ծանոթացավ իր յեղորդ՝ Ալեքսանդրի շնորհիվ, յերբ դեռ վերջինս գիմնազիայում սովորում եր։ Ալեքսանդրը փոքր լեղքոր հետ շատ եր խոսում Կարլ Մարքսի ուսմունքի մասին։

Յեղորդ մահը խորապես ազդեց Վլադիմիր Իլյիչի վրա։ Նա հաստատ վճռեց մտնել ուռս ժողովրդի և բոլոր աշխատավորների համար կռիվողների շարքերը։ Մայրաքաղաքների համալսարանները Վլադիմիր Իլյիչի համար փակ եյին, վորովհետև նա մահապատժի յենթարկված տերրորիստի յեղքայրն եր։ Նա 1887 թվին մտնում է Կազանի համալսարանը, վորպես իրավաբանական բաժնի ուսանող։

II

Շուտով ուռսական բոլոր համալսարաններում և մասնավորապես Կազանի համալսարանում սկսվում են շարժումներ։

Հաճախարանի վարչությունը հեռացնում է մոտ 40 ուսանող, նրանց թվում նաև Վլադիմիր Իլյիչին։

Համալսարանից հեռացվելուց հետո յերիտասարդ Ուլյանովը մտնում է հեղափոխականների գաղտնի միության մեջ, վոր կոչվում եր «Բանվոր դասակարգի ազատության պայքարի միություն»։ Քշիտնությունը հալածում է Իլյիչին ու նրա ընկերներին։ Նրանց քանտ են դցում և ապա ուղարկում Սիբիր։ Սիբիրից Վ. Իլյիչը փախչում է արտասահման։

1903 թվին արտասահմանում կալանում է սոցիալ-դեմոկրատական կուսակցության յերկրորդ համագումարը։ Այդ համագումարից սկսած կուսակցությունը բաժանվում է յերկու մասի՝ բալլանիկ և մենշևիկ։ Մենշևիկներն ասում են, վոր ցարին կարելի յն տապա-

լել միայն բուրժուականների հետ միանալով: Վլադիմիր Իլյինն ու բալլ-
շնիկները պնդում են, վոր ցարի դեմ կարող ե կռիւլ բանվոր դա-
սակարգը՝ միացած աղքատ գյուղացիութեան հետ:

1905 թվին Ռուսաստանում տեղի չե ունենում զինված ապրա-
տամբութիւն և հեղափոխութիւն: Այդ գործում մեծ մասնակցու-
թիւն ե ցույց տալիս Վլադիմիր Իլյինը: Յարական կառավարու-
թիւնը ճնշում ե հեղափոխութիւնը: Վլադիմիր Իլյինը նորից փախ-
չում ե արտասահման և ապրում այնտեղ կեղծ անցազրով:

Բայց բանվորական շարժումը չի մեռնում: Վլադիմիր Իլյինը
դեկավարում ե բանվորներին «Պրավդա» լրագրի միջոցով, ուր նա
անդամորում եր իր հոդածները, ուղարկելով Ռուսաստան՝ սահմա-
նից վոչ-հեռու դանվող Կրակով քաղաքից:

III

1914 թվին սկսվում ե համաշխարհային պատերազմը: Վլադի-
միր Իլյինը Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորներին բա-
ցատրում ե այդ պատերազմի նշանակութիւնը: Դեռ պատերազմի
սկզբից նա հասկացնում ե, թե պատերազմի պատճառը բուրժուա-
զիան ե և թե բանվորներն ու գյուղացիները պետք ե հեղափոխու-
թիւն անեն բուրժուազիայի դեմ: Յեւ իսկապես:

Պատերազմի հետևանքները, սովը առաջ են բերում ժողովրդա-
կան ապստամբութիւն: Ժողովուրդը զահնկեց ե անում ցարին
1917 թվի փետրվարին: Սակայն ցարի տապալումից հետո իշխա-
նութիւնը միառժամանակ անցնում ե բուրժուականների ձեռքը, վո-
րոնք վորոշում են պատերազմը շարունակել:

Վլադիմիր Իլյինն այդ միջոցին արտասահմանում եր գտնվում:
Նա շտապում ե Ռուսաստան և պայքար ե սկսում բուրժուազիայի
դեմ:

Հուլիսին Պետրոգրադում բռնկվող ապստամբութիւնը ճնշվում
ե բուրժուական կառավարութեան կողմից, վորից հետո Վլադիմիր
Իլյինն ստիպված ե լինում դադարի ապրել, վորովհետև նրան ու-
զում ելին բռնել և մյուս բայշնիկ լենկեյների հետ սպանել:

1917 թվի հոկտեմբերին բանվորներն ու գյուղացիները լենինի
դեկավարութեամբ ապստամբում են բուրժուական կառավարու-
թեան դեմ, ձեռք են առնում իշխանութիւնը և կազմում են կառա-
վարութիւն՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ անունով, վորի
նախագահն ե ընտրվում Վլադիմիր Իլյին լենինը (Ուլյանով):

Խորհրդային իշխանութեան պայքարի ամբողջ ընթացքում Վլա-
դիմիր Իլյին ամուր կանգնած եր հեղափոխութեան առաջնորդի

կոչման բարձրութեան վրա, ամեն ըրագե լենթարկելով իրեն մահացու վտանգները:

Բանաւր, Սիբիրը և, վոր գլխավորն ե, ամենորա ծանր աշխատանքը քաղաքացին Վլադիմիր Իլիչ Լենինի ուժեղ առողջութունը: Ջափից դուրս հոգնածութեան հետեանքով նրա ուղեղը հիվանդացավ, իսկ ալ ձեռքն ու վոտը ալկա չեկին դործում: Մանր հիվանդութեան պատճառով նա խոսել իսկ չեւ կարողանում:

Վլադիմիր Իլիչը մեռավ 54 տարեկան հասակում 1924 թ. հունվարի 21-ին: Նրան դրեցին կարմիր դագաղում, Գորկա գյուղից փոխադրեցին Սորհրդային Միութեան մայրաքաղաքը՝ Մոսկվա, ուր և թաղեցին Կարմիր հրապարակում:

— . —

1. Նրա յեղրարն թնչերարել և թնչպիսի վերջ ունեցավ: Յարի կառավարութունն թնչպես վարվեց Լենինենց ընտանիքի հետ նրա յեղրու պատճառով:

2. Նկարագրեցեք Լենինի կյանքը նրա ուսանողութեան ժամանակ:

3. Խնչ դիրք բռնեց Լենինը պատերազմի հանդեպ: Ովքեր վերջ ալին պատերազմին և թնչպես: Այս մասին Լենինն առաջուց խոսել եր:

4. Խնչ լեղավ Լենինի դերը Հոկտեմբերյան հեղափոխութեան մեջ:

— . —

գահրնկեց—գահից գցելը

անցագիր—պասպորտ

տերրորիստ: տհաբեկող, տերրոր
կատարող
իրավաբանական բաժին—դատա-
պաշտպաններ պատրաստող բաժին

ԿԱՐԴԱՒ

— Լենինի կենսագրութունը:

64. Իլիչը

Մենք գիտելինք, վոր այդ լերեկո պետք ե կայանար Պետրոգրադի խորհրդի նիստը, ուր Լենինը պիտի ղեկուցեր Դերմանիալի հետ վարած հաշտութեան բանակցութիւնները մասին: Այդ յեղույթը ամենանշանավորներից մեկը պիտի լիներ: Զեկուցումից հետո Լենինը պիտի ճառ խոսեր Նեակի ռայոնի բանվորական ժողովում: Ահա այդ մասին իմանալով եր, վոր ամբողջ ամեն կողմից դիմում եր այնտեղ: Դեմքեր չեկին լերեկում: Կային միայն ձյունն կերպարանքներ, վորոնք պտույտ ելին անում բուքի հետ և կորչում գիշերալին մթութեան մեջ: Թվում եր, թե պաքաւ ե տեղի ունենում մարդկային զանգվածի և բնութեան մոլեգնած տարերքի միջև: Ահա մեկն ընկնում ե, հետո մի ուրիշը. խռպոտ, հառաչան-

քի պես հնչուն մի ձայն է բարձրանում: Իսկ ամբոխի ալիքները հետզհետե լայնանում են ու լայնանում. վոչինչ չի կարող նրանց զուպել, նրանց վազքին սահման դնել: Ամբոխի խորքից սկսում են հոսել «Խնտերնացիոնալի» հնչյունները: Բայց վոռնացող քամին առնում է այդ հնչյունները, պատառ-պատառ անում և ցրվալի հեռուները: Կատաղած մրրիկն անզամ անգոր երխաղնելու այդ հաղթական հնչյունները:

Հանկարծ ամեն ինչ լռում է: Կարծես մի գերբնական ուժ կանգնեցնում է ամբոխի հեղեղը ճանապարհի կեսին:

Մրրիկը վոռնում է ավելի ուժգին: Այդ վոռնոցի սիջից լսվում է աղջկա մի զիլ ձայն.

— Իլլիչը...

Մարդկային ամբողջ զանգվածը վորոտում է իսկույն.

— Իլլիչը ..

Մեր խժժական ամբոխի մեջ խցկվելով՝ մոտենում է ավտոմոբիլին, վորի առջևի լապտերները լույս են սփռում: Ո՛վ է ներսը—չի յերևում, Բայց ահա ցցվում է ծանոթ կերպարանքը: Յես տեսել եյի նրան տարիներ առաջ Ժընևում... Նույն ժպիտը շրթունքներին, նույն թափանցող սուր հայացքը, դուրս ցցված ալտոսկրները: Միայն գլխարկն եր ուրիշ—բրդե հնադարյան մի գլխի. վերարկուն ել եր ուրիշ—մաշված, մադե նեղ ոձիքով, վոր չեղ համապատասխանում Պետրոզրադի սառնամանիքներին:

Իս Լենինն եր, Միքիչ Ժերացած թվաց նա ինձ,

Ամբոխը դռում է.

— Իլլիչը թող խոսի...

Մրրիկը վոռնում է ամբոխի պլին, խաղնում մարդկային ձայները: Բայց Իլլիչի ձայնը հաղթահարում է մրրիկին, հնչում է պողպատի պես զնգուն, վորոտընդոտ:

Արդեն չեմ լսում՝ ինչ է խոսում Իլլիչը, վորովհետև մարդկային ալիքը զշում շարտում է ինձ ավտոմոբիլից հեռու, չգիտեմ՝ վեր կողմը: Միայն հեռվից լսվում են ծափերի վորոտներ—գնդացիորի ճարճատյունի պես, և յերկարատե, հազարաձայն «ուռուռ»-ներ:

... Յերը չեմ՝ բոլորովին սառած-փետացած՝ վերադարձա հանրակացարան, արդեն գիշերվա ժամը յերկուսն եր: Դռնապանը, մի բարձրահասակ ծերունի, հայտնեց ինձ.

— Բուք եմ ասում, եւ Կարծես տարտարոսն եր սաեձը կրտբել: Բայց պողպատի պես հնչում եր Իլլիչի ձայնը:

Բանից յերևաց, վոր այդ ծերունին ել հենց նոր եր վերա-
դարձել նեակի պրոսպեկտից...

1. Ինչով ես բացատրում Լենինի ժողովրդականությունն ու հմայքը:
2. Ինչով ես բացատրում ժողովրդի խանդավառ վերաբերմունքը դեպի
Հոկտեմբերյան հեղափոխությունն ու նրա ղեկավար Իլյիչը:

Ուայոն—ըջան, Թադամաս
զանգված—դունդ, մարդկանց
բազմություն
մոլեգնած—կատաղի
մրրիկ—փոթորիկ
լապտեր—ֆանառ

գերբնական—բնականից զուրս, կա-
խարդական, հրաշքի պես
Թափանցող—ծակող-անցնող
հնադարյան—շատ հին
վորոտընդոտ—վորոտալի
տարտարոս—դժոխք
հմայք—կախարդանք
խանդավառ—վոգևորված

65. Պետք է իշխանությունը վերցնել

Փոքրիկ բնակարանում նստած եյին միքանի մարդ:

Ժողովի քարտուղարն արձանագրեց՝

Ընթացիկ մոմենտ: Խոսքը պատկանում ե...

Նա ինչ-վոր ազգանուն գրեց, բայց հետո իսկույն խնամով ջնջեց:

— Այո, ավելի լավ է առանց ազգանվան, —ասաց նրա հա-
րևանը, վոր նայեց արձանագրությանը՝

Իսկ ղեկուցողը, վորի ազգանունը ջնջել եյին, արագ բարձրա-
ցավ աթոռից:

Դա Լենինն եր:

Չորս ամիս շարունակ նա Թագնվում եր Ժամանակավոր կա-
ռավարությունից: 1917 թ. հուլիս ամսին բանվորների անհաջող
սպաստամբությունից հետո բուրժուազիան վորոնում եր Լենինին,
վորպեսզի սպանի նրան: Բայց բանվորներն աջակցեցին Լենինին
Թաքնվելու, և նա Պետրոգրադից հեռացավ:

Լրագրերը գրում եյին, վեր Լենինը փախել է ստորջրյա նա-
վակով կամ ոդանավով: Իսկ Լենինն այդ ժամանակ ապրում եր
խոտհարքում, վրանում, Սեատրորեցկու մոտ:

Լենինին ուղարկում եյին բոլոր լրագրերը, գրում եյին նա-
մակներ: Ուստի և նա լավ տեղյակ եր, թե ինչ է կատարվում
Պետրոգրադում և ամբողջ լերկրում:

Արդեն հոկտեմբերին Ռուսաստանում համաբնա թե բոլոր բան-
վորներն ու զինվորները բալլևիկների կողմն ելին:

Լենինը վճռեց՝ ժամանակ ե իշխանութիւնը վերցնելու:
Նա արդեն միջանի նամակ եր գրել իր կուսակցական ընկեր-
ներին.

— Պետք ե ցրել ժամանակավոր կառավարութիւնը:

— Դանդաղելը հանցագործութիւնն ե: Ժամանակ ե իշխանու-
թիւնը վերցնել:

Լենինը կարծում եր, վոր Պետրոգրադի բալլշէիկները չափա-
զանց դանդաղ են գործում:

Յեւ նա ինքը անսպասելիորեն լերևաց Պետրոգրադում:

Բալլշէիկների կուսակցութեան կենտրոնական կոմիտեն հավաք-
վեց Լենինի գլխավորութեամբ:

Ժողովը տեղի ունեցավ գաղտնի:

Մնա թե ինչու քարտուղարն այնպես խնամքով ջնջեց Լենինի
ազգանունը արձանագրութեան մեջ.

Զէ՛ վոր արձանագրութիւնը կարող եր ժամանակավոր կառա-
վարութեան ձեռքն ընկնել, և այն ժամանակ նա կիմանար, վոր
Լենինը Պետրոգրադումն ե:

Լենինին ճանաչել չեր կարելի: Նա ածելել եր միրուքը:

Լենինը, ձեռքերը գրպանները դրած, անցավ սենյակով և սկը-
սեց ճառը:

Նա խոսում եր այն մասին, վոր չի կարելի ալեւ վոչ մի բո-
ւաք ուղարկել: Բանվորները բալլշէիկներին կողմն են, զինվորները
նույնպէս: Դրա համար ել պետք ե շուտով տապալել Կերենսկուն
և իշխանութիւնը վերցնել:

Ընկերներից միջանիսը համաձայն չեյին Լենինի հետ: Բայց
Կենտրոնական Կոմիտեյի մեծամասնութիւնը մոռածու եր այնպէս,
ինչպէս Լենինը: Վիճաբանութիւնից հետո կենտրոնական կոմիտեն
վորոշեց՝

«Յիլուել գիւմլած ապստամբութիւն»:

— . —

1. Խնչ կարևոր հարց վորոշվեց այդ գաղտնի ժողովում:

2. Ո՞վ եր ժողովի վոգին:

3. Խնչ նշանակութիւն ունեցավ այդ ժողովը հոկտեմբերի հաղթանա-
կի համար:

66. Հոկտեմբերի քսանհինգը

Զինվորները շղթա կադժած՝ ժամե-ժամ ավելի ու ավելի մոտենում էին Ձմեռային պալատի հրապարակին, և նրանց շարքերն ավելի ու ավելի խտանում էին։ Ժամը 6-ի մոտ պալատը շրջապատված էր։ Զինվորներն ու նավաստիները կուգեկուզ ավելի ու ավելի էին մոտենում։

Իրարու լեռնից վազելով նրանք հաջորդաբար դնում բռնում էին փողոցների բոլոր հարմար անկյունները Ձմեռային պալատի վրա գրոհ տալու համար։

Յունկերները պատնեշվելով փայտերի լեռներ պալատի դռների մոտ, աշայտը հետևում էին մեր առաջավոր շղթաներին և սրանց ամեն մի շարժման վրա կրակում էին հրացաններից ու գնդացիներից։

Ամենքը լարված սպասում էին գրոհի մեծ բռնկվին...

Արդեն ժամը չլրեցին Ժամանակավոր կառավարութան դրությունն անհուսալի լեր... Արդեն լերկաթուղիների բոլոր կայանները, հեռախոսը, հեռագրատունը, ելեկտրական կայարանը, ջրանցքը գտնվում էին մեր ձեռքում...

Միքանի ակնթարթ...

Յե՛վ ինքնակալութան հետ դեկարիստների ունեցած ընդհարումից, գրեթե մեկ դարու լուսթյունից հետո առաջին տնդամ Պետերբուրգի փողոցներում վորոտացին թնդանութները, բաց լուծ դարձրին դեմ, այլ փողովդի համար։

Միքանի հրանութներ պայթեցին Ձմեռային պալատի միջանցքներում։ Տատանումներին վերջ եր տրված։ Նավաստիները, կարմիր-գվարդիականները, զինվորները գնդացիների խաչածե կրակի տակ թռչում էին Ձմեռային պալատի առջևը շինված բարրիկադների վրայով տապալում էին նրանց պաշտպաններին և ներս խուժում պալատի բակի դռներից... Բակը գրավված է... Վեր են վազում սանդաղքներով... Աստիճանների վրա ընդհարվում են յունկերների հետ... Տապալում են նրանց... Բարձրանում են յերկրորդ հարկը... Սրբում են կառավարութան պաշտպաններին... Ծրիվ են գալիս... Վազում են յերրորդ հարկը, ամեն տեղ տապալելով իրենց ճանապարհին յունկերներին... Յունկերները գցում են գեները... Զինվորները, կարմիր-գվարդիականները, նավաստիները հեղեղի պես վազում են առաջ... Վարոնում են աղետների հեղինակներին։ Զարդում են փակ սենյակների դռները... ահա վազում են նրանք դեպի մի դուռ, վորի մոտ պահապան են կանգնած սարսափից քարացած պարտաճանաչ յունկերներ։

— Յայտեղ ժամանակավոր կառավարութիւնն է:

Ս վիճակները դեմ են անում:

— Գորչի...

Ծառասները ներս են խուժում սենյակը: Նրանց մեջ է ընկ. Անտոնովը: Այն, ինչ վոր անվանվում էր ժամանակավոր կառավարութիւն, այնտեղ է... գրեթէ մեռած ֆիզիկապես:

— Պետրոգրադի խորհրդի Ռազմա-Հեղափոխական Կոմիտէի անունից հայտարարում եմ ժամանակավոր կառավարութիւնը տապալված, — հայտարարում է Անտոնովը: — Բոլորդ ձերբակալված եք...

Տապալվածները թոթովանքով խնդրում են, վոր իրենց պաշտպանեն մասսաներից... Նավաստիները դուրս են տանում նրանց սենյակից: Աղաղակներ... Տվեք մեզ Կերենսկուն... Կերենսկուն... Նա փախել է Պետրոգրադից, վորպեսզի ռազմաճակատից զորքեր բերի:

Միջանցքները թնդում են հոգածուներ, գայլուկի, կատաղության աղաղակներից... Ձերբակալվածներին տանում են ներքև... բակը... անց են կացնում դռներով... բարրիկուդների վրայով... դեպի պալատի հրապարակը...

Հրապարակում զինվորների գայլուկի աղաղակներ են լսվում... «Գնդակահարե՛լ... մահ... մահ...»: Տերեշչենկոյին, Կոնովալովին և ուրիշ մի լեքկուսի միջանի հարված են տալիս... Կարմիր-գվարդիականները հորդորում են զինվորներին: Աղաղակում են. «Մի մթադնեք պրոլետարական հաղթանակը»... Կատաղած զինվորները լեռ են քաշվում ձերբակալվածներից: Կարմիր գվարդիականներն ողակում են նախկին կառավարութիւնը: «Հառա՛յ: — Ողակն առաջ շարժվեց Միլիոննայա փողոցով դեպի Պետրոպոլիսկի բերդը: Տանում են հեղափոխության դեմ ստեղծված նկուղները:

Զինվորներին հրամայվում է շարվել և վերադառնալ իրենց զորամասերը: Դրանով էլ վերջանում է հաղթական հոկտեմբերի 25-ը:

— . —

1. ՌՎԷԻՐ ԵՒԻՆ պաշտպանում ժամանակավոր կառավարութիւնը:

2. ԽՆԿԱԿԱ են գրավում Զմեռալին պալատը:

3. Հոկտեմբերի քսանհինգով ի՞նչ նոր շրջան է սկսվում պատմության մեջ:

— . —

գրող—միասին հարձակում

յունկեր—ցարական զինվ.

գպրոցի սովորող

պատմահայտ—բարրիկադի լեռն

մտնել

ալալուրդ—աթթու

հրանոթ—թնդանոթ, հրազեն

աղետ—ծանր դժբախտութիւն

ֆիզիկապես—մարմնապես

հորդորել—քաջալերել

նկուղ—պողպատ

ԿԱՐԴԱՆ

ՌԵԽՆՈՎ—Ռազմի ուրեր, գիւնը 20 կողակ:

67. Հեղափոխական գինվորներն արթուն հսկում են

1917 թվի հոկտեմբերի 26-ն եր, Գնում ելինք Ձմեռային պալատ:

Հսկայական հասակով մի գինվոր կանգնեց մեր առջև. նրա դեմքին անվատահուժյուն կար զրված:

— Ո՛վքեր եք դուք, — փնթփնթաց նա: — Ի՞նչ եք անում ալստեղ:

Մյուսները դանդաղորեն շրջապատեցին մեզ՝ կասկածանքով նայելով մեզ վրա, ու սկսեցին փոփալ. «Սպիտակներ են»: Յես լսեցի՝ ինչպես մեկը բացականչեց՝ «Թալանչիներ»:

Յես հանեցի Կոմիտեյի տված անցատոմսերը: Զիջվորը տհաճութամբ վերցրեց, շրջեց այն գլխավալ ու նայեց. բան չհասկացավ: Յերևի անգրագետ եր: Նա վերադարձրեց անցատոմսերն ու թքեց:

— Թղթեր, — ասաց նա արհամարհանքով:

Մեզ շրջապատող շղթան սկսեց սեղմվել: Նրանց դուխների վրայից չես նկատեցի մի սպայի, վոր չափազանց կրակոտ տեսք ունեւր, ու ձայն տվի նրան: Նա բազմությունը ճեղքելով՝ մոտեցավ մեզ:

— Յես կոմիսարն եմ, — ասաց, — ճվ եք դուք: Այդ ի՞նչ ե:

Մյուսները փոքր-ինչ յետ քաշվեցին: Յես թղթերը հանեցի:

— Դուք ոտարեկրացիներ եք, — արագ հարցրեց նա ֆրանսեզներն: — Այդ շատ վտանգավոր ե:

Հետո մեր վկայականները բարձրացնելով՝ դիմեց հավաքված բազմության:

— Ընկերներ, — բացականչեց նա, — այս մարդիկ Ամերիկայից եկած ոտարեկրացի ընկերներ են: Նրանք յեկել են ալստեղ, վորպէսզի իրենց հայրենակիցներին պատմեն պրոլետարական բանակի ջաշագործության և հեղափոխական կարգապահության մասին:

— Դուք վճռեղից գիտեք այդ, — ասաց մեզ հետ առաջինը լսոտող գինվորը: — Յես ձեզ ասում եմ, վոր սպիտակներ են: Նրանք համոզում են մեզ՝ իբր թե յեկել են պրոլետարական բանակի հեղափոխական կարգապահությունը դիտելու. նրանք ազատ զրոհում ելին պալատում, և ինչ իմանանք, թե նրանք իրենց գրպանները զանազան մանրուկներով չեն լցրել:

— Չիշտ ե, — աղաղակեցին մյուսները՝ առաջ շարժելով:

— Ընկերներ, ընկերներ, — դիմեց նրանց սպան, և ճակատը ծածկվեց ջրախնքով: — Յես Կոմիտեյի կոմիսարն եմ: Դուք ինձ հա-

վատնւմ եք: Դե ուրեմն լսեցեք,—այս անցատոմսն ստորագրված ե միևնույն ազգանունով, վորով և ստորագրված ե իմ անցատոմսը:

Յեկանք դուրս: Գիշերալին սառը ողը լցված եր մթության մեջ շարժվող բանակի աղմուկով: Գետի կողմից լավում ելին խապոտ աղաղակներ... Մայիսի վրա կրի կտորներ ելին թափվել պալատի անկյունից, վորին յերկու ուսմբ եր դիպել «Ավրորա» ռազմանավից, Ռմբակոծման հաջորած միակ ֆլամն եր այդ:

Արդեն առավոտյան ժամը յերեքին մոտ եր: Բոլոր լապտերները կրկին վառված ելին: Թնդանոթը վերցրել ելին, և պատերազմական դործողությունների միակ նշանը խաբույկի մոտ նստած կարմիր գվարդիականներն ու զինվորներն ելին: Գուցե իր գոյության ընթացքում քաղաքը յերբեք այդպես խաղաղ չի յեղել: Այդ գիշեր վոչ մի թալան, վոչ մի դողություն չեղավ:

1. Ինչ հեղափոխության և վերաբերում այս հոգւածը:

2. Ինչք եր ըզխում հեղափոխական զինվորների այդ առանձնահատուկ գգուշությունը:

68. Մոսկվան բարբիկադները վրա

Տազնապալիցք սե գիշերը նորից սփռից Մոսկվայի վրա: Լըռությունն այս ու այնտեղ խանգարվում եր կամ ճիշով կամ ել ճալթյունով: Մերթնդներթ ինչ-վոր բան գղրղւունով փրվում եր, յերկաթի շաչունը խոցում եր մառախուղը, դարպասները ճրթճրթում ելին, հեռագրասլունները զլորվում, ու այդ ամենից դիզվում եր ընդհանուր աղմուկ ու ճալթյուն:

Լսվում եր խոսակցություն:

— Շուտով լույսը կբացվի... Զոռ տվեք, աղերք... Հոնալ տվեք...

Մի անդամ ել... Այգալես... Ռ'Լֆ...

Դ-զ-զ գ...

Դղրդւունից գիշերը դողում եր: Յեվ սարսափելի յեր, և ուրախալի: Վախն ու համարձակությունը դրգռում եր համատարած մառախուղի մեջ վխտացող մարդկանց: Պատահաններում մի հատիկ ճրագ անգամ չկար: Մութ ստվերներինման կանգնած ելին տները: Կացնի թրխիոցն արձագանգում եր հեռավոր փողոցներում: Լսվում եր սղոցի անդադրում խզողոցը: Ամուր ձեռքերն ամեն ինչ շարդում ելին ու քարշ տալիս—հայտնի չե՝ ուր:

Կտրած տեղերի յետևից ձայն լսվեց:

— Այստեղ պատրաստ ե:

Մթությունը խոցեց հեռավոր յեռանդուն մի ձայն.

— Յեկեք մեզ ողնեք: Մեզ մոտ քիչ մարդ կա:

— Իսկույն...

Յեզ նորից լսվեցին ճաթյուն ու թրխկոց: Բայց ահա գիշերն սկսեց նստրանալ: Փարատվող մթության մեջ սկսեցին լերկալ բարրիկադները:

Հեղափոխությամբ արթնացած Մոսկվան կազմ ու պատրաստ գլխավորում էր բոցափայլ արշալույսը:

Լույս էր արդեն:

69. Մպիտակներից հետո

Լիզան վաղեց մինչև թաղամասի վերջը, ապա թեքվեց դեպի խաղաղ փողոցը, վազեց մինչև յերկաթաշարք աների կեսը և ծանր հևալով կանգ առավ:

Սկսեց ուշադրությամբ ահանջ դնել. — վոչվոք իրեն չի հետապնդում: Շրջապատի բոլոր տնակները մութն ելին ու խաղաղ: Հեռվից պարզորոշ լսվում էր միայն հրացանածգության ձայնը և յերբեմն ել գնդացիների ճարճատուժը:

Ժամանակ առ ժամանակ փչում էր քամին, և Լիզան, վոր մի հատիկ շոր ունեւր միայն հագած, մըսում էր, և դողն անջնում մեջքով ու ձեռքերով:

Նա քայլում էր մեքենայորեն ու լուռ արտասվում: Արցունքները հոսում ելին աչտերից ու վար ընկնում ձյան վրա: Ինքն իրեն մոռացած՝ քայլում էր նա յերկար ժամանակ: Արդեն բոլորովին սառել էր: Սկսեց լուսանալ: Այժմ նա անցնում էր մոխրագույն ցանկապատերի մոտով, վորոնց յետևը քամուց սվսվում էին ծառերի մերկացած ճյուղերը:

Հանկարծ նա սարսափած վեր թռավ և կանգնեց քարացած: Հենց ցանկապատի առաջ, կարմրին տվող ձյան մեջ նա նկատեց մի ինչ-վոր անորոշ կուլա: Նրան թվաց, թե ելի մարդկալին մարմնի գծազրություն ե տեսնում:

Ուզում էր կրկին գոռալ ու փախչել, փախչել ու գոռալ: Մակայն նա հաղթահարեց վախը և սկսեց զգուշությամբ առաջանալ դեպի ցանկապատը՝ աշխատելով կռահել յերկացող առարկալի անորոշ գծազրությունը:

Մոտենում էր ավելի ու ավելի: Վտառները թաղվում ելին խոր ձյան մեջ: Հանկարծ կարծես միանգամից՝ նա տեսավ, ճանաչեց, խուլ ճչաց ու նստեց: Պատուտած շորեր, վորոնց միջից կապտին

ճոր տալիս մերկ մարմինը: Կանացի հագուստ, կանացի շորեր, սևա-
ցած խոր վերք կրծքի ձախ կողմում՝ վերևից, լեռնան ու մերկա-
ցած թևերը տրորված: Աչքերն ամուր փակված՝ եյին, շրթունք-
ները կրծնոտած: Արձակ, գանգուր մազեր, վորոնք փռվել ելին ձախ
վրա... Դա Սիմկովայի դեմքն էր: Այժմ Լիզան չեւ գոռում և վոչ
եւ լալիս: Խոնավացած ձյան վրա ոտդալով՝ նա մոտեցավ դիակին,
բարձրացրեց մեռած գլուխը և ձեռքի ափերով դիպավ աչուերին:

Յերկինքն սկսել էր կարմրին տալ:

Լիզան ավելի և ավելի պարզ էր տեսնում Սիմկովայի դեմքը,
ուր սառած եյին տանջանքի ու զզվածքի ջրածուրթյունները: Այդ
գունատ, մեռած-փակված աչքերով դեմքը նա միքիչ առաջ տեսել
էր կենսալի, դեղեցիկ ու ժպտուն:

Նրան թվաց, վոր մարդկային կյանքը հասել է իր վախճանին,
մնացել են դատարկ, մեռած տնակները:

Յեւ բուրբ անորոշությամբ նայում էր նա դարնան պարզ և
ուրախ գեղեցիկ արշալուսին:

Քաղաքի վրա սավառնում էր զատիկական զանգահարությունը,
և նրա ձայնը հյուսվում, ձուլվում էր զնդացիրների ճարճատուն-
ներին և խուլ հրացանաձգության, վորը այժմ շառաչում էր քաղա-
քի լերկու ծայրերում:

Կյանքը պալքար է: Յեւ լեթե աչտեղից, աչ փոքրիկ տնակ-
ների և մխրազույն ցանկապատերի այն կողմից դեռևս պարզ կեր-
պով լսվում են հրացանների ձայներ, նշանակում է՝ պալքարը դեռ
վերջացած չէ...

Նշանակում է՝ դեռ կյանքը հոսում է, լեթե կոմունիստները
շարունակում են կռվել:

1. Ինչ՞եւ յիւ Լիզան կարծում, վոր չգեռ կյանքը հոսում է, լեթե կո-
մունիստները շարունակում են կռվել:

2. Ո՞ւմ կողմն է այս հատվածի հեղինակի համակրանքը և ինչից է այդ
յերևում:

ցանկապատ — չափառ

կռահել—գլխի ընկնել, գուշակել

70. Կոմունարուհին

Նավորոսիյսկ քաղաքում յեռանդով պատրաստություն էյին
տեսնում արշավելու Պոկրովսկու վրա: Կարմիր գվարդիա յիւ կազ-
մակերպվում: Եւ հասակին չեյին նայում. ով ուզում է լինել՝ ծեր,
ջահել, կին,— ում ասես՝ ընդունում եյին:

Վարլան չէր կարող անտարբեր մնալ: Կլանքը կռիվ էր պահանջում: և նա մտալ կարմիր գվարդիան: Ամեն որ ասանում էլին քաղաքից դուրս, սովորեցնում, թե ինչպես պետք է բանեցնել հրացան, նշան խփել և ուռւք նետել: Նշանը հեռագրի սլուռներն ելին: Մի շարաթ վարժվելուց հետո զորաւմբերը գնացին ռազմաճակատ: Իսկ Վարլային քուլը նշանակեցին սանիտարական գնացքի մեջ, վոր յերթեկում էր ռազմաճակատի և Նովորոսիյսկի միջև:

Մի ամբողջ շարաթ Վարլան գնում-գալիս էր սանիտարական գնացքով: Բայց այս աշխատանքը չէր գոհացնում նրան: Ամեն որ հուզումնայից լուրեր էին գալիս, թե կարմիրները քշում են սպիտակներին, թե կարմիրներն արդեն Յեկատերինոգարի մաս են: Յեւ Վարլան ուզում էր նրանց հետ լինել:

Վարլան մի որ առավոտյան թողեց սանիտարական գնացքը և ծածուկ գնաց մոտակա գլուղը, ուր պարտիզաններ էլին հավաքում:

Շուտով մի զորախումբ կազմվեց 300 հոգուց բաղկացած: Շատերը գալիս էին իրենց զենքերով:

Հրամանատար ընտրեցին և առաջ շարժվեցին Յեկատերինոգարի ուղղութիւնը: Անցնում էին ստանիցայից ստանիցա, և ամեն տեղ նոր ու նոր պարտիզանական խմբեր էլին հավաքվում, իսկ սպիտակները չէին հանդիպում:

Վերջապես մի տեղ ընդհարվեցին սպիտակների հետ: Դրանից առաջ չէրեք որ անընդհատ ձյունախառն անձրև էր գալիս, ամեն տեղ խոր դրեր էին գոյացել: Ու հանկարծ անազանդ արվեց:

— Սպիտակները հարձակվում են... Պարտիզանները շղթա կազմեցին և սկսեցին կրակել: Պատել էլ անկարելի էր. չորս կողմը շուր էր. բայց և այնպես վոմանք պակեցին ուղղակի ջրի մեջ:

Բայց պարտիզանների կրակոցը շատ էլ չէր վախեցնում սպիտակ զորամասին: Նա շարունակում էր առաջանալ: Պարտիզանները շուտով սկսեցին անկարգ նահանջ տալ դեպի մոտակա ստանիցան: Այստեղ հառան հոգնած, թրջված, հույս ունեւին հանգստանալու. չաջողվեց. սպիտակները ժամանակ չտվին:

Ստանիցայի յետևը կանգնած էին Արինյան վաշտերը յերկու թնդանոթով և գնդացիներով: Պարտիզաններին սպիտակների տեղ ընդունեցին և ուզում էին գնդակոծ անել նրանց: Հետո հրամանատարը ծանոթներ գտավ, և պարտիզանական խումբը միացավ նրանց հետ:

Սկսվեց մի կռուտ կռիվ: Դա առաջին լուրջ ընդհարումն էր, վորին մասնակցում էր Վարլան: Պայթում էին շրապնէլները, հրանոթները, գնդակները գալիս էին գնդակի պես: Հագիւմ ժամանակ

եյին գտնում վերապորներին տեղափոխելու հետու ընկած մի փոքրիկ խրճիթ:

Անձրեւ դադարեց. Սկսեց սառ. քամի փչել. Յուրտ եր. Անձրեւի տակ թրջված շինեւները սառեցին: Յուրտ քամուց պաշտպանվելու համար իրար վրա դարսում եյին սպանված ընկերների դիակները և յետևը կանգնում, վորով կարծես թե միքիչ տաքանում եյին: Կոփվը շարունակվեց ռմբոջ դիշերը, իսկ առավոտյան սպիտակների գրոհն ավելի սաստկացավ: Նրանք պատուեցին կարմիրների շղթան, ներս խուժեցին այն խրճիթը, ուր տեղափոխված եյին վերապորները, և կոտորեցին նրանց:

Զորախուռմը շտապով հանեց թնդանոթների ըսնալիքը և յետ նահանջեց գետի վրայով: Անցան ծանծաղուտով: Վարյան լետ մնաց, ջրի հոսանքի մեջ ընկավ, և ալիքներն սկսեցին զարնել նրան: Հրացանը ծանր եր, ներքև եր քաշում: Վարյան ըռնեց մի թփից և դուրս յեկավ ափ:

Գտում եյին՝ սառուց կտրած շինեւները հազներին: Նրանք, վորոնք ուժասպառ եյին յեղել, ընկնում եյին և տեղնուտեղը մնում հավիտյան: Վերջապես հասան դադարի տեղը և ցրվեցին խրճիթները: Բայց առավոտյան նոր եյին խարուկները վառել, մեկ ել նորից տհազանք լեղավ, թե թշնամին դալիս ե: Ահադանգը սոււա եր. բայց վորովհետև վաշտը ռադմակոն պատրաստութիւն մեջ եր դրվել, վճռեցին լետ դառնալ և քշել սպիտակներին այն ստանիցայից, վորը թողել եյին յերեկ: Սպիտակները նրանց դիմավորեցին շատ ուժեղ զնդացիբային կրակով: Կարմիրներից մեկը վազեց դեպի կամուրջը աղաղակելով. «Ձերոնցից եմ, ձերոնցից», սվինահարեց զընդացիներից կրակոյ չորս սպիտակներին և քարշ սվեց բերեց գնդացիքը: Չնայելով այս հերոսական քաջագործութեանը, չաշողվեց ստանիցայից դուրս քշել սպիտակներին: Զորախուռմը լետ դարձավ:

Սպիտակները վրա եյին հասնում: Վարյան չեր կարողանում զնալ. վոտները ցրտահար եյին յեղել: Թներից բռնած քարշ ելին տալիս նրան:

Գետի աջ կողմը մի փոքրիկ գլուղ կար: Բարեբախտաբար ալտոեղ ձկան շատ դատարկ տակառներ կային: Սյդ տակառները կապեցին իրար, նրանց վրա տախտակներ դրին, մի տեսակ կամուրջ շինեցին, վորով և նրանք անց կացան մյուս ափը: Անտեղ գլուղացիներից ձիեր վերցրին և հիվանդներին ու վերապորներին ապրերով ճամպեցին դեպի Նովորոսիյսկ, Հիվանդների թվում եր և Վարյան:

Կոփվը վերջացավ: Անորինակ տանջալից և արկածալից տարիները յեակը մնացին:

Կարմիր բանակը վոչնչացրեց սպիտակ-գվարդիականների խուժաններին:

Առջևը կանգնած էր սպիտակ բռնակալներէից ազատադրված Կարմիր թորհրդային Ռուսաստանը:

Վարյան շուտով վերադարձավ Յեկատերինոգրա՝ մասնակցելու այն մեծ խաղաղ աշխատանքին, վորին լծվել էր բանվոր դասակարգը՝ իր մանուկ աշխատավորական հանրապետութիւնն ամրապնդելու համար:

1. Խոչնդան կաղմվեց Կարմիր գվարդիան: Խոչ սոցիալական կազմունքին պարտիզանական խմբերը:

2. Պատմիր քո հուշերը քաղաքացիական պատերազմներէից:

3. Յերբ վերջացան քաղաքացիական կռիւները Ռուսաստանում, Հայաստանում, յերբ սկսվեցին խաղաղ շինարար աշխատանքները:

ստանիցա—կազակների զլուդ	գրոհ—հարձակում
պարտիզանական խումբ—կամավորական խումբ	ծանծաղուտ—ջրի սաղը տեղերը
կան խումբ	անհազանգ—կռիւ աղդանշան
շրապնել—թնդանութի գնդակ	արկածայիլ—գեպքերով լի

71. Կոմյերիտականի մահը

Յես ուզում եմ այսօր հիշել մի տղայի մասին՝ Ուիշկկա կաշարանի դեպոյից: Նա դոմիւսը № 15 շոգեշարժի վրա: № 15 շոգեշարժը, վոր միացված էր հարլուր վագոնանոց սպայական շարանին, պալթեցնել էր պետք: Դրանով կարելի չեր կասեցնել մերթիւկունքը ներխուժած հակառակորդի շարժումը: Դրանով կարելի չեր վանխել թեւանցումը: Դրանով կարելի չեր փրկել հազարավոր մարդկանց կյանքը, վորոնց սեղմում էին սոսկալի ողակի մեջ, և տասնչափ ու հարյուրավոր գյուղերի բախտը, վորոնք արդեն իսկ թշնամու ձեռքն էին մատնված, արդեն պատրաստ էին ընդունել և՛ մահ, և՛ չարչարանք, և՛ անարգանք:

Բայց ուղևորվել այդ շոգեշարժով՝ նշանակում է կյանքում վերջին անգամ անցնել վերջին կիլոմետրը. պալթեցնել շոգեշարժը՝ նշանակում է ծվատված շոգեշարժում լինել, վորի կտորտանքն ավելի փոքր կլինեն, քան թե $\frac{1}{2}$ կիլոյանոց պիրոքսիլինի գլանով պալթեցնած փոքրիկ թռչնիկի կտորները:

Շոգեշարժը համազոր էր մահվան:

Յերեք հոգի շոգեշարժի անիմների մոտ վիճակ էին հանում:

Վիճակը հանեց մի շիկահեր աղաւ Նրա մագերը նման ելին խճճված
բուրավետ ու թարմ վուշի:

Նա տասնութ տարեկան էր: Ինչ-վոր հեռու տեղում նա ու-
ներ մայր, վորին նա չէր ճանաչում և չէր հիշում, վորովհետեւ
այստեղ նա տանջվում էր ոտարների մոտ, թափառաշրջիկ էր: Յեւ
մաւրն անճանաչ էր ու մոռացված այդ թափառաշրջիկ, կարճատե-
րայց տանջալի կյանքում: Մի անգամ նա մորից բանավոր մի լուր
ստացավ. մայրը կանչում էր նրան, վորովհետեւ նա ծերացել էր,
վորովհետեւ նա մեռնում էր ծերությունից, վշտից և ուժասպա-
ռությունից: Նա ուղում էր մեռնելիս վերջին ու միակ անգամ
ղդալ չտեսած ուրախություն՝ համբուրել ու սեղմել վախից ու հու-
սահատությունից կծկված կրծքին այդ հարազատ շիկահեր զուգը:

Մոր պատկերը, չճանաչած ու չտեսած, բայց հարազատ ու
ֆիզիկապէս շոշափելի պատկերը, այդ սրվանից արվեն կանգնել էր
նրա առաջ: Միբան ուզում էր տեսնել, սիրտն ուզում էր աղբիւ-

Բայց նրա կյանքը հարկավոր էր հեղափոխությանը, և նա
կյանքը նվիրաբերեց հեղափոխությանը:

Քանիցս շոգեշարժի վրա, յերբ աչքերը կանգ եյին առնում շո-
գեցուցի վրա, և սլաքն անընդհատ սողալով դեպի վեր՝ հասնում
էր արդեն որդասական, վերջին կարմիր սահմանին և կուտակված
ճնշում էր հառաչող հրեշի կողերը, քանիցս ձեռքը դեպի ծորակի-
րոնակն էր դնում. բավական էր միայն սեղմել... սիրտն աղբիւ
էր ուզում: Բայց նա իսկույն յետ էր քաշում ձեռքը, նա կծում
էր ձեռքը, ատամներով պոկում էր միսը. նա մնաց քարացած լը-
ծակների մոտ, աչքերը փակած, ատամները սեղմած:

Թեքվածքի առաջ, լերբ ընթացքը դանդաղեցված էր, լերկու-
հոգի ամենապն ընքշությամբ հրաժեշտ տվին և շոգեշարժից ներ-
քե թռան: Նա ուղղորդ վայրեջքի վրա սարսափելի արագություն
վերցրեց, փակ շոգեցուցի մեջ սլաքը ցատկեց կարմիր գծից ասն
կողմը...

Շոգեշարժը ցրիվ յեկավ մանր կտորների. շաբանը թափվեց
գծի չորս կողմը: Փշրտանքների, անիվների և այլված մարդկային
մխացող սոսկալի կույտը մի շաբաթով կանգնեցրին յերթեկու-
թյունը: Մեր գործերը թևանցված չէին, թեւ փրկված էր, արդեն
անխուսափելի մահն ընդունելու պատրաստ մեքդկանց ու զուգե-
րին նորից կյանք էր շնորհված:

կասեցնել—առաջն առնել
ներխուժած—ներս խուժած

ծվատված—բղիկ-բղիկ յեղած
պիրոքսիլին—պալթուցիկ նյութ է

72. Չապայի

Չապային աղբատ դուղացու դավակ եր, շարքալին դինվոր ցա-
քական բանակում: Նա Կարմիր բանակում դարձավ 25-րդ կարմը-
քադրոշ գլխիդիայի հրամանատար:

Մինչև հեղափոխությունը նա անգրագետ եր: Բայց հենց վոր
կարդալ-գրել սովորեց, ազահությամբ հարձակվեց գրքերի վրա:

Կարմիր բանակում Չապային աչքի ընկավ իբրև տաղանդավոր
հրամանատար: Ամենադժվարին ճակատում՝ բավական եր, յեթե
շղթայում լերեալ Չապայեր,—և կարմիր-բանակալիներն անվախ
առաջ ելին գնում:

Չապայեր կռվում եր միշտ հերոսաբար: Հերոսի պես ել մե-
ռավ:

Մի մռալ աշնանային որ եր՝ Ուրալի ափին, բարձր սարի վրա:
Մալիտալները չորս կողմից շրջապատել էին դիվիզիայի շտաբը:

Չապայեր հավաքելով սի բուռ. քաջեր՝ սկսեց պաշտպանվել:

Ահա փամփուշտները վերջանում են: Այլևս կրակելու բան չկա:
Մալիտալները քանի գնում մոտենում են: Մի խումբ խիզախներ
սեղմված են ափին: Ընկնում են սպանվածներն ու վիրավորները:
Բայց Չապայեր դեռ կանգնած ե: Մի ձեռքին հրացանն ե, մյուսին՝
ատրճանակը, Չորս կողմի դիակներ են, վիրավորների անջոցներ:
Չապայեր կանգնած ափին՝ կրակում ե, չի թողնում իրեն մոտե-
նան: Մի ձեռքը վիրավորվում ե: Սրբում ե արցունք և մի ձեռքով
շարունակում ե կրակել: Ահա և վերջին գնդակը...

— Հիմա մեք նրան կրճենք,—ուրախանում են թշնամիները:

Բայց վե՛շ, Չապայեր չի ուղում կենդանի ընկնել սպիտակների
ձեռքը: Նա բարձր ափից ցած ե թռչում գետի մեջ, և պղտոր ա-
փքներն իսկույն կուլ են տալիս նրա մարմինը:

1. Ո՞վ եր Չապայեր:

2. Ինչո՞վ բացատրել նրա հմայքի մեծությունը:

խիզախ—հանդուգն, քաջ

| հմայք—կախարդանք, գրավչություն

Կ Ա Ր Դ Ա՛

Դ. Ֆուրմանով.—Չապայի, գինը 20 կոպ.

73. Տասներեք տարեկանը

Գիշերը սև ժգլած սենյակում իր յեղբայր Միտրիի հետ միևնույն անկողնում է քնում Վանկան։ Քնած էր Վանկան։ Յերազում տեսնում է, իբր թե լիվերի բաժանմունքին հսկայական զորության մի շոգեկառք մոտեցավ։ «Վճռու» մոնչաց, շարժվեց, գընաց, դնաց դեպի Մոսկվա գետը, գետն էլ ամենեին գետ չի, այլ ծով է, սոցիալիստական հեղափոխության ծով։ Շոգեկառքը, առանց մտածելու, արիքների մեջ է մտնում։ Արիքները բարձրանում, տանիքի վրայով մշուս կողմն են թափվում, շոգեկառքի ներսն են վողողում։ Հնոցի բոցը բորբոքվում է, ծովի ազան լեզուներն է այրում, և թշշում, թշշում են ածուխի կտորները։

Իսկ հնոցսպանը Վանկան է։

— Հը, հողենցի՞ր, ընկեր Նազարենկո (Վանկայի ազգանունն է)։ Նայում ես և ինչ տեսնի.— Լենինն է։

Սրտում փրփուր է բարձրանում։

— Ձե, չեմ հողենի, ընկեր Լենին։

— Իսկ ի՞նչ ես կարծում, շոգեկառքը մինչև կոմունիզմ կըհասցնենք։

— Կհասցնենք, ընկեր Լենին։

— Դե՛, լիթե ալդսես ես, արագ շարժվիր, քիչ է մնացել..

— Պատրաստ ես, ընկեր Լենին։

Բշտիկներով է ծածկվել կաշին. սպիտակ բլրակների պես վրան տալիս արիքները, լիզում, պալթեցնում են բշտիկները։

Հանկարծ—կանգ է առնում շոգեկառքը... Կղզի է։

Կղզում ամառ է։ Արևի լույսն է ծորում։ Ձեփյուռն է շույում։ Բողբոջների մեջ են տները։ Տներեց ինչ-վոր մարդիկ են դուրս գալիս։

— Բարե՛ ձեզ, ընկեր Լենին, իսկ այս ձեր հետի տղան մի է։

— Սա կոմյերիտական Նազարենկոնն է։

— Վնչ, յես կոմյերիտական չեմ, ընկեր Լենին. կանոնադրության պահանջածից մի տարով փոքր եմ, տասներեք տարեկան եմ ..

— Ա՛, ալդսես ես, հա...

Յեվ հանկարծ հանում է Լենինը մի բոլորովին նոր կոմյերիտական տոմս և Վանկային է տալիս։ Վանկան արդ տոմսում տեսնում է իր ազգանունը, անունը... Ա՛խ...

— Վանկա, ալ Վանկա։

— Ի՞նչ է, ընկեր Լենին։

Տրորում ե քնաթաթախ աչքերը և Միտրիին ե տեսնում:

— Ի՞նչ լեղավ տոմսը, տոմսն ձեռք ե:

— Ի՞նչ տոմս:

— Միութենական տոմսը:

— Ո՞ւր:

— Իմ:

— Վո՞րտեղից եր:

— Ընկեր Լենինն եր ավել...

Յեվ հանկարծ հասկանում ե Վանկան, վոր լերագույն ե տեսել Լենինին, և այլևս վոչինչ չկա:

Դառնությամբ պատմում ե Միտրիին:

Միտրին սրտաշարժվում ե:

— Տեսնում եմ, Վանկա, վոր դու լավ կոմյերիտական ես լինելու: Միայն թե լես փլ հիմա քո զրության մեջ եմ—դու կոմյերիտմիություն ես մտնելու, իսկ յես՝ կուսակցություն... Քեզ պես չես ել եմ սանջվում, տարիքդ պակաս ե, ասում են...

Մեղմ զողանջի պես արձագանդվեցին Վանկայի սրտում յեղբոր խոսքերը:

— Ճիշտ ե, ճիշտ, Միտրի, մեզ ուղիղ մեկական տարի չե պակասում: Արի պայման կապենք—զալ տարի յերկուսս միասին մտնենք:

— Համաձայն եմ:

Արհեստանոցի աչքի ընկնող տեղում ծեր Պետրոն կպցրել եր՝

Կառավարական հաղորդագրությամբ

«Վ. Ի. Լենինի առողջությունը նկատելի չափերով վատանալու պատճառով ախտը վանից սկսած նրա առողջության մասին բյուլլետեն ե հրատարակվելու»:

Այդ աչքի ընկնող տեղի առաջ վաղ առավոտից սկսած մարդիկ են խոնջվում: Կարդում և լուռ հեռանում են: Կնճռոտվում են ճակատները, կուչ են գալիս ուտերը, սառչում են աչքերը կոպերի տակ:

— Վատ ե Վլադիմիր Իլյիչի առողջությունը...

— Վատ ե...

Իսկ ՌիցեՄ բջիշում կարդում ե քարտուղարը:

Շրջաբերական նամակ

Ռիկ 25-ամյա հորեյանի մասին:

Կոմյերիտմիության լավագույն նվերը կուսակցությանն այն կլինի, վոր նա իր բանվորական բջիջներից ընտրովի տղաներ մշտեցնի կուսակցության մեջ:

Մ. Կ. Քարտուղար:

Մարտի լույս տաճաներից զիշերը Մոսկվայի Խամոմիդիկան թաղում, յերկրորդ համալսարանը ծաղկել էր։ Մաղկել էր հին լսարանը, վոնց վոր յեղրեանին է ծաղկում։ Յեվ դրանից յեղրեանու գույնի յեն դառել զորաբանակի գլխադավար ընկ։ Անտոնովի աչքերը, և յեղրեանու յերանգ է առել նրա ձայնը, վորովհետև նա կուսակցության հորեկանի մասին եր խոսում։

Անտոնովից հետո Տրուբան խոսեց, հիշելով ցարական կարգերի ժամանակվա իրենց գաղտնի գործունեությունը։ Խոսեցին և հիշողություններ պատմեցին նաև ուրիշ ընկերներ։ Նրանց ճառերը հեռավոր բանտերում թառամած հուշերի յեղրեանիններին ելին հարություն տալիս։

Յեվ լայնածավալ դահլիճի բոլոր ծայրերից, գլուխների վրայով, մազերի մամուռի վրայով ձգվում յերկարում ելին գրությունների ճերմակ ժապավենները։

Մյուս առավոտ կոմյերիտականներն ակումբ ելին հավաքվել։ Քարտուղարը, վոր միևնույն ժամանակ կուսակցության անդամ եր, կուսակցության, Լենինի, կոմյերիտականների մասին խոսեց։ Ասաց, վոր հիմա Վլադիմիր Իլյիչին ոգնականներ են պետք՝ խիստ հոգնել է ինքը։ Իսկ ոգնականներին կոմյերիտությունն և պատրաստում, Հիմա այդ ոգնականը տալու ժամանակն է։

— Ընկերներ, բլիշի բլուրոն Սերգեյևա Աննային է առաջարկում, վոր 19 տարեկան է, և Նազարենկո Միտրին, վոր 17 տարեկան է։ Դրանց կարծեմ բոլորդ ել ճանաչում եք, իսկ իրենց համաձայնությունը տվել են։

Ի պատասխան, ինչպես մեղվանոցի գվվոց, լսվեց.

— Լավ ե... գիտենք... համաձայն ենք... հենց դրանց ելինք ուզում առաջ քաշել...

Նայում է Վանկան յեղբոր կողմը, տեսնում է—յեղբոր աչքերն անսովոր կրակով են վառվում։

Բայց ինչո՞ւ չի առարկում քարտուղարը։

Քարտուղարը համաձայն է։

— Ուրեմն ընդունված է համարվում։

Յլ չլսեց Վանկան, թե ինչ խոսեցին դրանից հետո, զգաց միայն, վոր մթնում են աչքերը, պտույտ է գալիս գլուխը,—շուրջը՝ տղաներ, սեղաններ, աթոռներ,—և տղաները, սեղաններն ու աթոռներն իրար են խառնվել...

Այդ գրություններով առաջարկում ելին վողշույններ ուղարկել Լենինին, շտապփուլից առողջացում ելին ցանկանում նրան և լավ թե վատ, հարթ թե անհարթ գրված արդ թղթերից ձեռքերի կոշտվածքներ, քրտնքի և չեքկած հողի հոտ եր գալիս։

Յեվ յերբ ընտրված կոմյերիտականներին կուսակցութեանն ելին հանձնում և հանձնաժողովներէց ամեն մեկը, զգացմունքների հորդմունքը հազիւ զսպելով, ժողովականների շարքերի միջով դեպի առանձին դրված սեղանն եր գնում, ստանում եր թեկնածուական քարտը, Բուխարինի դրքուկը և հսքելյանական նշանը—ձեռքերի կատաղի ծափերից, կանչների աղմուկից, կեցցենների զողանջից շնչահեղձ եր լինում դահլիճը և լերաժշտութեան ձայնը թաղվում եր մանուկների ձայների ծովում:

Մըրկի պես դեպի վեր եր բարձրանում փոթորկալից հրճվանքը, Կատաղի գրոհով պատերին եր զարկվում: Յեվ լսարանում չկար Վանկա, ինչպես վոր չկային նաև ուրիշ Վանկաներ, Կոլյաներ, Պետյաներ, Դուռնաներ և Մանյաներ. մի բլուրաչքանի, բլուրագլուխ մասսա կար, մի ուրախութեամբ եր տրոփում նրա կուրծքը, մի սեր եր քոցկառում նրա սրտում, անձնվիրութեան մի զգացմունք և զոհաբերութեան մի պատրաստակածութիւն կար նրա մէջ:

Յեվ յերբ վոր ամբիոնին Միտրին եր մոտենում, Վանկան, քանի թոքերում ուժ կար, կանչեց, կատաղի լարումից աչքերը փակելով:

— Միտրի, չամաչեցնես կոմյերիտիութեանը, Իլիչի աղնիւ ոգնականը լեղիր:

Յեվ ամենքը դեպի Վանկան դարձան ու աեսան նրա անշուք արտաքինը՝ ուրախութեան հորձանքի մէջ լողալիս:

—————

1. Ի՞նչ տվյալների հիման վրա կարելի յի վորոշել այս պատմվածքի ժամանակաշրջանը:

2. Ի՞նչ շրջապատի ծնունդ է Վանկան. ի՞նչ ընտանեկան և գործարանային մթնոլորտում է նա մեծանում:

3. Ի՞նչ մտքերով է նա ափողովին տարված:

4. Վերջան է նա նվիրված բանվորութեան, կոմկուսակցութեան և կոմյերիտիութեան:

5. Ի՞նչն է դրդում Վանկային կոմյերիտական դառնալու:

6. Տալի՞ս է արդիւք այս պատմվածքը խորհրդային գործարանի ներքին կյանքի պատկերը. պատմե՞ք ձեր գործարանի ներքին կյանքի մասին:

—————

լիվերս—ժանյակների գործարանի
պլեամբոր մեքենա
բյուլետեն—ամենօրյա տեղեկու-
թյուններ

սարդ—մանող մեքենայի մի մասը

74. Ք ՝ ա ն վ ե ց ր

Անապատում նրանք ընկան,
դասակարգի աչքից հեռու:
Անդրկասպյան ավազներում,
անտառատում նրանք ընկան:
Դիրք բորենին բրիտանական
վոխից վռնում եր, հոհում,
անապատում նրանք ընկան,
դասակարգի աչքից հեռու:

Կգա և բուսին հատուցման,
և մեր գնդակն ել չի շեղվի:
քեզ համար, դահլիճ Դենսդերվիլ,
դեռ կգա բուսին հատուցման:
Դեռ ալն վեհն արնոտ չի լուծված
և—ահեղ, անխուսափելի—
դեռ կգա բուսին հատուցման,
և մեր գնդակն ել չի շեղվի:

Միշտ նույն կրակն է ինձ հուզում—
կռվել ձեզ պես հերոսաբար,
անմարելի և անդադար
միշտ նույն կրակն է ինձ հուզում:
Մահն ընդունել ձեզ պես հզոր
ու թշնամուն նախել հպարտ—
միշտ նույն կրակն է ինձ հուզում—
մեռնել ձեզ պես հերոսաբար:

Նրանք ապրում են կենդանի
ամենորյա մեր պալքարում:
Թարմ ու վառման, վորպես արյուն,
նրանք ապրում են կենդանի:
Ըմբոստ վողիչ Շահումյանի
ըրջում է դեռ, զեկտվարում:
Նրանք ապրում են կենդանի
ամենորյա մեր պալքարում:

Կարմրակրակ լուսաբացի,
լուսի համար նրանք ընկան,
ալն վիթխարի, հերոսական
կարմրակրակ լուսաբացին:
Յեվ արյունով Քսանվեցի
լուսաբացը ալներկ հազավ,
դրա համար նրանք ընկան
կարմրակրակ լուսաբացին:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ո՛վքեր, մեծ աջակցությամբ և ինչ՞եւ սպանեցին Քսանվեցին:
2. Ի՞նչ մաքուր է հեղինակը գործածում «լուսաբաց»:
3. Ո՛վքեր ընկան այդ լուսաբացի համար և թի՛չ պայմաններում:
4. Վճիրն է Քսանվեցի տեղը մեր հեղափոխական շարժման պատմու-
թյան մեջ:
5. Ո՛վ է կատարում Քսանվեցի թողած ավանդները:

հատուղում—վրեժ

| ըմբոստ—ապստամբ, անհնազանդ

75. Վերջին մայիսը

Խավարն իջավ ու ծանրացավ,
 ու դաշտերում հին Շիրակի
 հովը փչեց, լերգեց անձայն
 ու անհանգիստ, ու անհանգիստ:

Ու մայր մտավ լուսինն ել այն,
 խավարն իջավ դաժան, մոլի,
 ծածկեց նրա թևերը լալն,
 կայաբանը Ալեք-պոլի:

Ալեք-պոլի կայաբանում,
 գծերի վրա սառն ու անձայն,
 վորպես խոսող մի վառանում
 կանգնել ե նա՝ վորպես արձան:
 Զրահապատը լերկաթակող,
 զարհուրելի, խավարամած,
 զրահապատը լերկաթափող,
 զույգ գծերի վրա դամած,
 վերջին բերդը լեչնող ուժի,
 վերջին պահակը Մայիսի,
 նա, վոր ճշաց մեր դրոշի
 ու մեր վերջին մարտի մասին:
 ու Շիրակի հին դաշտերում
 նա զրնգաց, զնգաց նորից,
 ու մոտ թվաց՝ ինչ վոր հեռու,
 ազատ թվաց՝ ինչ վոր գերի,
 վաղվա մասին նա զրնգաց,
 մեր հաղթական բախտի մասին,
 հնի մասին մահադնած
 ու մարմնացած մեր լերագի:

— Գիտե՞ք, վոր այժմ վողջ աշխարհում
 բարձրանում ե հորձանք մի նոր,
 հուրհուրում ե նոր մի դարուն,
 նոր մի արև արևավոր,—
 արևի պես հրանման,
 ու նրա պես լուսապայծառ,
 կյանքը հիմա— և՛ կյանք, և՛ մահ,
 կյանքը՝ ածուխ կրակ դարձած:

Հայաստանից մինչ հեռավոր
աշխարհների հեռու հեռուն,
անպարտելի մի ծարավով
կարմիր ուրուն ե դեգերում:
Կարմիր ուրուն ե դեգերում,
վերջին հյուրը վողջ աշխարհի,—
— Ազատութիւն հողին, գերուն,
վերջ բռնութեան, նրա չարին:
Հայաստանից մինչ հեռավոր
աշխարհների հեռու հեռուն,
անպարտելի մի ծարավով
մեր ցասումն ե հիմա յեռում:
Յեւ այդ ե վոր ահա դարձած
մի պաշարված զրահապատ՝
մեծ պայքարի խոժոռ արձան՝
ծառացել ե խիստ ու հպարտ:

1. Ռւմ դեմ եր մայիսյան ապստամբութիւնը. ժվքեր էյին մասնա-
կցում այդ ապստամբութեանը և Ռւմ դեկավարութեամբ: Ինչհետեւ
2. Հայաստանի հեղափոխական շարժման վերջին օրերն էին և վերաբե-
րում այս հոգովածը: Ինչհետեւ հեղինակն այդ անվանել և «Վերջին Մայիս»:
3. Ինչ նշանակութիւն ունեցավ այդ «Մայիսը» Հայաստանի խոր-
հրդայնացման համար:
4. Պատմեցե՛ք մեր հուշերը մայիսյան ապստամբութեան որերից:

վարանում—սատանում, անորո-
շութիւն |
զամել—մեխել |

անպարտելի—անհաղթելի
դեգերել—այտուղ-այնտեղ
մնալով թափուել

76. Նոյեմբերի 29-ը

Նոյեմբերի 29-ից սկսվում ե խորհրդային Հայաստանի պատ-
մութիւնը:

Մինչև այդ օրը Հայաստանում իշխանութիւնը պատկանում եր
հայ բուրժուազիային և այդ բուրժուազիայի ռազմական կազմակեր-
պութեանը՝ Դաշնակցութեանը:

Դաշնակցական այդ Հայաստանում բանվորներն ու գյուղացի-
ները կատարում էին լոկ «թաւանութիւն մախ» դեր: Նրանք վոչ
մի ձայն չունեցին յերկրում: Կենտրոնական կառավարութեան մեջ
իշխում էին դաշնակցական բուրժուազի կողմից նշանակված խմբապետ-

ներ և խմբապետական հրապարակախոսներ, իսկ գաղառներում և գյուղերում ել միանման դաշնակցական կոմիստրներ: «Դեմոկրատիայի» անունից խոսող հայնացիոնալիստներն ավելորդ ելին համարել նույնիսկ ստեղծել «քաղաքային» ինքնավարութուն կամ գյուղական խորհուրդներ: Նրանց շատ լավ եր հայտնի այն, վոր ամեն մի այդպիսի ինքնավար որդան, վորքան ել այն սահմանափակ լինի, իր կոնկրետ գործունեության ընթացքում արդեն, վորի խավերի ազդեցության տակ, պիտի ուղղվի հայ բուրժուազիայի դիկտատուրայի դեմ:

Իսկ ժողովրդական խավերի այդ դիրքն ավելի քան պարզ եր ու վորոշ:

Յեվ հենց ժողովրդական այդ խավերի բռնկումն ել առաջ ե բերում Մալխյան ապստամբութունը, վոր ճնշվում ե հայ բուրժուազիայի ձեռքով: Դա Հայաստանի բանվորների և գյուղացիների առաջին ապստամբութունն եր, տակավին թույլ, տարերային և անկազմակերպ: Դրա համար ել նա ճնշվում ե:

Սակայն այդ փորձը զուր չի կորչում: Յեվ հեղափոխական մասսաների յերկրորդ գործը լինում ե ավելի ուժեղ և լայն:

Նոյեմբերի 29-ը մահաբեր հարված ե հասցնում դաշնակցական կառավարությանը, և միաժամանակ կտրում ե նաև այն շղթաները, վորոնց միջոցով Հայաստանը կապված եր իմպերիալիզմի հետ:

Նոյեմբերի 29-ը այդպիսով դառնում ե միջազգային հեղափոխության ազատամարտ բանակի անհրաժեշտ ոգակներից մեկը:

Ահա ինչու մենք այդ հեղափոխութունը կարող ենք համարել վոչ միայն «տեղական», «կովկասյան», այլ նաև «միջազգային» իր ելությամբ: «Միջազգային» այնքան և այն չափով, վորքան նա կապում ե Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին միջազգային պրոլետարիատի հետ:

Նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն ստեղծում են իրենց սեփական՝ խորհուրդների՝ պետութունը: Առաջին անգամ կյանքի և գործի յեն կանչվում ժողովրդական լայն շարքերը, Առաջին անգամ դուրս են գալիս բնմ բաճկոնավոր բանվորները և տրեխավոր գյուղացիները, վորոնք հեռավոր գյուղերից սկսած մինչև կենտրոնական վայրերն իրենց վրա լեն վերցնում քաղաքական իշխանության կազմակերպման գործը: Յեվ մտավորականութունը, մասնագետ ուժերը, գիտության լավագույն ներկայացուցիչները դառնում են հասարակական նոր ուժին — պրոլետարիատի դիկտատուրային սպասավորող ուժեր:

խորհուրդներ — գյուղերում, խորհուրդներ — գաղառներն կենտ-

լոններում, խորհուրդների համագումար—բուրժուական պարլամենտի փոխարեն, Դա չե լինում հեղափոխության պետականութիւնը:

Յե՛վ միշտ, ամեն տեղ ու ամեն ժամանակ—մասսաների ինքնադորժումները, քանի որ և գյուղացի ժողովրդի ձեռնարկութիւն և անընդհատ քննադատութիւն ու դեկլարութիւն:

1. Ո՛ւժ եր պատկանում իշխանութիւնը Հայաստանում մինչև նոյեմբերի 29-ը:

3. Վճիռ դատակարարի մարտական կուսակցութիւնն և Դաշնակցութիւնը:

4. Ի՞նչպէս եր կառավարում Դաշնակցութիւնը կենտրոնում և տեղերում:

5. Ի՞նչից եր նա վախենում:

6. Ի՞նչ նշանակութիւն ունեցա՞վ մայիսյան ապստամբութիւնը Հայաստանի Հոկտեմբերի համար:

7. Ի՞նչ՞ն չենք ասում, թե Նոյեմբերյան հեղափոխութիւնը կազմում և Հոկտեմբերի մի ողակը:

8. Ի՞նչից ազատեց և ի՞նչ տվեց նոյեմբերի 29-ը Հայ աշխատավորութիւնը:

V

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԺՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔ

77. Պատգամավորը

Խնձ այցելեց հայրս յերեկ—
վաթսուհամյա մի ծերունի,
վոր տքնել է գիշեր-ցերեկ,
խմել կյանքի դառն թուլինից:

Նա հյուր յեկավ անակնկալ.
և գրկաբաց ընդունեցի,
ասի.—Տո՛ւնդ ե կրակ ընկած,
թե բռնվել ես ծանր վեճի:—

Գրկեց, ասաց նա ժպտալով.
—Յես հպարտ եմ պոետ. վորդով.
բայց փոխանակ տալու յերգեր,
լավ է դաշտում հողը հերկել:—

Յե՛վ նա հանեց իր գրպանից
մի ճերմակ թուղթ, չորս ծալավոր.
—Սա մանդատ է գյուղից, վորդիս,
ինձ ընտրել են պատգամավոր:

Կարծում եյիր հյո՛ւր եմ յեկել,
կամ բերել եմ լուր աղետի:
Վո՛չ, ինձ իմ գյուղն է ուղարկել,
վոր իմ ձայնը տամ սավետին:

տքնել—չարչարվելով աշխատել | անակնկալ—անսպասելի
աղետ—մեծ դժբախտություն |

78. Կոմունա Վրաստանը

Մեր յերկիրը հին ժամանակներից
կառուցվել է մեծ լեռների վրա
ու հարկի դառնություն,
վտանգների դեմ
անդուլ պայքարել,
և շատ անգամ էլ հեղեղի նման
զոհել է աբյուլն:
Մենք հետազոտում
ու սովորում ենք դեպքերն անցյալի
հին-հին որերից.
մինչ այսօր հասած,
ուր մաստան
չարքաշ
տանջվում,
սառնալում,
բայց կռվում եր միշտ կամքով անաս-
նան:

Մի անգամ ձմռան
այն դաժան ամսին
յերբ պիտի ծագեր մի վատ առավոտ,
մեր յերկրում կովի հրդեհ բռնկեց,
կրակը հասավ
մինչև մեծ լեռան գագաթն ահավոր:
Յեվ շանթը կիսեց
խոտվաքը հղի,
և շանթն ընկավ
լեռան շավիղին,
հուրն իջ բոցերով
աշխարհում քայլեց
և արև մի որ
մեր գլխին փալկեց:
Այսօր այդ որովան դիմավորում ենք
բաց դրոշներով
ու թեժ յերգերով:
Դու, աշխատանքի հարազատ յերկիր,

քեզնով ենք ուրախ
և քեզ ենք յերգում
ներդաշնակ ռիթմով մեր ազատ յերգի:
Նլ մվ կարող ե
Թիֆլիսին ասել՝ զուռամ, ալեքս,
յերբ նրա ջահել,
թարմ յերակներում
արլունն է վարար Բուռի պես հոսում.
և նա իր կրծքին
շարում է աստղեր,
վոր վորսում է նա
մեծ տուրբիններով
հսկա Ջագեսում:
Ջարդարվել է նա
վորպես հարսնացու:
Այժմ՝ Գուրիայում
ու Մինգրելիայում,
այնտեղ՝ Կախեթում
և Իմերեթում
և Աբխազիայում
և Աջարիստանում,
Հարավ-Ոսեթում,
այնտեղ Բարթիլում,
այնտեղ Ռաճայում
ու Սվանեթում —
մի նոր,
չլաված մեծ ուրախութան
ձայներ են թնկում.
«Հիմա յենք միայն
աչքներս բոցել.
չկա վոչ աստված
և վոչ էլ հրաշք.
բանվորն է ազատ
մեր յերկրի վրա»:

1. Համեմատել հին և նոր Վրաստանը և նշիլ տարբերությունները:
2. Ի՞նչ «հրդեհի» մասին և խոսքը: Ի՞նչ ավեց այդ հրդեհը նոր Վրաստանին:

հետազոտել — ուսումնասիրել
չարքաշ — նեղություն լինել
անասան — անխախտ, հաս-
տատուն

ռիթմ — համաչափ շարժում, վոտք
զառամ — շատ ծերացած
տուրբին — խողովակ
շավիղ — նեղ ճանապարհ

79. Գևորգի շեֆությունը վերցրին

Խորհրդային Հայաստանի գրողների պատվիրակությունը գր-
նում էր շեֆություն վերցնելու Ադրբեջանյան Կարմիր բանակում:

Խանդավառ ընդունելության արարողությունը դարձավ մի ան-
պատմելի, բայց պատմական ցույց: Ամբողջ բանակը ծավալվեց
մեր առջև, բարև տալով: Առույզ, հուժկու բանակայինների ուռա-
ներն անտառի աղմկի պես զնում էին ծալրից ծալր:

Բլուրներից Թնդանոթների սալուտները վողջունելով մեզ՝
Թնդացնում էին շրջակայքը:

Հետո քառակուսի բակ կանգնեց բանակը՝ մեջ առնելով մեզ:
Վողջունների մեջ, վորով մեզ գիմում էին զինկոմը, հրամ-
կազմի անդամները, թուրք, հայ, ռուս բանակայինները, լավում էր
մի նոր լեզու, թվում էր նոր մարդկության լեզուն:

Ադրբեյվապյան ժողովուրդների համերաշխությունը կարծես
զինված կանգնած էր մեր հանդեպ և պատրաստ էր կռվելու այն
բոլոր թշնամիների դեմ, վորոնք կռվելին այդ բոլորին սերմանել
թշնամության սերմը:

Պատվիրակության նախագահ ընկ. Շիրվանդադեն՝ համբուրվե-
լով թուրք բանակայինի հետ՝ հաստատեց համերաշխությունը հայ
և թուրք աշխատավորության առջև, իսկ նրա հայտարարությունը,
թե Հայաստանի Խորհրդային Գրողների Ֆեդերացիան վերցնում է
Նոգնդի շեֆությունը, խանդավառ և փոթորկալի ուռանների մեջ
կնքեց այդ:

Բանակայինները հանկարծ հարձակվեցին պատվիրակության
վրա և սկսեցին վեր-վեր նետել...

Այդպես ամբողջ բանակը դրոշակով, շարքերով անցավ պատվի-
րակության առջնից դեպի վրանները:

«Կեցցե Կարմիր Ադրբեջանը, կեցցե նրա Կարմիր բանակը,
կեցցե աշխատավոր ժողովուրդների յեղբայրությունը, նրանց կու-
տուրական կապը»:

Այս և սրա նման մեր լոզունգներին զորքը պատասխանում էր
Թնդադին ուռաներով:

Բանակի ակումբում պատվիրակությանը պատվեցին ճաշով,
ուր ճառերով հանդես լեկան բանակի գլխավոր հրամանատարը,
մյուս հրամկազմը, բայց առանձին հուզմունքով մեր շեֆարկյու
գնդի հրամանատարը:

Հրաշալի անտառների մեջ կորած Հաջիբենդը և նրա բռնակը,
վոր թողինք սրտագին ուռանների մեջ, այդ կանաչ ծառերը, դա-

լար բանակալիները, այդ զարթնող աշխատավորութիւնն հուժկու
կերպարանքներն անմոռանալի կմնան մեր հիշողութիւն մեջ:

Ժամերը թռան աննկատելի, մենք իջանք ցած դեպի Գանձակ:

1. Ձեր պրոֆիկտիւտիւրը շնորհակալութեամբ ունիւիւնչակես եք ոգնում ձեր շե-
ֆարկային:

2. Յերբ հիմք դրվեց անգրկովկասյան ժողովուրդների համերաշխու-
թիւն:

3. Ի՞նչ պայմաններում միայն հնարավոր էր անգրկովկասյան հան-
րապետութիւնների միջև ստեղծված կուլտուրական կապը, գրողների և
գրականութիւն մերձեցումը:

շնորհակալութեամբ	հուժկու—ուժեղ
խանդավառ—բուռն վրդասիրու- թիւնով լցված	սալլուտ—թնդանութների համա- զարկ
արարողութիւն—ծես, ձևակա- նութիւն	գինկում—գինկութեան կոմիսար
առույգ—աշխուժ, ժիր	շնորհակալ—շնորհակալ յինքնակա-
հրամկազմ—հրամանատարա- կան կազմ	

80. Նոր Յերևանը

Գնում ենք Թամանյանի մոտ. մեզ առաջնորդում է Սարգսնը:
Թամանյանը դիմավորում է մեզ ժպտադեմ:

Բայց եւ անուամբ մեր առաջ Նոր Յերևանի նախագիծը. սա նրա
մտքի հղացումն է:

Ամեն ինչ նախատեսված է այս նախագծի մեջ:

Յերևանի շրջակայքը չոր է, մերկ: Զրանցքներ պիտի տնցնեն
այս աեղերով և անտառներ պիտի տնկել: Այժմ սոսկալի քամիներ
են դալիս այդ աեղերից՝ իրենց հետ բերելով անտառների փոշի: Յերբ
այդ քարքարոտ բլրակներում ջրանցքներ և անտառներ լինեն, ան-
շուշտ Յերևանը կաղաւթի իր սովորական անտառների փոշուց:

Յերևանը շոգ որերին անտառների յե, խոնավութիւնը պակա-
սում է: Դրա համար հարկավոր է նրա միջով անցնող Զանգու
գետի ջուրն ամբարել և լինել արհեստական լիճ: Այս արհեստական
լիճն անհրաժեշտ խոնավութիւն կտա քաղաքին. միևնույն ժամա-
նակ՝ ջուրը կարելի կլինի գործադրել հիդրո-էլեկտրի համար:

Համաձայն այդ նախագծի—Յերևանը բաժանված է թաղերի.—
համալսարանի թաղ, արվեստի թաղ, վարչական թաղ, արդյունա-

բերական թաղ: Վերջինս գտնվում է քաղաքի այն ծայրամասում, վորտեղից բացվում է Արարատյան դաշտը:

Այս թաղերում արդեն սկսված են աշխատանքները: Արդյունաբերական թաղում արդեն կան բավական թվով գործարաններ:

Համալսարանի թաղում—կլինիկական բաժանմունքներ և հանրակացարաններ:

Վարչական թաղը պիտի լինի քաղաքի կենտրոնում: Այս կենտրոնական թաղի կենտրոնում—կուլտուրայի տունը:

Կուլտուրայի տան առաջ տախտակաված է այգի, իսկ այգում՝ լենինի արձան: Այսպես և ծրագրված:

Ամեն ինչ նախատեսված է այդ նախագծի մեջ:

Գեղեցիկ նախագիծ, բավարարող ամեն տեսակետներից:

Շենքերի մի մասն արդեն կառուցված է և կառուցվում է:

Ամեն շենք կարծես իր հատուկ վոճն ունի:

Թամանյանը նկատի յե ունեցել Հայաստանի հին ճարտարապետական վոճը: Բայց չի վերցրել այդ վոճը կառուցման համար:

Նրա ջանքերով կառուցված շենքերի մեջ հին ճարտարապետական վոճը վորոշ հափով միայն «ոգտագործված» է: Բոլոր շենքերը սնված ու ծնված են ժամանակի պահանջներից և համապատասխանում են որվա կարիքներին:

Թամանյանի ծրագիրն աստիճանաբար իրագործվում է:

Յերբ ամբողջովին ավարտված կլինի այս ծրագիրը, այն ժամանակ «Նոր Յերևանը» կբացվի քո առաջ, վորպես արվեստագետի կառուցվածք - արտադրություն:

Գաղաք-շեղեր. ահա ինչ էս ղգում, յերբ նայում էս առաջդ փռված Նոր Յերևանի նախագծին:

1. Ինչո՞ւ կապիտալիստական մասնավոր սեփականության ժամանակ հնարավոր չե պլանային աշխատանք՝ ինչպես քաղաքի կառուցման, այնպես նաև ամբողջ տնտեսության մեջ, Ինչո՞ւ հիմա հնարավոր է:

2. Ի՞նչ տարբերություն կա սոցիալիստական և մասնավոր սեփականատիրական տնտեսաձևի մեջ:

նախագիծ—պլան

մտքի հղացում—մտքի ծրանունը

կլինիկա—հետազոտական հիվանդանոց

վոճ - ձև

նարտարապետություն—ինժեներություն

շեղևվր—գլուխ գործոց, ամենամեծ գործը

81. Կրօնի մեքենայացումն Ամերիկայում

Ամերիկայի՝ իրենց հաշիվները լավ գիտցող կապիտալիստները հիանալի կերպով հասկանում են, թե կրօնն ինչպիսի թմբեցուցիչ ու քայքայող ազդեցութիւնն է գործում բանվորական մասսաների վրա:

Բանվորի հետ նրա աշխատավարձի յուրաքանչյուր գոռչի համար սակարկելով, միևնույն ժամանակ նրանք առանց տատանվելու միլիոններ են շարտում յեկեղեցիների կառուցման և սարքավորման համար, հասարեն սգուտ քաղելով բանվորական մասսաների տրամադրութիւնից ու ճաշակից:

Կուլտուրայի հսկայական վերելքի այս մեր դարում կրօնը, յեթե ուզում է պահպանել մասսաների վրա ունեցած իր ազդեցութիւնը, պետք է մեծ ճիգեր գործ դնի: Յեթե մի ինչ-վոր խղճուկ պատուր փորձի անդրջիւղեղոյան հին-հին խրատներ մթմթթալ, իհարկէ ծիծաղելի կլինի գործարանային գաղութների՝ նրանից շատ ավելի զարգացած բնակչութեան համար: «Տերերը» շատ լավ են հասկանում այս, բայց դժբախտութիւնը նրանումն է, վոր-նույն-իսկ Ամերիկայումն ել հեշտ չի ճարել կրթված, ճարպիկ տերտեր, վորին հաջողվի շողոթորթել ու անցկացնել կապիտալիստների համար սղատկար գիծը:

Ահա այստեղ է, վոր կապիտալիստներին ոգնութեան է գալիս կրօնի մեքենայացումը:

Առաջին հերթին, իհարկէ, ռադիոն: Սրա առավելութիւններն ակնհայտ են: Մի աստվածաբան են ճարել, նստեցրել միկրոֆոնի մոտ, վոր կրակ է թափում բերանից, իսկ հարյուր հազարավոր հավատացյալներ զանազան քաղաքներում լսում են նրան միաժամանակ:

Զարմանալի չէ, վոր նշանավոր քարոզիչների խոսքերը ռադիոյով հաղորդելը քանի դնում, ավելի չէ տարածվում Ամերիկայում, և վոր հազարավոր յեկեղեցիներ ու աղօթատներ արդեն ռադիո ունեն, տեխնիկայի վերջին խոսքի համաձայն:

Երա համար փող չեն խնայում: Վերջերս Ամերիկայի ամենախոշոր ռադիո-հաղորդական կամպանիան տաբեկան լերկու հարյուր հազար ոտքով «գնել է» ամենալավ քարոզիչ՝ պատուր Կադմանին, վոր պարտավորվում է ըստ իր խրատներն ու քարոզները ռադիոյով արտասանել: Կադմանը հայտնի յե վորպես «սոցիալիզմի և բանվորական շարժման» մասնագետ, այդ պատճառով ել կապիտալիստները համոզված են,՝ վոր իրենց ծախսերն իղուր չեն կորչի:

Բայց այսքանով ել ամերիկացիները չեն բավականանում: Նյու-Յորկի առաջավոր լեկեղեցիներում մեքենայացումն իր գագաթնակետին ե հասել. տերտերներն ուղղակի փոխարինվում են խոսող և յերգող ավտոմատներով:

Այս տարի Անգլիայում և Ամերիկայում, համարյա միաժամանակ, հորինված ու սարքված են «ելեկտրական մարդիկ»:

Դրանք ավտոմատներ են, վոր յերբ մեխանիկն այս կամ այն կնոպկան դարձնում ե, կարողանում են վեր կենալ, նստել աթոռի վրա, ձեռքերն ու վոտները շարժել:

Հետաքրքիրն այն ե, վոր այդ ավտոմատները կարող են ամբողջ ճառեր արտասանել, նրանց մեջ գտնվող բարձրախոսի ոգնությամբ հաղորդելով ճառախոսի ասածները, յերբ նա խոսում ե ռադիո-հաղորդական կայանում:

Ամենակատարելագործված ավտոմատներն աշխատում են և առանց ռադիոյի, գրամոֆոնի պես արտասանելով Ֆրագները: Մրանք շատ թանգ են և մեծ մասամբ ցուցահանդեսներում են դրվում:

Որինակ, մի ալգպիսի «ելեկտրո-մարդ» Լոնդոնում ինժեներական ցուցահանդես ե բաց արել:

Նստած տեղից վեր ե կացել, մի կարճ ճառով վողջունել ե հյուրերին, խորը գլուխ ե տվել և ձեռքի շարժումով հրավիրել ե նրանց անցնել կենտրոնական դահլիճ, միաժամանակ արտասանելով. «Բարով եք յեկել, թանգազին հյուրեր»:

Ապա ավտոմատը նորից նստել ե իր բազկաթոռին:

Յեւ ահա ամերիկյան կապիտալիստները փող չեն խնայել և Նյու-Յորկի միքանի լեկեղեցիներում մեխանիկական պատուրներ են սարքել: Հենց դրանց պատվերովն ե ինժեներ Վենսելը ավտոմատներ կառուցել:

Մեխանիկական պատուրը յելնում ե տեղից, խաչ ե հանում յերեսին, քարող ե արտասանում և որհնանքներ ե բաժանում տոթոթոյներին:

1. Ում շահերին են ծառայեցնում կապիտալիստական յերկրներում գիտությունն ու տեխնիկան:

2. Ի՞նչ դեր են կատարում կրոնի մեքենայացման այդ ձեռքը մասնակրին ստրկացնելու գործում,

սակարկել—գնի մասին խոսել
անդրջրհեղեղյան—ջրհեղեղից առաջ, շատ հին
շողորթիլ — կեղծավորություն
անել

միկրոֆոն—ձայն հանող գործիք
ավտոմատ—ինքնաշարժ
ֆրագ—ասացված, լրիվ արտահայտված մի միտք

82. Աշխատավարձը

Գանձապահը տվեց դրամը։

— Ներեցեք խնդրեմ,—ասաց հանձնափորը ապուշ կարած.— Դուք համոզված եք, վոր սխալված չեք։

Նա նայում եր փողերին և չեր վերցնում։ Նրա մարմնով մի սառ դող անցավ։ Նա շատ ստանալու հույս չուներ, այնուամենայնիվ չեր կարծում, թե ստանալիքն այդչափ աննշան բան կլիներ։ Յերբ բաժանի փողերը Զախարին, Նույենին և Շավալի փոխաբեն աշխատող հանձնափորին, իրեն կմտա ընդամենը հիսուն Փրանկ, վորի մեջ մտնում եր հոր, Կատերինայի և Ժանյենի աշխատանքը։

— Վնչ, յես չեմ սխալվում,—առարկեց գանձապահը,—պիտի դուրս գալ յերկու կիրակի և չորս պարապ որերը։ Մեզ վճարվում ե ինն բանվորական որվա համար։

Հանձնափոր Մադյոն մտքում հաշվում եր.—ինն որվա համար ինքըն ստանում եր յերեսուն Փրանկ, Կատերինան՝ տասնութ, Ժանյենը՝ ինն։ Բեռի Բոնմորը պիտի ստանար յերեք որվա համար։ Յեվ յեթե նույնիսկ Զախարին ու յերկու ընկերներին տրվելիք ինըսուն Փրանկն ել ավելացնենք դրան, այնուամենայնիվ ելի ավելի պիտի լիներ։

— Տուգանքները մի մոռանաք,—ավելացրեց գանձապահի ոգնականը,—քսան Փրանկ տուգանք վատ կարկատելու համար։

Հանձնափորը պատասխանեց հուսահատությամբ լի մի շարժումով,—քսան Փրանկ տուգանք, չորս պարապ որ... ուրեմն հաշիվը ճիշտ ե։ Նա տուն եր բերում հիսուն Փրանկ, յերբ քեռի Բոնմորն աշխատում եր, և Զախարը դեռ ամուսնացած չեր։

— Փողերը վերցնում եք, թե վոչ,—անհամբերությամբ հարցրեց գանձապահը։ Տեսնում եք, վոր ուրիշը յերթի չե սպասում։ Յեթե չեք ցանկանում վերցնել ուղղակի ասացեք։

Մադյոն փողերը վերցրեց հուզմունքից դողացող ահագին ձեռքով։

Հուսահատությունն աճում եր։ Չարազուշակ հուսահատություն եր այդ։ Ամբոխը խուլ քրթմնջում եր, սակայն չեր անցնում դործողության։ Ամենից շատ նրանց վրդովում եր այդ ստացած չնչին գումարը, նրանց վրդովում եյին տուգանքները և պարապ որերը։ Առանց այդ ել արդեն սովալլուկ ելին։ Ի՞նչ կլինի իրանց վիճակը, յեթե աշխատավարձը կրկին պակասի։ Դինսաներում հայտնում եյին բարձրաձայն։ Զալրուկից կոկորդներն աչնպես եյին չորանում, վոր ստացած գրոշները մնում եյին դախլի վրա։

Մինչև տունը ծայնը և Մազյոն վոչ մի խոսք չփոխանակեցին: Տիկին Մազյոն միայնակ նստած եր յերեսաների հետ:

Տեսնելով ամուսնուն դատարկածն, նա ասաց.

— Ինչ սիրալիր ես դու... իսկ սո՛ւրճը, շաքարը և միսը... Մի կտոր հորթի միսը քեզ կսնանկացնե՞ր:

Նա վոչինչ չպատասխանեց. նա վոչ մի խոսք չկարողացավ ասել հազմունքից, վորն աշխատում եր խեղդել:

Այս նրա լայն յերեսը, վոր կոշտացել եր հանքահորում աշխատելուց, հոռահատորեն ծամածռվեց, և խոշոր արցունքները գլորվեցին կարկուտի նման: Նա, ընկնելով ավոռին, հեկեկաց ինչպես յերեսա և հիսուն Ֆրանկ շարտեց սեղանին:

— Այս ե բոլորը, ինչ վոր բերել եմ քեզ... — փնթփնթաց նա, — այս ե բոլորը, ինչ վոր մենք աշխատել ենք...

Տիկին Մազյոն նայեց ծայնին, վոր կանգնած եր մուսյլ ու ընկճված դեմքով և նուչպես լալիս եր: Ինչպես կարող ե ինն հոգուց բազկացած ընտանիքն ապրել տասն հինգ ուր հիսուն Ֆրանկով:

1. Ինչ կարգերումն ե կատարվում և ինչ պայմանների հետևանք ե հանքափորի աշխատանքը:

2. Դա մասնակի՞ յերևույթ ե, թե ընդհանուր:

3. Հնգվելով այս հոգվածի հիման վրա, կարելի չե տալ կապիտալի և աշխատանքի փոխհարաբերությունը, սրանց պաշտարը:

առարկել—հակաճառել

լաքագաւշակ—վատ բան գոչակող

բրթմնջալ—փնթփնթալ

սովալլուկ—սովից տանջված

83. Զիմմի Հիգգենս

«Եմպալը» գործարանի վարչությունը, վոր լրիվ աեղեկություն եր հավաքել իր լրտեսների միջոցով, գործը հասցրեց ծայրահեղության: Նա արձակեց քսանից ավելի խռովարարների, և յերբ այդ լուրը ճաշվա ընդմիջումին տարածվեց բանվորների շրջանում, ամբողջ գործարանը բռնկվեց զայրույթից:

— Գործադուլ, գործադուլ, աղաղակում ելին ամեն կողմից:

Զիմմին, ինչպես և ուրիշները, խմբեր կազմած՝ շրջում ելին գործարանի բակերում՝ աղաղակելով, հալո, ելով և սպառնալիք կարգալով նրանց հասցեյին, ովքեր առաջարկում ելին վերսկսել աշխատանքը: Բանվորության հազիվ մեկ տասերորդ մասը փորձ եր

անում գործի կանգնելու, Յեվ այդ որը մեքենա շինող «Նմալը» գործարանի արհեստանոցները, վորոնք շրապնելի բաժանին ելին պատրաստում ուս կառավարութիւն համար, դարձան ճառարանութիւն վայր բանվորական միութիւնների և սոցիալիստական կուսակցութիւն անդամներ համար...

Ջիմմին մինչև անգամ ընթրիքի համար չուղեց ժամանակ կորցրնել, Մաբոյձ գիշերը նա ոգնում եր, վոր բանվորները գործադուլ կազմակերպեն. իսկ հաջորդ որն աւբոյձովին անցկացրեց սոցիալիստական միտինգներ կազմակերպելու վրա: Ինչքան հոռետոր վոր կարելի չեր գտնել, բոլորը հրավիրվեցին ճառ ասելու: Յեվ նրանց աչքան ելին կանչում ու ստիպում խոսել, մինչև վոր խոսելուց նրանց ձայնը խոպոտում եր: Իսկ լեքեկոյան պեսք եր միտինգներ սարքել փողոցներում: Յերը գործադուլ եր լինում, միշտ ալդպես ելին անում: Ալդ գեպըում միայն բանվորն ունենում եր ժամանակ, ինչպես և ցանկութուն՝ լսելու: Այսպես հասալ վերջին ճղնաժամը, վորի ժամանակ փողքիկ մեքենագետը կարողացալ ցուց տալ, թե ինչ բանի յեր ընդունակ ինքը:

Միտինգների տեղում նա բարձր բռնել եր ջահը: Իսկ ընկեր Ջերիտին բացատրում եր, վոր գործադուլը և ընտրողական իրավունքն աշխատավորների լեքկայրի սրի լեքկու կողմերն են: Հանկարծ փողոցի անկյունի յետևից լեքկացին չորս վոստիկան ու սկսեցին բազմութիւնը ճեղքելով առաջ գալ:

— Դուք պետք ե այդ բոլորն ընդհատեք, — հայտարարեց նրանցից մեկը:

— Ընհատել, — բացականչեց Ջերիտին, — դրանով դուք ինչ եք ուղում ասել:

— Այլևս վոչ մի հրապարակական ճառ թուլլ չի տրվելու գործադուլի ժամանակ:

— Ո՛վ ե այդպես ասում:

— Ալդպես ե պետի կարգադրութիւնը:

— Բայց մենք թուլտվութիւն ենք ստացել:

— Բոլոր թուլտվութիւնները վերացված են. վերջացրեք խոսակցութիւնները:

— Բայց դա բռնութիւն ե:

— Դուք իզուր եք մեզ հետ վեճի բռնվում, յերիտասարդ տղա...:

— Բայց մենք իրավունք ունենք ալստիլ լինելու:

— Մոռացեք ալդ բանը, սիրելիս:

Ջերիտին արագ շուռ յեկալ դեպի բազմութիւնը:

— Համաքաղաքացիներ, — գոչեց նա, — մենք այստեղ իրականացնում ենք մեր իրավունքները, իբրև Ամերիկայի քաղաքացիներ։ Մենք խաղաղ քաղաքական միտինգ ենք անում՝ չխանգարելով կարգը։ Մենք գիտենք մեր իրավունքները և մտադիր ենք պաշտպանել։ Մենք...

— Ցած իջեք արկղից և դնե՛ք գնացեք, — հրամայեց սպան։ Իսկ բազմութունը ավելի մոտ գալով՝ աղմուկ ու դժվարժոց բարձրացրեց։

— Քաղաքացիներ, — նորից սկսեց Ջերիտին... — բայց այդ երբուրդը, ինչ վոր կարողացավ ասել նա, վորովհետև վոստիկանը բռնեց նրա ձեռքը և բաշեց։ Իսկ Ջերիտին հափազանց լավ գիտեր ամերիկական վոստիկանների վարվելու ձևերը, ուստի չդիմադրեց։ Նա ցած իջավ, այնուամենայնիվ փորձեց խոսել։

— Քաղաքացիներ...

— Տո դուք պիտի լռե՞ք յերբևիցե, թե՞ վոչ, — հարցրեց նրան մյուս վոստիկանը, բայց վորովհետև Ջերիտին դարձյալ փորձում էր ճառել, ուստի նա հայտարարեց։

— Դուք կալանավորված եք։

Բազմության մեջ վեց սոցիալիստ կար, վորոնցից յուրաքանչյուրի ինքնասիրությանը դիպավ այս բանը։ Մի ակնթարթում ընկեր Մարել Սմիտը ցատկեց տախտակամածի վրա։

— Ընկեր բանվորներ, — գոչեց նա, — սա Ամերիկայի, թե՞ Ռուսաստան։

— Բավական է, որիորդ, — ասաց վոստիկանը, ինչքան կարող եր՝ հարգանգով։ Ընկեր Մարելը ծածկել էր ահագին, շգեղ գլխարկ և, բացի դրանից, նա ուներ յերիտասարդության ու գեղեցկության ուրիշ նշաններ ել։

— Յեռ իրավունք ունե՛մ այստեղ խոսելու և պիտի խոսեմ, — հայտարարեց նա։

— Մենք չեմք ցանկա՛ն ձեզ կալանավորել, որիորդ։

— Դուք ինձ կամ պիտի կալանավորեք, կամ թույլ տաք խոսելու։

— Ցավում եմ, որիորդ, բայց հրամանն այդպես է։ Դուք կալանավորված եք։

Այստեղ շերթը հասավ ընկեր Ստանկիչին։

— Բանվոր մարդիկ՝ մենք հավաքվել ենք այստեղ բանվորի իրավունքի համար կռվելու։

Սրան ել իջեցրին տախտակամածից։

Այդ ժամանակ դուրս լեկավ «Մոլեգին Բիլլը»։ Այս ամենա-

Թունդ, ամենաբարձր աստիճանի պրոլետարը խնչված բազմության վերջին շարքերումն եր մնում, վորովհետև՝ տեղական խմբակն աչքի առաջ ունենալով, վոր նա իրեն զսպել չգիտեր, արգելել եր նրան վիճաբանություններին մասնակցելու։ Բայց հիմա, իհարկե, բոլոր արգելքները հողա ցնդեցին, և Բիլլը թռավ ճոճացող տախտակամածի վրա։

— Խնչ ենք մենք—ստրուկ,—վորդագին աղաղակեց նա.—Խնչ ենք մենք—շահն։

Ըստ յերևութին վոստիկանությունը հենց այդ կարծիքին եր, վորովհետև Բիլլին ճիշտ ամիրիկական ձևով պոկեցին տախտակամածից, և վոստիկաններից մեկը բռնեց նրա ձեռքից ու բնափսի ուժով վորոքեց, վոր Բիլլի ճառը վերջացավ ցավի ճիշտով։ Հիմա յեւ դուրս յեկավ Ջոննի Նշը—մի ամբթխած պատանի, ձեռքերը լիքը գրքերով ու թուղիկներով, վորոնցից նա չեր բաժանվում՝ չնայելով վոստիկանների բռնությանը, իսկ հետո—հետո մնում եր ելի մեկը։

— Յես հայտարարում եմ, վոր սա բռնություն ե քաղաքացու իրավունքների դեմ...

Յեմ հանկարծ Ջիմմին, վոր Բիլլի յետևից անմիջապես մտել եր Փուրգոնը զգաց, վոր թռչում ե դեպի մի կողմ, ինչ-վոր տեղ, վոստիկաններից մեկը թռավ նրա մոտով և սարսափելի ուժով բռնոնցքը խփեց հետադի ատամներին։ Բիլլը տապալվեց գետին, ինչպես ցուլը մաագործի կացնի տակ, իսկ պահակային Փուրգոնը տեղից շարժվեց, շեփորի վոռնոցով բազմության բողոքները խլածնելով...

1. Ո՞վ եր Ջիմմի Հիդգենսը. ճիշտ եր նա վերլուծում «սարկացնող» ների և սարկացածների պայքարը։

2. Արդյո՞ք նա մատնանշում ե այդ դրությունից դուրս գալու ուղիներ. ինչպես։

3. Խնչպես վերաբերվեց և վերաբերվում ե «ամերիկյան գեմսկրատիան» բանվորական շարժման հանդեպ։

4. Ինչով կարող եր վերջանալ այդ գործադուլը։

5. Խնչ գեղջում հնարավոր ե նրա հաղթանակը։

յերկտայրի—յերկու բերան ունեցող սուր

դոփյուն—վոտքի ձայն
տրոփել—խփել (սիրտը)

84. Վերջին նամակը

Ամեն մեկն առանձին կամերայումն ե:

Առանձին են Րիկարդոն ու Ջուլիետան:

Այնքան մասերիմ, այնքան սիրելի այդ ընկերներին ել ցեմենտե պատն իրարից անջատել ե:

Նրանք, վոր գործարանում իրար մոտ եյին բանում, վոր կոմյերխտիսթյան դադանի ժողովներին իրար հետ գնում, իրար մոտ նստում ու միասին վերադառնում, վոր աշխատում ու դութում եյին միեկույն գործի ունպատակի համար, վոր վորոշել եյին ամուսնական կյանքումն ել լինել իրար հետ, ահա նրանք ել իրարից բաժանել ե նախնինների արյունով շաղախված պատու:

Յերբ ժամերը նույն դանդաղությամբ ու տխրությամբ եյին սանում, և Արնոն իր սովորական վողըն եր մրմնջում՝ նեղլիկ սենյակում քալող Ջուլիետան յերբեմն վոգևորված, կանաչի բայրակ ձայնով սկսում եր —

Յելիր՝ ում կյանքը անիծել ե,

ով ճորտ ու մերկ ե և սարուկ...

Յեվ նրա ձայնի հետ ցեմենտաշեն տունն ուժգնորեն վորստաք եր սկսում, գետի վողըր խեղդելով —

Այս հին աշխարհը կփորենք մենք

մինչև հիմքերը և հետո

մեր նոր աշխարհը կշինենք մենք,

ուր վոչ սարուկ կա, վոչ դժգոհ...

Ինչքան ել հետևանքը տխուր լիներ, ինչքան ել յերգը՝ արնոտում ու վերք պահանջեր, բայց և այնպես Ջուլիետան պիտի սկըսեր, ու ցեմենտե տունը թնդար:

* *

Ջուլիետան սիրում եր Րիկարդոյին, վորովհետև նա լավ գեկավար եր կոմյերխտիսթյան, վորովհետև նա իսկական հեղափոխական եր, վորովհետև նա անկեղծ ընկեր եր:

Րիկարդոն սիրում եր Ջուլիետային, վորովհետև նա համարձակ ու անվախ կոմյերխտուհի յեր:

Ու նրանք յերկուսով սիրում եյին հեղափոխության գործը:

* *

Առավոտը վողջ քաղաքով արտակարգ լեռուզեռ եր անցել: Բոլորը գեպի հրապարակն ելին շտապում ու ալեկոծվում քաղկատարած կախաղանի շուրջը:

Այսօր պիտի կախեն կոմերիտակցիան դեկավարին:
Բիկարդոն պիտի կախվի ալսոր:

* * *

Գթասիրտ ժանդարմը ծեծեց Ջուլիետայի կամերայի դուռը և
նրան հանձնեց ծանոթ մի հեռագիր.—

«Թանգագին Ջուլիետա.

Դնում եմ մեռնելու. Դժվար ե, շատ ե դժվար մահը, մանավանդ
յերբ զարուն ե արեվոտ, յերբ ամեն ծիլ ու ծաղիկ ապրել, շնչել ե ուզում,
յերբ կամերայում թողնում եմ Ջուլիետային, իսկ տանը՝ հաշմանդամ մի
մայր, չորս վորսերով, բայց յերբ մտածում եմ, վոր այդ մահը մեր ԳՈՐԾՆ
ե պահանջում, հրեմում եմ սրտանց...

Յերբ կախադանի ողակը կոկորդս սեղմի, յես վերջին անգամ կհիշեմ
քեզ, շրթունքներս կտրանան քու համբույրին ծարավ ու ալքերս քեզ վո-
րոնելու. տենչով դուրս կկախվեն ակնակապիճներից...

Մնաս բարով...

Կեցցե մեր գործը...

ԲԻԿԱՐԴՈՒ

Թժբուկները հատու և ջղային տակառով զարնել սկսեցին:

Շշուկ ու վափսոց անցավ մարդկային ալիքով:

— Բեբում են...

— Ճանապարհ...

Սվինավոր զինվորների սղակով շրջապատված քայլում եր նա,
հպարտ ու ինքնավստահ, ասես հրամանատարն ե գնում հաղթանա-
կից վերադարձող բանակի առջևից:

Աչքերը պատկառանք են ազդուժ:

Թժբուկները ջղախոսքն նորից զարնել սկսեցին:

Իսկ նա գնում ե հաղթական:

* * *

Մտեցավ կախադանին, յերբ գնդապետը մահահրամանն եր
կարդում, առանց դահճի ոգնության, կանգնեց աթոռակի վրա,
ապառնական հայացքով դիտեց ալեկոծվող մարդկային մասսան, ամ-
բողջ կոկորդով մեկ վորստաց—

... ԲԱՅՑ ԳՈՐԾՆ ԱՊՐՈՒՄ Ե...

Ապա իր ձեռքով վզովն անցկացրեց մահվան ողակը, վորքով
հետ հրեց աթոռակը և կախվեց:

Հուզվել եր մարդկային ծովը:

Էաց ու հեկեկոց:

«Կեցցններ»:

Բռունցքներ ողում ցցված:

Գիշերը, յերբ Արնո գետը թափ ջուլակը ձգած, յեղերեդն եր
յերգում մի կորած, արյունոտ պատմության, և նրա ափերին հե-
րարձակ ուռիները սգում ելին, հայացքը՝ ջրի հեկեկացող ալիքնե-
րում, ցամենտապատ տան կամերայում, Զուլիետան արտասովալի
աչքերով յերգում եր տխուր մահերգը...

— . —

1. Ինչպես են վարվում հեղափոխական մարտիկների հետ կապիտա-
լիստական չերկրներում:

2. Կապիտալի զոհերի մասին կարգացել են թերթերում: Պատմի՞ր
նրանցից միջանիսի մասին:

3. Այս հոգվածի հիման վրա նկարագրիր կոմսոմոլի պայքարը կապի-
տալի տիրապետության դեմ:

— . —

կամերա—բանտում առանձին
սենյակ

ակնակապիտ—աչքի խողով
հերարձակ—մազերն արձակ

տենչ—փափաղ

85. Կարլ Լիբկնեխտ

Բերլինը հիշում է նրան ու կհիշի դարեր
իր գլխապետույտ փոթորիկների այն որերին,
յերբ մարտական շարքերով
քալում ելին դունդ-դունդ աղմկոտ փողոցներով,
և ճառեր, նվագներ, խելացնոր հաղթ շքերթներ
յերևացին ամեն կողմից:

Այն ժամանակ պատերազմի կրակաշունչ դեք
իր սարսափելի հզորության
դրոշակներն եր պարզել համայն աշխարհում.
կուլլեր, գիշատիչ բորենիներից առաջնորդված,
սրերը զոնգզոնդալով սլանում ելին խրտնած,
արյունաթաթախ գիշերից:

Կատաղի ու վիթխարի զարգանդ հրեշլի պես
Բերլինը սարսռած իր կուլը կատաղության մեջ՝
դեպի հեռուները փռեց
իր յերկաթե թաթերը: Յեվ ուր վոր պատահեց՝
գլուղեր, քաղաքներ, դաշտեր՝ կատաղորեն դարձրեց
կրակի բոցավառ մի ծով:

Բայց սարսափելի մթության այս խենթ տարերքի մեջ
վորպես կարմիր աստղ՝ փայլեց պայծառ մի ջահ,

և բաբախեցին ամեն կողմ
բազմատանջ սրտեր: Հուշը հարու: թյուն առավ.
և հուզված քաղաքի վրայով մի կանչ տարածվեց.
«Յերիտաւարդները առաջ»:

Յեւ անա, սթափվեց բուլվարը զարմացած՝
նրա վրայով տարածվեցին կարմիր պակատներ,
ու մի բուռն քաջեր՝
իրենց սաք արյան ալ դուշը պարզեցին,
ու խիզախորեն բարձրացավ. «Կորչի պատերազմը Հաբաննդ,
և քուրմերը նրա»:

Ու հարց եր տալիս վողջ քաղաքը շվար, զարմացած.
«Ի՞նչ հանդիսութիւնն է սա: Ո՞վ է այս անհայտ
խեղադարն ու հերոսը,
վոր այսպէս տիրաբար վռտքի յե հանում անվախ յերիտա-
ւարդներին
ու ինքը նիշում դատավճիռն իր մոտաւում մահվան»:
— Կարլ Լիբկնիխտն եր այդ...

Բերլինը հիշում է նրան ու կհիշի դարեր,
յերբ անտուն, քաղցած հոծ ամբոխներին
ցուց տվավ նա կրակե սիգնալ,
ու արձագանդ թափանցեց յերիտարտերում,
և փողոցներում բարձրացան բոլոր բարրիկադներ
կարմիր դրոշների տակ:

— . —

1. Վեր դասակարգի ներկայացուցիչն եր Կարլ Լիբկնիխտը:
2. Ի՞նչպէս ե կոչվում նրա ղեկավարած միութիւնը:
3. Ի՞նչ պայքարում և ում ձեռքով ընկան Կարլ Լիբկնիխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը:
4. Ի՞նչ կուսակցութիւնն է այսոր վառ պահում նրա սիրած գործը և բարձրացրած դրոշակը:

— . —

համայն—բոլոր
սթափվել—ուշքի դալ
բուրմ—հեթանոսական կրօնի
ծիսակատար

սիգնալ—ազդանշան
զարդանդ—սարսափ
խիզախորեն—համարձակ
հոծ—խիտ

86. Արևելքին

Նախկին խալար բախող վարար վառվում ե,
վոսկեկտուց, վոսկեարև Արևելք,
վառ արևիդ լուսը առառ փռվում ե
ու ծովում ե կյանքդ վերև, Արևելք:

Յեվրոպացիք վորոնեցին քո ճամպան
ու բերին քեդ ոպիում, հաշիշ ու շլիթա,
այն որվանից տառապանքդ շատացավ,
կամքդ դարձավ աշնան տերև, Արևելք:

Ճգմել ե քեդ բիրտ կրուճկով Անգլիան,
ու ծծում ե քո արյունը արվան,
և նրա հետ և նրա պես բռնակալ
ունեն ներքին ագրուկ տերեր, Արևելք:

Տերերիդ դեմ սև, սպիտակ թե դեղին—
վոտքի հանիր հզոր մուրճին, մանգաղին.
դու չես կարող դեն շարտել խեղդողին,
թե չունենաս ղինված թևեր, Արևելք:

Ու կոգնի քեդ, քո պայքարում տխրանի,
Հոկտեմբերը, այն բոցավառ պատանին.
նետիր փալղ թաղաղական ովկիանին,
հրդեհավառ բարձրացիր վեր, Արևելք:

1. Յերբ Արևելքի տառապանքը շատացավ:
2. Ո՞վ ե ճգմել Արևելքը:
3. Ի՞նչ ե հարկավոր տերերին դեն շարտելու համար:
4. Ո՞վ կոգնի Արևելքին՝ իր մղած պայքարում:

ոպիում—հաշիշ, թիրաք
հաշիշ—ոպիում, թիրաք

տխրանի—հակայի

Կ Ա Ր Դ Ա՝

Ա. Արշարունի.— ԽՍՀՄ և Արևելքի ժողովուրդները, պինդ 30 կողմի:

ԱՌՍԱՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ասիայի քարտեղի վրա ցույց տնւր՝

Տաճկաստանը, նրա մայրաքաղաք Անգորան. Պարսկաստանը և նրա
մայրաքաղաք թեհրանը:

Պարսկաստանի վեր մասում ե գտնվում Թաւրիզը:

Ի՞նչ նեղուցի վրա չե գտնվում Պոլիսը:

87. Մարտի ութը

Արեգակի ճառագայթները դեռ նոր ելին ընկել սարերի կատարներին, չերը Շուշանը զարթնեց, Նախորդ որվան գործարանային աշխատանքը և դիշերվան անքնութունը յերեխայի պատճառով չսովազանց հողներից ելին նրան։ Նրա մեջքն ու ձեռները ցավում էին։ Շուշանն այդ որը գործարան չեր գնալու. աշխատավոր կնոջ միջազգային տոնն էր։ Նա գնալու չեր ժողով։ Շուտով կարգի բերեց տնային գործերը, յերեխային տարավ քոջ տունը և շտապեց ժողովի։

Շուշանն արդեն ժողովի դահլիճումն էր, ուր նախորդ տեղ էին գրավել քաղմաթիվ բանվորուհիներ։ Ազատ տեղ չգտնելով՝ նա մի կերպ տեղավորվեց պատուհանի վրա և թիկն տվեց պատին։ Ճառախոսը վոգեորված բացատրում էր տոնի նշանակությունը։

— Աշխատավորուհու միջազգային որը, — ասում էր նա, — առաջին անգամ վորոշվել է տոնել Կոպենհագեն քաղաքի սոցիալիստ կոմսանց II կոնֆերանսում, 1910 թվին։ Այդ առաջարկն արել է հոչակավոր կին սոցիալիստ Կլարա Յեռկինը։

Հոգնածութունը հալթում էր Շուշանին։ Նրա աչքերն ուզում էին փակվել, բայց նա ուժ էր անում լսելու։

— Այսորվա տոնի նպատակն է, — շարունակում էր ճառախոսը, — ազատել կնոջն ընտանեկան ստրկական վիճակից, տնային ծանրը հողերից։

— Ախ, ուր էր, — մրմնջաց Շուշանը, և նրա մտքերը թռան քոջ տունը, իր Սուրիկի մոտ։

— Թուգաստանում առաջին անգամ, — շարունակեց ճառախոսը, — փորձեցին տոնել այս որը 1913 թվին, բայց ճառախոսներին բռնեցին։ Նույնը պատահեց նաև 1914 թվին. ցարական կառավարութունը բանտարկեց ընկերներ Սամոյլովային և Նիկոլայևային։ 1917 թվին այս որը աշխատավորուհիները փողոց դուրս գալով Վրաց և ազատութունն պահանջեցին։

— Վրաց և ազատութուն, — կրկնում էր Շուշանն անգիտակցաբար։ Նրա կողերն ավելի և ավելի ծանրանում էին։

— Խորհրդային իշխանութունը փշրեց բռնության բոլոր շղթաները, — ասում էր ճառախոսը։ — Այժմ աշխատավոր կինը հավասար է տղամարդուն։ Նա ազատ կերպով տոնում է իր միջազգային որը։ Նա կուլտուրապես էլ հասնելու յե ազամարդուն։ Նա միանալով 'համաշխարհային պրոլետարիատին' ընդհանուր ուժերով ջանքախելու յե կապիտալիզմի հիմքերն ու հաստատելու յե սոցիալիզմի արեապետութունը։

Շուշանի աչքերը վազուց փակվել էյին: Նա քնի մեջ կցկատւր բառեր եր արտասանում:

— Սպասիր, Սուրիկ ջան, ճաշից հետո հաց կբերեմ...

Ինչ վոր շնչուն բարձրացավ Շուշանի մոտ նստած բանվորուհիներէ մեջ: Ճառարտոսի աչքերն ուղղվեցին դեպի այն կողմը, և նա նկատեց քնած Շուշանին:

— Նայեցեք այն կողմը, — ուղղեց նա մասը դեպի Շուշանը, — վորքան այդպիսի բանվորուհիներ են տանջվում ընտանեկան հոգսերով: Գործարանային Ց-ժամյա աշխատանքից հետո նրանք շարունակում են իրենց աշխատանքը տանը մինչև ուշ գիշեր և այդպես հոգնում, ուժից ընկնում: Մարտի ութի նպատակն է ազատել բանվորուհուն այդ մաշող տնային աշխատանքից: Հասարակական ճաշարաններ, լվացքատուն, մատր, մանկատուն... Ահա ինչ պիտի տա մեզ մարտի ութը: Բանվորուհին պիտի ազատվի յնչախից, լվացքից, որորոցից: Նա ազատ ժամանակ պետք է ունենա, վոր ժողով, ընթերցարան, գրադարան, ներկայացում հաճախի, կրթվի, զարգանա, լուսավորվի: Այդ է մարտի ութի նպատակը, այդ է աշխատավոր կնոջ միջազգային տոնի նպատակը: Կեցցեք աշխատավոր կինը, կեցցեք նրա միջազգային ուրը:

Բուռն ծափահարութիւններն արթնացրին Շուշանին:

Խեղճը շվարած կանգնեց և յերկմը ապշած նայում եր չորս կողմը: Սակայն ընկերուհիներն շտապով մոտեցան նրան, հանաք ու ծիծաղով մոռացնել տվին անհարմար դրութիւնը: Շուշանի ձայնն ել միացավ «Ինտերնացիոնալ»-ի հնչյուններին, և բոլորը միասին դուրս չեկան դահլիճից:

— — —

1. Յէրբ է սահմանվել աշխատավորուհու միջազգային որվա տոնակատարութիւնը:

2. Ինչպիսի իրավունք է ստացել կինը Խորհրդային Միութեան մեջ:

3. Ինչ է պակասում կնոջ լայն չափերով մասնակցելու հասարակական աշխատանքներին:

Կ Ա Ր Դ Ա՛

Բալարսկայա. — Կլարա Յետկին, գինը 15 կոպեկ:

Ջեկ Լոնդոն. — Յերկաթե կրունկը:

88. Լենին

1

Հիմի աշխարհի ամեն մի մասում շրջում ե նա միշտ ու միշտ,
այնպեղ, ուր մարդու քրտինքն ե հոսում, ուր վոր զրկանք կա
ու վիշտ...

Հիմի, այս ժամին Ռուսում, Մադրիդում և կամ Պարիզում, այլուր՝
հզորագոր զորանցքն ե գիտում ռազմադնդերի հարյուր...

Մոտենում ե նա շարքերին շաշոդ, շարքերին խոժոռ, անոթի,
վողջուչն ե տալիս մտերիմ կանչով, ինչպես հնամյա ծանոթի...

Յեվ շշնջում ե նրանց ականջին խոսքեր վառ՝ լուսե գալիքի,
ու ձայնակցում են նրա գոռ կանչին շարքերը հուզվող արիքի...

2

Հիմի աշխարհի ամեն մի մասում շրջում ե նա միշտ ու միշտ,
ուր վոր վառողն ե վորոտով խոսում, հորդում ե արյուն ու վիշտ...

Մեծ քաղաքների լայն փողոցներում, բարրիկադների վրա՝
մարտնչող, չարքաշ շարքերի համար հնչում ե ձայնը նրա...

Վոնց վոր յերկնքիցն ամպրոպը պայթի, թնդում ե ձայնը համառ.
Յելիք, զրկանքի, տանջանքի աշխարհ, կովիք, նոր կյանքի համար...

Յեվ բանվորական շարքերը հիմի մարտագոռ լերգ են յերգում,
Լենինն ե քայլում ամենքից առաջ՝ ալուր գրոշակը ձեռքում...

3

Այն ով ե նստել խարխուլ խրճիթում հնդիկ գյուղացու, այն ով.
այն ինչ ե պատմում հնդիկին անհող մտերիմ և կուռ ձայնով...

Այն ով ե շրջում Շանհայում շաշոդ, անցնում Կանտոնից Պեկին,
այն ով ե քայլում կուլինների հետ վճռական, ըմբոստ, մեկին...

Այն ով ե վառել խարույկ մի հսկա բյուր հոգիների սրտում,
այն ով ե բացել հրդեհ մի լափող հին Արևելքի սրտում...

Յեվ վորոտադին թնդացին հանկարծ ձայները միլիոն և միլիոն.

— Միլիոնից ծնված, միլիոնի հանճար Լենինն ե, Լենին, Լենին...

— . —

1. Ո՞վ ե շրջում «աշխարհի ամեն մի մասում» և ի՞նչ իմաստով ե գործածված այդ:

Նկարագրեր այն պայքարը, վոր տարվում է լենինիզմի դրոշի տակ:
2. Վեր կազմակերպությունն է վառ պահում այդ գրողակը:

դուռ—գուռդ

հորդել—վարարել
ամպրոպ—կալծակ, վորոտ, փո-
թորիկ՝ միասին

ըմբոստ—համարձակ, ընդունված
կարգի դեմ դուրս յեկող
մեկին—պարզ
հանճար—արտակարգ ընդունա-
կություն ունեցող



89. Խնտերնացիոնալ

Յիւրը, ում կյանքը անխճել է,
ով ճորտ է, մերկ է և ստրուկ:
Սրգեն վառվում են մեր սրտերը,
արդեն կալի լենք մենք ձգտում:
Այս հին աշխարհը կփոխենք մենք
մինչև հիմքերը և հետո
մեր նոր աշխարհը կլինենք մենք,
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յի վերջին կոիվը
և պայքարը մեր սեծ:
Խնտերնացիոնալը
աշխարհը կփրկի:

Վոչվոք չի տա մեր փրկությունը—
վոչ խենթ հերոսը, վոչ արքան,
մենք պետք է մեր ազատությունը
կռնք ձեռքով մեր սեփական:
Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը
և յետ խինք վողջ հողերը մեր—
խփենք մուրճերը, տանք մեր ուժը,
քանի լերկաթը տաք է դեռ:

Սա յի վերջին կոիվը
և պայքարը մեր սեծ:
Խնտերնացիոնալը
աշխարհը կփրկի:



Յ Ա Ն Կ

I. ՔԱՂԱՔ ՅԵՎ ԱՐԿՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Դարուն.—Յե. Չարեց	3
2. Բագուն.—Շլագան	5
3. Զագես.—Վ.Թորովեց	8
4. Ձմեռային պալատ.—Յ. Խոռունքի	11
5. Պետրոպոլիսի բերդը —Յ. Խոռունքի	13
6. Տպավորութիւններ Ջորագետից —Վ. Թորովեց	15
7. Լինաեքսալիի բանշնում.—Գ. Մարյան	18
8. Սև քաղաքում.—Մ. Մանգլիյան	22
9. Ալլահիբեգու պղնձահանքերում.—Ն. Զարյան	23
10. Հին գործարանում	27
11. Արտադրական խորհրդակցութիւն.—Գ. Մարյան	28
12. Սևանա լիճը.—Ըստ Լուսնաշաբաթի	30
13. Տեխնիկայի տունը.—Վ. Թորովեց	33
14. Բայլշեի և Շիրկանալը.—Հ. Հակոբյան	35
15. Դժբախտութիւն Մաշադի Ռադըմի տանը	36
16. Պառավ թրքուհին.—Սեյմուզ	39
17. Մարոն.—Ս.Սուլ	41
18. Հեռագիր	42
19. Հեռախոս	44
20. Ռադիո հեռագիր և ռադիո—հեռախոս	45
21. Առաջին գնացքը	46
22. Ռոբերտ Ֆուլտոն	48
23. Թեթև հեծելազորի արշավ.—Մ. Սումեհ	49
24. Լուսարացին.—Հ. Հակոբյան	51

II. ՆԱՐ ՅԵՎ ՀԻՆ ԳՅՈՒՄ

25. Կոմունայի խոտհարքը —Սեյմուզիան	53
26. Կոմունարներ.—Դ. Աեզեի	55
27. Մի որավար հող.—Բաճեի	56
28. Մերունու հառաչանքը. —Հով. Թումանջյան	59
29. Թանգին.—Ա. Բակունց	63
30. Իվանեն.—Պուլիսիի	66
31. Վաշխառուն.—Բաճեի	69
32. Տրակտորը.—Ա. Բակունց	72

33. Տրակտորի յերգը.—Է. Մելիքյան	73
34. Դեղշկուհու դարգը.—Հով. Հովհաննիսյան	74
35. Նորերը.—Ալազան	75
36. Բայրէկուհի Մարիամը.—Նեվերով	76
37. Նեսոյի քարաքաղնիսը.—Հով. Թաւմազյան	78
38. Մաղկավոր չիթը.—Մ. Յարսեմ	80
39. Հեքիաթը.—Յրազի	84
40. Կոմսոմոլիստայի նամակները: Առաջին ապավորութիւնները.—Յրաբա	87
41. Դավիթի իմ տունն է	89
42. Մենք հեղափոխութեան սերունդն ենք.—Յրաբա	92

III. ԳԵՊԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ

43. Պարիզի Կոմունան.—Յրազի	97
44. Կոմունարները.—Վ. Լյուզո	101
45. Ստրուկների վաճառքն Ամբրիկայում	101
46. Կյանքի գնով.—Ո. Ուայլզ	103
47. Անխոս պրոպագանդիստը.—Ռուսերենից	104
48. Հուկվարի իննը.—Մ. Գորկի	107
49. Գործաթողների յերեխաներ.—Մ. Գորկի	109
50. Առաջին գաղտնի ապարանը Բազմում.—Մեուլիհե	112
51. Դավաճանը.—Նազարի	116
52. Մետեխի բանտը.—Յ. Վ. Գիո.	119
53. Կիսատ տունը.—Յրազի	121
54. Լենայի կոտորածը.—Ռուսերենից	123
55. Ընկերները.—Յե. Յարեմց	125
56. Կրակը.—Է. Ռաբլուս	127
57. Թշնամիները.—Թարգմ. Ս. Մեմբուրգ	130
58. Սկերն իմպերիալիստական կովում	132
59. Փոթորիկից սուտը.—Թարգմ. ռուս.	134
60. Լույսեր.—Կորոլենկո	136

IV. ՀՈԿՏԵՄԲԵՐ

61. Յերգը. Ժողովրդի մասին.—Յե. Յարեմց	138
62. Փետրվարյան հեղափոխութիւնը.—Ուզեկ	139
63. Վ. Ի. Լենին (կենսագրութ.)	142
64. Իլլիչը.—Ե. Մպոսեյն	144
65. Պետք է իշխանութիւնը վերցնել.—Յակովլեւ	146
66. Հոկտեմբերի 25-ը.—Ուզեկ	148
67. Հեղափոխական զինվորներն արթուն հսկում են.—Ջոն Ռիդ	150
68. Մոսկվան քարկազները վրա.—Մարտիանի	151
69. Սպիտակներից հետո.—Լիբեզիցսկի	152
70. Կոմունարուհին.—Սլավոկայա և Գորկի	153
71. Կոմիւնիստական մահը.—Թ. ռուսեր.	156

72. Զապոյէ.—Դ. Յուրմահով	158
73. 13 տարեկանը.—Մ. Կոլեսով	159
74. Քսանդեցը.—Ն.—Զարլան	163
74. Վերջին Մայիսը.—Գ. Մահարի	164
76. Նոյեմբերի 29-ը.—Շ.	165

V. ՍՈՅԵԱԼԻՍՏԵԿԱՆ ԹԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՅՈՆՔԷՐ

77. Պատգամավորը.—Ս. Եյուլի	168
78. Կոմունա Վրաստանը.—Ս. Եյուլի	169
79. Դնդի շեֆութուներ վերցրին.—Դ. Դեմիրճյան	170
80. Նոր Յերևանը.—Ռոբակիձե	171
81. Կրոնի մեքենայացումն Ամերիկայում	173
82. Աշխատավարձ.—Ե. Զոլայեց	175
83. Զիմմի Հիզզենս.—Ըստ. Սիեկլերի	176
84. Վերջին նամակ.—Ս. Լազան	180
85. Կ. Լիբկնիխտ.—Մմիրճովսկի	182
86. Արևելքին.—Ս. Բայրամով	184
87. Մարտի ութը.—Ա. Նուս	185
88. Լենին.—Շ. Վասուցի	187
89. Ինտերնացիոնալ.—Յե. Զարեց	188



917

111
2076